
THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·
THE UNIVERSITY OF MICHIGAN
ARTES SCIENTIA VERITAS
1817


№ 40 «ՅԱՌԱՋ»-ի գրադարան № 40

Nar-Dos
Kovkasean Vandean Turk..

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՆԴԵԱՆ

(Թուրք-հայկական ընդհարումները, նրանց պատճառները)



«Կովկասեան կոտորածները մի մասն են այն կռւի, որ մղւում է ժամանակակից քաղաքակըր-թութիւնը ասիական բարբարոսութեան դէմ, ոչ միայն Կովկասում, այլ և Ռուսաստանում»։

ԼՈՒԻՋԻ ՎԻԼԼԱՐԻ

(«Fire and Sword in the Caucasus»)

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ. 7.
1907 *(31)*

ԱՌԱՋԱԲԱՆ

Առանց վարանման չէ, որ մօտենում ենք այս ծանր ու ցաւոտ պրօբլեմին։ Մեր ժամանակում անպատեհ է թւում զբաղւել ազգամիջեան հաշիւներով, բանակռիւներով։ Եւ սակայն դա էլ գործ է, այժմէական անհրաժեշտ գործ։

Պէտք է սկսել գրել պատմութիւնը։ Պէտք է փորձել լուսաբանելու մեր չարաբախտ երկրի պատմութեան ամենասև, ամենավշտալի դրւագը, որ արձանագրւած է արեան տառերով համամարդկային տարեգրութեան մէջ։

Սակայն, փաստերն արձանագրելը չէ մեր նպատակը։ Դրա համար անհրաժեշտ կլինէր տարիների քրտնաջան աշխատանք և ապրել ոչ թէ տարածութեան վրայ, այլ տեղն ու տեղը, ընդհարումների արիւնոտ վայրերում։ Մէկ ու կէս տարի պատերազմ... Ու այն՝ համարեա անդուլ, անդադրում։ Բրօշիւրներ չէ, որ պէտք է գրել, այլ հատորներ։ Եւ դա՛ կը պահանջէ բազմաթիւ ուժերի սերտ գործակցութիւն։

Մեր գործը էապէս բացատրական է, ոչ նկարագրական։ Մենք պիտի փորձենք—ճշմարտութիւնն ունենալով իբրև ղեկավար—թափանցել այն իրական ֆակտորների մէջ, որոնք առաջ բերին երկու ժողովուրդների այդ հոյակապ ու արիւնահեղ բախումը։ Պիտի պատասխանենք և անխրազեկ ու անմտած մեղադրանքներին և շահախնդիր ու չարակամ դատախազներին, պիտի աշխատենք ջրել աչառու ու միակողմանի լուսաբանութիւնները։

Նրանք, որոնք ծանրանում են բացառապէս կառավարութեան ակտերի վրայ, նրանք ճշմարտութեան կէսն են միայն ասում. միւս կէսը մնում է վարագուրւած։ Իսկ հայ ժողովուրդը, հայ աշխատաւոր և սգաւոր ընդհանրութիւնը բնաւ շահ չունի այդ վարագուրումներից, նա փափագում է պարզւած տեսնել բովանդակ ճշմարտութիւնը։

Մ. Ց.

I

ՄԵԾ ԱՆԱԿՆԿԱԼԸ

Պատճառների շարքը

«Շէյթանի» նպատակն իրագործւած.—Թուրքական զրոհը և կովկասեան «դիագ-նոստիկները».—Մեկնութիւններ.—Տնտեսական և ազգայնական պատճառաբանութիւն.—Սօցիալ-դէմօկրատները և անալօգիայի մեթօդը.—«Մեղաւորը դրօշակեաններն են».—«Новое Время» և «Искра».

Մարդ-գազանը վեր բարձրացաւ բնութեան արգանդից և մասսային նախճիրների մէջ վերստին փորձեց յագուրդ տալ արեան անյագ ծարաւին։ Հին, դժնդակ ուրւականը, բոլոր վայրագ ուժերի մարմնացումը, կրկին անգամ դուրս լողաց մոռացութեան ալիքներից և գրոհ տւեց փոքրիկ, անբախտ, արիւնաքամ ժողովրդի դէմ, որը երկար դարերից ի վեր քաղաքակրթութեան դրօշն էր հակադրել այդ ահարկու ուրւականին...

Շղթան փշրւեց, վագրը անզուսպ մոլեգնութեամբ գահավիժւեց դէպի իր զոհը... Եւ սկսւեցին դժոխային արարողութիւնները, և հարևանը սկսեց ծւատել հարևանին...

Ոճիրը արագ, ցիկլօնի պէս շրջան արաւ Անդրկովկասում. ամէն տեղ, ասես ռազմական մի ազդանշանով, գլուխ բարձրացրեց անգիտակից, արիւնածարաւ խուժանը և ամէն տեղ սփռեց կոտորած ու աւերած, յուսահատութիւն ու նզովք...

Սարսափահար, անակնկալի բռնւած զոհը մի վայրկեան խեղկօրոյս նայեց իր շուրջը, մի վայրկեան «հաւմբի» յուսակտուր աղաղակ հանեց, ապա զգաստացաւ, զարկեց ահազանգը, շտկեց դարերի հայկական բեռի տակ կորացած մէջքը և սեղմելով իր [illegible]ատական կազմակերպութեան շուրջը՝ սկսեց պաշտպանել... Հարւածին՝ հարւած...

Եւ նոյն վայրկեանին, երբ Ռուսաստանում, ամբողջ կայսրութեան մէջ ժողովուրդները քաղաքական ու սօցիալական ազատագրութեան դրօշն էին պարզել, նոյն այդ վայրկեանին կովկասեան վեհապանծ լեռների տակ երկու ժողովուրդ, երկու դարաւոր դրացիներ, որոնք ըստ երեւոյթին կոչուած պիտի լինէին ընդհանուր ուժերով կռելու իրենց ճակատագիրը, միացնելու իրենց ջանքերը յանուն ընդհանուր ազատութեան—հին անյիշատակ դարերի, հին մովսիսական օրէնքն էին գործադրում իրենց փոխադարձ յարաբերութիւնների մէջ...

Երկու զոհերը յօշոտում էին իրար, մինչդեռ անարգ tertium gaudens-ը «երրորդ խնդացողը»—չէյթանական, անհոգի բիւրոկրատիան—որ վաղուց փափագել ու հոգացել էր այդ սոսկալի մեռելապարը՝ ցնծութեան քրքիջ էր արձակում...

Եւ եղեռնը դեռ այսօր էլ վերջնական դադար չի առել, դեռ մահու հրեշտակը սաւառնում է կովկասեան հօրիզոններում, դեռ արիւնածարաւ բնազդները զոհացում չեն ստացել։ Ցաւից ու սարսափից յոգնած, ուժասպառ՝ երկու ժողովուրդները դեռ կանգնած են դէմ առ դէմ, երկու թշնամի բանակների պէս, պատրաստ վերստին դահավիժելու իրարու վրայ։

Ի՞նչ է կատարւում—զարհուրանքով հարց տուին իրանց բոլոր մտածող քաղաքացիները այդ արիւնալի կօշմարի հանդէպ...

Եւ ահա սկսեց հարցի դիագնօզը։ Դրսի աշխարհը սկսեց վերլուծել այդ մեծ առեղծուածը, որ այնպէս յանկարծակի գալիս էր թունաւորելու համակովկասեան ազատութիւնն ու բարօրութիւնը տենչացող բոլոր անհատների վարդագոյն երազները։

Հայ ժողովուրդը սրտատրոփ ականջ դրեց։ Մի չարատանջ հարց էր նկարուած նրա վշտոտ ու ահաբեկ հայեացքի մէջ։

—Արդեօ՞ք այս զարհուրելի փորձութեան հանդէպ, ուր նրա լինելու-չլինելու խնդիրն էր դրուած՝ օտարները, գիտուն ու անաչառ դատախազները գէթ կը դնահատե՞ն նրա արհաւիրքը, կը քննե՞ն աղէտի խոր պատճառները, ճշմարտավայել բացատրութիւն կը տա՞ն...

Եւ նա զուր սպասեց։ Նրա տարաբախտ ճակատագիրը այս դէպքում եւս ինքն իրան հաւատարիմ մնաց։ Նրա ծով տառապանքին՝ ոչ մի սրտացաւ համակրութիւն, նրա անօրինակ ճգնաժամին ոչ մի վեհանձն, ազդու, իրական միջամտութիւն... Դրա փոխա-

քէն՝ առատութեամբ ցեխ նրա հասցէին, նրա լաւագոյն յեղափոխական ուժերի հասցէին,—ինսինուացիաներ, ամբաստանութիւններ, անարգանքներ... Եւ նա դարձեալ լքուած՝ շուռ տւեց երեսը և գնաց իր ուղին, տարտամ հայեացքը յառած հօրիզօնին, իր ինքնօգնութեան դրօշակին փարած...

—

Այո. մինչ հայ ժողովրդի բոլոր առնական ու գործօն ուժերը, համախմբուած ինքնապաշտպանութեան դրօշակի շուրջը, գերմարդկային ճիգ էին թափում յետ հակայեղափոխութեան ու լանկթամուրեան բարբարոսութեան արշաւանքը, մինչ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, մեն-մենակ կռւի դաշտում, ընդհարւում էր կիսավայրենի և միշտ նախայարձակ հրոսակների հետ, ձգտելով ըստ կարելւոյն շուտ վերջ դնել մի քստմնելի ողբերգութեան, ուր նա վատնում էր և՛ իր թանկագին ոյժն ու եռանդը, և՛ իր հմայքը, իբրև ազատութեան համար կռւողի, իբրև միմիայն բռնապետութեան դէմ մարտնչողի—դուրսը, հասարակական անմասն շրջաններում, մարդիկ դիագնօզի ենթարկելով իրողութիւնները, մեծ եռանդով մերկացնում և խարազանում էին պատասխանատու հեղինակներին։ Եւ ձւմ...

Տանր ու շշմեցուցիչ էր ժողովրդական ճգնաժամին ապրող կազմակերպութեան համար, երբ նա մի վայրկեան աչքերը դարձնելով արիւնոտ կրկէսից, ականջ էր դնում այդ անհեղագոչ արէօպագին, այդ իմաստուն ու խորհրդաւոր դատախազներին, որոնք իրանց կոյր, յախուռն, կրքոտ դատավճիռների մէջ յաճախ մոռանում էին նոյնիսկ շէյթան-ոճրագործին, իրանց վեր հանած պատճառների շարքում մոռանում էին գլխաւորները, էականները։

Բռնակալութեան փաստաբան մամուլը և երբեմն նոյնիսկ ազգի անունով ճառող ինտելիգենցիան, ռէակցիայի մարմնացումու[illegible]րը և յեղափոխական սոցեալ-դէմօկրատները միանում էին մի սրտաշարժ համաձայնութեան մէջ, մէկ նշանաբանով, որի ընդհանուր իմաստն այն է՝ թէ «զոհերը իրանք են մեղաւոր, պէտք է դատապարտել իրանց, զոհերին»...

Բուն յանցաւորները կամ չքանում էին հրապարակից կամ [illegible] նրանց համար փաստաբանւում էին մեղմացուցիչ հանգամանքներ, և մեղադրեալի նստարանի վրայ էր դրւում դարձեալ նոյն

ոյժը, նոյն յաւիտենապէս ամբաստանուած ոյժը, որ տագնապների, գոռ փոթորիկների ժամին նետուել է միշտ կրակի մէջ՝ ժողովրդի դատին նեցուկ կանգնելու և հակառակորդի արիւնոուշտ բնազդները սանձահարելու համար…

***

Ուշագրաւ է «պատճառների» սերիան։ Անդրկովկասեան մեծ աղէտի պատճառ են հաղխանում, մեր «իրազեկ» դատաւորների կարծիքով,—մերթ հայի տնտեսական ճնշումներն ու Թուրքի սնանկ, անճար վիճակը, մերթ երկու ազգերի բուրժուա ու ազնուական դասակարգերի մրցակցութիւնը, բայց ամենից աւելի հայկական նացիօնալիզմը և մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան ազգայնամոլ հաւատամքն ու ընթացքը, սխալ տակտիկան, նրա գրգռումներն ու պրովօկացիաները Թուրք ժողովրդի դէմ և այլն և այլն։

Ծայրէ-ծայր՝ սխալ կամ խնսխնուացիա ու զրպարտութիւն։ Տեսպենք յիշեցնել, որ պրօկուրօրները մեծ մասամբ սօցիալ-դէմօկրատներ էին…

Սխալ լուսաբանութիւնները, ոչինչ իհարկէ, եթէ մնում են սխալ լոկ թէօրիայի մէջ. բայց նրանք ցոյց են տալիս իրանց վնասակարութիւնը և գործնականում, նրանք խրախուսում են հայ ժողովրդի թշնամիներին, թև են տալիս պրօվօկատոր համիւլամականներին և նրանց հովանաւոր ոստիկանութեանը, փոքրացնելով սրանց յանցաւորութեան չափը։

Փորձենք նախ և առաջ պատասխանել այդ զարհուրելի մեղադրականներին։ Ի՞նչ դեր ունէր այդ դժբախտ հայկական «նացիօնալիզմը» կովկասեան աղէտների մէջ…

Մի կատաղի գրոհ էր, որ սկսեց Դաշնակցութեան դէմ։ Եւ սօցիալ-դէմօկրատիայի օրգաններն էին—„Искра“, „Пролетарій“ և այլն—որ տւին ազդանշանը։ Միացած „Новое Время-ի“ ու „Московскія Вѣдомости-ի“ հետ, նրանք անլուր ամբաստանութիւններ տեղացին հայ մարտական կազմակերպութեան վրայ։ «Մեղաւոր են ամեն բանում Դրօշակեաններըը»—այսպէս յայտարարեցին նրանք։ «Աղէտների պատճառը հայկական կօմիտէի շօվինիզմն է, նեղ ազգասիրութիւնը, նացիօնալիզմը»… Այո, սօցիալ-դէմօկրատներ և Սուվօրիններ միաբանեցին այդ անմաքուր արշաւանքի մէջ… Les extrémités se toushent.

Դրօշակեանները և Դաշնակցութիւնը ամենքի շրթունքների

վրայ էր… Մինչդեռ «Նովօէ Վրեմիան» այդ սև օրերում փրփուրը բերանին յոխորտում էր «փոքրիկ յանդուգն ժողովրդի դէմ, որ կախւ է հրատարակել երեք պետութիւններ»—«Մոսկովսկիա Վէդոմոստին» կատաղութեամբ շանթեր էր թափում Դաշնակցութեան վրայ։ Իր №244-ում (1905 թ.) Կատկովի արժանաւոր ժառանգը հետևալն էր գրում, ի միջի այլոց.

«Թուրքերը տառապող կողմն են… Խաբեբայ ու վաճառուած ձայները (ակնարկուած են հայ յեղափոխականները) ցեխոտել են ուզում Ռուսաստանի աւանդականօրէն հաւատարիմ հպատակ՝ երեք ու ու կէս միլիոն Թուրք ազգաբնակութիւնը, խրախուսելով նրա մէջ պաղապողի մարդասպանների անջատական հակումներ, ի վնաս ռուս կայսրութեան անդորրութեան ու ամբողջութեան։ Եւ, ինչպէս միշտ, արիւնհեղութիւնները աշխատում են գցել ռուս կառավարութեան վզին։ Ահա մի քաղուածք Կովկասի մէջ ամենատարածուած Հայկական Կոմիտէի—Դաշնակցութեան—մի պրոկլամացիայից»…

Առաջ է բերուած Կովկասեան մեր մի կենտրոնական մարմնի Թռուցիկ—կոչը, ուղղուած Թուրքերին, ուր վերջիններիս՝ մարմինը յորդորում է ճանաչել իսկական թշնամիներին ու յետ կենալ եղբայրասպան կռւից։

«Մեղաւորը հայ յեղափոխականներն են»…

Այդ անամօթ նշանախօսքը չէ՞, որ կատաղութեան փրփուր է հանում դեռ այսօր ևս զանազան Տակայշվիլիների ու Լեմիցկիների շրթունքներին. նա չէ՞, որ մի և նոյն ժամանակ թև է տալիս կովկասեան հրուշեվաններին և մահմեդական խուժանին, որոնց այնքան հաճելի է յեղափոխականի կարծեցեալ մեղքերով վարագուրել իրանց զազիր շահատակութիւնները։

Բայց… խուժանը խուժան է, բիւրոկրատն էլ բիւրոկրատ. ոչ Թուրք խուժանից ու Աղաներից, ոչ Տակայշվիլիներից, ոչ էլ բռնապետութեան զօրավիգ կազմող վատ մամուլից՝ մենք չենք պահանջում, չենք կարող պահանջել ազնիւ, շիտակ վերաբերմունք դէպի հայ կօմիտէների գործունէութիւնը և նրա հետ կապուած հրատապ խնդիրները… Մեզ համար միայն անըմբռնելի է, որ այդ սև բանակի խաղն են խաղում-թէկուզ տարբեր նկատումներով հասարակական լաւագոյն տարրերը, ամենաարմատական ներկայացուցիչները։

«Դաշնակցութիւնն է մեղաւորը»—մի՞թէ այդպէս չեն աղաղակում ամբողջ մէկ ու կէս տարուց ի վեր Կովկասում հաստատուած սօցիալ-դէմօկրատ կազմակերպութիւնները ևս. մի՞թէ կուսակցական կուրութիւնը թոյլ է տուել երբ և իցէ այդ կազմա-

կերպութիւններին, նրանց օրգաններին՝ որև է արդար, ճիշտ ու նպատակաւոր խօսք արտասանել այն մարմնի մասին, որը իրանց իսկ վկայութեամբ՝ «ցանցով պատել է Անդրկովկասի հայաբնակ գաւառները» («Искра»)։

Նրանք վաղուց արդէն կնքել են այդ մարմինը «նացիոնալիստ» ու այլ նման ածականներով, բռնել են նրա դէմ բացասական դիրք—թէկուզ և այդ ընթացքով յաճախ իրանք իսկ յայտնուեն բացասական դիրքում՝ դէպի հայ ժողովրդական դատի պահանջները։

Ինչպէ՞ս կարելի էր հանգիստ թողնել «Դաշնակցութիւնը» մեծ, անսովոր աղէտների պատճառները քննելիս. անշուշտ, նա դեր խաղացել է այդ աղէտների մէջ և, իր բնութեան համեմատ, բացասական դեր։ Նացիոնալիստ, թթու, ազգայնամոլ ու յարձակողական ձգտումներով բռնուած մի կազմակերպութիւն, անտարակոյս, իր պատասխանատւութեան բաժինն ունի թուրք ամբոխի վայրագնութեան ու մոլեգնոտ ցնցումների մէջ. հայ նացիոնալիստները, անշուշտ, գրգռել են:

Այդպէս պէտք է լինէր այն բոլոր մարդկանց երևակայութեան մէջ, այն բոլոր գործիչների ըմբռնումով, որոնք ծանօթացել են «Դաշնակցութեան» հետ թռուցիկ, հատ ու կտոր մակերեսային զրոյցներից։

Եւ ահա անօգուտ խարազանումներ։ Ահա յախուռն դատավճիռներ, ուր իզուր կը փնտրէք անաչառութեան սուերն անգամ։ Դաշնակցութեան դերը էապէս բացասական է, հակաժողովրդական։ Նա դրական ու օգտակար ոչինչ չունի իր գործունէութեան մէջ. ինչ որ արուած է ժողովրդի ինքնապաշտպանութեան, զինման ու առաջնորդութեան համար՝ արել են ուրիշները... Դաշնակցութիւնը անհետացել էր նոյն իսկ փետրվարեան օրերում Բագւի առաջին կոտորածի միջոցին. նա չէր, որ ջարդելով յետ մղեց վայրենի խուժանը և կնքել տւեց հաշտութիւնը. ոչ, սօցիալ-դէմօկրատական «Իսկրա»-ի վկայութեամբ՝ փետրւարեան օրերում Բագուն պաշտպանել են «բոլոր ազգութիւններից շտապով կազմուած բանւորական խմբերը»...

Դաշնացութիւնը միայն գրգռում է, միայն վնասում է։ Եթէ անգամ նա իր պաշտպանութեան տակ է առնում ուերի ու սարսափի մատնուած նաւթաշրջանը — դարձեալ վնասում է։ Նա

դրանով իսկ դրդում է, նա իր պաշտպանողական գործունէութեամբ իսկ աղբիւր է դառնում կառավարական խստութիւնների, թրքական արշաւանքների և ջարդերի։ Այդպէս էր տրամաբանում, օրինակ, „Пролетарій" թերթը, ռուս սոցիալ-դէմօկրատիայի միւս արտասահմանեան կենտրօնական օրգանը։ Զափազանց բնորոշ է այդ յայտնութիւնը մեր հակառակորդների ընդհանուր նկարագրի համար, ուստի մենք այն առաջ կը բերենք ընդարձակ քաղուածքով *).

«Ռուսները լուռ են և քթի տակ հայհոյում են հայերին, որպէս ամբողջ խռովութեան հեղինակներին։ Բանւորական լայն մասսաները, ճնշուած անաշխատութիւնից ու սպառնացող սովից, փնտրում են մեղաւորին և ակամայ փընտրում են նրան մօտիկում...

«Այն իրողութիւնը՝ որ այդ օրերում (Բաքւի կոտորածի օրերում) իրանց ցոյց տալ կարողացան միմիայն նացիօնալիստ Դրօշակեանները, հաստատում է իմ կարծիքով միայն այն, որ կառավարութեան տակտիկը—գրգռել մի ազգութիւն միւսի դէմ—աջողութեամբ պիտի առաջ գնայ, քանի դեռ Կովկասում գոյութիւն ունեն ազգայնօրէն առանձնացած քաղաքական կուսակցութիւններ, որոնք իրանք իրանց առաջադրում են ինքնուրոյն նացիօնալիստական նպատակներ։ Թող լինէր Բաքւում հարիւր ռուս բանւոր, հրացաններով զինուած—նրանց երևան գալը և գործօն միջամտութիւնը կունենար ահագին քաղաքական նշանակութիւն և հայերին աւելի կը տար, քան թէ կարող են տալ հարիւրաւոր լաւ զինուած դրօշակեաններ»...

Մի մեծ կուսակցութեան կենտրօնական օրգաններից կարելի է պահանջել երևոյթների լուսաբանութեան մէջ փոքր ինչ աւելի լրջմտութիւն... Ռուսական սոցիալ-դէմօկրատները, որ սրտացաւ ականատես էին հայ ազգաբնակութեան խողխողւելուն, անտարակոյս, սոցիալիստական վեհանձնութեամբ հրապարակ կը նետւէին ու վերջ կը դնէին մարդկային գարշելի սպանդանոցին, խլելով հայ ժողովրդի պաշտպանութեան գործը «նացիօնալիստ» դրօշակեանների ձեռքից, որոնք ընդունակ են միայն պատճառ դառնալ նորանոր ջարդերի և աւերումների։ Ռուս սոցիալ-դէմօկրատները անշուշտ կանէին այդ, եթէ միայն... զէնք ունենային։

Լաւ ականջ դրէք։

«Որքան և ցաւալի է, բայց պէտք է արձանագրել, որ աղէտի ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի անգամ յայտնապէս և ակտիւ կերպով հրապարակ

---

*) Այս քաղուածքները ժամանակին արել ենք Ժնեւում,—տարաբախտաբար չենք յիշատակել թերթերի համարները (1905 թւի գարնանային ամիսներում)։

չեկան՝ ոչ կուսակցական կօմիտէն (խօսքը սօցիալ-դէմօկրատ Մեծամասնութեան մասին է), ոչ էլ Փոքրամասնութեան միութիւնը... Նրանք երկուսն էլ ոչնչով ցոյց չը տւին իրանց։—Իր այդ կրաւորական դիրքը կօմիտէն բացատրում է անաջող անցած գործադուլով, որը պիտի կայանար աղէտի նախօրեակին, բայց գլխաւորապէս զինուորման պակասութեամբ»։

Մի դժբախտ գործադուլ «աղէտի նախօրեակին» երբ Թուրք խուժանը հասել էր բորբոքման գագաթնակէտին, երբ բաւական էր մի կայծ՝ մթնոլորտը բռնկեցնելու համար... Որքա՜ն հեռատեսութիւն և որքա՜ն սրտացաւ մտահոգութիւն՝ հայ ժողովրդի կեանքի և գոյքի վերաբերմամբ...

Եւ դարձեալ ընթերցող, Դրօշակեաններն են, պատճառ, որ ռուս սօցիալ-դէմօկրատները անզէն էին մնացել. որ այն սարսափելի օրերում նրանք ոչնչով ցոյց չը տւին իրանց գոյութիւնը։...

«Որ ռուս բանւորները մնացին կրաւորական դիրքում, այդտեղ մեծ չափով մեղաւոր են իրանք Դրօշակեանները։ Նրանք շատ միջոցներ, շատ զէնք ունէին. բայց նրանք միևնոյն ժամանակ կղզիանում էին ռուսներից, հրաժարւելով օգնել կօմիտէին (սօց.-դէմ.) կազմակերպելու զինուած խմբեր ռուս բանւորներից, որոնք պատրաստ էին օգնութեան գալու։ Տեղական կօմիտէն միջոցներ չունենալով (ամբողջ բուրժուազիան այստեղ հայերից է բաղկացած), ոչինչ չը կարողացաւ անել իր դրօշներով»...

Ի զուր, ի զուր կը փնտրէք մի անկեղծ ու ճշմարիտ խօսք ինսինուացիաների այս այլանդակ հիւսուածքի մէջ։ Բաւական չէ, մեր դառն, ցաւագին հիասթափութիւնը հանդէպ այն տխուր իրողութեան՝ որ հսկայական աղէտի օրերում ռուս յեղափոխական կուսակցութիւնները, իրանց իսկ կոպիտ խոստովանութեամբ, «ոչնչով» ցոյց չը տւին իրանց գոյութիւնը, որ ամեն օր, ամեն մի առթիւ ազգերի եղբայրութեան անունով խօսող, բարձրագոչ նշանաբաններով օդը խլացնող մտաւորականներն ու մասսաները ցոյց տւին ապառաժեայ անտարբերութիւն անօրինակ տագնապի օրերում, երբ ամեն մի պարզ քաղաքացու պարտականութիւնն էր օգնութեան գալ հայ ժողովրդին, քանի որ սա մղում էր ինքնապաշտպանութեան հարկադրած կռիւը վայրենութեան դէմ— բաւական չէր այդ բոլորը, դեռ նրանք անսովոր քաջութիւն ունէին հրապարակով այպանելու, սևացնելու նրանց, որոնց սիրտը արիւնոտւում էր ի տես հարազատների մասսային խողխողման, որոնք առաջ էին նետւում՝ երկաթի ուժեղ հակահարւածներով կանգնեցնելու ոճրագործ ձեռքը... Այո, նրանք դեռ իրենց զարմանալի ընթացքը քաշքշուկներով վարագուրելով, չէին վարանում

նոյն իսկ à l,unisson «Մոսկովսկիա Վեդոմոստի»-ի և ռուս կառավարութեան ամբաստանութիւններին՝ հրապարակել ի լուր աշխարհի, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը գիտակցաբար կամ անգիտակցաբար պրովօկատօրի դեր է, ստանձնել Թուրք-հայկական արիւնալի կօշմարի մէջ... Դառն է, քստմելի է։

Կան ողբալի թիւրիմացութիւններ, նախապաշարումներ հայ ժողովրդի նկատմամբ, որոնք բերնէ բերան, երկրէ երկիր տարածուելով, ստեղծում են որոշ շրջաններում աննպաստ, նոյնիսկ թըշնամական տրամադրութիւններ դէպի հայութիւնը, նրա իդէալները, նրա պաշտպանած դատը, նրա մղած պայքարը։

Այդպիսի այլանդակ նախապաշարումներից է այն վայրիվերոյ յայտարարութիւնը՝ թէ հայկական շարժումը, տոգորուած մոլեռանդ նացիօնալիզմով, ձգտում է անկախ հայկական պետութեան, կամ այն միւս տարածուած պարադօքսը, որի համեմատ հայ ժողովուրդը յայտնւում է որպէս շահի ու կեղեքման տենչանքով բռնւած, էապէս վաշխառու, առևտրական մի տարր։

Թուրք բուրժուազիայի և մահմեդական ֆանատիկոսութեան իդէօլոգները ճարպիկ կերպով կարողացան շահագործել հայ յեղափոխութիւնն ու հանուր հայութիւնը վարկաբեկող այդ թիւրիմացութիւնները։ Նրանք հնչեցրին ահազանգը հայ հարստահարիչ դրամագլխի «ոտնաձգութիւնների» դէմ, նրանք տարածեցին առասպելներ հայ կոմիտէի, նրա երևակայական շահատակութիւնների ու դաւերի մասին։ Նրանք ամեն առթիւ, առանց այն էլ կասկածամիտ ու հայատեաց բիւրօկրատիայի առջև, շեշտեցին հայի «սեպարատիզմը», հայ յեղափոխականի անջատական, ազգայնամոլ ձգտումները։ Նրանք ի ցոյց դրին հայ գործիչին, որպէս ամբարիշտ, ֆանատիկոս մի տիպ, որ միայն թունաւոր ատելութիւն ունի դէպի դրացի ժողովուրդները, մասնաւորապէս դէպի Թուրքութիւնը։

Եւ այդ առասպելներն ու ինսինուացիաներն էին, որ մեր միւս դրացիները ևս, ռուս ու վրացի որոշ կարգի սոցիալ-դէմօկրատները փութկոտութեամբ որդեգրեցին և աղմկեցին մթնոլորտը մարտական լօզունգներով—«Հայ նացիօնալիզմի դէմ», «հայկական առանձնացման դէմ», «Դաշնակցութեան դէմ»։

Թուրք իդէօլօգների, պանիսլամիզմի աւազանում մկրտուած Թուրք ագիտատօրների հակահայկական ու հակայեղափոխական

այդ տրամաբանութիւնը բղխում էր, անտարակոյս, մասամբ հետաւոր իրողութիւններից,—բղխում էր այն մեծ, ազատագրական պայքարից, որ հայ մարտական կազմակերպութիւնը տասն և հինգ տարուց ի վեր մղում է Տաճկաստանում, բռնակալ մի տիրապետութեան դէմ, հերոսական անձնւիրութեամբ ու անօրինակ զոհողութիւններով…

Դժւար է, այո, պահանջել Աղաններից մի վայրկեան թօթափել ցեղա-կրօնական ազգակցութեան, սուլթանական բռնութեան կուլտը և հասկանալ, գնահատել հայ մարտիկի հոգեբանութիւնը, նրա հերոսական պայքարի իմաստը. դժւար է պահանջել այդ մտաւոր մնանկներից նոյնիսկ տարրական ծանօթութիւնը՝ պատմական փաստերի, հայ քաղաքական կուսակցութեան ծրագրի, նրա տակտիկի և սկզբունքների, նրա առաջադրած maximum-պահանջների և այլն։ Բայց մեզ թւում է, որ այդքան ծանօթութիւն կարող էինք պահանջել վրացի և ռուս սօցիալ-դէմօկրատներից, առաւել ևս սրանց հայացեղ համախոհներից, որոնք օրթօդօքսութեան մէջ յետ չը մնալու համար, նոյնպէս երբեմն-երբեմն հրապարակ են գալիս կովկասեան մամուլի մէջ, պատրաստ կատեգորիկ յայտնութիւններով, ուր գրեթէ բոլոր պատուհասների մեղքը գցում են հայկական կապիտալիզմի ու նացիօնալիզմի վրայ։ Հասկացողութիւնները խեղաթիւրւում են և ապացոյցների տեղ դուք տեսնում էք միայն պարադօքսների ու պառաւական բամբասանքների մի տարափ…

Հայ յեղափոխութիւնը սեպարատիզմ։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ ազգային առանձնացման ջատագով, ազգերի համերաշխութեան հակառակորդ, կռիւ ու ատելութիւն սերմանող… Բայց ո՞վ է տասնուհինգ տարուց ի վեր Տաճկաստանի մըռայլ հորիզոններում համերաշխութեան քարոզ հնչեցնողը, քրդին ու տաճկին համերաշխ կռւի հրաւիրողը, ո՞վ է որ իր օրգանների մէջ, երկար տարիների ընթացքում արծարծել է խաղաղ համայնակեցութեան գաղափարը ամենայլազան համայնքերի միջև, մեղադրել է միշտ—հայկական անծայր ողբերգութեան մէջ—միմիայն սուլթանական բռնակալութիւնը և միշտ արդարացման քւէ է տւել թիւրք ժողովրդին, չը նայած վերջինիս ուղղակի մեղսակցութեան, նրա հայակեր ֆանատիկոսութեան բռնկումներին…

Անցեալի դառն, հիասթափեցնող փորձերն այդ ուղղութեամբ

չէ՞ին վհատեցնում հայ յեղափոխաղան կազմերպութիւնը և վերջին, 1904-ի Ընդհանուր Ժողովը, տոգորւած նոյն համերաշխութեան ոգով, միաձայն որոշում է՝

«Շարունակել Թիւրքահպատակ այլ և այլ տարրերու հետ (քիւրդ, տաճիկ, ասորի, ալբանացի, մակեդոնացի և այլն) համերաշխ գործակցութեան տակտիկը, որով մինչև օրս ղեկավարուած է Դաշնակցութիւնը՝ յանձնարարելով բոլոր պատասխանատու մարմիններուն ու կենտրոնական կոմիտէներուն, ըստ տեղական հանգամանքի, գործնականապէս մշակել բաղձալի մերձեցումի պահանջը այդ տարրերու հետ»։

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը քանի՜ քանի անգամ համերաշխութեան յորդորներ է ուղղել նոյնիսկ Երիտասարդ Թիւրքերին, քանի՜ցս փորձել է միանալ նրանց հետ, ծրագիրներ են կազմւել, համաձայնութիւն է կնքւել որոշ յեղափոխական ձեռնարկների շուրջը, բայց և միշտ վիժել են այդ չարաբաստիկ էքսպերիմենտները, շնորհիւ տաճիկ յեղափոխականների բարոյական հեղկութեան, գաղափարական նկարագրի և Թուիչքների բացակայութեան։

Նոյն համերաշխութեան կոչերը չէ՞ն ուղղւել և կովկասեան Թուրքերին... Տասնեակ տարիների ընթացքում նոյն իսկ հայկական լիբերալիզմը չէ՞, որ յանձին Արծրունու, սիստէմատիկաբար համերաշխ, եղբայրական գործակցութեան է հրաւիրել մահմեդական տարրը, խաղաղ, կուլտուրական ասպարէզում։ Հետևա՞նքը... Այս՞ է արդեօք հայ նացիօնալիզմը, սօցիալ-դէմօկրատական «Պրօլետարի»-ի հռչակած «ազգային առանձնացումը»...

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը համաձայնութեան դաշն է կռում Տաճկաստանում՝ մակեդօնացիների հետ, Ռուսաստանում՝ ռուս և վրացի, լեհ ու ֆինլանդացի յեղափոխական սօցիալիստներ հետ՝ ընդհանուր ոյժերով պայքարելու բռնապետութեան դէմ և իրագործելու ամենալայն ռամկավարական ազատութիւններ։

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը առաջադրել է տաճկահայկական իր ծրագրի մէջ՝ ոչ զուտ ազգային, այլ տերրիտօրիական ինքնավարութիւն, որի բարիքները պիտի վայելեն հաւասարապէս ապագայ ազատ նահանգների բոլոր համայնքները, առանց խտրութեան ցեղի և կրօնի։

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը, դեռ տասն և հինգ տարի սրանից առաջ, մտցրել է նոյն ծրագրում ռամկավարութեան և սօցիալիզմի գաղափարները, ծանուցել է աշխատաւոր դասա-

կարգի գալոց յաղթանակը, արծարծել է այդ գաղափարները թէ հրատարակութիւնների մէջ—ինտելիգենտ տարրերի համար—և այդ այն ժամանակ, երբ հայրենիքում հալածողների ճիչը և կուի շրինդը միակ ցաւոտ այժմէութիւնն էին։

Եւ, համաձայն կուսակցութեան սկզբունքներին, նրա լայն, միջազգայնական դաւանանքին, Դաշնակցութեան ֆէդայիները Տաճկահայաստանում իրանց երկարամեայ փոթորկոտ կռիւներում Թուրք կառավարութեան և քրդական հրոսակների դէմ ունեցել են գաղափարական զինուորներին յատուկ վեհանձնութիւնը՝ խնայել Թոյլերին ու ամեղներին—կանանց, ծերերին, երեխաներին—մի մտահոգութիւն, որ նրանք երբէք չեն տեսել իրանց անհոգի թշնամիների մէջ… Նոյն տակտիկով էր ղեկավարւում Դաշնակցութիւնը և ներկայ կովկասեան տագնապի միջոցին, Թուրքերի դէմ ուղղած ինքնապաշտպանութեան կռւում։ Նա բարբարոսի փոգրոգութեամբ գրոհ չէր տալիս հակառակորդի դէմ այն վայրերում, ուր վերջինը կազմում է աննշան փոքրամասնութիւն, նա տրամադիր չէ փոխ առնելու դրացու նախապատմական կուի մեթոդը և ծւատւած դիակների շուրջը դիւային խրախճանքներ սարքելու… Զերկարացնենք։

Նացիոնալիստ հայ կուսակցութեան խորհուրդը, վերջապէս,—առաջին հեղինակաւոր մարմինը Ընդհանուր Ժողովից յետոյ—մշակեց 1904 Թւականին Անդկովկասի համար գործունէութեան մի նախագիծ, հիմնւած մի կողմից՝ կովկասեան ազատ ինքնավար ազգերի դաշնակցութեան, միւս կողմից սօցիալիստական միջազգային կօնգրէսների հիմնական սկզբունքների վրայ։

Ահա «Դաշնակցութեան» նացիոնալիզմը։ Ահա թէ ինչպէս են հրապարակ նետւում—ինչպիսի աններելի թեթևամտութեամբ ամենածանր ամբաստանութիւնները մի կազմակերպութեան դէմ, որ իր դերն ունի տանջւող ու ազատագրւող մի ժողովրդի պատմութեան մէջ։

Ա՜հ, անտարակոյս, բամբասանքի ու ինսինուացիայի հերոսները, որ հետամուտ են դաշնակցականների ամենաաննշան արարքներին անգամ և որ անսովոր փութկոտութիւն են ցոյց տալիս՝ այդ արարքները յաղթական ձևերով հանրային ուշադրութեանը մատնելու համար, չեն համակերպի անգամ ամենայատակ փաստերի առջև, նրանք կըյիշեն ձեզ այս ինչ միջադէպը, այն

ինչ անկանոն, դատապարտելի քայլը, կատարուած կուսակցութեան այս կամ այն անդամի կամ խմբի կողմից։ Նրանք կը յիշեն դաշնակցական նացիոնալիզմի ու շովինիզմի այս կամ այն հակադարձ շարժումները թէկուզ հէնց վերջին երեք տարուայ ընթացքում, եկեղեցական գոյքերի յափշտակման, բիւրօկրատիայի ու Թուրք խուժանի արշաւանքների միջոցին… Բայց ում կը զարմացնեն նրանք, ում կարող են զարմացնել նոյնիսկ ծայրայեղ նացիոնալիզմի այդ մասնակի արտայայտութիւնները մի էպօխայում՝ երբ հայը իր շուրջը տեսնում է միայն արիւն ու արհաւիրք, երբ դրակօնական, բացառիկ օրէնքները բոլոր թափով նրա վրայ են ծանրանում, երբ նրա գոյութեան դէմ, նրա հաւաքական, ցեղային գոյութեան դէմ դաւեր է նիւթում բոլոր սև ուժերի դաշնակցութիւնը, երբ երեկուայ խաղաղ ու անդորր կարծուած հայրենիքում բռնաբարում են նրա ամենանուիրական սրբութիւնները, արիւնով ներկում եկեղեցիների գաւիթները, կօզակների սւինների տակ տալիս կանանց և երեխաներին. երբ լանկթամուրական արշաւանքը ուրագանի պէս պայթում է անզէն ժողովրդի վրայ, անապատ դարձնում հայի արիւն-քրտինքով մշակուած շէն վայրերը, չորս կողմը սփռում դիակների կոյտեր, կսկիծ ու հառաչանք, նզովք ու ցասում,—և երբ արիւնալի այդ քաօսի մէջ, բռնութիւնների, լացի ու փախի այդ հսկայական տարտարոսում չը կայ ոչ մէկը, որ գէթ կարեկցութեամբ ձեռք մեկնէ անարգ, հրէշային դաւադրութեան արիւնոտ զոհին, երբ շրջապատող հասարակութիւնները ընդհանուր առմամբ անզգայ հանդիսատեսի դեր են կատարում և նոյն իսկ՝ լռելեայն կամ բացարձակօրէն՝ մեղադրում են զոհին, փաստաբանում դահճին… Ասացէք խնդրեմ, ո՞ր խելահաս մարդը կարող է քար նետել այն երիտասարդի վրայ, որը անհնարին զայրագնութեան մէջ այս կամ այն դէպքում, այս կամ այն առթիւ —թէկուզ հէնց յեղափոխական դրօշակի տակ բուռն, ծայրայեղ արտայայտութիւն է տալիս իր շատ բնական հայրենասիրութեան…

Հայահալած չարակամութիւնը սահման չունի։ Հայի ինքնապաշտպանութեան քայլերն անգամ աններելի յանցանք եղան կովկասեան հայատեաց արէօպագի աչքում։ Յիշեցէք, ընթերցող, թէ որպիսի թշնամանք ու ցասում յայտնեցին վրացի և Թուրք շովինիստները Նակաշիձէի սպանութեան առթիւ, ինչպիսի անպատ-

կառ ցոյցեր եղան հայերի դէմ։ Հնաւանդ, վայրենի ատելութիւնը չէր կարող մարսել, որ երեկւայ հլու «ռայան» կարողանար այնքան սասանեցուցիչ ձևերով պատժել իր ժողովրդի դահիճներին։ Նրանք չէին կարող մարսել և ուրիշ մի շարք տերրորական ակտեր, որ Դաշնակցութիւնը ի գործ դրեց—ընդհանուր մասսային շարժման հետ միասին—իբրև անհրաժեշտ պրէվանտիւներ, իբրև կանխիչ և միանգամայն վրէժխնդիր միջոցներ, որոնք նպատակ ունէին ըստ կարելւոյն նւազեցնել սարսափների, կառավարչական տերրորների կրկնողութեան հնարաւորութիւնը։ Հայը համարձակւում է պաշտպանւե՛լ, դժո՜խք և անէծք,—ոռնում էր մարդախոշոշ արջօպագը…

Cet animal est très mechant
Quand on l'attaque, il se defend. *)

Եւ զայրանում ու զարկում են անհակոչանակը հայի մեղապարտ յանդգնութեան դէմ. ռումբն ու տերրորը ենթարկում են թուրք աղաների ու մօլլաների, վրաց պորտաբոյծ ազնւականութեան շանթարձակ անաթեմաներին, որոնք մի անլուր ցինիզմով հնչեցրւում են կովկասեան կառավարչապետի պալատում… Հայի դրացի ժողովուրդների բշխող դասակարգերը այդպիսով ձեռք ձեռքի տւած, մի սրտառուչ համերաշխութեամբ, հանդիսաւորապէս ստանձնում են մատնիչի դեր և ամբողջ հայ ժողովուրդը դրւում է մեղադրեալի նստարանի վրայ։ Հսկայական պատմութեան մէջ չը տեսնւած օստրակիզմ… Հայութեան երդւեալ թշնամիները չեն կարող հանդուրժել առհասարակ հայկական շարժումը և, ինչպէս որ հայ կապիտալիզմի մէջ նրանք տեսնում են համայնակուլ մի հրէշ, որ մի օր պիտի նւաճէ բովանդակ Կովկասը, այնպէս էլ հայ շարժման մէջ նրանք կարծես ընդնշմարում են մի չարագէտ սկզբունք, ուղղւած ոչ միայն բիւրոկրատիայի, այլ և իրանց բոլորի դէմ։ Ահա մի ողբալի մտավիճակ, որ պակաս դեր չէ խաղում մեր ժողովուրդի դժբախտութիւնների մէջ։ Հայ յեղափոխական տարրի ամենաբնական կռւի ձևերը, բիօլոգիական աշխարհում իսկ ընդունւած ու սրբագործւած արտայայտութիւնները, դառնում են օտար չարակամ քննադատների աչքում մի անախրօնիզմ, դիւային մի խաղ…

Ոչ, և դարձեալ ոչ։ Մենք «ազգային առանձնացում երբէք չենք քարոզել և չենք դաւանել։ Եւ եթէ վրացի սօց.-դէմօկրատ-

---

*) Այս կենդանին շատ չարն է, երբ նրան խփում են—պաշտպանւում է։

ները որոշել են անդադար կռուել նացիօնալիզմի դէմ, ոչնչացնել նրան իր արմատում»*), եթէ այդտեղ ի նկատի ունեն մեր նացիօնալիզմը, ապա նրանք զարնում են բաց դռներ։ Նոյնքան անստած են վրացի սօցիալ-դէմօկրատների միւս յայտարարութիւնները՝ թէ «վտանգաւոր է պարզել ազգային դրօշակներ»—իբր թէ նրանք են պատճառ դառնում խուլիգանական շահատակութիւնների—թէ ազգայնական ընդհարումները ծնունդ են հէնց նացիօնալիզմի, թէ ուրիշ կուսակցութիւնների շնորհիւ է, որ «հայ գիւղացիները ոչ մի մասնակցութիւն չեն առնում ընդհանուր յեղափոխական շարժման մէջ և այլն և այլն»։

«Ազգային դրօշակներ չը պէտք է հանել»—ահա մի պահանջ, որ միանգամայն ներդաշնակւում է ռուս «պրօլետարի»-ի ծանօթ յիշատակւած յայտարարութեան հետ՝

«Այն իրողութիւնը՝ որ այդ օրերում (Բագւի կոտորածի օրերում) իրանց ցոյց տալ կարողացան միմիայն նացիօնալիստ Դրօշակեանները, հաստատում է, իմ կարծիքով, միայն այն, որ կառավարութեան տակտիկը—գրգռել մի ազգութիւն միւսի դէմ—աջողութեամբ պիտի առաջ գնայ, քանի դեռ Կովկասում գոյութիւն ունեն ազգայնօրէն առանձնացած քաղաքական կուսակցութիւնները, որոնք իրանք իրանց առաջադրում են ինքնուրոյն նացիօնալիստական նպատակներ»։

Կովկասեան ինքնատիպ մարքսիզմը դեռ շատ անակնկալներ պիտի պատճառէ մեզ պրօֆաններիս, իր ինքնատիպ սօցիալօգիական գիւտերով։

Ազգային դրօշակներ չը պէտք է պարզել, ազգի անունով առհասարակ չը պէտք է խօսել ու գործել—դա նացիօնալիզմ է և դուցէ... սօցիալիզմի պրօֆանացիա... Օրինակը վարակիչ է, մանաւանդ հայերի մէջ, ծանծաղամիտ կօսմօպօլիտիզմը «առաջադիմութիւններ» է անում—և մենք չենք զարմանում, տեսնելով անհատներ, որոնցից իւրաքանչիւրը իր նորընծայական յափշտակութեան մէջ, «ուղղադաւան» թէօրիաներով տարւած՝ կասէ ձեզ, օրինակ, թէ ինքը «մարդ է» կամ սօցիալ-դէմօկրատ է, կամ ռուսաստանցի սօցիալ-դէմօկրատ է, և դժկամակութեամբ ու ամաչելով միայն կը յիշատակէ իր ազգային ծագումը,—ճիշտ այնպէս ինչպէս հին փիլիսօփայութեան նէօ-պլատօնական յայտնի շկօլայի ներ-

---

*) Այդպէս է ասւած վրաց «Սօցիալ-Դէմօկրատ»-ի մի յօդւածի մէջ, որ թարգմանւած է ռուսական «Սօցիալ-Դէմօկրատի»-ի 8-րդ համարում 1905 թ. և այնտեղից անցած «Րէւօլ. Րօսսիայի» մէջ։

կայացուցիչ Պլոտէնեսը ամաչում, կարմրում էր, որ մարմին ունէր,- այնքա՜ն սպիրիտուալիզմը, հոգեպաշտական դոգմաները գերել էին նրան...

Ազգային դրօշակներ չը պէ՛տք է պարզել... 1903-ի աշնանը չը պէտք էր հրապարակ գալ ազգային պա՛րօլով, թէպէտև խլւում էին ազգի ուրոյնութեան վերջին մնացորդները. յեղափոխականը տարրը չը պէտք է կոչէր՝ «կեցցէ՝ հայութեան բռնաբարւած իրաւունքը». «Դաշնակցութիւնը» չը պէտք է կազմակերպէր իր խմբերը բիւրօկրատիայի ու Թուրք խուժանի դէմ նոյն ազգային նշանաբանի տակ, նա չը պէտք է առաջ մղէր քաղաքների և գիւղերի վտանգւած հայ ժողովուրդը՝ նոյն վտանգւած հաւաքական գոյութիւնը զէնքը ձեռին պաշտպանելու համար... Այդ բոլորը «նացիօնալիզմ» է և «Դաշնակցութեան» այդպիսի միջամտութիւնը, վրաց ս.-դ. օրգանի ասելով, տրամադրում էր «հայ գիւղացիներին՝ ոչ մի մասնակցութիւն «առնել ընդհանուր յեղափոխական շարժման մէջ» (կարծես հայ ժողովրդական այդ ըմբոստացումը կալւածների գրաւման առթիւ՝ այդ ընդհանուր, հակապետական շարժման մի արտայայտութիւնը չը լինէր)... Այդ բոլորը նացիօնալիզմ է, դրա փոխարէն պէտք էր միայն կանգնել հրապարակի վրայ և զիլ ձայնով աղաղակել՝ «պրօլետարնե՛ր բոլոր երկրների, միացէ՛ք»—և հայ ժողովուրդը դարման կը ստանար իր ցաւերին...

Ժամանակ է, որ թողնեն սխոլաստիկական մտածողութեան այդ տարամերժ ձևերը, չը կաշկանդեն, չը խեղաթիւրեն նրանցով նոր կեանքի կոչւող երիտասարդութեան հարցասէր միտքը: Առողջ տրամաբանութիւնը ըմբոստանում է այդ կամայական ու բռնազբօսիկ ֆօրմուլաների դէմ. նա ասում է, որ կարելի է սօցիալիստ լինել և ամենաջերմ պաշտպան կանգնել իր ազգային իրաւունքների ու անկախութեան. նա հաստատում է, որ կարելի է նոյնիսկ ուղղափառ մարքսիզմ դաւանել և հրապարակ գալ ազգային դրօշակի ու նշանաբանի տակ, որոշ մօմենտում, երբ վտանգ է սպառնում ազգայնութեան ինքնուրոյնութեան, նրա ազատ ու նորմալ զարգացման:

Ճշմարիտ, ոչ խեղաթիւրւած սօցիալիզմը զանազանում է այն ռազմատենչ, աշխարհակալող ու վնասակար նացիօնալիզմը, որ վերջին տարիներում գլուխ է բարձրացրել ու այնքան տխուր հռչակ է ստացել Ֆրանսիայում ու Անգլիայում, և այն միւս «նա-

ցիօնալիզմը», որ այլ ինչ է, բայց եթէ ձգտում ազգային վերածնութեան ու առաջադիմութեան, ձգտում՝ կրթելու և բարձրացնելու հարազատ ժողովուրդը համամարդկային իդէալների ոգով։ Ճշմարիտ սօցիալիզմը նշաւակում է, անարգ սիւնին մեխում ոչ այն ազգայնութիւնը, որ սեփական արիւնն է թափում ազատ, ինքնագլուխ ապրելու համար, այլ այն միւսը, որը արեան հեղեղների մէջ խեղդել է ուզում ուրիշ ազգերի ազատութեան թռիչքները։ Չափազանց տարրական բաներ են սրանք և վաղուց ժամանակ է հասկանալ։

Հայ դաշնակցականը նոյնպիսի իրաւունքով կարող է փառաբանել իր ազգայնութեան դատը, որպիսի իրաւունքով մի Բէբէլ կամ մի Պրէսանսէ պատրաստականութիւն կը յայտնեն զէնքը ձեռքին ասպարէզ նետուելու՝ իւրաքանչիւրը իր Հայրենիքը պաշտպանելու համար։

Հայ դաշնակցականը նոյնքան իրաւունքով կարող է սիրել իր լեզուն, երկիրը, պատմութիւնը, որքան իրաւունքով մի էնտրանզիժան սօցիալիստ Ֆէրրի կարող է բացականչել. «Ես շատ սիրում եմ իմ մեծ հայրենիքը՝ Իտալիան»։

Այսպէս է հրահանգում իսկական, չը խեղաթիւրուած սօցիալիզմը։ Այդ է բուն իմաստը և այն ծանօթ, տարածուած բանաձևի, որի անունն է «ազգայնական ինքնորոշում» և որը Ռուսաստանի ու Կովկասի սօցիալ-դէմօկրատների աչքում կարծէք մի դատարկ աւելորդ ֆօրմուլ է, որ ծառայում է միայն ագիտացիական նպատակների և որի մէջ երբէք չը պէտք է դնել որ և է կօնկրետ բովանդակութիւն, այնպէս կընկնէք նացիօնալիզմի գիրկը և կարժանանաք կովկասեան պապերի ահեղ բանադրանքին...

II

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴՐՈՇԸ ԵՒ ՀԱՅ ՆԱՑԻՕՆԱԼԻԶՄԸ

Սօցիալ-դէմօկրատիայի խաղացած դերը

Նախապաշարումներ.—«Դաշնակցութեան» նացիօնալիզմը.—«Ազգային դրօշակներ չը պէտք է պարզել».—Սօցիալիզմ և նացիօնալիզմ.—Վրացական ինտելիգենցիայի դիրքը.—Իմերիականներ և մարքսիստներ.—Ս.-դ.-ների սխրագործութիւնները.—Ս.-դ.-ական մի րէզօլիւցիա.—Հայ և Թուրք հաւասարապէս մեղսակից.—Հայ լիբերալիզմի և բուրժուազիայի դերը.—Թուրքական դրօշը «կազմակերպուած պրօլետարիատը».—Ս.-դ.-ական մի օրիգինալ առաջադրութիւն.—Հայը պէտք է հաւատարիմ Թուրքին.—Վրացամոլութիւնը կովկ. սօցիալ-դէմօկրատիայի մէջ.—Մի դօկումենտ.—Մի պրօկլամացիա.—Սօցիալ-դէմօկրատիան՝ պրօվօկատօրի դերում.—«Դաշնակցութեան» թռուցիկները հայ-թուրքական ընդհարումների առթիւ.—

Անորակելի է և անհաւատալի այն բոլորը, ինչ որ կովկասեան սօցիալ-դէմօկրատիան արեց ու գրեց վերջին մէկ ու կէս տարուայ ընթացքում թուրք-հայկական ընդհարումների և Դաշնակցութեան դերի առթիւ։ Սկզբից մինչև վերջ—տենդենցիօզ ու աչառու վերաբերմունք՝ դէպի կատարուող իրողութիւնները, դէպի հայերը, դէպի նրանց պաշտպան կազմակերպութիւնը։

Սկզբից մինչև վերջ վրացական բորբոքուած շօվինիզմն էր բարձրաձայն աղաղակում այդ կուսակցութեան խօսքի ու գործի մէջ, մի կուսակցութեան՝ որ իր ճնշող մեծամասնութեամբ կազմուած է վրացիներից և որի մէջ այդ տարրը գրեթէ բոլորովին լուծւում է, դիմազուրկ լինում, կամ յամենայն դէպս կատարում է մի չափազանց արգահատելի դեր, յայտնելով իբրև հլու աւտօմատ, իբրև կոյր գործիք, իբրև մի տեսակ instrumentum vocale...

Գանգատներ ունի հայ ժողովուրդը իր հարևան վրացիների դէմ, դառն, կշտամբող, արդար գանգատներ, որ մի օր, վստահ ենք, պիտի արձանագրեն իրանք վրացի պատմագիրները և պիտի զզւանք ու ցաւում զգան, տեսնելով, թէ որքան անարժան դեր է խաղացել վրաց ինտելիգենցիայի մի ստուար մասը հայ մորթուող ժողովրդի դիմաց, նրա պատմական, անօրինակ ու աշխարհադղորդ տագնապի ընթացքում... Փաստերը չափազանց շատ են և մոռանալ անհնարին է։

Այդ շովինիստ ինտելիգենցիայի օրգանները չէի՞ն «Իվերիա» ու «Մօգզաուրի» և այլն—որ փրփուրը բերնին արշաւում էին հայերի, միշտ հայերի դէմ և միաժամանակ աչքերը փակում Թուրք աղալարների մշտնջենական դաւերի վրայ, Թուրք խուժանի սիստեմատիկ նախայարձակների վրայ...

«Իվերիան» չէ՞ր, որ Թիֆլիսի ընդհարումներից յետոյ հրապարակով պահանջում էր քննութիւն կատարել Դաշնակցութեան կատարած դերը պարզելու համար. quasi—մարքսիստ «Մօգզաուրին» չէ՞ր, որ խորիմաստ կերպով պատճառաբանում էր.

—«Եթէ հայ պրօլետարիատը դասակարգային գիտակցութիւն ունենար, և չը շահագործւէր հայ շովինիստ բուրժուազիայից ու հոգևորականութիւնից՝ տեղի չէին ունենայ հայ-Թուրքական ընդհարումները»...

Վրացի մարքսիստների բերան-օրգանը դրանով պարզ ակնարկում էր, որ հայ պրօլետարիատը ոչ միայն մեղսակից է ընդհարումներին, այլ և ուղղակի պրօվօկատոր է, որ նա գրգռել ու յարուցել է ընդհարման աղէտը։

Նոյն լեզուն է բանեցնում, նոյն ստայօդ ու չարագործ միտքն է յայտնում և այն նշանաւոր «րէզօլիւցիան», որ վրացական սօցիալ-դէմօկրատիան ձևակերպեց 1906-ի մայիսի 26-ին, Թիֆլիսի լիազօրների համագումարում (Պետական Դումայի ընտր. միջոցին).

«Ի նկատի ունենալով, որ կովկասեան արիւնոտ իրականութեան խոշոր երևոյթներից մէկը, այսպէս անւանւած Թուրք-հայկական կոտորածը, անմիջական հետևանք է կառավարչական պրօվօկացիայի, որ հաստատւած էր **երկու Թշնամացած կողմերի մութ ու րէակցիօներ տարրերի վրայ**, որոնց կառավարութիւնը ոտքի էր կանգնեցնում ու գրգռում ազգայնականութեան խաղաղ մասի վրայ, այդպիսով կազմելով քաղաքականապէս րէակցիօն (յետադէմ) մի բանակ և ուղղելով նրան ընդհանուր ազատագրական շարժման դէմ»...

Անհաւատալի առաջին նախադրեալը այդ վրդովեցուցիչ «րէզօլիւցիայի», որ յիշեալ համաժողովը ընդունեց հայ-Թուրքական ընդհարումների առԹիւ և յանձնարարեց իր ընտրեալին պաշտպանել Պետական Դումայում։

«Կառավարչական պրօվօկացիան, հաստատւած երկու Թշնամացած կողմերի մութ ու յետադէմ տարրերի վրայ» *)։ Այս էր արդիւնքը

---

*) Նօտրագիրը մերն է։ Ս. Յ.

մէկ ու կէս տարի շարունակւող հայկական աղեխարշ նահատա-կութեան... Եւ ինչ զարմանք, որ այդ տեսակ յայտարարութիւ-ներից կարող էին ցնծալ Թուրք ժողովրդի խուլիգանները, ու-րախութեան ծափ կը զարկէին պանիսլամիզմի ու հակայեղափո-խութեան այլասերուած շամպիօնները,—նրանք այլեւ մենակ չէին. նրանց հետ միասին տեղաւորում էին միեւնոյն սեւ տախտակի վը-րայ, մեղադրեալների միեւնոյն աղտոտ նստարանի վրայ՝ հայ ժո-ղովրդի «մութ ու ռէակցիօն տարրերին»... Կովկասեան սօցիալ-դէմօկրատները այդպէս էին որոշել, «արդարութեամբ», «անաչառ-ութեամբ», և պատրաստ էին այդպէս ծանուցանել ամբողջ աշ-խարհին։ Ամբողջ աշխարհը պէտք է իմանար, որ եթէ Կովկա-սում երկու ցեղեր 18 ամսից ի վեր պատերազմի մէջ են՝ դրա-նում մեղաւոր են հաւասար չափով երկու ցեղերն էլ։ Թուրք տար-րը չէ միայն, որ հզօր պատճառ է հանդիսանում հակայեղափոխու-թեան,—այլ և հայ տարրը. նա էլ ենթակայ է պրօվօկացիայի, նա էլ արտադրում է «մութ ու ռէակցիօն տարրեր», որոնք անարգ գործիք են լինում Նակաշիձէների ու Տակայշվիլիների կեղտոտ ձեռքերում. մի խօսքով, հայ ժողովուրդը եւս, Թուրք խուժանի պէս, միացած համառուսական խուլիգանութեան, սեւ-հարիւրա-կեան շարքերին՝ փչում է եռանդով ռէակցիայի ազատասպան կը-րակը...

Զազիր ու ոճրագործ սուտ—և գիտակից սուտ, ոչ թիւրիմա-ցութիւն, ոչ մոլորութիւն։ Կովկասեան սօցիալ-դէմօկրատները, ո-րոնց շարքերում այնքան վառ է վրացական նացիօնալիզմը, գի-տակցաբար, առանց վարանման խեղաթիւրում էին ճշմարտու-թիւնը և այդպէս վարւելով, նրանք յաւակնութիւն ունէին խօսե-լու նոյն իսկ հայ մասսաների անունից... Թշւառ, վատաբախտ հայ մասսաներ, ինչ տմարդի ոճիրներ են գործւում քո անունով և սօցիալիզմի հովանու տակ... Թշւառ սօցիալիզմ, ինչպէս անայ-լայլ թեթեւամտութեամբ իմաստակները ամեն քայլափոխում ա-րատաւորում են քո դրօշակը...

Մենք չենք իդէալականացնում հայ ժողովրդին և ամենեւին տրամադիր չենք կարծել, թէ նրա մէջ չը կան մութ ոյժեր, չը կան յետադէմներ. այդպիսի միտք անգամ չի անցնում մեր գը-խով։ Հայերի մէջ կարող են լինել շատ մութ ու անգիտակից մարդիկ, նոյն իսկ Թունդ աքքայականներ և խուլիգաններ, բայց

նրանք երբէք մասսա չեն կազմել և, որ գլխաւորն է, նրանք երբէք կառավարչական պրովօկացիայի չեն ենթարկուել: Ինքը՝ կառավարութիւնը երբէք չէր յանդգնի գրգռել հայերին իրանց դրացիների դէմ, նա գիտէր, որ հայ ժողովուրդը իր ամբողջ էութեամբ, իր ամբողջ պատմութեամբ մի խաղաղասէր ու կուլտուրապաշտ համայնք է, ազատ՝ գիշատիչ, յարձակողական ախորժակներից, հեռու արիւնալի արկածներից. նա գիտէր այդ և չէր յանդգնի փորձ անգամ անել գրգռելու հայերին. դրա համար նա բնաւ հող չունէր... Եւ եթէ, վերջապէս, par impossible, մոգական գաւազանի մի հարուածով, սրանից մի երկու տարի առաջ պայթէր խմբովին նախայարձակը որև է տեղ հայերի կողմից իրանց դարաւոր թուրք հարևանների դէմ—ապա կար հրապարակի վրայ այն քաղաքական, կազմակերպուած ոյժը—Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը—որ անմիջապէս կը խեղդէր եղբայրասպան ոճիրը և քաւել կըտար նրա սատարող հերոսներին... Սա մի անվիճելի իրողութիւն է, որ չի կարելի ժխտել առանց մեղանչելու ազնւութեան դէմ: Ագիտացիան չը պէտք է մթնացնէ, խեղդէ մեր մէջ բարոյական տարրական պահանջը: Ագիտացիական ինտերեսից դուրս՝ կայ ճշմարտութեան ինտերեսը, աւելի բարձր, աւելի հրամայական՝ որին և միայն պէտք է համակերպենք: Թուրք կալուածատէր Ջիաթխանօվն անգամ, Պետական Դումայում արտասանած իր ճառի մէջ—թուրք-հայկական ընդհարումների վերաբերեալ—զգուշացել էր սօցիալ-դէմօկրատական պատճառաբանութեամբ հրապարակ գալ ու պնդել երկու կռւող ժողովուրդների համահաւասար մեղսակցութեան վրայ:

Ոճիր է, այո, մի արիւնաքամ ժողովրդի դիմաց—որ ինքը մեծագոյն զոհն է բոլոր չարագործ ինտրիգների ու պրօվօկացիաների, որին երեկ բիւրօկրատիան և թուրքական խաւար տարրերի խուլիգանութիւնը պառկեցրել էին չարչարանքի անկողնի վըրայ—ոճիր է, ասում ենք, նետել մի այդպիսի ժողովրդի երեսին անարգական մեղադրանքը, թէ՝ «դու էլ պատճառ ես եղած քո դժբախտութիւնների, դու էլ արտադրել ես՝ «մութ, խուլիգան, ռէակցիօն, տարրեր», որոնք թև են տւել արիւնածարաւ բիւրօկրատիային և հայաջինջ պօգրօմների պարագլուխներին՝ Նակաշիձէներին, Աւալիանիներին...

Մի՞թէ պարզ չէ այս մեղադրանքի բոլոր նողկալի ըն-

տութիւնը։ Մթի՞է կարող էին առանց խղճահարւելու այդպէս տրամաբանել մեր սարսափելի ճգնաժամին սկզբից մինչև վերջ հետևողները, նրանք որ տեսել են, թէ ինչ սանդարամետային դաւերով է առաջացրել Բագւի անդրանիկ կատաստրոֆը, նրանք որ վկայ են եղել Նախիջևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի հողմանման աղէտներին, որոնք բոլորն էլ նախամտածւած, նախօրօք կազմակերպւած ձեռնարկներ էին հայ ժողովրդի դէմ, նրա կուլտուրական և ֆիզիքական գոյութեան դէմ... Մի՞թէ կարող են մարդիկ—թէկուզ և անւանւեն նրանք կովկասեան սօցիալ-դէմօկրատներ—պնդել, առանց ճշմարտութիւնն անարգելու և իրանց քաղաքական կուսակցութեան արժանապատւութիւնն արատաւորելու, թէ այդ հայաջինջ աղէտների մէջ, այդ բացարձակապէս հակահայկական արշաւանքների մէջ, նրանց խթանների, պատճառների շարքում որև է տեղ ունին հայ կոտորւող ու հրդեհւող ժողովրդի «մութ ու րէակցիօնէր տարրերը», թէկուզ հայկական բուրժուազիան, թէկուզ հայկական խուժանը...

Հայ բուրժուազիայի դաւերի վրայ ևս սիրում է ծանրանալ վրաց ինտելիգենցիան, մասնաւորապէս ս.-դ.-ները. սիրում են նրանք խօսել այդ դասակարգի «ազգային առանձնացման» ձգտումների մասին շօվինիզմի ու յարձակողական տրամադրութիւնների մասին և այլն։

«Հայ բուրժուազիան քարոզել է հայ ժողովրդական մասսաների մէջ ազգայնական առանձնացում և այդպիսով պարարտ հող է պատրաստել պրօվօկացիայի համար»,—այդպէս էր յայտարարում Վլադիկաւկազի ս.-դ.-ական «Голосъ Кавказа»-ն իր 1906-ի № 2-ի մէջ, ի պատասխան մեր մի յօդւածին, ուր քննադատել էինք սօցիալ-դէմօկրատիայի խաղացած դերը թուրք-հայկական անցքերի մէջ։

Զեռնհա՛ս, խիստ ձեռնհաս են այդ պարոնները, մեր հայկական իրականութեան դէմ դատավճիռներ արձակելիս...

Չը կայ գուցէ ամբողջ Ռուսաստանում, ամբողջ աշխարհում մի այլ բուրժուազիա, որ այնքան հեռու լինէր նեղ-ազգայնական մտահոգութիւններից, որ այնքան քիչ կապւած լինէր իր ազգային ստացւածքների հետ, ինչպէս հայկականը։ Նա իր մայրենի լեզուն անգամ դուրս է վտարել իր ընտանիքներից—լեզուն՝ որ ազգայնութեան էական խարիսխն է, նա յօժարակամ օտարախօս է—էլ ինչ են դալիս շարունակ ճառում մեզ հայ բուրժուազիայի

նեղ ազգասիրութեան, շովինիզմի, «ազգային պետութիւնը» վերականգնելու ձգտումների մասին և այլն... Դրանք բոլորը ծնունդ են միայն թերուս ու անուս իդէօլօգների երևակայութեան,—իդէօլօգների՝ որոնք հասարակական ամեն մի երևոյթի քննութեան մէջ տեղի-անտեղի խոթել են ուզում իրանց սերտած, միանգամ ընդ միշտ բիւրեղացած ֆօրմուլաները բուրժուազիայի, պրօլետարիատի, դասակարգային անտագօնիզմի մասին։

Շովինի՞ստ—հայ բուրժուազիա՞ն...

Մենք գիտենք, ճանաչում ենք ուրիշ բուրժուազիաներ, ճնշուած, պատմական ազգութիւնների մէջ—Լեհաստանում, Իռլանդիայում, Յունաստանում, որոնք յիրաւի լցուած ազգային նախանձախնդրութեամբ, գիտակ իրանց հասարակական ճակատագրին, ուրոյն պատմական առաքելութեան՝ ամփոփուել են իրանց ազգայնական շրջանակների մէջ և յամառ ու յարատև պայքար են մղել շրջապատող բռնաւոր ուժերի ոտնձգութիւնների դէմ, ռուսացման, անգլիացման, թիւրքացման վտանգների դէմ—և լաւ են արել նրա՛նք, այդ բուրժուա դասակարգերը, նրանք բացասական գործ չեն կատարել. այդ նացիօնալիզմը մի դրական ֆակտոր է մարդկային պատմութեան մէջ, առանց նրան՝ Լեհաստանը, Յունաստանը, բոլոր փոքրիկ ու հալածական, օտար լծի տակ հեծող ազգերը պիտի լուծուէին իշխող տարրերի մէջ, պիտի կորչէին, իբրև ուրոյն, առանձնայատուկ միութիւններ, իսկ դա կը լինէր անդառնալի կորուստ մարդկութեան համար, որը, ճիշտ է, ուզում է մէկ լինել, ներդաշնակ լինել ու ամբողջական, բայց ոչ միակերպ ու միապաղաղ, այլ բազմօրինակ եւ այլատարր։

Այո, այդ նացիօնալիզմը, որ նոյնանում է ազգային իրաւունքների արդար ու օրինաւոր պաշտպանութեան հետ, նոյն իսկ այդ ինքնամփոփ, «բուրժուազական» նացիօնալիզմը մի դրական ու արգասաւոր գործօն է մանր ու ստրուկ ազգերի կեանքում. բայց կա՞յ, եղե՞լ է նա հայ բուրժուազիայի մէջ...

Թող լաւ իմանան մեր իրականութեան մասին այնքան ապլոմբով ճոռոմաբանող ս.-դ.-ները, որ հայ բուրժուա ու վաճառական դասը այն չէ, ինչ որ նրանք են իրանց պատկերացնում, որ այդ դասակարգը հայոց վերածնութեան առաջին օրերից, Նազարեանի ու Նալբանդեանի ժամանակից ի վեր քարկոծուել է միշտ հայ գրականութեան ու հրապարակախօսութեան մէջ և քարկոծ-

ւել է հէնց այն պատճառով, որ զուրկ է հայրենասիրական, ազգայնական ոգուց, որ նա, չնչին բացառութեամբ, անտարբեր է եղել միշտ դէպի ազգային ստացւածքները, լեզուն, մամուլը, գրականութիւնը և այլն, որ նա չի պայքարել բռնի ձուլման, բռնի ռուսացման ձգտումների դէմ, այլ ընդհակառակը հանդէպ է գնացել այդ ձգտումներին, որ նա ընդհանուր առմամբ արհամարհել է, անտես է առել նաև իր ազգային-քաղաքական դատը Թիւրքահայաստանում, ամենադժբախտն ու ամենաարիւնոտը բոլոր դատերից, արհամարհել է այդ դատը փաստաբանող, նրա համար մարտնչող յեղափոխական երիտասարդութիւնը, խուլ-համր է ձևացել նրա սրտառուչ յորդորների և օգնութեան աղաղակների դիմաց... Հաւակնում են սօցիալ-դէմօկրատիզմի բոլոր օտար ու հայ նէօֆիտները; թէ ինչպէս նրանք խեղաթիւրում են մեր իրականութիւնը, դուրս բերելով մեր ուլտրա-կօսմօպօլիտ բուրժուազիային, (ծոյլ ու անգոյն, ապազգայնական կօսմօպօլիտիզմն է դա, որ ոչ մի ուրիշ պետութիւն չի ճանաչում, բացի դրամի անսահման, անարգ պաշտամունքից), իբրև ազգայնամոլ մի դասակարգ, որ իբր թէ տոգորուած է ծայրայեղ հայրենասիրութեամբ, ազգայնական առանձնացման ու տիրապետութեան բաղձանքներով։ Հաւակնում են նրանք, որ իրանց խակ դատողութիւններով ու մեկնութիւններով միայն հայակեր Սուվօրինների կրակին են իւղ ածում...

Ազգայնամոլ երբեք չի եղել և հայ լիբերալիզմը։ Սօցիալիստ լինել—չի նշանակում ծուռ, խարդախ լինել, աղաւաղել ու կեղծել իրողութիւնը և առհասարակ անազնիւ միջոցներով դուրս գալ ոչ սօցիալիստ հակառակորդի դէմ։ Սօցիալ-դէմօկրատ լինել չի նշանակում միևնոյն ֆօրմուլային, միևնոյն ընդհանուր յայտարարին վերածել աշխարհիս բոլոր լիբերալ, ազատամիտ կուսակցութիւնները։ Շօվինիստ, նեղ ազգամոլ երբեք չի եղել և հայ լիբերալիզմը։ Մեր խօսքը, ի հարկէ, այժմեանի մասին չէ, որ քարշ է տալիս մի անդամալոյծ ու յուսահատ գոյութիւն, մենք խօսում ենք անցեալի լիբերալիզմի մասին, որի առաջնորդը ու հուժկու ներկայացուցիչն էր Արծրունին։ Երբեք նա չի դաւանել այն մարդատեաց, օտարամերժ շօվինիզմը, որ յատուկ է օրինակ գերմանական նացիօնալ-լիբերալներին, բիսմարկեանութեան պատւար կուսակցութեան։ Ընդհակառակը։ Եօթանասնական թւականներից նա քարոզել է միշտ թուրքին, վրացուն, ռուսին, քրդին,

բոլոր ժողովրդներին՝ համերաշխութեան աւետարանը, կռուել կատաղութեամբ վրացական թթու ազգասիրութեան դէմ, պատերազմ է յայտարարել ազգայնական ամէն տեսակ նախապաշարմունքներին,—մի բան, որ այսօր սօցիալիստ կուսակցութիւնները շարունակում են միայն։

Որոտալով սկզբից ի վեր Դաշնակցութեան ու հայ բուրժուազիայի «պրօվօկատօրական» գործունէութեան դէմ, ս.-դէմօկրատ. ֆանֆարօնութիւնը շեշտում է յաճախ իր հերոսական սխրագործութիւնների վրայ, պնդում է, որ մենք ոչինչ չենք արել հակայեղափոխական արշաւանքների դիմաց և որ իրանք ս.-դէմօկրատները են մղել անհաւասար կռիւը թէ բռնապետութեան և թէ հակայեղափոխութեան դէմ։ Նոյն, վերը յիշած օրգանի № 2-ի մէջ սօցիալ-դէմօկրատիայի ձեռնհաս փաստաբանը բացականչում էր, դիմելով մեզ, դաշնակցականներիս.

—«Գոնէ պիտի յարգէք այն կռիւը, որ ուղղուած էր դէպի անմիջական պաշտպանութիւնը հայկական կուսակցութեան, գոնէ պիտի յարգէք այն արիւնը, որ թափուած էր ձեր ընտանիքների պաշտպանութեան համար։ Մոռացե՞լ էք դուք նոյեմբերեան օրերը Թիֆլիսում ու Բագւում, երբ կազմակերպուած պրօլետարիատը բռնել էր ամենավտանգաւոր դիրքերը»։

Որքան բնորոշ է այս պաթեթիկ և ստայօդ բացականչութիւնը։ Եւ որքան նման է, ընթերցող, նոյն կուսակցութեան Ժընևեան օրգանի, «Искра»-ի արդէն յիշատակած յայտարարութեան։

—«Փետրուարեան օրերում (առաջին կոտորածին) Բագուն պաշտպանեցին բոլոր ազգութիւններից շտապով կազմուած բանւորական խմբերը»...

Կարող էք հաւատալ, ընթերցող, որ մի գաղափարական կուսակցութիւն, այն էլ սօցիալիզմի անունից խօսող, թոյլ տայ իրան, իր օրգանների մէջ, այսքան հրէշաւոր այլանդակ կեղծիք...

Սահմանները ջնջւում են բարոյականի ու անբարոյականի, ազնւութեան ու ստութեան միջև և մենք ապշանքով ենք դիտում այն զարհուրելի և անբուժելի անտարբերութիւնը, որ իշխում է ս.-դէմօկրատների մէջ, գրական էտիկայի վերաբերեալ բոլոր հարցերում։ Եւ քանի՜ քանի նոյնանման դէպքեր՝ որոնք [illegible] են բերում ճշմարիտ յեղափոխականներին և վարկաբեկում են սօցիալիզմի վարդապետութիւնը...

«Մոռացե՞լ էք, որ… կազմակերպուած պրօլետարիատը բռնել էր ամենավտանգաւոր դիրքերը»…

Ոչ, չենք մոռացել մենք այդ օրերը։ Յիշում ենք սօցիալ-դէմօկրատական դժբախտ «միջնորդութեան» բոլոր բացասական հետեւանքները, Դաշնակցութեան ուժերի կաշկանդելը և բօրչալուեցիների ազատ մուտքը Թիֆլիսի դռներով, յիշում ենք սօցիալ դէմօկրատների ողբալի դասալքութիւնը (désertion), յիշենք, ինչպէս յուսախաբ մնաց նա իր միամիտ ըէզօնէօրութեամբ, ինչպէս մի զոհ տալուց յետոյ փոքրոգութեամբ քաշուեց ասպարէզից, թողնելով Դաշնակցութիւնը մեն-մենակ՝ ամբողջ Թիֆլիսին սպառնացող բարբարոսութեան յորձանքի առաջ. մենք չենք մոռացել և այն՝ թէ ինչպէս Բագուի առաջին մեծ արիւնյեղութեան միջոցին «կազմակերպուած պրօլետարիատը» իր քաջարի ու սանձարձակ առաջնորդներով չքացել էր, անկիւնները մտել, թէ ինչպէս նոյն Բագուի յետագայ պօգրօմների ընթացքում թուրք խուժանը գործարաններից, «կազմակերպուած պրօլետարիատի» շարքերից որսում էր հայ աշխատաւորներին—ինչպէս ուռկանով կը որսան ձկներին—և նոյն «կազմակերպուած պրօլետարիատի» աչքերի առջև մորթոտում էր նրանց… Թէ ինչպէս Դաշնակցութիւնը, միշտ միայնակ, միշտ իր ռազմական պօստի վրայ, ճգնում էր յետ մղել խուլիգանական, հայակործան արշաւանքը և դարձեալ շարունակ ամբաստանւում էր ու անւանարկւում սօցիալ-դէմօկրատ ֆրազեօրների կողմից… Ոչ, մենք երբէք չենք մոռանայ, հայ աշխատաւորը երբէք չի մոռանայ այդ արիւնոտ իրողութիւնները, որոնք անարգանք են ամբողջ առաջադէմ Կովկասի համար։

*

Սօցիալ-դէմօկրատական շահատակութիւնները հայ-թուրքական անտագօնիզմի հողի վրայ անցան ամեն չափ ու սահման։ Նրանք երբեմն այնքան հրէշաւոր էին, այնքան այլանդակ, որ ուղղակի դժւարանում էինք հաւատալ և ընդունել նրանց իբրև ստոյգ իրողութիւններ։ Լսեցէք թէկուզ այս մի փաստը.

Անցեալ 1906 թւի ապրիլին Բագւում մի սօցիալ-դէմօկրատ պարոն հրապարակական մի ճառ է արտասանում, որից մի կտոր տպւում է տեղական Баку լրագրում և այնտեղից անցնում է «Յառաջի» էջերը։ Ահա այդ զարմանալի ճառի կտորը, որ թարգ-

մանաբար զետեղուած է «Յառաջի 1906 թ. ապրելի 22-ի համարում (№ 76).

«Քանի որ Կովկասեան տարբեր ազգութիւնների զարգացման մակերևոյթը անհաւասար է, ուստի որպէս զի հող չըստեղծւի փոխադարձ ընդհարումների համար—չըպէտք է թոյլ տալ, որ այս կամ այն ազգութիւնը երբ և իցէ անէ մի այնպիսի կուլտուրական քայլ, որին դեռ ես յարմարւած չէ միւս պակաս կուլտուրական ազգութիւնը։ Ճիշտ է, դրա շնորհիւ առաջին ազգութիւնը արհեստականօրէն պիտի յետ մնայ իր զարգացման մէջ. բայց Տէրը նրա հետ՝ մի այդպիսի զարգացման՝ եթէ նա պէտք է առաջացնէ պօգրօմներ և հրդեհներ»...

Աքանչացէք, գռեհիկ մտքի այս հիւանդոտ արտադրութեամբ, որից անծայր դիմադրութիւն ու զարշանք է բուրում։ Դուրս է գալիս, որ հայ ժողովրդը պիտի կաշկանդէ իր քաղաքակրթական տենչանքները, իր երազները, պիտի խեղդէ առաջադիմութեան իր ծարաւը, որպէս զի յարմարւի, հաւասարւի իր մահմեդական հարևանին, որպէս զի չը ծագեն ընդհարումներ...

Սա, կրկնում ենք, թւում է մի այլանդակ առասպել, բայց իրօք մի սովորական նորմալ բան է Կովկասեան սոցիալ-դէմոկրատիայի սանձարձակ ֆրազէօլօգիայի մէջ։

Շատ ծանրացանք, բայց մեզ պէտք է մի երկու փաստ ևս յիշատակել, որոնք բնորոշում են այդ կուսակցութեան վայրենի մտավիճակը (mentalite') և նրան խեղաթիւրւած մօրալը. փաստեր, որոնք ցոյց են տալիս մասնաւորապէս վրացի սոցիալ-դէմօկրատների նեղսիրտ, աչառու վերաբերմունքը դէպի հայ ժողովուրդը և նրա պաշտպան կազմակերպութիւնը։

Պէտք է նկատել, որ նոյն վերաբերմունքը, նոյն շօվինիստական տրամադրութիւնները ցոյց են տալիս, տարաբախտաբար, և վրացի սօցիալիստ-ֆէդերալիստները, որոնք սկզբից հակամիտ էին ձեռք ձեռքի տւած ընթանալու «Դաշնակցութեան» հետ, իբրև ծրագրով ու տակտիկով իրանց նման մի կուսակցութեան։

1905 թւի վերջին ամիսներում սօցիալիստ-ֆէդէրալիստները համաձայնութեան եկան Դաշնակցութեան հետ՝ հիմնելու մի օրգան ընդհանուր ուժերով և ծառայեցնելու այն՝ ընդհանուր դատին։ Օրգանը հիմնւեց «Возрожденіе» անունով և խմբագրութեան կազմի մէջ մտաւ Դաշնակցութեան մի ներկայացուցիչը, իբրև թերթի ղեկավարներից մէկը։ Ընդհանուր համաձայնութեամբ՝ թերթը պէտք է նւիրւած լինէր բոլոր ժողովուրդների շահերին,

նա պէտք է արծարծէր անխտիր կերպով համակովկասեան իրականութեան մեծ հարցերը և պիտի լուսաբանէր, ի միջի այլոց, օբեկտիւ, անաչառ կերպով հայ-թուրքական ընդհարման պրոբլեմը,—այդ իրականութեան ամենացաւոտ, և ամենահրատապ խնդիրը։ Եւ հայկական բաժինը յանձնուեց «դաշնակցական» խմբագրին։

Սակայն, հէնց առաջին քայլերից սկսեց ցոյց տալ իրան՝ վրդովեցուցիչ շօվինիզմը և տենդենցիօզ ու աչառու վերաբերմունքը դէպի կռւող կողմերից մէկը—դէպի հայերը։ Վրացի «ընկերները» սկսեցին ճնշել հայ ընկերոջ և իրանց խմբագրած յօդւածների մէջ փակեցին աչքերը «կովկասեան վանդէականների» շահատակութիւնների վրայ և սիստեմատիկաբար աշխատեցին սուեր ձգել ոչ միայն հայ տարրի, այլ և այն կազմակերպութեան վրայ, որի ներկայացուցիչը հրաւիրւած էր նրանց կողմից, իբրև խմբագրութեան անդամ։ Ցարաբերութիւնները սրւեցին և այդ վերջինը կազմակերպութեան որոշումով, հրաժարւեց խմբագրութիւնից։

Հետաքրքրական է այդ հրաժարականի պատճառաբանութիւնը, որ Դաշնակցութեան ձեռնհաս մարմինը խմբագրել էր իր ժամանակին և ուղղել էր «Возрожденія»-ի վրացի խմբագրապետին։ Քաղում ենք այնտեղից մի քանի կէտեր.

1. «Դուք ձեր հաւանութիւնը տւիք մի յօդւածի, որ քննում էր մամուլի դերը հայ-թուրքական ընդհարումների մէջ և որում ասւած էր, թէ մեղաւորը հայերն են, քանի որ նրանք իբր թէ ձգտում են Մեծ Հայաստանի վերակառուցման։ Այդ յօդւածը չըտպագրւեց միայն շնորհիւ խմբագրութեան քարտուղար պ. Սօկօլօվսկու և մի քանի ուրիշ անդամների ուժգին բողոքին։

2. Թերթի հայկական բաժնի մէջ, հակառակ նրա խմբագրողի կամքին այնպիսի կրճատումներ և ուղղումներ էիք անում, որոնցից յաճախ գրածը կորցնում էր իր իմաստը։

3. Դուք տպագրութեան յանձնեցիք ռուս պահպանողական օրգանների աշխատակից Է. Լ-ինի մի յօդւածը «Կովկասեան գործերի» մասին և դարձեալ միայն շնորհիւ նոյն Սօկօլօվսկուն և հայոց բաժնի խմբագրողին՝ աջողւեց դուրս հանել շարւածքից այնպիսի կտորներ, որոնք կարող էին միայն ազգանք յարուցանել։ Նոյնիսկ այն ձևով, ինչպէս այդ յօդւածը այնուամենայնիւ անցաւ, նա յայտնւում է անբարեխիղճ։

4. Ձեր թերթի մէջ տպւած էր, որ Թիֆլիսի ընդհարումներում սպանւած մահմեդականների մեծամասնութիւնը պարսկահպատակներ են։ Եւ երբ մեր ընկերը, հիմնւած պարսից հիւպատոսարանական պաշտօնեայի վկայութեան վրայ, հերքում գրեց՝ Դուք զետեղեցիք հերքումը, բայց հարկ համա-

ւեցէք դուրս ձգել հետեւեալ նախադասութիւնը. «Հիւպատոսը կարող է հաստատել, որ միմիայն «Դաշնակցութեան» ձեռքով հիւպատոսարան են բերուած ոչ պակաս, քան 150 մարդ»:

5. Դուք ստացաք, ուրիշ տեղական թերթերի հետ միասին, հեռագիր Շուլուց (տես Возр. № 22), որ Դուք կրճատեցիք, խպառ անճանաչելի դարձնելով, (сократили до неузնаваемости). Դուք նրանից դուրս ձգեցիք այս ֆրազը, թէ «հայերը արձակեցին բռնուած թուրքերին», հանեցիք և այն կտորը, որ վերաբերում է Դաշնակցութեան ձգտումներին: Եւ, սակայն, Դուք ասում էիք, թէ ձեր թերթը մասամբ այդ կուսակցութեան օրգանն է...

6. Դուք ստացաք մի թղթակցութիւն Զուգդիդի գաւառից, ուր գրուած էր գաւառապետ Գ ե ղ ա մ օ վ ի քստմնելի արարքների մասին, և Դուք հարկ համարեցիք այդ անունը յիշատակելիս, աւելացնել փակագծի մէջ՝ «ծ ա գ ո ւ մ ո վ հ ա յ»:

7. Դուք հնարաւոր գտաք տպագրել առանց որեւէ առարկութեան պ. Զրելայէվի յօդուածը, որ ճգնում է վերականգնել Տակայշվիլու վարկը,—մի մարդու՝ որի անարժան ընթացքի մասին այնքան անգամ յիշատակուած էր ձեր լրագրում:

8. Վերջապէս, Ձեր օրգանի կերպարանքը կատարելապէս որոշւեց վերջին արիւնոտ օրերում, երբ Դուք, փոխանակ «անաչառ ու հանգիստ կերպով քննելու» թուրք-հայկական ընդհարումների պատճառները—ինչպէս որ խոստացել էիք ձեր լրագրի առաջին համարում—Դուք զանազան ակնարկներով, կիսաակնարկներով, նոյն իսկ բացորոշ յայտարարութիւններով, հասկացրիք՝ որ թ շ ն ա մ ա բ ա ր էք տրամադրուած դէպի հայերը...

Ահա այդ ուշագրաւ դօկումենտը, որ իր կարճութեամբ իսկ այնքան լոյս է սփռում վրաց ինտելեգենցիայի տրամադրութեան վրայ: Եւ այդ տգեղ արարքների հեղինակները, որոնք չեն քաշւում ծաւալելու աշխարհի առաջ իրանց անդուսպ հակակրանքը, դէպի մի ժողովուրդ—դրանք դեռ սօցիալիստներ են, դրանք դեռ այդ ինտելեգենցիայի լաւագոյն տարրերն են...

Ո՜րպիսի թշուառութիւն...

Այդ պարոնները, որ այնքան կատաղի ու անողորմ են հայ բուրժուազիայի, հայ ժողովրդի ու Դաշնակցութեան վերաբերմամբ, որ պատրաստ են բոլոր յանցանքը ծանրաբեռնել այդ տարրի վրայ,—նրանք սիրով կը կուրանան իրանց հարազատ ազնուականութեան զզւելի պրովօկատորական արարքների հանդէպ,—ազնուականութեան՝ որ հայ ժողովրդի արիւն-օրերում այնպէս դէմօնստրատիւ եղբայրանում էր թուրք բէկութեան հետ և ներբողալի ճառեր արտասանում նրա հասցէին...

Պրովօկատորական ընթացք է բռնել հայ ժողովրդի և Դաշնակցութեան նկատմամբ... հէնց ինքը վրացական սօցիալ-դէմօկրատիան: Այդ կուսակցութիւնը, որ, ինչպէս տեսանք, սկզբից ար-

դէն տրամադիր էր Դաշնակցութիւնը մեղսակից ճանաչել Թուրք-հայկական ընդհարումների մէջ, վերջերս բացարձակ գը... գոումների ճանապարհն է բռնել. գիտակցաբար է թէ անգիտա... ցաբար—չը գիտենք, բայց նա ոչ մի միջոց չի խնայում բորբ... քելու առանց այն էլ վառ անտագօնիզմը, նոր սնունդ տալու ա... դէն հանգստացող կրքերին և թւում է թէ ոչնչով չի զանազան... ւում Աղայևներից ու «իրշադականներից»:

Յիշենք միայն մի փաստ, շատերից մէկը. մի դօկումենտ... ոչ պակաս ուշագրաւ, քան նախընթացը. մի պրօկլամացիա, մի... անօրինակ ու անորակելի Թռուցիկ, որ կովկասեան ս.-դէմօկրատ... ան հրատարակեց ներկայ յունւարին, ընտրողական պայքարի ... ամենասուր վայրկեանում, երբ նա իր դէմ տեսնում էր միայ... մէկ հատիկ ուժեղ կուսակցութիւն—Դաշնակցութիւնը: Այդտե... այդ աննման դօկումենտի մէջ հարազատութեամբ ցոլում է մե... երկրի ս.-դ.-ների բարոյական ամբողջ պատկերը, որ իր բարե... մասնութիւններով, անշուշտ, եզակի է սօցիալիստական աշխար... հում: Թռուցիկը ամբողջապէս ուղղուած է, ի հարկէ, Դաշնակցու... թեան դէմ, որին նա ձուլում է միևնոյն բանակի մէջ ռուս խու... լիգան «պատրիօտների» հետ: Այդտեղ բառացի ասուած է հետե... ւեալը.

„Дашнакцаканы натравливали армянскій пролетаріатъ и армянское крестьянство, все армянское общество на остальныя націи и прежде всего на татаръ. Своей дѣятельностью въ этомъ направленіи они вызвали армяно-татарскую рѣзню, а дальше убивали беззащитныхъ татаръ, грабили и жгли татарскія селенія, уничтожали имущество татаръ, растаскивали ихъ добро“...

«Դաշնակցականները գրգռում ու լարում էին հայ պրօլետարիատին, հայ գիւղացիութիւնը, հայ ամբողջ հասարակութիւնը՝ միացած ազգերի վրայ և ամենից առաջ Թուրքերի վրայ: Այդ ուղղութեամբ ունեցած իրանց գործունէութեամբ նրանք առաջ բերին հայ-Թուրքական կոտորածը և այնուհետև ըսպանում էին անպաշտպան Թուրքերին, Թալանում ու այրում էին Թուրքական գիւղերը, ոչնչացնում էին Թուրքերի գոյքը»...

Մեկնութիւններն աւելորդ են: Զրպարտութեան ու ցինիզմի գագաթնակէտն է դա, որից հեռուն անցնել չի կարող ամենաընկած կուսակցութիւնն անգամ: Դաշնակցութիւնը պարզապէս ներկայացնում է, իբրև խթան-պատճառ Թուրք-հայկական ընդհարումների: Իսկ Թուրք տարրը—իբրև զոհ... Եւ այդ Թռուցիկի

էջ դուք կը տեսնէք խիստ գունավառ նկարագրութիւն թուրք քիւրդերի աւերածութեան ու կոտորածի։ Իսկ հայ ժողովրդի կրած արդերն ու սոսկումները… Դա հաշիւ չէ։ Այդ հարցի վրայ ստ-ատարակ չեն սիրում ծանրանալ ս.-դ.-ական թռուցիկները։ Հայ ողովրդի ցաւերի մասին շատ քիչ կը խօսւի, կամ կը խօսւի թռու-իկ ու կցկտուր կերպով և այն էլ սովորաբար՝ միայն պրոլետարիա-ի մասին, որ մի չնչին բեկորն է տառապող բազմութեան։ Թող ր նա ինքը, հայ ժողովուրդը, նոյնիսկ յանձին իր «յետադէմ տարրերի» երբէք չի ցանկացել և չի նպաստել եղբայրասպան ութիւններին, թող որ մեր դրացիների սիստեմատիկ նախայարձակները այտնի են ամբողջ լուսաւոր աշխարհին… Այդ միևնոյն է. կով-կասեան ս.-դ.-ները մի բութ ու նողկալի անգիտակցութեամբ պիտի ներկայացնեն միշտ թուրք մասսաններին իբրև զոհ և Դաշ-նակցութիւնը՝ իբրև դահիճ…

Եւ ինչ զարմանք, որ միշտ էլ կը ծաղկեն պրովոկացիայի ոճիրները մեր հողի վրայ, միշտ էլ կը ցնծան բոլոր հայակեր ճի-ւաղները այդ հրապարակական quasi-խոստովանութիւններից, միշտ էլ անբախտ հայ ժողովուրդը կը տառապի ու կարիւնոտւի, քանի դեռ իր շուրջը վխտացող «գաղափարական» ս.-դ.-ներն ան-գամ գիտակցաբար թէ անգիտակցաբար պրովոկատորների պաշտօն կը վարեն Անդրկովկասում, քանի դեռ նրանք անպատկառութեամբ կը շեփորեն ամեն տեղ, թէ Դաշնակցութիւնը, հայ ժողովրդի մի ստուար մասը, նրա ամենահեղինակաւոր մարմինը травля-ներ է կազմակերպում ազգերի միջև…

Երևակայում էք, ընթերցող, թէ ինչ տպաւորութիւն կարող են անել վերոյիշեալ տողերը թուրքական սև-հարիւրակեանների և նոյնիսկ թուրք բարեմիտ հասարակութեան վրայ։ Երևակայում էք, թէ ինչպէս կարող են անդրադառնալ տասնեակ հազարներով տարածւող այդ պրովոկատորական թռուցիկները կովկասեան միւս հասարակութիւնների մտածողութեան վրայ, թէ ինչպիսի վայրե-նի հասկացողութիւն կարող են նրանք կազմել հայ ժողովրդի և նրա կուսակցութեան մասին… Նրանք չէ՞ որ գիտեն, որ այդ պրոկլամացիաները խմբագրող կազմակերպութիւնը բացառապէս վրացիներ չեն, որ նրա մէջ կան նաև հայ անուն կրող ասպետ-ներ, որոնք իբր թէ ձեռնհաս և լաւատեղեակ են իրողութիւն-ներին; բայց որոնք մի ստոր, դաւաճանական խաղ են խաղում

իրանց ժողովրդի հետ։ Վրացի շօվինիստ ս.-դ.-ները պարզապէս գրգռում են հայ ժողովրդի դէմ Թուրքերին ու վրացիներին, իսկ նրանց հայազգի ընկերները, իբրև խակ քաղաքական մանուկներ կոյր գործիք են դառնում առաջինների ձեռքում։ Այդպէս է վկայում հրատարակւած բազմաթիւ «պրօկլամացիաների» ոգին... Կովկասեան սօցիալ-դէմօկրատիան սկզբից ի վեր ցոյց է տւել խոր, արհամարհոտ անտարբերութիւն դէպի հայ ժողովրդի ճակատագիրը, անգամ ամենասև, կրիտիկական վայրկեաններում, երբ այդ ժողովրդի գոյութեան խնդիրն էր դրւած հրապարակի վրայ։ Նա արհամարհում է և այն սարսափելի ճակատամարտները, որ հայ ժողովուրդը Դաշնակցութեան առաջնորդութեամբ մղեց վերջին աղէտների ընթացքում խուժանային բարբարոսութեան և հակայեղափոխութեան դէմ։ Նա արհամարհում է և Տաճկաստանում մղւած կռիւների արիւնոտ էպօպէան, որ նրա բոցավառ թռուցիկների մէջ ներկայացնում է, իբրև մի խղճուկ «աւանտիւրա», իբրև մի արկած և «ռէակցիայի մի ռէզերւ» ռուսահայերի և Դաշնակցութեան համար։ Մի խօսքով՝ Դաշնակցականների վարած բոլոր կռիւները— հակայեղափոխութիւն են, ռէակցիա են...

Եւ այդպէս, հակահայկական պրօվօկացիան սլանում է на всѣхъ парахъ սօցիալ-դէմօկրատիայի թևերի վրայ և Կովկասեան ռուսատառ մամուլն էլ սիրով արձագանք էր տալիս նրան. զանազան մարդիկ, կասկածելի բարոյականի տէր, սօցիալիստական ծիրանի հագած, «յանուն միջազգային պրօլետարական համերաշխութեան» և ուրիշ սովորական Schlagwort-ների, ամեն առթիւ ծանուցանում էին այդ ռուսատառ մամուլի մէջ հարևան օտար հասարակութիւններին, որ Դաշնակութիւնը իր օրգանով և մարմիններով շարունակ զբաղւում է պրօվօկացիայով, որ նա գրգռում է Թուրքերին, վրացիներին, որ «հայ նացիօնալիստները (դաշնակցականները) ուզում են ստեղծել արհեստական անջրպետներ Անդրկովկասի ազգերի միջև, ուզում են այդ ճանապարհով մըթնացնել աշխատաւորի դասակարգային ինքնագիտակցութիւնը և այդպիսով ամրապնդել այն անօրմալ, թշնամական յարաբերութիւնները, որոնք ստեղծւած են վերևից, իշխող դասակարգերի կողմից*)»...

Աղաւաղել իրականութիւնը, աղաւաղել ու այլանդակել մի

*) Տես «Тифлисскій Листокъ» 1906 թ. № 85.

քաղաքական կազմակերութեան ամբողջ դաւանանքը, ամբողջ տակտիկան, ջնջել ու դուրս մղել այդ կազմակերպութիւնը Կովկասեան հօրիզոններից—ահա մի ակներև, յամառ ու անդրդուելի ձգտում, որ արտայայտւում է մեր բոլոր բազմապիսի հակառակորդների մէջ։

Դաշնակցութիւնը—նացիոնալիստ, ազգամոլ. Դաշնակցութիւնը—բուրժուազիայի շահերի պաշտպան, բուրժուական մի կուսակցութիւն. Դաշնակցութիւնը—մի սև, յետադէմ ոյժ, բոլոր խաւար ուժերի մարմնացումը, որ ձգտում է միայն կռուեցնել ազգերին... Soit! Բայց փաստերը հրապարակի վրայ են և միայն յօժարակամ կոյր ու խուլեր կարող են անտես առնել նրանց։

Ահա թէ ինչպիսի թռուցիկներով էին դիմում ժողովրդներին՝ Դաշնակցութեան մարմինները Թուրք-հայկական բռնկումների միջոցին, սկսած Բագուի արիւնոտ օրերից.

1.

ԲԱԳՈՒԻ ԹՈՒՐՔԵՐԻՆ

Մեր քաղաքը արիւնալի, ամօթաբեր գործողութիւնների ասպարէզ էր դարձել։

Զօրս օր ականատես և ակամայ մեղսակից էինք անմիտ, զզուելի եղբայրասպանութեան։

Թափուեց շատ անմեղ արիւն, ընկան բազմաթիւ մարդկային զոհեր։

Հարևանը զինուեց հարևանի դէմ և սկսուեց կատաղած՝ վայրենի, անփառունակ, ամօթաբեր։

Թէ ում վրայ է ընկնում այդ սարսափելի օրերի պատասխանատուութիւնը,—մենք դեռ յետոյ կը վերադառնանք դրան։

Այժմ անկեղծ սրտով ողջունում ենք վերականգնուած խաղաղութիւնը և ցանկանում ենք, որ դա լինի ամուր և ընդմիշտ, որովհետև գիտենք և լաւ յիշում ենք, որ ոչինչ բաժանելիք չունենք Թուրքերի հետ։ Մենք չունենք միմեանց հակառակ շահեր և թէ զէնքի դիմեցինք, այդ միմիայն նրա համար՝ որ ստիպուած էինք պաշտպանել մեր պատիւը, մեր կեանքն ու մեր գոյքը։

Բայց հէնց որ հնչեց խաղաղութեան հրաւէրի առաջին կոչը, մենք թեթևացած սրտով ցած դրեցինք հարևանների արիւնով ներկուած մեր զէնքերը։

Այդ արիւնին մենք ծարաւի չէինք և չենք էլ ծարաւել երբէք։ Մեծ զղջմանքով ենք յիշում դեռ նոր անցած օրերը և գործ կը դնենք մեր բոլոր ուժերը, որ նրանք այլևս չկրկնուեն։

Հէնց նոյն այդ հաշտութեանն ենք հրաւիրում ձեզ, մահմեդականներ, մի՛

վնասէք թշնամուն այնտեղ, ուր նա չըկայ և մի գործածէք ձեր զէնքերը այնպիսի մի գործում, որը կը ծածկէ ձեզ ոչ թէ փառքով, այլ ամօթով։

10 փետր. 1905

2.

Այս դառն ու արիւնալից օրերում Հ. Յ. Դաշնակցութիւնը նորից կոչ է անում հայ ու թուրք ժողովրդին։ Նա դիմում է ձեզ, աշխատաւոր ժողովուրդ, ձեզ, որ կրծքի վրայ տանում էք տանջանքի ու ցաւի բեռը, ձեզ, որ քամում էք դաւաճանների ու ոճրագործների եղբայրասպան յանցանքի դառնութիւնը։ Եւ տասն ամիս է, որ սկսուել է եղբայրասպան կռիւը, երկուստեք ոչնչացումը, տասն ամիս է, որ մեր հայրենիքի ամեն մի անկիւնում, ինչպէս փոթորիկ, անցնում է աւերածութիւն, հրդեհ, թալան ու կողոպուտ։

Նոյն փոթորիկն է, որ այսօր կախուած է նաև Թիֆլիսի հայ ու թուրք ազգաբնակութեան գլխին, սպառնալով այնքան անմեղների։ Հերիք է այնքան անմեղ զոհեր ու արիւն, որի դէմ բողոքում են մարդկային զգացմունքն ու խիղճը։

Երեկուայ և այսօրուայ դէպքերի ու զոհերի առթիւ մենք յայտնում ենք մեր ցաւն ու վիշտը։ Միաժամանակ կոչ ենք անում երկու ժողովուրդներին էլ՝ չկորցնել սառնարիւնութիւնը և զոհ չը գնալ ոճրագործ պրօվօկացիայի։

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կոմիտէ։

23 Նոյեմբեր 1905

3.

Հայ յեղափոխական Դաշնակցութեան Թիֆլիսի Ինքնապաշտպանութեան Կենտրոնական Մարմինը խստիւ պատուիրում է, որ ոչ ոք չը համարձակուի անցորդներին խուզարկել, զէնքերը խլել կամ բռնել և բանտարկել, եթէ նրանք հարբած՝ անկարգութիւն չեն անում կամ զէնքը հանած՝ խռովութեան և յուզմունքի տեղիք չեն տալիս։

Զինուորական դատի կենթարկուեն մեր զինուորներից նրանք, որոնք հրապէն կը պարպեն անմեղ և խաղաղ քաղաքացիների վրայ։

Հ. Յ. Դ. Ինքնապաշտպանութեան Կ. Մարմին։

4.

Թիֆլիսի ազգաբնակութեանը.

Երեկ, 23 Նոյեմբերի, ամբողջ օրուայ ընթացքում Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի կազմակերպութիւնը իր բոլոր ուժերով աշխատեց զսպել ժողովրդական զայրոյթը և րոպէ առաջ վերջ տալ վրդովեցուցիչ սպանութիւններին։ Եւ շնորհիւ դրան յաջողուեց ամբողջ գիշերը խաղաղ անցնել։ Առաւօտ վաղ կազմակերպութեան կոմիսարները յորդորում էին ազգաբնակութեան խանութները բանալ և սովորական զբաղմունքներով պարապել։ Ժամը 8 և կէսին մի խումբ հայեր մտան Թուրքաց Թաղը, հաւաքելով Թուրքերին սկսեցին համոզել նրանց, որ վերջ տան կռւին, որի վերաբերմամբ կայացաւ համաձայնութիւն։ Այդ խո-

ակցութիւնից յետոյ՝ Թուրքերը կամաց-կամաց հեռացան հայերից և երբ հայերը մնացին առանձին, շրջակայ Թուրքերի տներից յանկարծակի հրացանաձգութեան բռնեցին փողոցում գտնուող հայերին և սպանեցին մէկին ու վիրաւորեցին 3-ին։

Այսպէս ուրեմն մի անգամ ևս մեր դրացի Թուրք ամբոխը դաւաճանեց իր խօսքին։ Սրանով պարզ է, թէ ում վրայ է ծանրանալու գալիք աղէտների պատասխանատուութիւնը։

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կոմիտէ

24 Նոյեմբ. 1905 Թ.

5.

Ի նկատի ունենալով երեկ քաղաքում պատահած մի շարք սպանութեան ու կողոպուտի քստմնելի դէպքերը, հարկ ենք համարում յիշեցնել հասարակութեան, որ ինքնապաշտպանութեան նպատակն է միմիայն պաշտպանել, երբ տեղի կունենայ յարձակում խաղաղ ու անմեղ քաղաքացիների անձի և գոյքի վրայ։ Վնասել խաղաղ քաղաքացիներին, բարբարոսներին վայել միջոցների դիմել՝ թալանել, կողոպտել ու հրդեհել ամենախիստ կերպով արգելւում է։

Իսկ մեր զինուորներին հրամայում ենք հետևել ու ձերբակալել յանցաւորներին և յանձնել Կ. Կոմիտէին։

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կոմիտէ։

24 Նոյեմ. 1905 Թ.

6.

Հ. Յ. Դաշնակցութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ նա ստացել է ռուսաց սօցիալ-դէմօկրատական բանւորական կուսակցութեան Թիֆլիսի կօմիտէից հետևեալ ծանուցումը.

«Ի նկատի ունենալով, որ Թուրքերը բացին պատերազմական գործողութիւններ, որ արտայայտւեց նրանց հրաձգութեամբ, մեր պահակների վրայ առանց որևէ առիթի մեր կողմից, որի ժամանակ սպանւեց մէկը և վիրաւորւեցին երկուսը մեր ընկերներից, մենք վերցրինք մեր պահակները և դրանով վերացնում ենք մեզանից որևէ պատասխանատւութիւն ապագայ դէպքերի համար։

Եւ այսպէս Սօցիալ-Դէմօկրատական կուսակցութեան ջանքերը՝ վերականգնել խաղաղ յարաբերութիւններ Թուրքերի և հայերի մէջ՝ ապարդիւն անցան դժբախտաբար։ Եւ այդ փաստը մի անգամ ևս ապացուցեց, թէ Թուրքերը ամեն տեղ և միշտ հանդիսացել են յարձակւող կողմ և նրանց յանձն առած բարոյական պարտաւորութիւնները երբէք գին չեն ունեցել։ Եւ այս անգամ ևս ազգերի եղբայրութեան և խաղաղութեան գաղափարի համար կռւող Սօց.-Դէմ. կուսակցութիւնը միւս յեղափոխական կազմակերպութիւնների հետ միասին հանդիպեց խոչընդոտի ագրէսիւ տրամադրւած Թուրք խուժանի կողմից։

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը բոլոր ջանքերը գործ կը դնի հարկաւոր դիմադրութիւնն անելու Թուրքերի ագրէսիւ գործողութիւններին։ Միևնոյն ժամանակ նա յայտնում է, որ մեր կուսակցութեան կողմից ձեռք առնւող

բոլոր ակտիւ միջոցների միակ նպատակն է խաղաղութիւնը շուտափոյթ վեր կանգնել և դադարեցնել այն բռնութիւնները, որ Թուրքերի պատերազմիկ մ գործում է խաղաղ ազգաբնակութեան դէմ։

Այդ պատճառով Դաշնակցութիւնը յայտարարում է ի գիտութիւն ըն հանուրի.

1. Ամեն մի բռնութիւն խաղաղ և անզէն Թուրքերի վրայ՝ կը հալածվ իսկ նրանց գոյքը Թէ խանութներում և Թէ տներում կը պահուեն։

2. Ընդհարումների շրջանից դուրս զինուորուած Թուրքերը մինչև խ ղաղութեան վերականգնումը զինաթափ կանուեն մեր կուսակցութեան կոմիտէ լիազօրութիւն ունեցող անձանց ձեռքով։

3. Մինչև Թուրքերի կողմից յարձակումները դադարեցնելը, նրանց ան նելը, չէզօք շրջանից պատերազմական շրջանը, չէ Թոյլատրւում։

28 Նոյեմ. 1905 Թ.

7.

Բագւի ազգաբնակութեան.

Վերջին օրերս քաղաքում նորից տարածուել են անհեթեթ լուրեր, Թ փետրուարի 6-ին, փետրուարեան կոտորածի տխուր տարելիցին, հայերը, Հ. Դաշնակցութիւն» կուսակցութեան ղեկավարութեամբ, պատրաստւում են յա ձակում գործելու Թուրքերի վրայ։

Պարզ է, որ գլուխի պրօվօկացիան նոր փորձեր է անում մեր քաղա վերստին արիւնահեղ սպանդի և տմարդի անգԹութիւնների վայր դարձնել Նրան չեն յագեցրել երեք կոտորածի ժամանակ Թափուած անմեղ արեան հեղե ները, նրան չի գոհացրել այն արցունքի ծովը, որի մէջ նա դեռ ևս չի կար կանում խեղդուել։ Նա դեռ ևս ծարաւի է անմեղ զոհերի արեան, Թշուառ և ո նանկ այրիների, մայրերի ու որբերի չցամաքած արցունքի։

Բայց մեզ համար հերիք է այդ արիւնը, այդ արցունքը, քաղաքացինե Հերիք է, որքան մենք արիւն ու արցունք Թափեցինք երեք կոտորածի ժամ նակ։ Միթէ մենք դարձեալ պիտի զոհ գնանք պրօվօկացիային։ Միթէ պի հաւատանք այդ սուտ ու զրպարտիչ լուրերին և նորից ձեռք պիտի բարձրաց նենք իրար վրայ և պիտի ձգենք իրար նոր Թշուառութիւնների, նոր աղէտների մէջ

Ո՛չ, հերիք է։

«Հ. Յ. Դաշնակցութիւնը», որի վրայ ներկայումս մատնանիշ են լինու պրօվօկացիայի բոլոր յայտնի ու գաղտնի ագենտները իբրև մի կազմակերպու-Թեան վրայ, որը պատրաստւում է յարձակւելու Թուրքերի վրայ, սը-րանով յայտարարում է Բագւի բոլոր քաղաքացիներին, որ այդ բոլոր լուրերը սուտ են, իսկ դրանց տարածողները զրպարտիչներ են։ Կու-սակցութիւնս յայտարարում է, որ ինքն անխնայօրէն պատժում է միայն այն ժամանակ, երբ իւր առաջն է տեսնում հայատեաց կրքերի կատաղի, անգուԹ և վայրենի սանձարձակութիւն։ Յարուցանել, վառել այդ կրքերը երբէք չի եղել և չէր կարող լինել կազմակերպութեանս նպատակն ըստ իւր ծրագրի էութեան, իսկ խօսել Դաշնակցութեան Թուրքերի դէմ ուղղուած ագրեսիւ գործողութիւն-ների մասին կարող են միայն ստախօսները և պրօվօկատորները, որոնց ձեռն-տու են արիւնալի բարբարոսութիւնները։

«Դաշնակցութիւնը» յայտարարում է, որ նա սրտանց ողջունում է քաղաքումս հաստատուած խաղաղութիւնը և ցանկանում է, որ այդ խաղաղութիւնը հիմնաւոր դառնայ ի բարօրութիւն և յուրախութիւն դրացի ժողովուրդների հայրենի Կովկասի բարգաւաճման համար։

1906. 4 փետրուարի.

Այս պատմական թռուցիկների մէջ ամփոփուած է Հ. Յ. Դաշնակցութեան ոգին, որ բղխում է նրա ծրագրային էութիւնից։ Որքան էլ անպատիւ հակառակորդները աղմկեն հրապարակը—ինսինուացիաներով ու այլանդակ առասպելներով—այդ կազմակերպութեան quasi-*շովինիստ, թուրքատեաց ու պրովոկատորական նկրտումների մասին՝ փաստը մնում է փաստ. Դաշնակցութիւնը թէ Տաճկահայաստանում, թէ Անդրկովկասում, երբեք մահմեդական, ինչպէս և՛ ուրիշ ժողովուրդների դէմ չի գրգռել մտքերը, երբեք նրանց դէմ զէնք չի բարձրացրել։ Ընդհակառակը. 15 տարուայ պատմութիւնը վկայում է, որ նա միշտ ջանացել է քարոզներով, յորդորներով գիտակցութեան բերել և իր կողմը գրաւել հակայեղափոխական տարրերին։*

Այդ առիթով միանգամայն պատեհ ենք համարում առաջ բերել այստեղ ամբողջութեամբ մեր մի ուրիշ թռուցիկը, որ հրապարակել ենք 10 տարի սրանից առաջ, մօտաւորապէս նման պայմաններում, թէև աշխարհագրական տարբեր միջավայրերում... Կ. Պօլսում, Բանկ Օտտոմանի գրաւման ժամանակ։ Յիշեցէք, ընթերցող, այն կարմիր ու սև օրերը, այն զարհուրելի օրերը, երբ Բանկը անմիջապէս գրաւելուց յետոյ, տաճիկ ամբոխը, Եըլդըզի տուած ազդանշանի վրայ, մի արիւնառուշտ խենթութեան մէջ, գրոհ տուեց անմեղ անպաշտպան հայ ազգաբնակութեան դէմ, և կարճ միջոցում 6,000 հայ դիակներ փռեց Ստամբուլի փողոցներում...

Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

Կ. Պօլսի Կեն. Կոմիտէի

Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

(Տարածած, կռուից առաջ տաճկերէն լեզուով)

Քեզ ենք դիմում սրանով, տաճիկ ժողովուրդ, և ոչ այն պատճառով որ երկիւղ ենք կրում քեզանից, կամ այլ և այլ միտումներ ունենք—ո՛չ, մենք արհամարհանքով ենք նայում մահուան երեսին,—քո կառավարութիւնն է մեզ այդ սովորեցրել։ Մենք դիմում ենք քեզ միայն մի նպատակով՝ յայտնելու քեզ, որ քո դէմ մենք ոչինչ չունենք։ Դարերից ի վեր մեր հայրերը ու պա-

պերն ապրում էին քեզ հետ հաշտ ու խաղաղ, ունենալով մի հայրենիք ու ընդհանուր նպատակներ։ Սակայն այս վերջին ժամանակները, ոճիրներով սաեղծուած քո կառավարութիւնը սկսեց խռովութիւններ սերմանել մեր մէջ, որպէս զի աւելի մեծ դիւրութեամբ խեղդի և քեզ, և մեզ։ Դու չը հասկացար, ժողովուրդ, այս դիւական քաղաքականութիւնը և մեր եղբայրների արեան մէջ թաթախուած՝ դու մեղսակից գտնւեցար այդ զազրելի ոճրագործութեան։ Բայց թող քեզ քաջ յայտնի լինի, որ մեր կռիւը ոչ թէ քո դէմ է, այլ քո կառավարութեան. դրա դէմ են կռւում և քո լաւագոյն զաւակները, որոնք կառավարչական ներկայ ձեւերում իրենց հանգստութիւնը միմիայն Բօսփորի սրընթաց ալիքների մէջ են գտնում։

Մտածի՛ր ժողովո՛ւրդ, ո՞վ է քո թշնամին և ո՞վ քո բարեկամ։

1896 թ. օգոստ. 16

III

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐՈՀԸ ԵՒ ՀԱՅ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ

Տնտեսակա՞ն թէ կուլտուրական

Մամուլի առաջին յայտարարութիւնները Եւրոպայում.—Տնտեսական պատճառաբանութիւնը կովկասեան ս.-դ. մամուլի մէջ.—Ծուլիզանութիւնը մասսային.—Կուռի տարածումը.—Նոր-Նախիջեան, Երևան, Ղարաբաղ, Գանձակ, Թիֆլիս.—Ամեն տեղ թուրքերը նախայարձակ.—«Տնտեսական անտագօնիզմը» զաւառում.—Ո՞վ է հողատէրը.—Հայ առևտրականների «կեղեքումները».—Հայկական ինդուստրիան գաւառում.—Բագուն.—Կուլտուրական անտագօնիզմը.—Կովկասեան առևտուրը հայերի ձեռքում.—Փաստական վկայութիւններ.—Թուրք-հայկ. ընդհարումը կարող էր պայթել և 30 տարի առաջ։

Առաջ գնանք չարատանջ պատճառների քննութեան մէջ։ Հայ նացիօնալիզմը, մանաւանդ դաշնակցական նացիօնալիզմը, այդպիսով, գործ չունի հայ-թուրքական ընդհարումների հետ և մենք սրտանց կըփափագէինք, որ մեր բոլոր դրացիները վարակուած լինեն նոյն տեսակի նացիօնալիզմով, ինչպէս մենք։

Գուցէ՞ մեղաւոր է հայկական կապիտալիզմը... Գուցէ, յիրաւի, հայը հանդիսանում է իբրև ճնշող տարր, — և՛ հողատէր և՛ փողատէր, իսկ թուրքը ճնշւած և իրաւազուրկ,—և գուցէ հէնց այդ է թուրք մասսաներին ու բուրժուաղիային գրգռող հանգամանքը։

Այդ հարցերը տալով՝ մենք յայտնւում ենք տնտեսական ֆակտորի հանդէպ, որը շատերի կարծիքով հանդիսանում է գլխաւոր դրդապատճառ թուրք-հայկական ընդհարումների։

Տնտեսական կատեգորիայի վրայ ծանրանում էին դէպքերի կգրում, նոյն իսկ Եւրօպայի դիտողները, որոնք տակաւին հնարաւորութիւն չունէին ստուգելու իրողութիւնները։ Երբ արևմտեան խոշոր մամուլը արձանագրում էր Բագւում տեղի ունեցած սարսափները, նա շեշտում էր ցեղական և մասնաւորապէս տնտեսական անտագօնիզմի վրայ. հայերը առհասարակ հանդիսանում էին գայլերի դերում, թուրքերը՝ ըմբոստացող գառների դերում։

Պարիզեան մեծ օրգանի, Le Temps լրագրի կովկասեան թղթակիցը գրում էր 1905-ի յուլիսին.

«Հայերը խելացի են և գործունեայ. հետևաբար նրանց մեղադրում են արագ հարստանալու մէջ, ի վնաս այն գիւղացի, ինդուստրիական կամ վաճառական ազգաբնակութիւնների, որոնց մէջ նրանք ապրում են։ Թիֆլիսում, օրինակ, հարստութիւնը հին կալուածատէր, շռայլ, անկարգ վրացիների ձեռքից անցել է նորեկ հայերին, անյագուրդ և խնայող։ Ահա այդտեղից է առաջ գալիս աղքատացած վրացիների ատելութիւնն ու ոխը հարստացած հայերի դէմ։ Եւ այդ տեղից մի քայլ էր մնում, որ հայերին ամբաստանէին, իբրև երկրում գործւող ամեն չարիքի պատասխանատու։ Այդ քայլն էլ արին։

«Հայերը գտնւում են բոլոր տեղերում, ուր առևտրական գործ կայ։ Հրէաների պէս, նրանք գերազանց են դրամի առևտրի մէջ։ Եւ դժբախտութիւն ունեն յաճախ աջողութիւն գտնելու»...

Սօցիալիստական օրգաններն անգամ, ռուս կառավարութեան դժոխային դաւերը նշաւակելով հանդերձ՝ յիշատակում էին տնտեսական գործօնի ույժը։ Այդպէս Պարիզի Humanité-ն տպագրելով «Դրօշակի» խմբագրութեան կոչը ուղղւած լուսաւոր աշխարհի քաղաքացիներին, Բագւի գազանութիւնների առթիւ, և դրւատելով նրա հիմնական պատճառաբանութիւնը՝ հարկ էր համարում յիշատակել իր երկրորդական աշխատակիցներից մէկի բերանով, որ «թուրքերը հողի առաջին գրաւողներն են (խօսքը Բագւի մասին է), որ հայերը նրանց զրկել են»...

Եւրօպայի սօցիալիստները, որոնք ի հարկէ բնաւ տեղեակ չէին մեր պայմաններին, դատում էին à priori, լոկ անալօգիայով, նմանութեան օրէնքով։ Ի նկատի ունենալով, որ մարտը նոյն

մարտն է երկրագնդի բոլոր ծայրերում, նոյն էական բնազդ
ներով ու ախորժակներով, նրանք շտապով եղբայրացութ
էին հանում, առանց լրջօրէն հաշւի առնելու մեր իրականութ
բոլոր սարսափեցնող տրագիզմը, առանց իմանալու մեր միջ
վայրի առանձնայատուկ, բացառիկ պայմանները, առանց լիով
գնահատելու և՛ մեր ռէժիմը և՛ մեզ շրջապատող խուժաննե
դժոխային պատկերը, ուր մտաւոր ամայութեան հետ ցոլում
զգացմունքների մի անօրինակ դժնդակութիւն... Թո՛ղ գտնեն
ուրիշ անկիւն երկրագնդի վրայ, ուր գոյութեան կռիւը սառա
այնքան այլանդակօրէն բիրտ, զուտ բիօլօգիական բնաւորութի
ուր կենդանաբանական մնացորդները այնքան ուժով զգալ տայի
իրենց գոյութեան մասին, ուր կուլտուրան ու վայրենութիւն
այնպէս իրարու խճողւէին, այնքա՛ն անհաւասար, ահեղ, անի
ւած մի մենամարտում... Այգպէս—Տաճկահայաստանում, այդպէ
—և Անդրկովկասում...

—

Տնտեսական են հայ-թուրքական ընդհարման պատճառնեը
—այսպէս էին պնդում և Կովկասեան մի կարգ ռուս հրապարա
կախօսներ, գլխաւորապէս սօցիալ-դէմօկրատիայի բանակից։ Յի
շենք նախ և առաջ պ. Օրեստ Սեմինին, որ Баку լրագրի խմբագի
րըն էր և ըստ երևոյթին, ամենալուրջ սօցիալ-դէմօկրատ հրա
պարակախօսներից մէկը։ Բագւի առաջին կոտորածից մի քան
ամիս անց՝ նա զետեղում է վերոյիշեալ լրագրի № 58-ի (190
թւի) մէջ մի տեսութիւն, ուր փորձում է, իբրև մարքսիստ-թէօ
րետիկոս, լուսաբանել կատարուած աղէտները, նրանց պատճառ
ները։ Պէտք է խոստովանել, որ դա ամենալուրջ փորձն է, սօ-
ցիալ-դէմօկրատների յախուռն բացատրութիւնների, «թէօ-
րէական» մարզանքների երկարաձիգ շարքում։ Եւ ի՞նչ է նա
մեզ տալիս։ Սահմեղական ազիտութեանը—և ա՛յն էլ միայն տր-
գիտութեանը—երկրորդական տեղ է տրւում պ. Սեմենի տեսու-
թեան մէջ և աղէտների էական պատճառը յայտնւում է թուրքե-
րի տնտեսական թշւառութիւնն ու նրանց կրած ապօրինութիւն-
ները, զրկանքները։

«Շարժումը մուսուլմանների մէջ—ասում է յօդւածագիրը—
ծագել է այն դժգոհութեան հողի վրայ, որը պայմանաւորւում է
նրանց տնտեսական անապահովութեան աճումով, ապա նաև ի-

ւազրկութեան հողի վրայ. Նա առաջ է եկել նոյնպէս մահմե-
ական մասսայի մռայլ ոգիտութիւնից, որը արգելում է նրան
եռնելու իր ստորացած վիճակի իսկական պատճառները և ստեղ-
ում նրանից պատշաճաւոր նիւթ՝ ամեն տեսակ փորձերի համար,
բուշևանի, Գրինգմուտի նման դէմագօգների ոգով.—ուրիշ խօս-
ով, Ներկայ շարժումը մուսուլմանների մէջ փոխ-հատուցումն է այն իրա-
զրկութեան (безправіе), չքաւորութեան ու խաւարի համար, որոնց մէջ
նք դարերով պահել ենք մահմեդական մասսային, զրկելով նրան կուլտու-
ական մարդկային գոյութեան ամենատարրական պայմաններից *)։

Այդպէս էր տրամաբանում պ. Սեմին, այդ մտքով էլ նա
եկուցում էր ներկայացնել կովկասեան բարձր իշխանութեանը։
ւ ճիշտ միևնոյն ժամանակները՝ տխրահռչակ Աղայև իր ար-
անեակների հետ միևնոյն «ճշմարտութիւններն» էր ազդարարում
ասարակութեան։ Տարբերութիւնն այն էր երկու արգումենտա-
իաների մէջ՝ որ համիսլամական թէօրետիկոսը հայ տարրին էր
երագրում իր ցեղակիցների կուլտուրական թշւառութիւնը,
մինչդեռ ռուս գրողը վերագրում էր այն՝ տիրող քաղաքական ռէ-
ժիմին։

Ապա շարունակում է պ. Սեմին.

«Գիւղացիութեան հողազրկութիւնն ու քայքայումը և քաղա-
քային ազգաբնակութեան լայն խաւերի պրօլետարիացումը (про-
летаризація),—ահա գլխաւոր աղբիւրները, որոնցից ծնւում է
homo sapiens-ի այն առանձին, ակամայօրէն գազանակերպ տիպը,
որի ներկայացուցիչների սխրագործութիւնները այսօր սոսկում են
ազդում ամբողջ աշխարհին... Ոչ մի ոստիկանական միջոցով չէ
կարելի կանգնեցնել խուլիգանական տարրերի աճումը և աշխար-
հիս ոչ մի ադմինիստրացիա չէ կարող միմիայն ոստիկանական
միջոցներով յաղթահարել այդ հասարակական չարիքը»։

Բայց ահա պայթեց ուրագանը Երևանեան նահանգում, որ
կամաց-կամաց տարածւեց և ուրիշ նահանգների վրայ—ամբողջ
երկիրը, բռնակալ ռէժիմի սադրանքներով դարձաւ Թուրքական
ապատակութիւնների թատերաբեմ։ Ցայտնադործւեց բոլոր
մտածող քաղաքացիների համար, որ սև-հարիւրակեան մարդա-
սպանները Թուրք տարրի մէջ, տարաբախտաբար, կղզիացած ան-
հատներ և խմբեր չեն, որ համատարած եղեռնի մէջ մասնակից
են թէ չքաւոր և թէ ունևոր, որ հէնց բէգական դասակարգը ա-
ռաջնակարգ դեր է խաղում թալանի ու սպանութեան այդ ար-

*) Ստորագծածը մենք ենք։ Մ. Ց.

շաւանքի մէջ, որ մահմեդական ազգայնականութեան լայն զանգուած-ները պատրաստ են ամեն վայրկեան, պատեհ առիթով, գրոհ տա[լ] անպաշտպան հայ ժողովրդի դէմ և բարդուղիմէոսեան գիշերներ սարքել, á la Մինքենդ... Մասսային, հրէշաւոր եղեռնագործու-թիւններ, որոնց առջև սոսկում էին անգամ բիւրօկրատիայի ներ-կայացուցիչները... Յիշեցէք, թէ ինչպէս դիմաւորեց գեներալ Նա-պօլէօնը Մինքենդի Թուրքերին, ինչպէս նա զզւանքով յետ մղեց նրանց աղսախկալների մատուցած աղ ու հացը...

Անհուելի էր Կովկասեան Վանդէան իր բնաջնջող արշաւանքի մէջ։ Գալոց պատմագիրը ահ ու սարսուռով պիտի նկարագրէ այդ հսկայական որսախուճապը, որ կազմակերպւել էր՝ խաղաղ դրա-ցուն ջնջելու հաստատ որոշումով, այդ արիւնահեղ ճակատամարտ-ները, այդ մասսային խողխողումները, այդ համատարած լացն ու հեծեծանքը...

Հին Նախիջևանը իր շրջակայքով քար ու քանդ եղաւ, 50-ի չափ գիւղեր փլատակ դարձան, բնակիչները մասամբ կոտորւե-ցին, մասամբ բռնի կրօնափոխ եղան, մասամբ էլ փախան զանա-զան կողմեր. հայերի գոյքը յափշտակւեց և տասնեակ հայեր կեն-դանի վառւեցին իրենց խանութներում։ Հրդեհը ճարակեց և հա-րեան գաւառները։

Երևանն անգամ չը խուսափեց ընդհարումից. Թուրքերը յարձակ-ւեցին, բայց չարաչար պատժւեցին. Նրանք չարաչար տուժեցին և Երևանին մօտիկ վայրերում, ուր «Դաշնակցութեան» խմբերը զգա-լի ջարդ տւին ահաբեկելով ու փախուստի մատնելով իրենցից անհամեմատ աւելի բազմաթիւ հրոսակներին։ Նոյն պարտութիւնը կրեց խուժանը և Ղազախի շրջանում, ուր չը նայած հայ տարրի յարաբերական սակաւութեան, հակառակորդը սարսափահար յե[տ] էր նահանջում մեր փոքրաթիւ խմբերի յարձակումների առաջ...

Աւերածի հողմը անցաւ և Ղարաբաղ, ուր գիշատիչ բէգերն ու աղալարները, արդէն Բագւի ազդանշանից յետոյ, պատրաստ էին իրենց անհամար ասպատակող վոհմակները...

Կռիւը բորբոքւեց նաև Ղարաբաղի մայրաքաղաք-Շուշում այն միջոցին, երբ հազարաւոր ձիաւոր խաժամուժը, աղալարնե-րի առաջնորդութեամբ Աղդամի դաշտավայրերից արշաւում էր դէպի բերդը, օգնութեան էր գալիս իր ցեղակիցներին, երբ նա գալիս էր թալանելու Շուշու հայոց հարստութիւնները, ջնջելու

այ բնակչութիւնը և ապա գրոհ տալու Վարանդայի և Խաչէնի վրայ՝ յդ միջոցին մի խրոխտ, անառիկ բերդ ցցւեց յանկարծ նրա առջև, ի բուռն հայ կտրիճներ, մեր լաւագոյն ռազմիկներից, պատմական նկերանի պարիսպներում ամրացած՝ գրոհ տւին հազարաւոր խուժանի դէմ և մատնեցին մի անպատիւ փախուստի։ Ասկերանը ւերժացաւ հայ դժբախտ ազատագրական տարեգրութեան մէջ ւ ժողովրդական նոր հերոսների՝ Համազասպների անունները եկան իանալու Դումանների, Վարդանների, Սագօների ու Մուրադների ետ՝ ժողովրդական մելամաղձոտ երգերում... Մի դժբախտ, մի գաւոր էպիզոդ... Ո՞վ կարող էր գուշակել, որ մի օր հայ աշուղները պիտի երգեն հայ կտրիճների կռիւներն ու յաղթանակները՝ նարևան Թուրքերի դէմ...

Պատմութիւնը իր կապրիզներն ունի.—անցնենք։ Կռիւը շարունակւեց կատաղի, արիւնահեղ։ Գանձակն էլ ենթարկւեց Նախիջևանի ու Շուշու վիճակին, չը նայած Թուրքական այնքան խոստումներին, համերաշխութեան յայտարարութիւններին... Դրսից ու ներսից արշաւող խուժանը յանկարծակի բերելով հայերին, ջարդւեց նրանց և քաղաքի առևտրական մասը, հայոց ահագին հարստութիւններով, թալանի ու կրակի մատնւեց օր ցերեկով, գեներալ Տակայաշվիլիի, նոր ժամանակների այդ գարշելի Ներօնի՝ աչքերի առաջ։ Ամբողջ հայկական քաղաքամասը անխնայ պիտի քանդւէր և սրի անցկացնւէր, եթէ «Դաշնակցութեան» փոքրաթիւ խմբերը ամրացած չը լինէին այնտեղ ու յետ չը մղէին կրկնակի յարձակումները...

Կովկասեան փարթամ մայրաքաղաքն անգամ ազատ չը մընաց հակայեղափոխական կարմիր խենթութեան համաճարակից։ Թիֆլիսն էլ պաշարւեց մի գեղեցիկ օր, երբ բնաւ ոչ ոքի մտքովըն անգամ չէր կարող անցնել այդպիսի մի յանդուգն, խիզախ ծրագիր Թուրք շէֆերի կողմից... Թիֆլիսը, ուր ընդամենը մի տասնեակ հազար Թուրք են հաշւում, մօտ 150 հազար հայ, վրացի, ռուս ազգաբնակութեան դէմ՝ մի վայրկեան յայտնւեց ամենածանր տագնապի, կեանքի ու մահւան պայքարի մէջ... Տասնեակ հազար արիւնարբու բօրչալւեցիներ նախօրօք կազմած ծըրագրով եկել էին հռչակաւոր «պօգրոմի» ենթարկելու հայկական թաղերը, ժանաւանդ գեղեցիկ Սօլօլակը իր հրապուրիչ հարստութիւններով... Ամեն ինչ ժպտում էր հրոսակներին, քաղաքի դըռ-

ները բաց էին նրանց առջև. իշխանութիւնները անգործ ու անհոգ, միանգամայն տրամադրուած յօգուտ Թուրքերի... Պատմական mauvais quart d' heure անցկացրեց Թիֆլիսը, և նա խաղաղ ձեռքից գնացել էր, եթէ գործեալ հրապարակ չը նետուէր Դաշնակցութիւնը իր մի քանի հարիւր կտրիճներով, որոնք եօթ օրուայ արիւնահեղ կռիւներից յետոյ դուրս քշեցին աւարատենչ խուլիգանական մասսաներին, որոնք այնուհետև մորեխինման սփռուեցին Բորչալուի ամբողջ տարածութեան վրայ, ոչնչացնելով ամեն բան, ինչ որ հայկական էր, ինչ հայի սեփականութիւն էր։ Անմոռանալի կռիւներ, որ խուժանային տմարդութեան հետ աչքի էր ընկնում մեր ինքնապաշտպան ռազմիկի վեհանձնութիւնն ու անվեհերութիւնը և Հ. Յ. Դաշնակցութեան ամբողջ հմայքը, որ դերել էր բոլոր սրտերը—բարեկամ ու հակառակորդ—այդ սարսափելի օրերում...

Եւ այդպէս, ամեն տեղ՝ Թուրքերը նախայարձակ, ամեն տեղ՝ մասսային կոտորածի, թալանի ու հրդեհումների նախաձեռնող և կատարող։ Տասնեակ հազարաւոր մի բանակ... Համատարած, տարերային մի շարժում... Եկէք ու խօսեցէք ինչ որ «Թափթըփուկի», ինչ որ «հասարակական տականքի» մասին։ Ոչ, դա Թուրք ազգաբնակութեան լայն խաւերն էին, որ մղում էին այդ հոյակապ Վանդէան, հակայեղափոխական այդ պատերազմը։

Բացառութիւններ մնացին անշուշտ, Թուրք տարրի մէջ և նրանք այնքան աւելի յարգելի են մեզ, որքան մռայլ ու յուսահատական է Թուրք ընդհանրութեան մտավիճակը.—սակայն այդ բացառութիւններն էլ իրենց բացարձակ անզօրութեամբ շատ չընչին մխիթարութիւն էին մեզ համար, աղէտի օրերում։ Մենք ողբում ենք այդ իրողութիւնը, բայց ստիպուած ենք արձանագրել,—այնքան ծանր դժբախտութիւնների հանդէպ էօֆէմիզմներն ու փափկանկատութիւնները սազ չեն գալիս և մենք պարտաւոր ենք լիակատար հարկ տալ ճշմարտութեան, թէկուզ և դաժան, անողորմ ճշմարտութեան։

Թուրք համայնքի մի ստուար մասն էր, երբեմն ասես ամբողջ համայնքն էր, իր բէգերով ու մօլլաներով, իր կրթուած ու անկիրթ ներկայացուցիչներով՝ որ հրաժեշտ էր տալիս երեկուայ խաղաղ, հաշտ դրացիութեան և նետւում էր հայ համայնքի վրայ, կեանքի ու մահուան խնդիր դնելով նրա առջև...

Այդքան անօրինակ, եզակի, խոշոր հասարակագիտական մի

երեւոյթ ճիշտ որ չէր կարելի մեկնաբանել սոսկ քաղաքական, պետական գործօնով, սոսկ իշխանութիւնների հայատեաց դրդումներով, պէտք էր փնտրել այլ շարժառիթներ։ Եւ երբ ուշադիր ու իրազեկ միտքը ուզում է փնտրել այլ կարգի պատճառներ ժողովրդական այդպիսի մի շարժման, նա բնականաբար կանգ է առնում մարդկային ամենապարզ, ամենաընդհանուր ախորժակների վրայ, նիւթական կամ տնտեսական պահանջների վրայ։ Այդպէս է վարւում մարքսիստական կամ տնտեսական մատերիալիզմի շկոլան, երբ նրա առջև պարզւում են մարդկային պատմութիւնն ալեկոծող ժողովրդական այլազան շարժումները և տիրաբար լուծում են պահանջում։

Այդպէս կամեցան վարուել և մեր կովկասեան մարքսիստները, որոնք Թուրք-հայկական պրոբլեմի քննութիւնը ձեռք առնելով, տնտեսական մեթոդը վայր ի վերոյ կիրառելով, սկսեցին աջ ու ձախ հոլովել ծանօթ տերմինները՝ «տնտեսական կռիւ», «դասակարգային կռիւ», «կապիտալիզացիա», «պրոլետարիզացիա»... Սակայն, ինչպէս յաճախ պատահում է Մարքսի էպիգոնների և նորընծայ-աշակերտների հետ, կովկասեան մարքսիստները հասան անհեթեթ ծայրայեղութիւնների՝ թէ թէօրիական բացատրութեան և թէ գործնական եզրակացութիւնների մէջ, որոնց շարքում մի գառն, ցաւագին զաւեշտականութեամբ փայլում է Թիֆլիսեան օրգանի թղթակցի այն կլասսիկ յայտարարութիւնը, որ կովկասահայ մամուլը իր ժամանակին նշաւակեց միանգամայն արդար ցասումով, իբրև տմարդի, անպատիւ, անորակ մի երևոյթ... Յիշեցէք, ընթերցող, «Վօզրօժդէնիէ»-ի Մօսկւայի թղթակցին, որը կովկասեան փոխարքային ուղղած մի զեկուցման մէջ խորհուրդ էր տալիս չը դիմել խիստ, ճնշող միջոցների Թուրք ազգաբնակութեան դէմ պատճառաբանելով, որ այդ վերջինը գտնւում է ամենադժբախտ պայմանների մէջ և չէ կարող դիմանալ տնտեսական մրցակցութեան։ «Միլիօնաւոր ժողովուրդը, ասում էր դա, խրւած կատարեալ տգիտութեան մէջ, չունենալով մի կտոր անշարժ սեփականութիւն, բոլորովին անկարող է տնտեսական կռիւ մղել անչափ աւելի կուլտուրական և տնտեսապէս աւելի ուժեղ ժողովրդի (հասկացէք՝ հայերի) հետ»...

Այդպէս, ահա, հանճարեղ ուսուցչի անշնորհք աշակերտները թեթեւամտութեամբ խրախուսում էին անպատժութիւնը Թուրք

հրոսակների մէջ և գիտական դաւանանքի անունով նուիրագործում հայ ժողովրդի արտասուելի նահատակութիւնը...

*

«Տնտեսական» բառի իմաստը ճկուն է, առաձգական, նա ունի ընդհանուր և մասնաւոր նշանակութիւն։ Ընդհանուր մտքով, եթէ կուզէք, տնտեսական ֆորմուլան կիրառելի է մեր քննելի խնդրում։ Մենք կարող ենք ասել, օրինակ, որ Թուրք ժողովրդի լայն զանգուածները իրանց ընդհանուր մոբիլիզացիայի մէջ հայերի վրայ՝ հնազանդուել են այն շատ տարրական ախորժակներին, որ մենք քիչ առաջ յիշատակեցինք։ Լինելով մեծ մասամբ խեղճ ու չքաւոր, նրանք կամեցել են պատեհ առիթով փոքր ինչ հարստանալ, թէկուզ և ի հաշիւ իրանց պէս թշուառ ազգաբնակութեան։ Եւ առաջացել են ջարդեր ու արիւնահեղութիւններ, որոնք, դէհ, անխուսափելի են թալանի միջոցին...

Տնտեսական բացատրութեան այդ ձևը, ինչպէս տեսնում էք, á la rigueur ընդունելի է, թէև դա բանալ ու տարտամ մի բացատրութիւն է, որ չի թափանցում հարցի խորքերը, չի պարզաբանում կատաստրոֆի հրէշաւոր ծաւալը, այն սպեցիֆիկ, դժոխային արտայայտութիւնները, որ ունեցաւ Թուրք ամբոխի մոբիլիզացիան։

Կովկասեան սօցիալ-դէմոկրատները մասնաւորեցին, որոշեցին «տնտեսական» ատրիբուտը և մի կողմից հրահանգուած մարքսիզմի ֆորմուլաներից, միւս կողմից ակամայ ներշնչուած հրապարակի վրայ շրջող նախապաշարումներից, սկսեցին ճառել մէկ ժողովրդի տնտեսական ճնշման ու ստրկացման մասին՝ միւսի միջոցով, մէկ դասակարգի (հայ բուրժուազիայի) տնտեսական գերիշխանութեան ու ոտնձգութիւնների մասին և այլն։

Թուրք ժողովրդի quasi—ստրկացումը հայ ազգութեան կամ նրա որևէ հատուածի ձեռքով՝ պէտք է դիտել իբրև մի անկայուն պարադոքս և յետ մղել, առանց երկար ու բարակ բացատրութիւնների։ Թուրք մասսայի հակահայկական զգացումներն ու գործողութիւնները չեն կարող բղխել հայի տնտեսական ճնշումներից, այն պարզ պատճառով՝ որ նա, Թուրք մասսան, չէ կարող տեսնել իրականութեան մէջ այդ ճնշումները։ Իր ծայրայեղ տգիտութեան ու կուրութեան մէջ անգամ նա տեսնում է, որ գաւառներում լայնատարած ու լաւագոյն հողերը պատկանում են իր կրօ-

...լից աղաներին, որոնք իշխում են ֆէօդալական իշխանութեամբ, ...ելով և հայ և թուրք հողագործին. այո, անտարակոյս, թուրք ...նայետին գեղջուկն անգամ պարզ տեսնում է, որ հայ աշխա...տրը նոյնքան «սեփականատէր» է, նոյնքան «հողատէր», որ... և ինքը։ Իրողութիւնը հանրածանօթ է և կարիք իսկ չը կայ ...ելու ձեռնհաս հեղինակութիւնների։ «Իսկական հայ ժողո...րդը, ասում է կովկասագէտ պրոֆէսոր Մարր, աւելի մեծ չա...վ պրօլետարիատի (գիւղական պրօլետարիատի) յատկութիւն... ունի, քան թէ Գուրիայի ժողովուրդը»։ Նոյն գիտնականը հե...եալն է ասում թուրքերի մասին. «Մուսուլման աշխատաւոր ...ովորդը մինչև օրս հեծալով հեծում է համակրօն ֆէօդալների ծայ...յեղ ճնշման տակ» *)։

Ամենքը գիտեն, ամբողջ Կովկասին յայտնի իրողութիւն է, ...Երևանի ու Գանձակի նահանգներում—երկու մեծ վայրեր, ուր ... և թուրք ապրում են կողք կողքի—թուրք աղալարներին ու ...գերին են պատկանում ամենաընտիր, ամենաարգաւանդ և ամե...ընդարձակ հողաբաժինները, որոնք նախանձի առարկայ են ...ձայլին չոր ու անպտուղ մասերը գիւղող հայ ազգաբակութեան ...մար։ Այլ բան է, որ նրանք չեն մշակում։ Բայց ո՞վ է մեղա...ր... Ահա հսկայական տարածութիւններ՝ հարուստ ու բերրի ...ի աւազանով, Ղարս-Թիֆլիզեան ճանապարհի Սանահին կայա...նից մինչև Բագու, ուր աշխատանքը հրաշքներ կը գործէր, ուր ... ամենաբազմատեսակ բերքերի լեռներ կը կազմէր,—բայց ...անք մնում են խոպան ու ամուլ, դառնում են միայն աւազա...ութիւնների լայնարձակ ասպարէզ։ Այդպէս և շատ ուրիշ տեղեր։ ...եղաւորը մեր դրացին ինքն է, իր անընդունակութիւնը տոկուն, ...րատև ու արդիւնաբար աշխատանքի։ Որպէս զի այդ աշխա...անքը դառնայ ներոյժ, ինտենսիւ՝ անհրաժեշտ է, տարաբախտա...ար, շատ երկար ժամանակաշրջան... «Եթէ մի ազգ—իրաւամբ նը...ատում է պրոֆէսոր Զուպրով—եթէ մի ազգ երկար ժամանակ ապրել ...այնպիսի պատճառների ազդեցութեան տակ, որոնք չեն նպաստա...րել ուժեղ, կորովի աշխատանքը—ծուլութիւնն ու մեղկութիւնը ...աշխատանքի մէջ կը յարատևեն դեռ երկար ժամանակ, նոյն իսկ ...ղդ մեղկութիւնն առաջացնող պատճառները վերանալուց յետոյ»։

*) Տես Петербургскія Вѣдомости, 1905 թ. № 272.

Կրկնում ենք, հողատէրը Թուրք տարրն է և հէնց ըն րումների վայրերում խոշոր կալւածատիրութիւնը գոյութիւն Թուրքերի և ոչ հայերի մէջ։ Խաչէնի շրջանում—ասում է Ս. ւարեան իր մի զեկուցման մէջ (Սովը Ղարաբաղում ու Զան զուրում)—35 հայկական գիւղերից պետական են միայն 3-ը, նական—չորսը և բէգական—28-ը։ Վերջիններից 9-ի տէրերը մէլիքներն են, 19-ի տէրերը Թուրք բէգեր։ Ղափանի 32 գիւղերից 15-ը պետական են, 12-ը բէգական (4 հայ, 8 Թուրք նոյն պայմաններն են՝ Վարանդայի, Ջիւանշիրի, Ջէբրայ Գանձակի և այլ գաւառներում։

Ղարաբաղի խաների ժառանգն ունի 30 գիւղ սեփական 23 գիւղերի եկամուտները՝ մինչև իր մահը։ Ջաւատ աղա Ջիւ շիրը տէր է մի քանի տասնեակ գիւղերի, մեծ մասամբ հայ։ մէլիքների հողերը ըստ ամենայնի ողորմելի են, համեմատ այն տարածութիւնների հետ, որոնց վրայ իշխում են Թուրք շոր կալւածատէրերը։ Նոյն յարաբերութիւններն են տիրում րևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Դարալագեազի և բազ Թիւ ուրիշ գաւառներում։ Դեռ չենք խօսում Բագւի, Թիֆլ նահանգների մասին։ Հայ և Թուրք հողագործները—հաւասա պէս գերի են Թուրք ֆէօդալ բէգերի ձեռքում...

Այդպիսով, եթէ ճնշում կայ ագրարային աշխարհում ժ վրրդական մասսաների վրայ—այդ ճնշումը գալիս է իրօք ոչ այլ Թուրք տարրի կողմից։

Ոմանք ենթադրում են, թէ Թուրք հողատէրերը, ագդ Ռուսաստանի ագրարային մեծ շարժումներից և երկիւղ կր մի գուցէ նման շարժումներ առաջ դան իրանց հպատակ խլօ րի մէջ՝ մտածեցին «դիվերսիա» անել, կուացնել Թուրք ու աշխատաւորներին, շեղել նրանց ուշադրութիւնը տնտեսական մերաշխ կուլի մտահոգութիւններից և այդ նպատակով նրանք յ ցան Թուրք-հայկական պատերազմը... Այս էլ մի բացատրութ է, շատերից մէկը, որ սակայն լուրջ քննադատութեան չի դի նում։ Դժւար թէ Թուրք հողագործ մասսան ընդհարումներից առաջ արտայայտած լինի ինքնագիտակցութեան և ըմբոստութ այնպիսի նշաններ և դժւար թէ հայ և Թուրք հողագործ մասս ների համերաշխութիւնը ագրարային շարժման հողի վրայ ա քան զգալի դարձած լինէր, որ երկիւղ ներշնչէր աղալարներ

ար թէ, վերջապէս, այդ վերջինները նման դիպւածում լինէին տարբերաբար յղանալ այդպիսի «դիվերսիաներ», ուշադր-թիւններ... Աւելի ճշմարտանման ենթադրութիւնն այն է, որ ղարները շարժւել են այն ուժեղ զարկի ազդեցութեան տակ, ուեց Բագուն։

—

Ի՞նչ ուրիշ ճնշման մասին խօսք կարող է լինել հայի ու րքի յարաբերութիւնների մէջ։ Լրջութիւն չի լինի, եթէ ծան-անք հայ մանր բուրժուազիայի, մանր առևտրականների ու խառուների «կեղեքումների» վրայ։ Վաշխառութիւնը մեր գա-ներում մի ընդհանուր-կօսմօպօլիտական պատուհաս է, որի հայ և Թուրք կարող են հաւասար աջողութեամբ մրցել իրար ու Թուրք «կուլակները» նոյնքան բազմաթիւ են և նոյնքան ողորմ վաստակի մէջ։

Մանր առևտրականների կեղեքումները ևս չեն կարող մտնել առճառների» շարքը։ Հէնց նաւթային մայրաքաղաքում, ուր տարւեց հայ-թուրքական ողբերգութեան առաջին արարւածը, որ առևտուրը կենտրոնացած է գլխաւորապէս թուրք տարրի ձեռքում...

Ողորմելի натяжка-ներ կը լինէին նմանապէս, եթէ մենք ճըն-ֆակտոր համարենք մեր գաւառների մի քանի անկիւններում ր ու ցան կանոնած մետաքսի և ուրիշ փոքրաթիւ գործարան-րը։ Այդպէս անում են մեր նորընծաները սօցիալ-դէմօկրատնե-շարքերից, որոնք ճգնում են հաւատացնել, որ հայ բուրժու-իան իր ձեռնարկներով գրգռում է ֆէօդալ աղալարներին, ար-րծում է նրանց մէջ յարձակողական ախորժակներ, որ, ուրիշ քով, հայ-թուրքական ներկայ տագնապը իր քաղաքական պատ-ներից դուրս՝ մի անխուսափելի ընդհարումն է երկու մեծ տեսական ուժերի—թուրք կազմալուծւող ֆէօդալիզմի և հայ րգացող բուրժուազիայի... Դա միայն դեղեցիկ հիպերբօլա է (ա-չափազանցութիւն), մի շատ ու յախուռն ընդհանրացում և ու-րիշ ոչինչ։

Բայց գուցէ՞ ճնշում կայ հայերի կողմից խոշոր կապիտալի կամ ուստրիայի աշխարհում...

Ասում է թէ այդտեղ է հարցի կենտրոնը, նրա ամենափա-կ ու շահագրգռող կէտը։ Այնտեղ, կովկասեան ինդուստրիայի

և մահմեդական աշխարհի սրտումն է, որ նիւթւել է հրէշային ւադրութիւնը, այնտեղ է, որ նա առաջին անգամը իրագոր ողբերգական ու համաշխարհային շառաչումով. այնտեղ՚ց է, դաւադրութիւնը ճիւղաւորւեց ամբողջ Անդրկովկասում, տա ծելով իր հետ և արեան ալիքը... Որովհետև այնտեղ է, որ իր «դայնական» գործունէութեան խարիսխ է հաստատել Թուրք պիտալիստ դասակարգը, նրա սպասաւոր մամուլը և նրա խնկ կու իդէօլօգների կուռ բանակը, ամբողջ մահմեդական e'tat-majo Բագուն սկսել է, Բագուն թերևս կարող է և վերջ տալ արիւ կօշմարին, եթէ կամենայ։ Բնական է, ուրեմն, որ մարդիկ հ տան, արդեօք այդտեղ, այդ վիթխարի հնոցում չէ՞ որ խաղ ւում է, իբրև մի ահաւոր կրկէսի մէջ, Թուրք-հայկական ան գօնիզմի մեծադոյն դրաման, արդեօք Բագւի պայմանների վ չէ՞, որ պէտք է կառուցանել կովկասեան արիւնահեղ ընդհար ների պատճառաբանութեան ամբողջ շէնքը...

Եւ դարձեալ—ոչ։

Միամտութեամբ կամ չարամտութեամբ մոլորւում են րանք, որոնք պնդում են, թէ նաւթաշրջանի ամբողջ արդիւ բերութիւնը հայերի ձեռքումն է, թէ «ամբողջ բուրժուազիա հայեր են»։ Նոյն իսկ Պետերբուրգից և արտասահմանից յառ միասիայով գրկւած թղթակ ցները իրանց անաչառ ուսումնա րութիւններով հերքեցին այդ ըմբոստեցուցիչ թիւրիմացութիւ հաստատելով՝ որ հայ արդիւնաբերող պատրոնի կողքին կա նած են Թուրք, ռուս ու եւրոպացի պատրոններ, որ ընդամենը կու խոշոր հայ ընկերութիւնների հետ—Մանթաշեան, Կասպեան գոյութիւն ունեն երկու նոյնքան խոշոր Թուրք ընկերութիւնն և երկու անհամեմատ աւելի խոշոր օտար ֆիրմաներ—Նոբ Ռօտշիլդ,—որ հայկական արդիւնաբերութիւնը նաւթային ա խարհում կազմում է ընդհանուր արդիւնաբերութեան հազիւ մ երրորդը, որ Թուրք կրեսոսները ամբարած են ու անշարժացրա իրանց ամրակուռ սնդուկների մէջ դրամական ահռելի հարստու թիւններ, որոնց համեմատութեամբ չնչին է հայերի դրամագլու խը, որ Թուրքական այդ հարստութիւնները, ստեղծւած են հա յոց աշխատանքով, որ մանր առևտուրը, վաճառականութիւն նոյն շրջանի մէջ կենտրոնացած է գրեթէ բացառապէս Թուր տարրի ձեռքում, որ Թուրքի ձեռքումն են և քաղաքի տները

յնատարած նաւթահողերը,—հարստութեան այդ անսպառ աղբիւրը և այլն և այլն։

Ո՞ւր է ճնշումը։ Ի՞նչն է այնպիսի յուսահատական ճիչեր ացնում թուրք կրեսոսների և նրանց իդէօլօգների նախանձոտ րտից։ Ի՞նչն է, որ բոլոր հայատեացներին բոցավառում է վայնի կրքով ու հրապարակ նետում անմիտ, տմարդի նշանախօսը՝ «հայ կապիտալը—ահա՜ թշնամին»։ Հայ կապիտալի ու կապիտալիստների փաստաբանութիւնը չենք ուզում անել մենք. կանգնած լինելով աշխատաւոր ընդհանրութեան շահերի տեսակէտի վրայ, մենք այդ շահերին թշնամի ենք դիտում կապիտալիզմը ընդհանրապէս, անկախ կրօնից ու ազգութիւնից։ Բայց կայ մի այլ տեսակէտ—ճշմարտութեան տեսակէտը՝ որ շիտակ ուսումնասիրողը երբէք չի կարող խեղդել որ և է աղանդական մտահոգութեան մէջ... Ո՞ւր է ճնշումը...

Դա այն չէ, ընթերցող, որ իբր «ամբողջ բուրժուազիան Բագւում հայերն են»—անարժան մի սուտ, որ դարձեալ գալիս է սօցիալ-դէմօկրատներից—դա այն չէ, որ իբր թէ թուրքը զգում է իր կաշուի վրայ, իր հոգու խորքում հայ տնտեսական լուծն ու ճնշումը, այլ դա այն է, որ հայ «եկւոր» *) տարրը, կարողացել է 30—40 տարւայ ընթացքում, իր նախաձեռնութեան, ընդունակութիւնների շնորհիւ, պատկառելի դիրք գրաւել նաւթային աշխարհում, որ հայը ընդհանրապէս դժբախտութիւնն ունի հանդիսանալ, բրև խոշոր կուլտուրական ուժ արդիւնաբերական կեանքի բոլոր ասպարէզներում, որ նա թափանցում է միշտ աւելի և աւելի տուար թւով ինդուստրիական, առևտրական, բանկային ու այլ հաստատութիւնների մէջ, որ այնպիսի խոշոր հիմնարկութիւններ, ինչպէս են նաւթարդիւնաբերողների Խորհուրդը, Բօրսային մարմինը, Տեխնիկական ընկերութիւնը՝ գլխաւորապէս հայերի ձեռքումն են, (ոչ ոք, ի հարկէ, չէ արգելում նաև թուրք տարրին՝ բազմացնել իր ձեռնարկութիւնները և իր ստուար ներկայացուցչութիւնն ունենալ այդ հիմնարկութիւնների մէջ), որ հայ կապիտալը, ակտիւ, շարժուն ու նախաձեռնող, նետւում է նորանոր

*) «Եկւոր» բառը, ինքնին միամիտ արտայայտութիւն է, որով թուրք շօվինիստ «հրապարակախօսը» սիրում է արհամարհոտ շեշտով յատկանշել հային, նրա քաղաքացիական իրաւասութիւնը ժխտելու համար։ Այդ բառը առաջին անգամ սկսեց գործածուել Աղայեվների գրականութեան մէջ։

ձեռնարկների մէջ,՝ մինչդեռ Թուրքական ահագին դրամագլուխները կամ անշարժ մրափում են, կամ թէ բռնուած են սոսկ վաշխառուական գործողութիւններով, հանդիսանալով էապէս սպեկուլատիւ մի ուժ, որ Թուրքական վաղեմի տիրապետութեան այդ կենտրոնում «եկւոր» հայը շինում է դպրոցներ, բարեգործական ու այլ հասարակական հիմնարկութիւններ, հիմնում է մամուլ, ստեղծում է ամբողջ մտաւոր մթնոլորտ, գրաւում է ազատ պրօֆէսիոնների ընդարձակ ասպարէզը, տալիս է բժիշկներ, ինժինէրներ, փաստաբաններ, որ հայ տարրը, մի խօսքով, հանդիսանում է պրօգրէսի մի խթան, անդուլ, բեղմնաւոր առաջադիմութեան ներկայացուցիչ, մինչդեռ իր դրացին արեւելեան անշարժութեան կնիքն է կրում և այլն և այլն։

Այդտեղ է ահա հայկական անիծեալ «ճնշման» գաղտնիքը, այդտեղ է Թուրք տարրի, Թուրք «ինտելիգենցիայի» ու «հասարակութեան» դժգոհութեան պատճառը։ Բայց այդ պատճառը բացառապէս, նոյն իսկ գլխաւորապէս տնտեսական չէ,—ինչպէս խեղաթիւրել բառերի իմաստը—և այդ «ճնշումը» տեղական չէ ու դասակարգային չէ, այլ զուտ կուլտուրական։ Նա գոյութիւն ունի ոչ միայն Նաւթային մայրաքաղաքում, այլ բովանդակ Անդրկովկասում,—բոլոր վայրերում, ուր խառը ապրում են հայ և Թուրք տարրերը։ Ո՜չ, այդ չարաբաստիկ «ճնշումը»—որքան էլ խորթ հնչէ ճնշում բառը խեղճ, հալածական մի ժողովրդի դիմաց—յատուկ չէ սահմանափակ մի շրջանի։ Նա, ըստ երևոյթին, հայի բնութեան մի յատկանիշն է, նրա էութիւնից անբաժան մի բան։ Չէ՞, Թիւրքահայաստանում ևս հայը, ասում են, ճնշող տարր է, նա «ճնշում է» քրդին, տաճկին, եզիդին... Չէ՞, սուլթանական րէժիմի տակ անգամ Թշւառ ժողովուրդը հանգստութիւն չունի տգէտ ու հայատեաց «թէօրէտիկոսների» ձեռքից... Նա պիտի ջնջւի կամ իսպառ բթանայ, պիտի կորչի նրա մէջ գործունէութեան, նախաձեռնութեան ամեն յատկութիւն, կեանքի ամեն սաղմ, նրա բոլոր օրգանները պիտի անդամալուծւեն, ատրօֆիայի ենթարկւեն, ընդմիշտ պիտի մարի առաջադիմութեան հոյակապ ջահը, որ այդ վիրաւոր ժողովուրդը դարերից ի վեր անվկանդ տոկունութեամբ կրում է ասիական խաւարի միջից, նա պիտի նմանի, պիտի հաւասարւի իր շրջապատին, այն ժամանակ միայն խաւարամոլ մարդա-

ցները կը հանգստանան, կը դադարեն ատել բազմատանջ նա-
ակլին, կը սիրեն նրան...

Հայ ժողովրդի համար մի իրական պատուհաս է դառնում այն գամանքը՝ որ հայ կապիտալիստը առհասարակ տարբեր է րք կապիտալիստից իր կրթութեամբ ու ըմբռնումով, որ տար- է և հայ աշխատաւոր դասակարգը՝ հայ միջին արհեստաւորն բանւորը, գործակատարը, ինտելիգենտը՝ իրանց վարժութեամբ յարաբերական գրագիտութեամբ, իրանց հետաքրքրութեամբ ւարական հոսանքներով, և այդ դժբախտ տարբերութիւնն է լուլտուրական, ոչ տնտեսական—որ անդրադառնալով Թուրք լավարող դասակարգերի մտածողութեան վրայ, աղբիւր է դառ- մ այնքան Թունոտ ատելութեան և թշնամութեան. այդ դժ- խտ տարբերութիւնն է գուցէ, որ ներշնչում է պանիսլամիստ խուլիգան e'tat-major-ին յանցաւոր միտքը, խիզախ, ուտոպի- յան ծրագիրը—դուրս մղել բռնութեամբ ատելի ոսոխին, ջնջել մ գաղթեցնել նրան հեռու «մուսուլմանական նահանգներից»— ռու «Թուրքական հայրենիքից»...

Ո՞րտեղ կը գտնէք նման կացութիւն։ Եւ ծիւ է մեղաւոր, որ յ տարրը քաղաքակրթութեան տեսակէտից իր որոշ առաւելու- իւններն ունի, ո՞ր լօգիկայով կը բարեհաճէք արդարացնել այն ւաքական և գիտակից Ոճրագործին, որը չէյթան-դահիճների ստ միաբանելով, դաւ է նիւթում դրացի ժողովդի դէմ, այն տճառով որ չի հանդուրժում նրա մտաւոր, կուլտուրական ռաւելութիւնները։ Ո՞ր օրինագիրք, որ իրաւական կամ բարո- ական կօդէքսն է հրահանգում՝ հաւաքական ոյժ կազմակերպել ի ազգի վրայ, եթէ անգամ նա, այդ ազգը, ամբողջապէս բաղ- ացած լինէր գձուձ արծաթասէր չարչիներից, անգամ եթէ նա իւթական հարստութեան անյագ տենչով, բայց և խաղաղ, օրի- աւոր մրցութեամբ, լոկ իր ներքին կարողութիւնների վրայ յեն- ած՝ իրօք գրաւէր ամբողջ երկիրը, հասնէր տնտեսական միա- եծան տիրապետութեան, դուրս մղէր բոլոր հակառակորդ ու- ժերը...

Ի՞նչ կը լինէր, եթէ մի գեղեցիկ օր Անդրկովկասի որոշ կէ- տերում հայ գիւղական ազգաբնակութիւնը Թրերով ու հրացան- ներով արշաւէր իր ծոցում բնակութիւն հաստատած գերմանական գաղութների դէմ, որոնք իրանց աւելի բարձր կուլտուրայով,

տնտեսական աւելի նուրբ մեթօդներով՝ ճնշող մրցակից են հա[illegible] դիտանում և հետզհետէ ծաւալում են ու բարգաւաճում, ի հ[illegible] շիւ տեղացիների...

—

Նրանց, որոնք տրամադիր են ներկայացնելու հայ ժող[illegible] վուրդը, որպէս չարչի, վաճառական մի ժողովուրդ և որոնք պ[illegible] ռում են աջ ու ձախ, թէ հայը դաւթել է ամբողջ Կովկասի առ[illegible] տուրն ու արդիւնաբերութիւնը—այդպիսիներին կուղէինք յանձն[illegible] րարել ընթերցանութեան համար թէկուզ ռուս գրող պ. Սազոնո[illegible] մի փաստացի յօդւածը «Вся торговля находится-ли въ ракахъ а[illegible] мянъ»? վերնագրով (Ամբողջ առևտուրը գտնւում է արդեօք հա[illegible] յերի ձեռքում), որ զետեղւած է հանգուցեալ Ջանշեանի «Եղբայ[illegible] րական Օգնութեան» մէջ և, թէև գրւած 9 տարի սրանից առա[illegible] հազիւ թէ ընդհանուր գծերով սխալ լինի ներկայ դրութեան վե[illegible] րաբերմամբ։

Կովկասեան արտահանութեան նիւթերի մէջ, ասում է Սազօ[illegible] նով, առաջին տեղը բռնում է նաւթը և թւերով ցոյց է տալիս, ո[illegible] նաւթի արդիւնաբերութեան, առևտրի ու արտահանութեան մէ[illegible] հայերի դերը չնչին է, որ գտնւում է օտարների ձեռքում։

Նաւթից յետոյ առաջին տեղը բռնում է մարգանեց և սխմինդր[illegible] Այդ բերքերի թէ արտադրութիւնը և թէ արտահանումը գտնւու[illegible] է գարձեալ օտարների կամ իմերեթին կալւածատէրերի ձեռքում[illegible] այնտեղ՝ ոչ մի հայ։

Հանքերն ու հանքագործարանները ևս գտնւում են մեծագոյ[illegible] մասամբ օտարների կամ ռուսների իշխանութեան տակ։ Աղահան[illegible] քերի ու ձկների առևտրի մէջ միայն՝ պատահում են մի երկու հա[illegible] ազգանուններ։ Հայերի տեղը համեմատաբար աննշան է նաև գինո[illegible] և օղիի արդիւնաբերութեան մէջ։ Արտադրած սպիրտի հազիւ մի[illegible] այն 1/6 մասն է դուրս գալիս հայերի գործարաններից։ Կովկա[illegible] սում գտնւող 11 օղիի գործարաններից (1894 թւի հաշւով) մի[illegible] միայն երկուսն են պատկանում հայերի և նրանք արտադրում են[illegible] հազիւ միայն 1/9 մասը ամբողջ կովկասեան օղիի քանակութեան[illegible]

Գարեջրի գործարաններ—18 հատ. ոչ մէկը՝ հայի։

Ծխախոտի գործարաններ—19 հատ. միայն 3-ը՝ հայերի։ (Այժ[illegible] այդ թիւը մեծացել է և մեծագոյն գործարանները հայերի ձեռքում[illegible] են։ Մ. Ց.)

Մետաքսի գործարաններ—53. Նրանցից 33-ը՝ հայերի: Բրդի՝ միայն մէկ գործարան—Ադելխանովի, Թիֆլիսում: Նա էլ գլխաւորապէս ընդունում է տէրունական պատուէրներ:

Լաւագոյն զորքերը պատրաստւում են Շուշու գաւառում, Թուրքերի մօտ. լաւագոյն մահուդները՝ Դաղստանում և Օսետիայում:

Զուգունի գործարանները կենտրոնացած են Թիֆլիսում, Բագւում և Բաթումում և գրեթէ բոլորը պատկանում են օտարերկրացիների:

Կաշւի գործարաններ—200 հատ Կովկասում: Նրանց մէջ ամենամեծը հայ Ադելխանովինն է, Թիֆլիսում:

Քութայիսի նահանգում գործատէրերի շարքում հայ չը կայ:

Լուցկիի գործարան—մէկը միայն, ոչ հայի:

Մնացած ճիւղերի վրայ Սազօնովը կանգ չի առնում, համարելով նրանց միանգամայն աննշան:

Եզրակացութիւն: Գործարանական ու հանքային արդիւնաբերութիւնը Կովկասում (բացի նաւթից) շատ թոյլ է զարգացած, չը նայած արտադրւող հում նիւթերի ահագին քանակութեան: Ոչ Կովկասի արտաքին առևտուրը, ոչ էլ գործարանային ու հանքային արդիւնաբերութիւնը չի գտնւում հայերի ձեռքում. աւելի ևս՝ արդիւնաբերութեան ոչ մի ճիւղի մէջ հայերը չեն բռնում տիրապետող դիրք:

Դրա հետ միասին պ. Սազօնով հաստատում է, վիճակագրական տեղեկութիւնների վրայ յենւած, որ Կովկասում հայ վաճառական տարրը կազմում է ամբողջ հայ ազգաբնակութեան 6%-ը միայն. Մնացած 94%-ը կազմում են հողի աշխատաւորներ ու արհեստաւորներ:

Անհասկանալի պերճախօս թւեր այն բոլոր հայատեացների համար, որոնց հաճելի է նոյնացնել հայ ժողովրդին իր փոքրաթիւ վաճառական դասակարգի հետ և սրա բարոյական մակարդակով չափել ամբողջ ժողովրդի ֆիզիօնոմիան:

Նոյն ցաւալի երևոյթն ենք գտնում, տարաբախտաբար, թէ այստեղ մեր շուրջը, թէ Տաճկաստանում և թէ Եւրոպայում: Ամեն տեղ հայատեաց ու շահախնդիր մոլեգնութիւնը գրոհ է տալիս հայ «սարրաֆների» (դրամափոխ) ու վաշխառուների դէմ, որոնց իրաւ է, յաճախ են հանդիպում Կ. Պօլսում, Տրապիզոնում

ու Թիֆլիսում...և ադէտ ու յաւակնոտ թեթևամտութեամբ սևացնում են 95⁰/₀ հայ երկրագործ, աշխատաւոր ժողովրդին...

Եւ, երևակայեցէք, այդ զզւելի նախապաշարումից քիչ չի տուժում հայ նահատակ ժողովրդի դատը Արևմուտքում։ Այդ տըգեղ յայտարարութիւնները յաճախ ու յամառութեամբ կրկնելով որոշ մամուլի էջերում, մի յայտնի չափով անդրադառնում են եւրոպական մասսաների և նոյն իսկ կրթւած քաղաքացիների տրամադրութեան վրայ և երբեմն կը լսէք նրանց բերաններից վիրաւորական բացականչութիւնը. «Ce peuple n'est pas bien inte'ressant, cette cause n'est pas bien cympathique!» (Այդ ժողովուրդը այնքան էլ հետաքրքիր չէ, այդ դատը շատ էլ համակրելի չէ)...

Հայկական դմա—«սարրաֆների» դմա... մրմնջում են մարդիկ—քչերը, բարեբախտաբար—և ուսերը թոթւում...

Այդ վնասակար նախապաշարումների դէմ է, որ տարիներից ի վեր Արևմուտքում մաքառում են հայ դատի բարեկամ օրգաններն ու քաղաքացիները, նկարագրելով, ի տես դնելով բուն թըշւառ, հարստահարւած հայ ժողովրդին—«Հայաստանի ազնիւ ու աշխատասէր գիւղացուն»,—ինչպէս 2 տարի առաջ ասում էր անգլիական այժմեան մինիստր Ջէյմս Բրայս։

Վերջապէս, միթէ «վաճառականութիւն» կոչւած կատեգորիան իր ներքին բնութեամբ մօտաւորապէս նոյնը չէ բոլոր երկրներում։

Ո՞րտեղ է նա սիրւած, գուրգուրւած... Հայ առևտրական տարրը, որ մի չնչին բեկորն է ամբողջ հայութեան, յայտնի է իր աւանդական արատներով, դրամի ստորացնող պաշտամունքով, դասակարգային բիրտ էգօյիզմով, որ տասնեակ տարիներից ի վեր հայ քննադատող միտքը մտրակել է ծայրայեղ խստութեամբ. բայց ո՞ր երկրում, Արևելքի և Արևմուտքի ո՞ր ազգի մէջ կը գտնէք բուն, ազնիւ, էտիկայի սկզբունքներին համապատասխանող առևտրական դասակարգ։

Եւ ո՞վ չը գիտէ, որ այդ արատները չեն սպառում վաճառականութեան սկզբունքի ամբողջ էութիւնը, որ այդ վերջինը իր բացասական գծերի հետ՝ ունի ամեն տեղ, պատմութեան բոլոր շրջաններում, իր դրական, քաղաքակրթող, աշխարհաշէն դերը, որ մասնաւորապէս հայ աշխարհում, Փոքր Ասիայի, Անդրկովկասի, Պարսկաստանի հորիզոններում՝ հայ առևտրական տարրը հան-

դիտացել է դարերից ի վեր իբրև ճշմարիտ կուլտուրտրէգեր, քաղաքակրթութեան ջահակիր, •իբրև միջնորդ Արևելքի և Արևմուտքի միջև։ Դա մի ույժ է, վաստակւած գոյութեան անհաւասար ու փոթորկալի պայքարի մէջ, մի ույժ, որ այսօր արևմտեան աշխարհում անգամ համարւում է գրաւական ազգերի կենսունակութեան ու առաջադիմութեան։ Այսօր Գերմանիան, Կոմմի-Վօյաժօր Կայզէրի պետութիւնը, ձգտումն ունի կարծես վերածւելու առևտրական գործակալների մի հսկայական բանակի՝ արտահանելու, ծաւալւելու, աշխարհը տնտեսապէս նւաճելու, բրիտանացուն՝ «Արևմուտքի այդ Հրէային՝» դուրս մղելու յամառ ձգտումով,—և ոչ ոք, ոչ մի իրաւական բարոյագիտական կօդէքսով հարկ չի համարում բարկութեան ու ցասման շանթեր թափել գերմանական այդ անյագուրդ շահախնդրութեան, ծաւալման առթիւ։

Կենսունակութեան առաջադիմութեան գրաւակա՛ն… Այնտեղ, ուր չը կայ այդ ույժը, ուր բացակայում է տնտեսական, առևտրական թռիչքը, ինիցիատիւը,—այնտեղ սովորաբար կեանքը թմրում է, ճահճանում, միտքը բորբոսնում է և թունաւորում իր շրջապատը։ Այդպէս է, օրինակ մեր մահմեդական դրացիների աշխարհում, ուր տնտեսական-առևտրական զարգացման անընդունակութիւնը տարաբախտաբար, չափազանց աղաղակող է… Զո՛ւր են, զո՛ւր պանիսլամիստ շէֆերը պարծենում հասարակական կարծիքի առաջ, իրանց ժողովրդի կուսական «բարոյականութեամբ», իրանց նահապետական «առաքինութիւններով», որոնք իսկապէս պատուհաս են միայն երկրի ընդհանուր առաջադիմութեան համար։ Դառնանք հարցին։

Անտագօնիզմը, այդպիսով, ընդհանուր է, համատարած. ոչ զուտ տնտեսական, այլ կուլտուրական. ոչ դասակարգային, այլ ցեղական-ժողովրդական։ «Մեղաւորը» հայ կապիտալիզմը չէ, բուրժուազիան չէ, «մեղաւորը» Բագուն չէ, այլ ամբողջ հայ աշխարհը, ամբողջ հայ տարրի կուլտուրական առաջադիմութիւնը։ Սրանից մի քանի տասնեակ տարի առաջ նաւթաշրջանը գոյութիւն չունէր, իբրև ինդուստրիական վայր և առհասարակ հայ կակապիտալիզմը չը կար, բայց մենք վստահանում ենք ամենավճռական կերպով պնդել, ու Թուրքերի հաւաքական արշաւանքը և Թուրք-հայկական ընդհարումները Անդրկովկասում կարող էին առաջ գալ նաև սրանից 20—30 տարի առաջ, եթէ կառավարութիւնը նպաստաւորէր։

Ով որ ժխտէ այդ՝ կամ նա չի ճանաչում Թուրք խուժանային տարրերին կամ թէ գիտակցաբա՞ր, սխալ հասկացրուած «ինտերնացիօնալիզմի» ու «համերաշխութեան» միտումներով վարագուրել է ուզում այդ տարրերի նկարագիրը։ Իսկ մենք այդ համարում ենք ոճրի դիմաց կրկնակի ոճիր և, լինելով հանդերձ սոցիալիզմի ու համաշխարհային համերաշխութեան համոզուած պաշտպան, մենք անհրաժեշտ ենք սեպում և յանձնարարում ենք սիստեմատիկաբար մերկացնել մեր անբախտ միջավայրում թագաւորող այն sui géne'ris հոգեբանութիւնը, որ քսաներորդ դարում դժոխք է ստեղծում մի ամբողջ ժողովրդի համար, բռնանալով նրա ոչ միայն առաջադիմութեան, այլ և գոյութեան վրայ։

Ի՞նչ կայ աւելի քստմնելի, քան վարագուրելու այդ մեթօդը… à la Աղայէվ, որը Բագւի առաջին կոտորածից յետոյ այնպէս կատաղութեամբ պահանջում էր, որ մամուլը լռէր, որ «յանուն խաղաղութեան» նա չը մերկացնէր Թուրք խուժանի սխրագործութիւնները։ Ի՞նչ կայ աւելի թեթևամիտ ու աւելի յանցաւոր, քան հայ ֆիլիստէր-ինտելիգենտի ու դեռաբուսիկ սօցիալ-դէմօկրատի սիրած տակտիկան՝ աչքերը փակել կատարւող անլուր շահատակութիւնների վրայ և քաւութեան նոխազի դերին արժանացնել բարբարոսութեան ողջակէզ բերւած հայ ժողովրդին…

IV

ԱՐՋԱԳԱՆՔՆԵՐԸ ԴՐՍԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ցաւոտ ճշմարտութիւններ

Թուրքական նախայարձակները և Ռուսաստանի մամուլը.—Պատճառները տնտեսական չեն.—Եւրոպական մամուլի գնահատութիւնները.—Times-ի ծայրայեղ կարծիքը.—Temps լրագիրը և օբիեկտիւ ճշմարտութիւնը.—Հայերը երբէք նախայարձակ չեն եղել.—Արևելեան ատաւիզմը.—Կուլտուրական հակադրութիւնը երկու ժողովուրդների մէջ.—Լուիջի Վիլլարի.—Քաղաքականութեան կռիւը բարբարոսութեան դէմ.—

Պէտք է խոստովանել, որ Ռուսաստանի և Եւրոպայի խոշոր մամուլը—չենք խօսում «Նօվօյէ Վրեմիայի» ու նրա գոյնի օրգանների մասին—այդ տեսակէտից աւելի ծառայութիւն մատու-

ն ճշմարտութեան և հայ ժողովրդին։ Շատ աւելի օբիեկտիւ
բպով ռուս ու եւրոպացի հրապարակախօսները ի ցոյց դրին
ւն, Թափանցիկ իրողութիւնը և հասարակական ուշադրութեա-
մատնեցին իսկական պատասխանատուներին։ Եւ այդ
գանները իրանց հեղինակաւոր Թղթակիցների բերանով չը բա-
կանացան աջ ու ձախ կրկնելով շաբլօն-ֆրազը բիւրօկրատիա-
մանակցութեան մասին, մի բան, որ աւա՜ղ, արևի պէս պարզ
Նրանք աւելի խորը գնացին արիւնոտ պրօբլեմի վերլուծման
ջ և քաղաքական պատճառներից դուրս՝ տեսան ուրիշ կարգի
ատճառներ ևս—մտաւոր, հոգեբանական, ցեղական-կուլտուրա-
ան և այլն։

Անհնարին է նոյն իսկ համառօտիւ ամփոփել այստեղ այն
խիթարական և անաչառ տեսութիւնները, որ «Русь», «Новос-
ы», «Право», «Биржевыя Вѣдомости» և այլն—չենք էլ յիշատա-
ում զուտ սօցիալիստական օրգանները, «Сынъ Отечество» և
րիշները—նուիրեցին կովկասեան անլուր աղէտներին, ծանօ-
ացնելով հանգամանօրէն ահռելի իրականութեան ֆակտօրների
տ, լուսաբանելով Թուրքական գրոհի ճշմարիտ իմաստը։

Կուզէինք միայն մի երկու յատկանշող անել, որոնք, իրաւ
ծանօթ ճշմարտութիւններ պիտի պարունակեն, բայց ի՜նչ ա-
ած... Պէտք է յար և միշտ կրկնել, արծարծել այդ հանրածանօթ
մարտութիւններն անգամ, մինչև որ նրանք խոր Թափանցեն
նգիտակիցների ու ֆօրմուլաներով հմայւածների ուղեղները, ո-
նք ինչոր մետաֆիզիկական «անաչառութեան» ցաւով բռնւած՝
զում են անպատճառ միևնոյն սև տախտակի վրայ դնել ամեն
ան, ուզում են անպատճառ մեղաւոր ճանաչել մէկին և միւսին,
յն իսկ յաճախ փորձում են փաթաթել դահիճների մեղքը՝ զո-
երի շլնքին...

Ո՞վ սկսեց այս արիւնալի վակխանալիան և ինչո՞ւ... Ո՞վ էր,
ր առաջին անակնկալ նախայարձակից ու ջարդից յետոյ առաջ
դեց կանոնաւոր պատերազմը, նոր մասսային նախայարձակնե-
ով ու սարսափներով... Ո՞ւմ գործն է այդ նզովեալ, այդ հսկա-
կան տրագեդիան, որ գուցէ դեռ չի արտասանել իր վերջին
օսքը, որ գուցէ դեռ հէնց մօտ ապագայում պիտի ցնցէ մեզ
որ աղէտալի անակնկալներով... Ո՞ւմ յղացումն է նա,—հայ ժո-
ովրդի՞, հայ բուրժուազիայի՞, հայ խուժանի՞...

Թող խօսեն օտար հրապարակախօսները։ Մեղաւորը
չենք, եթէ նրանց գրաւոր վկայութիւնների մէջ գտնուեն
պաստ, անախորժ շեշտեր այս կամ այն կողմի վերաբերմամբ
Եւ մեր «ազգային հպարտութեանը» գոհացում տալու
տակով չէ, որ առաջ կը բերենք օտար գրողների ներբողները
ժողովրդի հասցէին։ Մեզ միայն մի բան է հետաքրքրում—
բացնել հայ Նահատակ ժողովուրդը այն ղազրելի, այն պատմական
տավճռի առջև, որ արձակել է մի դծուծ ու շահախնդիր
պագ․ մաքուր ու անբիծ դուրս բերել այդ ժողովուրդը եղբայ
սպանութեան ու հակայեղափոխութեան ամբաստանութիւններ

—

«Новости»-ի մէջ *) գրում էր Ստարցեւ, կովկասեան
կին ռուս հրապարակագիրը, որ ոչ Թուրքերի թշնամի է
ոչ էլ քայլել է առհասարակ, իբրև լուրջ, անաչառ ու դ
րատ գրող։
«Անցեալի խորհրդաւոր ծոցից—ասում է Ստարցեւ—բարձրացաւ մի
որ սպառնում է ոչնչացնել այն բոլորը, ինչ որ ստացել է բազմաթիւ սեր
ների աշխատանքով, ինչ որ քաղաքակրթութիւնը արտադրել է Կովկասում։
«Ի՞նչ անել, երբ մի ամբողջ ժողովուրդ, սկսած իր առաջնորդնե
մինչև գիւղացիները, բարձրանում է մի ուրիշ, բոլորովին անմեղ ժողովրդի
և անխնայ կոտորում նրան։ Հայ նուաճողները պահե՞լ են արդեօք մահմեդակա
ներին գերութեան, ստրկութեան մէջ։ Կամ արդեօք կեղեքե՞լ են նրանց, գ
են վերջին հիւթերը։ Ամենեւին»։
Ապա պատմելով, թէ ինչպէս սկզբներում ռուս կառա
րութիւնը խտրութիւն չը դնելով ազգութիւնների մէջ և թոյ
տալով մահմեդականներին, առաջւան պէս, հալածել հայեր
զգալի թեթևութիւն էր առաջացրել վերջինների կեանքում՝ Ստա
ցեւ շարունակում է․
«Այդ փոքրիկ թեթևութիւններն իսկ բաւական եղան գործօն ու օժ
հայերի համար, որպէս զի նրանք թօթափէին իրանց միջնադարեան տխ
կեղևը։ Այդ նրանք արին, առանց որև է աջակցութեան ռուս իշխանութիւնն
կողմից։ Հազիւ անցաւ մէկ-երկու սերունդ—և հայերը դարձան Կովկասի ա
նաքաղաքակիրթ ժողովուրդը։
«Փախչելով կղզիացումից, նրանք սիրով յաճախում էին ռուսական դ
րոցները (ի՞նչ կասեն հայ ազգային «առանձնացման» առթիւ կուրծք ծեծող
ները․ Մ. Ց.), սովորում էին և աշխատում։ Նրանք ստեղծեցին մտաւորական

*) Թերթի համարը, դժբախտաբար, մոռացուած է յիշատակել։ Այս և
հետագայ քաղուածները տպուած են «Մշակի» 1906 № 22-ի մէջ։

ամբողջ պատմութեամբ և գրականութեամբ։ Նրանք գրաւեցին առաջին տեղերը ուր աշխատանքի բոլոր ասպարէզներում։

«Զարմանալի չէ, որ նրանք գերակշռող դեր կատարեցին և հասարակա-ն կեանքում։ Թուրքերը մնացին վաղեմի Թուրքերը. և ես բոլորովին հասկա-նում եմ այն ատելութիւնը, որ պիտի զգային նրանք, տեսնելով երեկուայ ստրուկ, ված ու հալածական հայերին՝ կեանքի մէջ առաջին տեղերն ստացած, պա-ն ու ազդեցութիւն վայելելիս»...

*

«Հայերը, ասում էր չափաւոր ազատամիտ «Русь» լրագիրը ռուս Թղթակից Նանդի բերանով, հայերը ցոյց տուին իրանց վկասի մէջ ուժեղ մի ժողովուրդ, աշխատասէր ու արթուն գի-ակցութեամբ... միշտ անհանգիստ, յաւէրժօրէն շարժուն ու ե-ազուն և միշտ ձգտող դէպի անյայտ իդէալներ...

«Մահմեդական ազգայնականութեան մասսան բնազդօրէն հաս-նում է հայերի այդ դերը, ուստի ոչ միայն նրա աւանդական չնամութիւնը չէր նւազում, այլ միշտ աւելի և աւելի աճում էր ս, քանի աւելի էին հայերը իւրացնում Եւրոպական կեանքի ները...

«Ինչ որ էլ լինի,—նրանք, որոնք պնդում են, Թէ Թուրք-հայկական դհարումը բացատրւում է տնտեսական պատճառներով՝ նրանք կամ քըն-ւմ են խնդիրը կատարեալ տգիտութեամբ, կամ Թէ աշխատում են դիտ-մբ Թոզ փչել աշխարհի աչքին... Բագուն մահմեդական մեծ կենտ-ն է ոչ միայն Անդրկովկասի, այլ և Պարսկաստանի համար։ ագւի մահմեդականների հարստութիւնները ստեղծւել են գրեթէ ցառապէս հայերի ձեռքով. դրա պատճառը այն է, որ Թուրքե-ը ընդհանրապէս փախչում են աշխատանքից ու ֆինանսական րծողութիւններից և գրեթէ բացառապէս դրամ են փոխ տալիս ւ դրա են դնում հողերը... Կայ և այլ հանգամանք. Թուրքի անջները չեն աւելանում. նա շարունակում է հագնել իր խա-ը և ստանալ իր 20 կոպէկանոց ճաշը բաղարից։ Իսկ Թուրք տնուկները չեն յաճախում նոյն իսկ երկրորդական դպրոցները... Թուրքերը ունեին իրանց ձեռքում ամենահարուստ հողերը. ինչ երաբերում է Բագւի միլիօնատէրներին՝ Մանթաշեանի պէս հա-ստներ Թուրքերի մէջ կան տասից աւելի։ Այդպիսով, այն ասպելը Թէ անտագօնիզմը բացատրւում է տնտեսական պատ-ճառներով,—զուրկ է որև է հիմքից»։

*

Անցնենք Եւրոպա։

Times-ի, Temps-ի, Frankfurter Zeitung-ի պէս համաշխարհ յին օրգանները ծանրանում են Թուրք ամբոխի առանձնայատկ թիւնների վրայ և փաստացի յօդուածների մէջ ներկայացնում նրան իբրև մի տեսակ անախրօնիզմ (ժամանակավրէպ) իր ջավայրում։ Նրանք միաժամանակ նկարագրում են հայ և Թու տարրերի քաղաքակրթական խոր հակադրութիւնը, ձգտումնե ու իղձերի հիմնական տարբերութիւնը և այլն։ Երբեմն օրգանները իրանց արտայայտութիւնների մէջ հասնում են ծայր յեղութեան։ Այդպէս, օրինակ, Լօնդօնի Times-ը իր մի յօդուա մէջ *) խօսում է «Թուրքերի Թալանողական բնազդերի» մասին (predatory instincts of the tartares)։ Յօդուածագրի կարծիքով «Թալանողական բնազդները» միացած բիւրօկրատիայի քաղաքակ նութեան հետ՝ եղել են աղէտների գլխաւոր պատճառներ։

Պարիզի Temps-ը, որի ղեկավարները երբէք անկեղծ համ կրութիւն չեն ցոյց տուել դէպի հայերը, հետևեալն էր գրում մի խոշոր յօդուածի մէջ, «Կովկասեան խռովութիւնների» առթիւ **)

...«Օբիեկտիւ ճշմարտութիւնը այլ է. այնպիսի ազգաբնակութիւնն մէջ, որոնք սարսափում են աշխատանքից, հայերը հրաշալիօրէն գործուն են. այնպիսի անձերի մէջ, որոնք գործ չեն հասկանում, հայերը սիրում գործել և աջողում են. շռայլների մէջ նրանք խնայող են։ Ահա նրանց աջող թեան իսկական պատճառները։ Ահա իսկական պատճառները և նրանց դէմ գը գուող ատելութեան»։

Ապա յօդուածագիրը մի քանի տեղեկութիւններ հաղորդելո հայերի ունեցած դժգոհութիւնների մասին՝ շարունակում է.

«Բայց և այնպէս, ամենքին յայտնի է, որ հայերը նախայար ձակ չեն եղել երբէք, այլ միշտ միայն պաշտպանուել են։ Այն յայտ նի ասացուածքը, որ թէ «միշտ անզէն մարդիկն են, որ կոտորւու են», ոչ մի տեղ այքան ճիշտ չէ, ինչպէս Կովկասում»։

Մի այլ համարում Temps-ի թղթակիցը վառ գոյներով պատ կերացնում է կուլտուրական խոր հակադրութիւնը կովկասեան երկու կռուո՞ղ տարրերի մէջ ***)։ Մինչդեռ հայերը, նրա ասելով, «ա-

*) Տես 1905 թ. սեպտ. 25-ի համարը, յօդուած Times-ի կովկասեան թղթակցի։

**) Այդ յօդուածը ամբողջապէս թարգմանուած է «Մշակի» 1905 թ. յու-լիս 14-ի համարում (№ 136)։

***) Տես Temps-ի մէջ 1905 թ. սեպտ. 15-ի նամակը Կովկասից, յատուկ մխանխայով ղրկուած իր թղթակցից։

կրթուած և աւելի աշխատաւոր, քան կովկասեան միւս ժողովուրդները, ներկայացնում են խելքն ու ինտելիգենցիան», րք ժողովուրդը «ունի պահպանողական մի կուսակցութեան ղինակը, նախանձախնդիր աւանդութիւնների և յարգող ցավեհապետական իշխանութեան»։

«Արևելեան տասուիզմը—շարունակում է պարիզեան խոշոր ափաւոր օրգանը—և նոյն իսկ մահմեդական կրօնի հրահանգը ազատ են պահում նրանց, թուրքերին՝ արևմտեան ազաունչ գաղափարների վարակումից, որոնցով տոգորւում են երը»...

«Matin» լրագրի ուշիմ թղթակից Գաստօն Լեօռու, նոյնպէս ուած յատուկ միսսիայով, մի մարդ, որին նոյնպէս չի կարելի ադրել հայասիրութեան ու թրքատեացութեան մէջ, որը միանմայն անաչառ արձանագրողի դեր էր ստանձնել, հետևեալն էր ում նաւթային աշխարհից *).

«Երկու ցեղերին անդունդ է բաժանում... Հակադիր յարակցութիւններ nités), ներհակ բնազդներ և քաղաքակրթութեան մի իդէալ, որ մինը հետապնդում է, միւսը յետ է մղում... Թուրքերը կուրօրէն յանձնառու են լի (հայատեաց կառավարութեան առջև) պատժել մի ազատամիտ, հակաական ժողովուրդ, որը հէնց իր իդէալով ահարկու մի ոյժ է բռնապեան կառավարութեան համար... **)։

Հետևեալ թղթակցութեան մէջ, սեպտ. 21-ին Լեօռուն ևս մ է տարածուած կարծիքը՝ հայերի իբր գրկող ու հարստահաղերի մասին և ընդգծում է այն իրողութիւնը, որ «թուրքն է ատէրը» և որ փողային հարստութիւնը ևս նաւթաշրջանում համեմատ աւելի մեծ է թուրքերի ձեռքում։

Ինչպէս պարզ տեսնում է ընթերցողը վերը բերած քաղուածքից, եւրոպացի ուսումնասիրողները ևս, ծանօթանալով մեր պայմանների և ընդհարումների բնոյթին, եկել են այն եզրակացութեան, որ թուրք ազգաբնակութիւնը միանգամայն հակայեղափոխական Վանդէայի դեր է կատարել Անդրկովկասում...

Այդ նոյն կարծիքն է պաշտպանում և հրապարակախօս Լուի-Վիլլարի իր մի բովանդակալի յօդուածի մէջ, որ տպուած է Լօն-

---

*) Տես Matin-ի մէջ Qaston Leroux-ի 1905 թ. սեպտ. 20-ի թղթակցութիւնը։

**) Ստորագծողը մենք ենք։ Մ. Ց.

դօնի նշանաւոր հանդէսի, «Fortnightly Review»-ի 1906-ի փետրվ րի համարում։

Յօդւածի թեման է՝ «Կովկասեան անիշխանութիւնը և հայ հարցի նոր շրջանը»։ Գ. Վիլլարի, անտարակոյս, Կովկասեա անցքերի ամենալուրջ ուսումնասիրողներից մէկն է, ուստի փոյ ինչ կանգ կառնենք նրա այդ յօդւածի վրայ։ Հեղինակը ուսումնա րել է իրողութիւնները տեղն ու տեղը, մեծ առատութեամբ փա տեր է հաւաքել. ունեցել շփումներ բոլոր տարրերի, նոյն ի վարչական բարձր շրջանների հետ, եղել է փոխարքայ Դաշկո մօտ—և ահա նա փորձում է անաչառ, անկողմնապահ լուսաբ նութիւն տալ մեր երկրում խաղացւող ահռելի ողբերգութեան։

«Խռովութիւնները ծագում են բնակիչների ցեղական ու կ րօնական բաժանումներից, բայց նրանք առանձին գոյն ու գո են ստանում շնորհիւ այն ընդհանուր անիշխանական դրութեա որ տիրում է ռուսաց կայսրութեան մէջ»․—այսպէս է սկս յօդւածի հեղինակը և այնուհետև ուրւագծում է մի քանի խօ քով հայ ժողովրդի դժբախտ պատմութիւնը, նրա դարաւոր հ լածանքները, որոնք ի վերջոյ յանգեցին տաճկական կոտորածն րին և Թուրքական արիւնահեղ բռնկումներին… Պատմում է, ինչպէս Ալէքսանդր II-ի օրով թևաւորւում էին հայկական տե չանքները, զարկ էր տրւում տաճկահայոց ազատագրական շար ման, անարգել զարգանում էր հայկական կուլտուրան Անդրկո կասում, բայց յետոյ եկաւ սև շրջանը, հակահայկական քաղաք կանութեան էրան։

Ռուս-տաճկական պատերազմից և Ալէքսանդր II-ի սպանո թիւնից յետոյ—ասում է Վիլլարի—ռուսաց քաղաքականութիւ բոլորովին փոխւեց։ Սպանւած կայսրի չափաւոր ազատամտութ նը տեղի տւեց մի սոսկալի ռէակցիայի՝ նրա որդու գահակալ թեամբ։ Անցան պանսլաւօնական հին իդէալները, չքացաւ նր հետ և հին թէօրիան՝ Ռուսաստանի պատմական առաքելութե մասին, Ռուսաստանի՝ իբրև արևելեան քրիստոնեաների հովան ւորի։ Նրանց տեղը բռնեց նեղ ռուսական նացիոնալիզմը, որի ձգ տումն էր՝ ռուսացնել կայսրութեան բոլոր օտար հպատակներին։

Միւս կողմից Ռուսաստանը անհրաժեշտ գտաւ համաձայնո թեան գալ Տաճկաստանի հետ՝ թէ Մեծ Բրիտանիային դուրս մ ղելու համար Մերձաւոր Արևելքից և թէ ինքնապաշտպանութեա

տակով։ Այդպիսի համաձայնութեան առաջին պայմաններից ը եղաւ այն՝ որ Ռուսաստանը պէտք զգաց երես դարձնել հա-ից և դէմ գնալ նրանց հակաթուրքական դաւադրութիւններին։ ն այդ քաղաքականութիւնը անդրադարձաւ և Ռուսաստանի քին քաղաքականութեան վրայ։

Եւ սկսւեցին հալածանքները... Յօդւածագիրը նկարագրում օլիցինեան րէժիմի վայրենութիւնները, որոնք յանգեցին ե-եցական կալւածների յափշտակութեան։ Այստեղ նա ծանրա-մ է համատարած ու զօրեղ խմորման վրայ, որ առաջ եկաւ ժողովրդի մէջ այդ աւազակային յափշտակութիւնից և որ տայայտւեց շատ տեղերում զինւած մասսային ապստամբու-ամբ։ Նկարագրում է պ. Վիլլարի, թէ ինչպէս հայ մարտական զմակերպութիւնը հանդէս եկաւ այդ բռնութիւնների միջոցին ւկսեց իր բուռն, խենթային գործունէութիւնը, նախ ինքնա-շտպանութեան հողի վրայ, ապա և ձուլւեց ընդհանուր Ռու-տանի ազատագրական շարժումների հետ։ Կառավարութիւնը, ւմը կորցրած այդ փոթորկոտ ագիտացիայից՝ դիմեց աւելի բբարոս միջոցների—նա դիմեց Թաթարների օգնութեան...

Հայ-թուրքական հակամարտութիւնը—շարունակում է պ. լլարի—ունի բազմազան պատճառներ։ Կայ նախ և առաջ կրօ-ւան տարբերութիւնը։ Կայ և այն հանգամանքը՝ որ հայերը, թուրք ների այդ վաղեմի ստրուկները, դեր են խաղացել այդ խանե-իշխանութեան կործանման մէջ և ձգտել են միշտ դէպի Ռու-տանը։ Թուրք աղալարները չեն մոռանում այդ հանգամանքը։ էլ մի զուտ քաղաքական պատճառ։ Զը պէտք է, սակայն, կար-—ծելացնում է յօդւածագիրը—թէ այդ աղալարները ռուսաց պետութեան տակ իսպառ զրկւել են իրանց արտօնութիւն-ից։ Ընդհակառակը, նրանք դեռ ունեն մեծ իշխանութիւն, նք գործադրում են մեծ ազդեցութիւն թուրք մասսաների որոնք դարերից ի վեր սովորել են հլու հպատակութեան. ական չէ այդ. ռուս կառավարութիւնն ընդունում է այդ ա-լարներից շատերին իր ծառայութեան ու ադմինիստրացիայի Բազմաթիւ գաւառներում պօլիցիականներն ու դատաւոր-թուրքեր են։ Թուրքական հարստութիւնները ևս պատկա-են և ընդհանուր առմամբ թուրքերն աւելի հարուստ են, քան որովհետև հողը մեծ մասամբ պատկանում է թուրքերին։

«Բաքւում նրանք ունեն իրանց ձեռքում հանքերի մեծագոյն մասը և Թանգերը, սատնում են լայն չափերով բ է ն ս ա ւ։ Նոյն քաղաքում ն ձեռքն է գտնւում նաև առևտրի մեծ մասը։ Աւելին կայ. նրանք վարում են փաղանց պարզ կեանք, ծախսելով միայն իրանց եկամտի մի չնչին մինչդեռ հայերը հակումն ունեն ապրելու եւրոպացու պէս, հայաշէն ու շքեղ բում, ճանապարհորդելու արտասահմանում և դրկելու իրանց զաւակներին ա տահմանեան համալսարանները։

«Մի ուրիշ էական տարբերութիւնն այն է՝ որ Թուրքերը բնականից տերազմասէր են, ինդուստրիական կեանքի անընդունակ և անյիշատակ ժ ներից ի վեր, հակւած դէպի Թալան ու յափշտակութիւն, մինչդեռ հայերը խաղաղասէր են և գժւար, չարքաշ աշխատաւոր։

«Թուրքերից շատերը նոմադ են, Թափառական. ամառը նրանք ան են լեռները և ձմրան դէմ իջնում են դաշտերը իրանց նախիրներով ու րով։ Այդ քոչերի միջոցին նրանք յաճախ զինւած ընդհարումներ են ուն նստակեաց հայերի հետ։ Կան ամբողջ Թուրքական գիւղեր, որոնք ուրիշ բաղմունք չունեն, բացի Թալանից, և նոյն իսկ իրանք խաները խիստ նմ են միջնադարեան աւազակ բարօններին»…

Այս էլ զուտ էտնօլոգիական պատճառ։ Գ. Վիլլարի ուզո կատարելապէս անաչառ լինել և խօսում է նաև հայ տարրի « գրուիչ» յատկութիւնների մասին։

«Պէտք է ընդունել միւս կողմից, որ հայերը յաճախ գրգռիչ ու ա տաւան են մասնաւորապէս Թուրքերի դիմաց, որոնց նրանք համարում սատր ցեղ…(?)

«Հայերի ազդեցութիւնը, ասում է նա, տարածւում է տարէց տարի. պիսի գաւառներ, ուր առաջները մի հայ անգամ չը կար, այժմ լցւած են րով, և ամեն մի վայր, ուր նրանք հաստատւում են՝ դիտւում են նրանց մից՝ իբրև «հայկական ազդեցութեան շրջան»։ Այդպէս Թիֆլիսում, Վրաս նին մայրաքաղաքում, Թէև հայերի Թիւը ամբողջ բնակչութեան 40 տո ցած է (?) բայց նրանք ճնշող մեծամասնութիւն են կազմում քաղա դումայի մէջ և իրապէս կառավարում են քաղաքը։ Գանձակում, ուր Թու վճռական մեծամասնութիւն են կազմում, հայերը մինչև վերջին ժամանակ կօ ունէին դումայի վրայ։ Բաքւում հայ արդիւնաբերողները ունեն իրանց ձեռ արդիւնաբերական ձեռնարկների 35 տոկոսը, և չը նայած, որ հայերը բնակութեան $1/5$ մասն են՝ այնուամենայնիւ նրանք կազմում են մեծա նութիւն քաղաքային խորհրդի մէջ»։

Ընթերցողը ինքը կը նկատէ եւրոպացի Թղթակցի վրիպո ները։

«Այդ բոլոր հանգամանքների պատճառով—շարունակում է նա—հայ չունեն ժողովրդականութիւն. «նրանք նոյնքան չեն սիրւած վրացիներից, ռա ներից և օտարներից, որքան և Թուրքերից, Թէպէտ և ատելութիւնը առաջ

ւլիս նոյնքան հայերի լաւ յատկութիւնների, որքան և նրանց պակասութիւնների շնորհիւ» *)։

Շատ ճիշտ նկատում է յօդուածագիրը, որ կովկասաբնակ եւրոպացիք առհասարակ հայերի նկատմամբ «այնքան էլ անաչառ չեն ինչպէս այդ թւում է»։ Նա նկարագրում է հայ արհեստաւորի, հայ գիւղացու աշխատասիրութեան ու այլ առաքինութիւնների մասին, ցոյց է տալիս այն խոր տարբերութիւնը, որ կայ հայ և թուրք աշխատաւորի մէջ։

Ապա նա անցնում է վերջին տարւայ արիւնոտ անցքերի նկարագրութեան, պատմում է Նակաշիձէների ու Ալիխանովների սխրագործութիւնները, բացատրում է ռուս բիւրօկրատիայի և թուրք խաւար մասսաների յարաբերութեան գաղտնիքը, բացատրում է հայ մարտական կազմակերպութեան պաշտպանողական դերը։ Խօսում է և պանիսլամիզմի մասին, համարում է օսմանեան վտանգը երևակայական. «Թուրքերը չափազանց անհասկացող ու տգէտ են՝ որ և է ընդհանուր քաղաքական գաղափար ըմբռնելու համար»։ Ոչ մի կասկած չը կայ, որ նրանք (Թուրքերը) նիւթել էին կանոնաւոր մի դաւադրութիւն և որոշել էին օգտւել կառավարութեան հակահայ քաղաքականութիւնից ու նրա ժամանակաւոր թուլութիւնից՝ իրանց ոսոխներին դուրս քշելու, կոտորելու և կողոպտելու նպատակով»...

Հայերը, ասում է Վիլլարի, նւիրւած են կրթութեան գործին և ջանք ու դրամ չեն խնայում՝ ուղարկելու համար իրանց որդոց լաւ դպրոցներ։ Կան Ասիայի հեռաւոր խորքերում հայ անգրագէտ գիւղացիներ, որոնց զաւակները ուսանում են Պետերբուրգում, Բեռլինում կամ Պարիզում։ Կովկասի մէջ նրանք միակ տարրն են իսկական քաղաքակրթութեան և ես համոզւած եմ, որ նրանք ի վերջոյ պիտի դառնան դերիշխող ցեղ, պիտի խաղան միեւնոյն դերը, ինչ որ բուլղարները խաղում են Բալկաններում։ Նրանց մեղադրում են երկչոտութեան մէջ, որովհետև, երբ նրանք անզէն են, զինւած թուրքեր ու տաճիկներ առանց դժւարութեան կոտորում են նրանց։ Բայց նրանք յաճախ ցոյց են տւել, որ հաւասար պայմաններում նրանք գիտեն շատ լաւ պաշտպանել իրանց։

«Հայերը ունեն լուրջ պակասութիւններ, ինչպէս ես շեշտեցի, բայց այն պակասութիւնները մեծ մասամբ հետևանք են նրանց տրագիկական պատմու-

*) Նօտրագիրը ամեն տեղ մերն է։ Մ. Ց.

թեան, մինչդեռ նրանց մտաքինութիւնները այնպիսիներից են, որոնց ա
պիտի տնի քաղաքակրթութեան առաջադիմութեան հետ։ Եթէ Ռուսաստ
իմաստութիւն սովորէ, նրանք կը հանդիսանան շատ օգտակար մի տարր
ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ։ Որովհետև առանց հայ
բարեկամութեան, ոչ մի ազգ չէ կարող ապրել Միջին Արևելքում»։

Եթէ միայն Ռուսաստանը իմաստութիւն սովորէ՜ր... Ց
ւածագիրը վկայում է, որ Վորոնցով-Դաշկովի հետ Գոլիցինեան շ
ջանի մասին խօսելիս՝ Փոխարքան ասաց իրան. Cette désastre
politique de Galitzine» (Գալիցինեան աղէտալի քաղաքական
թիւնը)...

Որքա՜ն կծու հեգնութիւն են պարունակում այդ խօսքեր
Ի՞նչ կասէին արդեօք կովկասեան բիւրօկրատները իրանց
սակցութիւնը հայցող եւրոպացի թղթակիցներին այժմ՝ երբ հ
կական գաւառների հազարաւոր կողոպտուած, բռնաբարուած
հերը մինչև երկինք են աղաղակում, երբ վայրենի, կանոնիբա
կան օրգանների դիմաց՝ խաւարում, մոռացւում են Գոլիցինե
շրջանի արհաւիրքները։

Աւելի ընդարձակօրէն Լուիջի Վիլլարի պարզեց իր հայեա
ները անգլիերէն լեզւով հրատարակած իր աշխատութեան մ
«Fire and Sword in the Caucasus» վերնագրով (Հուր և սուր Կ
կասում)։ Այստեղ նա ուղղակի յայտարարում է, որ Կովկաս
կոտորածները «մի մասն են այն կռւի, որ մղում է ժամանակակից քա
քակրթութիւնը ասիական բարբարոսութեան դէմ, ոչ միայն Կովկասում
և Ռուսաստանում...*)»։

---

*) Տես գրքի համառօտ ըէցենզիան Тиф. Л. 1906 թ. № 15.

V

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՆԴԷԱՅԻ *) ՆԵՐՔԻՆ ԲՆՈՅԹԸ

Ռծրականութիւնը Անդրկովկասում

մալ ժամանակ.—Թուրք տարրի բռնած տեղը ռեժիմների տարբերութեան
ը.—Փաստեր.—Մտրքախտ գրողի վկայութիւնները.—Հորդայական բնազդներ
արհամարհանք դէպի մարդկային կեանքն ու գոյքը.—Ռեակցիոնութիւնը և
դպրական պայմանները.—Էնրիկօ Ֆերրի.—Մաքսիմով.—Ծանօթ իրողութիւն-
ը.—Հայադաւ քաղաքականութիւնը.—Զսպւած բնազդները Թռիչք են առնում.
—Թուրք մասսան հակայեղափոխութեան դրօշակակիր.—

«Եմ Ալի, վայ գեաւուրին»—հնչում է դու մարտահրաւէրը, վայրկենաբար, սուս գետնի տակից, դուրս են կոչւում սպա-
ղինւած բանակներ, գալիս են հեռուից, սահմանի միւս կողմից, լիս են և մօտիկից, հայ ժողովրդի հէնց քթի տակից, նրա հ-
եկւայ հաշտ ու մտերիմ բարեկամներն անգամ, նրա աղ ու հա-
ը վայելողները, նրա ընտանեկան օջախի աշնանները մի դար-
ւրկլի, հօրդայական վրէժխնդրութեամբ, ատամները կրճտացնե-
լ, ծառանում են նրա դէմ. «Տուր ստացւածքդ, կամ տուր
անքդ»... Մենք պարզապէս նախապատմութեան մէջ ենք, ըն-
երցող, որքան էլ աշխատենք վարագուրել դաժան, անողորմ ի-
կանութիւնը, որքան էլ ուզենանք ինտեր-նացիոնալիզմի ու
մերաշխութեան մտահոգութեամբ մեղմել դժոխային, սիրտ կըտ-
տող իրողութիւնները, մենք կատարեալ նախապատմութեան մէջ
նք, այն մռայլ շրջանում,—երբ մարդկային ցեղերը, անասնա-
ան տեսակների պէս, գիշատիչ ախորժակներով բռնւած, դրոհ

*) «Վանդէա» բառը տիեզերական դարձաւ Ֆրանսիական մեծ յեղափո-
խութեան օրերում։ Այդ անունը կրող Ֆրանսիայի արեւմտեան մի ամբողջ գա-
ւառ, սկսած ազնուականներից մինչև հոգևորականներն ու գիւղացիները՝ 1793-ից
կռիւ էր հրատարակել մեծ յեղափոխութեան և նրա սահմանած կարգերի դէմ,
յանուն արքայական բռնապետութեան «սրբազնագոյն» իրաւունքների։ Մի կը-
ատաղի կռիւը երկար ընդհատումներով շարունակւեց մինչև անցեալ դարու 30-ական
թւականները, երբ նա վերջնականապէս խորտակւեց։ Այդ ժամանակներից ի
վեր, աշխարհիս բոլոր կողմերում, ամեն մի հակայեղափոխական արշաւանք, ա-
մեն մի մասսայական կռիւ, ուղղւած մի ժողովրդի ազատագրական թռիչքների
դէմ—որակւում է «Վանդէա» անունով։

էին տալիս իրանց նմանների դէմ, երբ բանի ուժը, «վայ յա սածին» աղաղակելով, խրոխտ ու յաղթական սաւառնում էր արիւնոտ նախճիրների վրայ…

Դա նախամարդու մոլեգնութիւնն է, արբած արիւնով, ռօդի հոտով, ռազմի աղաղակով, դա զարհուրելի ատաւիզմն է, վերադարձնում է մարդուն իր հեռաւոր նախնիքների ախորժ ները, որ հասցնում է նրան մինչև անասնութեան աստիճանը։ յն իրողութիւնն է, որ Times-ը որակում է «predatory instinc բառերով, որ Ստարցեւ անւանում է «անցեալի ծոցից բարձ ցող հրէշ»,—մի իրողութիւն, որ իր ահարկու պարզութեան վաղուց ծանօթ է ամեն մի կովկասեցու…

Ո՞վ մեզնից չը գիտէ, որ նոյն իսկ սովորական նորմալ մանակ աւազակութեան ու մարդասպանութեան համաճարակ որ հաւասարապէս մատչելի է թուրք բէգերին ու կիսավայրե գեղջուկներին—խոկոյն բռնում է սար ու ձորեր, հէնց որ Ա դրրկովկասեան այս կամ այն գաւառի գլուխ է կանգնում թոյլ գաւառապետ, մեղմ միջոցների սիրահար։ Եւ ո՞վ չը գի որ համաճարակը կտրւում է անմիջապէս, հէնց որ «նաչալնի փոխւում է, հէնց որ գալիս է «խիստ միջոցների» ներկայացու ցիչը…

Հարկաւո՞ր է արդեօք փաստեր ու ապացոյցներ բերել՝ պ ցելու համար մեր հարևան թուրք ազգաբնակութեան անհանգ տարրերի բռնած տեղը կովկասեան աւազակութիւնների, քր կան ամեն տեսակ ոճիրների արհաւրալի տարեգրութեան մէջ…

Մենք այդ էլ կանենք, սակայն, և այդտեղ, այդ փաս կէտում մենք վկայութեան կը կոչենք մի նորագոյն հակիրճ տազօտութիւն, հրատարակւած «Տիֆլ. Լիստօկ» լրագրի մէջ որի հեղինակը, պ. Ֆիլիպպով, ըստ երևոյթին թունդ մարքսի է, ուղղափառ մարքսիստ, որովհետև նա ամեն քայլափոխում րապարակ է գալիս մարքսիստական տերմինօլօգիայով, իր բողջ նիւթը լուսաբանել է ձգտում տնտեսական մատերիալիզ հրահանգներով։

«О преступности закавказскаго населенія» վերնագրով*) (Անդրկովկասեան ազգաբնակութեան ոճրականութեան մասին) իր

---

*) Тифл. Л. 1906 թ. № 121

հետաքրքրական տեսութեան մէջ պ. Ֆիլիպպով ուզում է պարզել այլ և այլ էտնօգրաֆիական (ցեղագրական) տարրերի մասնակցութիւնը յանցանքների մէջ, նրա տւած համեմատական տոկոսը և նա բնաւ չի կարծում—իր բազմաթիւ մտավախ կուսակիցների պէս—թէ ճշմարտութիւնը մերկացնելով, կարող է անպատուել, վիրաւորել այս կամ այն տարրի ցեղական ազգայնական դիւրազգացութիւնը։

Նախ մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս պ. Ֆիլիպպով ոճրի էութեան մասին։ Ոճրի հասկացողութիւնը, ասում է նա, մշտական, անփոփոխելի բան չէ,—նա փոխում է իր բովանդակութիւնը՝ հասարակութեան կուլտուրական զարգացման հետ։ Մի բան, որ կուլտուրայի որոշ աստիճանի վրայ համարւում է ամենաանմեղ բանը,—նոյնը կարող է հասարակական կեանքի մի այլ կազմի մէջ դառնալ ծանր յանցանք, արժանի ամենածանր պատժի։

Ուստի և որևէ ժողովուրդ, որ ժամանակակից համաշխարային մօրալի տեսակէտից հակամէտ կը դիտւի դէպի ոճրագործութիւն,—այդ ժողովուրդը կարող է ինքն իրան բնաւ չը համարել ոճրագործ, և այն ինչ որ ներկայ հասարակական յարաբերութիւնների մէջ համարւում է անպայման ոճիր,—նոյնը յիշեալ ժողովրդի կենսապայմաններում կարող է նոյն իսկ դիտւել իբրև առաքինութիւն։ Այդպէս է, օրինակ, հէնց վենդետտայի կամ արեան վրէժխնդրութեան երևոյթը։

«Անդրկովկասի ազգաբնակութեան նկատմամբ յաճախ ըստուգւած է, որ նա ցոյց է տալիս, այսպէս ասած, փոքր ինչ թեթև վերաբերմունք դէպի քրէական ոճիրները—սպանութիւնները, վիրաւորումները և այլն։ Դա կատարելապէս իրաւացի է, բայց ոչ Անդրկովկասի ամբողջ ազգաբնակութեան, այլ միայն նրա մի մասի վերաբերմամբ. և, յիրաւի, կարելի բան չէ որ հասարակական գրուպպաները, որոնք գտնւում են սօցիալական-տնտեսական սանդուղքի տարբեր աստիճանների վրայ, ցոյց չը տան խիստ տարբերութիւն՝ *) մարդկային հանրակենցաղի այնպիսի մի հիմնական հարցում, որպիսին է՝ վերաբերմունքը դէպի ուրիշի կեանքն ու անձնաւորութիւնը։

«Այդպէս է և իրօք։ Մարդասպանութիւնները ահագին տօ-

---

*) Նօտրագիրը ամեն տեղ մերն է։ Մ. Ց.

կոս են կազմում այն յանցանքների ընդհանուր թւի մէջ, որ... տեղի են ունենում Բաքւի, Երևանի և Գանձակի նահանգներում, ուր ամեն տարի նահանգական ատեանի կողմից պատժի դատապարտւած յանցաւորների մօտ կէսը, երբեմն նոյն իսկ կէսից աւելին դատապարտւում են մարդասպանութեան համար։ Այս երևոյթը արժանի է ամենաուշադիր հետազօտութեան։ Թէ տեղական և թէ մայրաքաղաքի մամուլը բաւական զբաղւել է աւազակութեան հարցով Կովկասում, բայց աւազակութիւնը էապէս մէկն է միայն հասարակական քարքերի որոշ դրութեան արտայայտութիւնների, ուստի կարեւոր է պարզել մեզ՝ ինչպէս է ստեղծւում ժողովրդական մասսայի այս կամ այն բարոյական ֆիզիօնոմիան։ Տարաբախտաբար տեղական ազգաբնակութեան յանցաւորութեան խնդրի բազմակողմանի ուսումնասիրութեան համար—չը կան անհրաժեշտ նիւթեր մեր աղքատիկ վիճակագրական հրատարակութիւնների մէջ։ Ակամայ ստիպւած էք բաւականանալ այն սակաւաթիւ փաստերով, որ գտնում էք այդ լղար տետրակներում, որոնք անւանւում են ամենամեայ տեսութիւններ (обзоры) Անդրկովկասի նահանգների ու շրջանների և որոնք սովորաբար կցւում են ամենահպատակ հաշիւ-զեկուցումներին։ Դրանց մէջ, մի քանի տեղերում նահանգական ատեանի կողմից դատապարտւածները բաժանւած են, ըստ կրօնի»։

«Սակայն—շարունակում է պ. Ֆիլիպպով—յանցաւորների դասաւորումը, ըստ իրանց կրօնի՝ ամենևին բաւական չէ բնորոշելու համար ազգաբնակութեան ոճրական խաւերը։—Կրօնը, ասում է նա, միայն որոշ ազդեցութիւն է ունենում ազգաբնակութեան ոճրականութեան վրայ, կամ իբրև զսպող, կամ իբրև թոյլատրող սկզբունք. բայց ոճրականութեան իսկական աղբիւրները պէտք է փնտրել ոչ թէ այդտեղ, կրօնի մէջ, այլ տւեալ հասարակական գըրուպպայի սոցիալական-տնտեսական վիճակում։

«Մեր обзоръ-ներում չը կան տեղեկութիւններ յանցագործների պարապմունքի՝ եղանակի և նիւթական կացութեան մասին, ուստի երբ մենք քննում ենք տնտեսական ֆակտորի դերը տեղական ազգաբնակութեան յանցաւորութեան մէջ, ստիպւած ենք յենւել, մասամբ այն թէօրիական դրութիւնների վրայ, որոնք բղխում են ուրիշ ժողովրդների մէջ գտնւած համանման իրողութիւններից, մասամբ էլ այն տնտեսական կեանքի ընդհանուր բնաւորութեան վրայ, որ մենք գտնում ենք

Անդրկովկասի որոշ տեղերում և ազգաբնակութեան որոշ խմբումների մէջ»։

Մարդկային կեանքի արժողութեան չափը—ասում է Ֆիլիպպօվ—նրա աշխատանքի արդիւնաւորութիւնն է (производительность его труда) և եթէ այսօր, քաղաքակրթութեան բարձր աստիճանների վրայ կանգնած ժողովուրդների մէջ մարդկային կեանքը աւելի է յարգւում, աւելի բարձր է գնահատւում,—այդտեղ հումանիստ, մարդասիրական վարդապետութիւնները բնաւ դեր չունեն, այլ դրա իսկ պատճառն այն է, որ տեխնիկական առաջադիմութեան շնորհիւ, բարձրացել է մարդու աշխատանքի արդասաւորութիւնը...

Չը ծանրանանք այդ ուլտրա-մատերիալիստական և վիճելի հայեացքի վրայ, որը տրամադիր է իսպառ ժխտել կրթութեան ու քաղաքակրթութեան ազդեցութիւնները մարդկային համայնքների վրայ և նետել նրանց տնտեսական ֆատալիզմի գիրկը.—անցնենք պ. Ֆիլիպպօվի միւս հետաքրքրական յայտնութիւններին, ուր նա խօսում է Թւերի լեզուով։ Նա արձանագրում է, որ 20-րդ դարի արշալոյսին Անդրկովկասի ազգաբնակութիւնը արդիւնաբերական ուժերի զարգացման տեսակէտից շատ ցած է կանգնած, որ նա իր մշակողական գործիքներով վերարտադրում է երկրագործական կուլտուրայի առաջին քայլերը։ Արձանագրում և այն՝ որ Թուրք ազգաբնակութեան մի պատկառելի մասը—Բագւի, Գանձակի և մասամբ Երևանի նահանգներում—կիսա-Թափառական կենցաղ ունի և պարապում է խաշնարածութեամբ։ 1897 թւում կատարուած перепись-ի համաձայն՝ Անդրկովկասի ամբողջ Թուրք տարրի 6% ապրում է խաշնարածութեամբ. Բագւի նահանգում այդ տոկոսը բարձրանում է 7-ի, իսկ Գանձակի նահանգում—անցնում է 8,28%-ից։

Մինչդեռ գլխաւորապէս խաշնապահութեամբ ապրող հայերի թիւն է 1/2 % միայն։ Երեք յիշեալ նահանգների մէջ խաշնարածութեամբ ապրում են 80 901 Թուրք և 4124 հայ. Թուրքերի ընդհանուր թիւն է այդ նահանգներում (համաձայն 1897-ի մարդահամարի)—1,332,408, հայերինը 785,421. «Թափառական» խաշնարած կենցաղը, ասում է Ֆիլիպպօվ, ինքնատինքեան մի յայտարար է մարդկային աշխատանքի արդիւնաբերութեան խըղճուկ վիճակի և նա այն հողն է, ուր ճոխ ու առատութեամբ

ծաղկում է կուլտ անարգանքը, արհամարհում վերաբերումը դէպի ուրիշի կեանքը և բացասումը անհատի ամեն իրաւունքների»։

Շարունակենք պարոն Ֆիլիպպովի խօսքերով.

«Անդրկովկասի Թուրք ազգաբնակութիւնը իր ընդհանրութեամբ այսօր դեռ ապրում է տնտեսական զարգացման ստորին շրջանները, ուստի և զարմանալի չէ որ նա ապշեցնում է ուրիշ հասարակական-տնտեսական միջավայրում մեծացած դիտողին՝ կեանքի ու պատւի դէմ կատարած իր ոճիրների առատութեամբ»։

Ահա և թւերը, քաղւած նոյն Обзоръ-ներից. Բագւի նահանգում սպանւած է՝

1900 թւին	—	324	մարդ
1901-ին	—	391	»
1902-ին	—	416	»
1903-ին	—	440	»
1904-ին	—	468	»

Գանձակի նահանգում սպանւած է՝

1900 թւին	—	499	մարդ
1902-ին	—	416	»
1903-ին	—	905	»

Տաս տարւայ ընթացքում, 1893-ից մինչև 1902 թ. միմիայն Բագւի նահանգում, ընկել են մարդասպանների ձեռքից՝ 2889 մարդ. իսկ Գանձակի նահանգում 9 տարւայ մէջ (չը հաշւելով 1901-ը) սպանւել են 4042 մարդ։ Միջին թւով, ուրեմն, իւրաքանչիւր տարի սպանւում է՝

Բագւի նահանգում	289	մարդ
Գանձակի	450	»

Քանի որ Գանձակի նահանգի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է (1897-ի մարդահամարի համաձայն)՝ 878,415 մարդ (երկու սեռի), իսկ Բագւի նահանգինը 826,716 մարդ,—ապա ուրեմն իւրաքանչիւր տարի՝

Առաջինում՝ 1952 հոգուց միջին թւով մէկը ընկնում է մարդասպանի ձեռքից.

Երկրորդում՝ 2860-ից մէկը։

Այդպէս է իրերի վիճակը, այն նահանգներում, ուր գերակշռող տարրը կազմում է Թուրք ազգաբնակութիւնը։ Արդարև, Թուրքերի թիւն է՝

Գանձակի նահանգում—մօտ 61% ընդհանուր ազգաբնակութեան.
Բագուի » —մօտ 60% » »

Տեսնենք ինչ պատկեր է ներկայացնում Երեւանեան նահանգը՝ ւտեղ Թուրքերը կազմում են ազգաբնակութեան մօտ 38%։ ա տարուայ ընթացքում (1893—1902) ամբողջ Երեւանեան նահանգում սպանուած է 1304 մարդ, ուրեմն՝ միջին հաշւով իւրաքանչիւր տարի 130 մարդ. կամ ուրիշ խօսքով իւրաքանչիւր 6381 գուց ընկնում է տարեկան 1 մարդ։

Թւերը աւելի հրահանգիչ են դառնում, երբ քննում էք սպաւթիւնների հարցը ըստ ցեղական միութեան։ Երեւանեան նահանմասին հաւաքած վիճակագրական չոր թւերը պարզում են ղ Թուրք ազգաբնակութեան խաղացած դերը ընդհանուր ոճրանութեան մէջ։ Обзоръ-ների մէջ վերջին 8 տարում (1897—04) դատապարտուածները դասաւորուած են ըստ կրօնի և ղանութեան։

Եւ դուրս է գալիս, որ այդ 8 տարուայ մէջ զանազան ոճիրրի համար դատապարտուած են 2801 մարդ, որից 1739-ը կամ %-ը մահմեդականներ են։ Նկատեցէք, որ դա Երեւանեան նահանգումն է, ուր մահմեդականները կազմում են ընդհանուր ազրնակութեան 42, 2% միայն։

Обзоръ-ները վկայում են նաև որ մահմեդականները բոլոր եղի ունեցող ոճիրների մեծագոյն թիւ հեղինակ լինելով հանդերձ՝ անձնապէս աչքի են ընկնում սպանութիւնների, վիրաւորումների և ազակութիւնների մէջ։

Եօթ տարուայ մէջ (1897—1904) դատապարտուած են 1165 րդասպաններ, որոնցից 879 հոգի կամ 75,45%-ը մահմեդականեր են։ Նոյն ժամանակամիջոցում մարդկանց ծեծելու, վիրաւոելու համար դատապարտուած են 151 հոգի, որից 113-ը, այսինքն 4%-ը աւելի քան մահմեդականներ են։ Աւազակութեան համար դատապարտուած են 48 մարդ, որից 39-ը կամ 81%-ը դարձեալ մահմեդականներ են։

Այդպէս ուրեմն Երեւանեան նահանգի ոչ-մահմեդական ազբնակութիւնը—որ կազմում է ամբողջ բնակչութեան 3/5-ը—ժին է ընկնում հազիւ 1/4-ը միայն այն ոճրագործների, որոնք տապարտուած են մարդասպանութեան համար, և 1/5-ը միայն

այն յանցաւորների՝ որոնք պատսպարուած են աւազակութե
համար։

«Այդ ուրեմն, եզրակացնում է պ. Ֆիլիպպով, Անդրկ
կասեան ազգաբնակութեան յանցագործ տարրերը արտադրում
կուլտուրապէս չափազանց յետամնաց՝ մահմեդական կամ ճի
կը լինէր ասել, Թուրքական մասսան»։ (Слѣдовательно прест
ные элементы закавказскаго населенія даетъ крайне отсталася
культурномъ отношеній мусульманская, точнѣе татарскя масса)։

Այդպէս է ահա վկայում պ. Ֆիլիպպով, տնտեսական մատերի
լիզմի և անշուշտ նաև սօցիալ-դէմօկրատիզմի ջերմ փաստաբ
ներից մինը։ Նա Թւերի պերճախօս լեզուով մերկացնում է և հր
պարակ հանում մէկը մեր Կովկասեան իրականութեան ամենայ
ւոտ վէրքերից, որը և միաժամանակ բաւականաչափ լոյս է սփռ
ներկայ հսկայական տրագեդիայի վրայ... Մի բացառութիւն
սօցիալ-դէմօկրատների մէջ... Չը գիտենք, թէ ինչպէս են գ
պ. Ֆիլիպպովի այդ վարմունքը՝ Կովկասեան «ընկերները»,
րոնք á tout prix համերաշխութիւն են գտում, առանց քննե
ցաւոտ, ախտաւոր իրականութեան խորունկ պատճառները, հ
մարելով նման «մերկացումները» մի տեսակ պրօֆանացիա իրա
ամեն բան հարթող ու հաւասարեցնող և միանգամայն սխալ ը
բռնուած դօքտրինի համար։

Այնուամենայնիւ, պ. Ֆիլիպպովը ևս տալիս է առատօր
իր. հարկը սօցիալ-դէմօկրատական ֆրազիօլօգիային։ Երևոյթնե
լուսաբանութեան մէջ նա ևս կիրառում է ապրիօրիստական մեթ
դը Սէմինի և այլոց նման ի չարն է գործ դնում տնտեսակ
մատերիալիզմը և դատում է անալօգիաներով, նմանութիւններո
Նա յենւում է մասամբ—ինչպէս ինքն է ասում—«այն թէօրիակ
դրութիւնների վրայ, որոնք բղխում են ուրիշ ժողովուրդներ
մէջ գտնուած համանման իրողութիւններից», և Թուրք տարր
արտադրած մեծածաւալ ոճրականութիւնը բացատրում է միայն
միայն նրա տնտեսական-արդիւնաբերական պայմաններո
բացատրում է նրանով, որ «արևելեան Անդրկովկասում ներկա
յումս մուտք է գործում քաղաքային տնտեսութիւնը, որը դուրս
մղում հին բնական տնտեսութիւնը (Naturalwirtschaft)։

Բացատրութեան այդ եղանակը օրիգինալ է, բայց ոչ բոլ
բովին համոզեցուցիչ։ Արդիւնաբերութեան էւօլիւցիան և պա

ւնքների եղանակը, անտարակոյս, մեծ ազդեցութիւն ու-
ղղովուրդների բարքերի վրայ, բայց քիւրդը, օրինակ, իբ-
մայնք, իբրև մասսա, չի սպասել փողային տնտեսութեան
գործելուն՝ որպէս զի իր անդադրում ու աղաղակող ոճիր-
կատարեալ նահատակութեան մատնէ մի ամբողջ ժողո-
—իր դրացի հայ խաղաղ ժողովրդին։

նվիճելի է, որ սօցիալական տարկանոնութիւնները—անհա-
արութիւն, չքաւորութիւն, կարօտութիւն և այլն—շատ մեծ
ւթիւն ունեն յանցագործութեան վրայ, սակայն նրանք
պատճառները չեն։ Բացատրեցէք, օրինակ, այն փաստը՝ որ
րիայում տարեկան 7—8 անգամ աւելի է մարդ սպանւում,
րլանդիայում։

նկարելի է վերագրել այդ՝ երկու երկրների տնտեսական
ների տարբերութեան, որ այնքան էլ մեծ չը պիտի լինի։
ակակից ոճրագիտական շկօլան, որ ունի փայլուն, աշ-
հռչակ ներկայացուցիչներ՝ տնտեսական ու սօցիալական
ներից զատ՝ տեսնում է նաև ուրիշ մօմէնտներ ոճրի էու-
մէջ. նա մեծ տեղ է տալիս նաև զուտ բնական ֆակտոր-
—ցեղական խառնուածքին, բնազդականութեան, գրգռողու-
(Jmpulsivität) և այլն։ Նրա տեսակէտից՝ ոճրագործութիւ-
ւդիսանում է որոշ չափով իբրև ատաւիստական մի երե-
որ վերարտադրում է նախնի դարերի մարդկային բիրտ
նութիւնը։

սկ այդ հոգեբանութեան տիրապետող գծերն են—ըստ Վի-
ծէրրերօի—գրգռողութիւնը և տոկուն, յարատև աշխատան-
ւցակայութիւնը (այդպիսի աշխատանքի անընդունակ
)։

նրիկօ Ֆէրրի, Իտալիայի սօցիալիստ կուսակցութեան պա-
-ւթը և յիշեալ դպրոցի տաղանդաւոր ներկայացուցիչներից
ցոյց է տալիս՝ կրիմինալ ստատիստիկայի վրայ հիմնուած՝ որ
ցեղը, այդ զուտ բնական (և ոչ սօցիալական) ֆակտորը
ն տարբերութիւններ է մտցնում ոճիրների համեմատա-
օկոսի մէջ։ Առաջ բերենք նրա «L' Omicidio» գրքից մի
թւեր, որոնցով հռչակաւոր սօցիալիստը պարզում է տար-
Որքա՜ն, դժբախտաբար, իրաւացի է հեգելեան Գանսը, երբ …ասում է թէ «Իսլամը լոկ յեղաշրջումն է տարածութեան մէջ և …ժամանակի (eine Umwälzung im Raume, nicht in der Zeit), …որ նա իր դատարկ աբստրակցիայի, վերացականութեան …չի պարունակում որ և է սաղմ հնարաւորութիւն՝ հեռաւոր …ացման համար»։ Ասես ճակատագրի, Ֆատումի մի նզովք …ում է միշտ այդ թշւառ ժողովուրդներին, հասարակական …ծածաւալ մարմիններին, որոնց անդամները, կարելի է ա- … որ ամեն տեղ են, իսկ գլուխը, մտածող, գիտակից օրգանը … մի տեղ…

* * *

Ամեն մի ցեղի, ժողովրդի մէջ՝ միշտ մի աննշան փոքրա- …թիւն է, «ընտիրների» մի դասակարգ է, որ ներկայաց- …է առաջադիմական տարր, որ պայքարում է անցեալի դէմ, …այի համար։ Ո՞ւր է այդ տարրը մահմեդական աշխարհում… … շարունակ նիրհելուց յետոյ, մեր հարևան թուրք ժողո- … վերջապէս «սթափման» նշաններ ցոյց տւեց, յանձին իր

ղեկավարող, «գիտակից տարրի», «ինտելիգենցիայի—և ինչ արտադրեց այդ «ինտելիգենցիան»...

Փորձում է նա—տիեզերական «նմանողութեան օրէնքով» փոխ առնել բարձր ազգեցիկ կուլտուրայի նուաճումները։ Փորձում է զէթ մասամբ թօթափել Իսլամի և հարազատ, իներտ հասարակութեան բթացնող լուծը, ուզում է որդեգրել ինքնաքննադատութեան ու ինքնամտրակման բեղմնաւոր մեթօդը, որ դըրացի հայը վաղուց ի վեր կիրառում է իր կեանքում այնքան բուռըն նախանձախնդրութեամբ ու այնքան աջողութեամբ։

Փորձում է նա քայլել համամարդկային ազատագրութեան ճանապարհով, փոքր ինչ մարզուել գաղափարական անձնազոհութեան մեծ դպրոցում, ուր իր յեղափոխական դրացին 20 տարուց ի վեր վաստակել է մարտիրոսութեան այնքան պսակներ, երբեմն էլ յաղթութեան դափնիներ...

Ո՛չ, նա հանդիսաւոր կերպով, իր մամուլի էջերում ու փոխարքայական պալատում՝ պարսաւանք է ուղղում յեղափոխութեան և մերժում է սահմանադրութեան սկզբունքը։ Նա միւս կողմից հրապարակ է նետւում պանիսլամիզմի դրօշակի տակ և այն էլ՝ յարձակողական, թալանող ու յօշոտող պանիսլամիզմի։

Նա գետնատարած փռւում է Եըլդըզի Մեծ Մարդասպանի առաջ և արդարացնելով նրա արիւնոտ սխրագործութիւնները, պատրաստակամութիւն է յայտնում ներշնչւելու նրա փայփայած մեթօզից և գործադրելու այն՝ նաև Կովկասում, նոյն «ըմբոստ» ու ատելի հայ-գեաւուրի դէմ...

Եւ փադիշահական մեթօդը գործադրւում է. հէնց այն ժամանակ, երբ հին ռէժիմը փլատակւում է ի դէմս ամենամեծ ու դժնդակ բռնակալութեան, երբ Ռուսաստանի և Կովկասի բոլոր ժողովուրդները, յանձին իրանց առաջադէմ տարրերի, զինւած գիտութեան վերջին խօսքով, տոգորւած հասարակական նոր իդէալներով, դիմաւորում են իրանց սեփական արիւնով ներկւած ազատութեան արշալոյսին—Թուրք «ինտելիգենցիան», իր ժողովըրդի գլուխ կանգնած, նրա կեղեքիչ տարրերի՝ բէկերի ու մոլլաների հետ ձեռք ձեռքի տւած, հանդիսանում է ռէակցիայի և խուլիգանութեան մի հզօր պատւար, ապաւինում է հոգևոր ու աշխարհիկ բռնակալութեան... Այդպէս է ահա արտայայտւում ինքնատիպ, suigeneris հոգեբանութիւնը։ Նոր «սթափւող» ժո-

[illegible]րդի «գիտակից» տարրը որոնում է իր ժողովրդի փրկութեան [illegible]ը դառնալ անցեալի ֆէտիշների մէջ, փոխանակ հետեւ-[illegible] ընդօրինակելու առաջադէմ ազգերին՝ նա գնում է լուսաւոր-[illegible] Եըլդըզի ծիւաղի մօտ... «Նմանողութեան օրէնքը», քաղա-[illegible]թութեան տարածման այդ նշանաւոր ֆակտորը՝ այդպիսով [illegible]ւում է, գլխիվայր դրւում և նրա կրող քրմապետները իրանց [illegible] միասին՝ նախապատմական բարբարոսութեան անդունդն են [illegible]րում և իրանց հարազատ ժողովրդին...

Ինտելիգենցիա չը կայ, անհատներ չը կան... Թւում է թէ [illegible] է ամբողջ ժամանակակից Իսլամականութեան խորագոյն [illegible]: Չը կայ այն տարրը, որ աղն է բոլոր քաղաքակրթւող հա-[illegible]կութիւնների, որ կրողն ու ազդարարն է նոր գաղափար-ների ու հոսանքների. չը կայ առհասարակ հասարակական մտքի [illegible]ւորում, չը կայ այլազանութիւն գաղափարների, մօրալի, [illegible]րհայեցողութեան մէջ: Տնտեսական դասակարգային շերտա-[illegible]մը կարծես. նոյնպէս բիւրեղացել է ցեղի, կրօնի և բոլոր [illegible] կատէգորիաների նման, նա չէ անդրադառնում մարդկանց [illegible]քերի ու զգացումների վրայ.—այն ողբերգական, սև թշւառու-թիւնը, որի մէջ դարերով պահում են Թուրք մասսաներին՝ հա-[illegible]կրօն ֆէօդալները, կղերական կաստան և աշխարհիկ բռնապետ-[illegible]թիւնը՝ ոչինչ չի ասում Թուրք «կրթւած» դասին, նա չի ար-[illegible]ում ժողովրդական դատի համոզւած առաջամարտիկների ու իդէօլօգների շարքերին այն արհաւրալի և բնաջնջող պատերազմ-[illegible]ամ, որ Թուրք տարրի յղացումն է, որ այսօր ներկել է ամ-[illegible] Անդրկովկասը և՛ հայի և՛ Թուրքի արիւնով,—այդ եղածի ճըգ-[illegible]ամն անգամ հանդէս չի բերում Թուրք ժողովրդի միջից գէթ [illegible] փոքրաթիւ բանակ՝ կարող, ազդեցիկ ու գաղափարական ան-[illegible]ների, որոնք գիտակցելով ընդհարումի բոլոր դժոխային ան-[illegible]թիւնն ու սարսափները, աշխատէին ուժգին, որոտուն բողո-[illegible] եռանդուն քարոզներով կանգնեցնել հարազատ ամբոխի կոյր, [illegible]երային սլացքը:

Անհատներ չը կան: Ուժեղներն անգամ ենթարկւում են, [illegible]արւում են իրանց շրջապատին: Բիրտ ու բնական միջավայ-[illegible]ը ինչպէս տեսանք, կազմւած է հինաւուրց նախապաշարում-[illegible], նեխւած բարքերից ու սովորութիւններից, պահանջում է [illegible]քանչիւրից հլու, դիակնային համակերպումն, perinde ac ca-

daver. Անհատները յարմարւում՝ են իսպառ, կորցնելով ի[...]
առանձնայատուկ գոյնը ու գունաւորւելով շրջապատի նմա[...]
Այդպէս շնչաւոր տիեզերքի մէջ, որոշ կենդանիներ ու բոյս[...]
ընդունում են շրջապատող բնութեան գոյնն ու յատկութիւնները[...]
որպէս զի հակասութիւն չը կազմեն միջավայրի հետ, ուշադրու[...]
թիւն չը գրաւեն իրանց վրայ և դիւրութեամբ պահպանեն ի[...]
րանց դիրքը գոյութեան դժւար պայքարի մէջ։

Ջարհուրելի է սովորութիւնների, բարքերի ուժը։ Անհատը
ստիպւած է մտածել ծնող-երամի գլխով, զգալ ու կամենալ՝ նրա
սրտով ու կամքով... Մի ֆատալ օրէնք՝ որ արտայայտւում է
Իսլամի գրեթէ ամբողջ աշխարհագրական գօտիի վրայ... «Երի-
տասարդ Թաթարները» և «Երիտասարդ տաճիկները»—Ահմէդ Ա[...]
ղայեւներն ու Ահմէդ Րիզաները—նոյն անշարժութեան ոգին են
մարմնացնում, նոյն հոգեբանութիւնն են արտայայտում՝ իրանց
ցեղերի բացասական գծերը. բոլորն էլ ազգայնամոլ, յետադէմ ու
արքայապաշտ, բոլորն էլ ատող ու հակառակորդ ուրիշ, լծակից
ազգութիւնների, նրանց պարզած ազատութեան դրօշակների,
նրանց դաւանած իդէալների։ «Երիտասարդ» տաճկութիւնը, Օս-
մանեան պրօգրէսի դրօշակակիրը, չը նայած իր ընդունած բարձ-
րագոչ նշանաբաններին՝ մնաց երեսուն տարւայ իր գոյութեան
ընթացքում ամուլ ու անդամալոյծ,—մի կուսակցութիւն, կազ-
մւած մտաւոր միջակութիւններից և բարոյական գաճաճներից,
որոնք, գաղափարական անհրաժեշտ շաղախից զուրկ լինելով,
յեղափոխութեան վարդապետութիւնը հարեմներում ու սուլթա-
նական ախոռատներում սովորելով, սիստեմատիքաբար դաւաճա-
նեցին իրանց դատին, կաշառւեցին օգոստափառ Ոճրագործից,
և իբրև անօրինակ, իրանց տեսակի մէջ եզակի՝ «յեղափոխական»
մի կուսակցութիւն՝ զզւանք ու զայրոյթ առաջացրին ամբողջ յե-
ղափոխական մարդկութեան մէջ...

Նրանց սիրած զբաղմունքներից մէկն է եղել՝ ամբաստանել
ու արատաւորել յաչս օտարի հայ ու մակեդոնական ժողովրդի
ազատագրական շարժումները, ժխտել միջազգային դաշնագրերն-
ով ընդունւած յանձնառութիւնները՝ յատկապէս հայերի և մա-
կեդոնացիների համար, յորդորել վերջիններիս՝ օսմանցի դառ-
նալ և մտածել ընդհանուր, օսմանեան հայրենիքի ազատագրու-
թեան մասին... իրանց եղանակով։ Սուլթանի արիւնռուշտ քա-

ղանութիւնը հայերի վերաբերմամբ, տաճկական եաթաղա-
նի ընկած հարիւր հազարաւոր զոհերը. երբէք չեն վշտացրել
ը ու առաջադիմութեան ներկայացուցիչ «Երիտասարդ տաճիկ-
ի»,—ընդհակառակը... Այդպէս է ահա պատկերանում մեր
ին իր խոշոր ու հարազատ գծերով, Օսմանեան վերածնու-
ի «աւանդապահը»: Մեռելածին մի կուսակցութիւն, ծոյլ, անպը-
ղ, առանց անցեալի ու ներկայի... Նրա հետ կարծես կոնտ-
ում է կազմում Անդրկովկասեան Երիտասարդ Թուրքութիւնը, որ
ած է տենդոտ, մրրկալի պայքարներով և հասած «փառքի»
թնակէտին... Սակայն, արտաքուստ հակասական՝ ներ-
ում խորապէս նման են իսլամական երկու «աւանդապահ»
ւածները,—երկուսն էլ զոհ նոյն ճակատագրի ու ատա-
ի, երկուսն էլ ծնունդ նոյն դարաւոր յարմարեցման՝
նախւած իրականութեան ռուտինային. երկուսն էլ—Ան-
մ ու Այլասեռում:

Ո՞ւր է ելքը: Ո՞վ պիտի փշրէ ռուտինայի անսասան ապա-
ը: Ո՞ւր են բարձր, անկախ հոգիները, որոնք հեռու երամ-
ածի ազդեցութիւններից, անդրջրհեղեղեան, փթած հասկա-
ութիւններից՝ որոճան բարձր, քաղաքակիրթ համայնքների
ած ճշմարտութիւնները և աշխատեն իրագործել նրանց՝
ատ միջավայրում: Ո՞ւր են արտակարգ տեմպերամենտնե-
ը իբսենական հզօր ու արգասաւոր մեկուսացման մէջ պատե-
մ յայտարարեն բռնաւոր, աւանդապաշտ հասարակութեան և
ան խթան նրա անսայթաք առաջադիմութեան:

նցեալը և ներկան, չէ՞ որ, որոշ չափով պատասխանում են
ի համար... Վաղը, ոչ հեռու ապագայում, մեր երկիրը յու-
ք կը մտնէ ազատ կարգերի մէջ.—ընտրողական իրաւունք՝
ական և հաւասար բոլորի համար՝ մամուլի, խօսքի ազա-
թիւն, պարլամենտական կեանք և այլն—և ի՞նչ պիտի տայ
ացիների ահռելի անշարժութիւնը այդպիսի կարգերի մէջ...
իրեւշ բարիք կարող է արտադրել նա, բայց եթէ սանձար-
արխիա և դեմագոգիա (de'magogie),ուր—ինչպէս Հիւսի-
մերիկայում, սևամորթների ազատագրումից յետոյ—լպիրշ,
նք դեմագոգները, պօլիտիկանները, օգտւելով իրանց
ի անծայր տգիտութիւնից՝ ագռաւների պէս կը թափւեն
յ, կաշխատեն իրանց գձուձ շահերին ծառայեցնել նրա

Թւական ոյժը, նրա վրայ հիմնել ազդեցութիւն ու արտօ
ներ. կաճի քաղաքական կաշառակերութիւնը հրէշաւոր չ
ռամկավարութեան մթնոլորտը կը թունաւորւի, կապակ
դեռ երկար, շատ երկար ժամանակ, նոյն իսկ դէմօկր
յաղթանակից յետոյ, թուրքական կամարիլլան իր ձեռք
պահէ իններա ու հլու մասսաները, և այդ բոլորը, բնակ
կանդրադառնայ ամբողջ երկրի ճակատագրի վրայ... Հր
է հեռանկարը—ինչ ասել կուզէ...

IX

Դ Ա Ր Մ Ա Ն Ն Ե Ր

Հ. Յ. Դաշնակցութեան դերը

*Պարապ մեղադրանքներ.—«Հայերը պէտք է կրթէին թուրքերին».—«Կ
տրօֆըլպէտք էր վաղուց նախատեսնել».—Ս.-դ.-ների պանացէումը.—Թուրք
րօլետարիատը իբրև փրկութեան խարիսխ.—Ժողովուրդները տակից չեն փ
ծնւում.—Սիմպլիստ ըմբռնումներ.—Համերաշխութեան պրօպագանդը.—
նատ ներկան.—Զինւած խաղաղութիւնը.—Թուրք-հայկական ընդհարումներ
տեանքները.—Բարքերի վայրենացում.—Վտանգը տակաւին չի անցած.—
ցիան և պրօվօկատօրական դաւերը.—Դաշնակցութիւնը և հայ-թուրքական
ձեցումը.—Հայ ժողովուրդը՝ միշտ պաշտպանւողի դերում.—Ապագան։*

Ծայրէ ծայր սև, արտասւելի մի իրականութիւն, ուր բ
ձախորդ, հակահասարակական, հակապրօգրէսիւ գործօնն
ձեռք ձեռքի տւած, չինական պատնէշ են ուզում բարձրաց
իրանց և դրսի աշխարհի միջև. մի մռայլ, անապատական մ
կերպութիւն, որի անեղը ու խաւար ֆօնի վրայ դեռ նոր են
բևում մի քանի յուսատու, կազդուրիչ կէտեր, մի հիւանդ
պաթօլօգիական հոգեբանութիւն, մի սարսափելի ռուտինա,
հիմքերը ամուր խարսխւած են դարերի գիշերի մէջ և որը
ժելու համար՝ անհրաժեշտ է երկար, անվերջ, քրտնաջան աշխ
տանք, մի յատուկ ու գերազանց բժշկականութիւն։ Հարկաւոր
ուժեղ, կործանարար մի հողմ, որ փոթորկէ, տակն ու վրայ ա
հսկայական ճահիճը, թարմացնէ մթնոլորտը և հարթէ ազատ
ու արգասաւոր դաշտը՝ նոր կեանքի բողբոջների համար։

…պիտի կատարէ այդ կարգինալ յեղափոխութիւնը…

Մեզ մեղադրում են—պանիսլամիզմի ու սօցիալ-դէմօկրատիկ կովկասեան իդէօլօգները—որ մենք, «հայ նացիօնալիստները» միայն հայ ժողովրդի մասին ենք մտածել և չենք զբաղուել հարեւան Թուրքերի կրթութեամբ ու դաստիարակութեամբ…

Սա մի օրիգինալ պահանջ է. Նորընծայական խեղկատակութիւնը քաղաքագիտութեան հովեր է առնում և յաղթանակօրէն հասկացնում է մեզ, որ սրանից տասնեակ տարիներ առաջ մենք պիտի նախատեսնէինք փոթորիկը և պիտի մտածէինք նրա առաջն առնել…Թուրք ժողովուրդը դաստիարակելով։

Բնական չէր հայ ինտելիգենցիայի առաջ դրուած սիզիֆեան գործը, կովկասահայ և նոյնիսկ պարսկահայ առաջադիմութեան խնդիրը, տաճկահայերի արիւնոտ դատը՝ կապուած հազարաւոր մասնագութիւնների ու գերմարդկային ճիգերի հետ, բնական չէ, որ հայ գործօն երիտասարդութեանը բաժին է ընկել՝ …ութեան մի չարաշուք տնօրինութեամբ՝ ամենաստակալի և …ապերախտ աշխատանքը—գործել մի դժոխային միջավայրում, տանից գործելու մի ազատ կայանի, շրջապատուած ամեն …մարդակեր խուժաններով ու պետութիւններով, հալածուած և՛ Տաճկաստանում, և՛ Պարսկաստանում, և՛ Ռուսաստանում, …ուած յաճախ նոյն իսկ հարազատներից, երբէք չը վարձատրուած հայ ժողովրդական դատի պաշտօնական «հովանաւորներից». բնական չէ այդ անօրինակ, պատմութեան մէջ չը տեսնուած մաքառումը—մենք, մի չնչին փոքրամասնութիւն, պիտի ստանձնէինք և Թուրք ժողովուրդը լուսաւորելու գործը… Չէ, այդ պահանջը ոչ լրջութիւն չունի, ինչպէս միւս բոլոր պահանջները, նոյն աղբիւրներից բղխող։ Հային երբէք թոյլ չեն տուել … շունչ քաշել իր հայրենիքում, իր ճակատագրի մասին իսկ …լ շատ թէ քիչ ազատօրէն. Նրա դպրոցներն են փակել, նրա …հասարակական հիմնարկութիւններն են անդամալուծել, նրա …ազգային գոյութիւնն են ոտքի տակ տուել, մահուան դատապարտել—նրան թոյլ տուել են ուրիշի մասին մտածել, հոգալ…

Բայց եթէ անգամ թոյլ էլ տային՝ պիտի կարողանա՞ր նա …ական նախաձեռնութեամբ, իր ուժերով որ և է էական …ութիւն մտցնել մի ժողովրդի կեանքում, որ միանգամայն …, բացառիկ է իր մտաւոր, հոգեկան ու բարոյական կեն-

ցաղով, իր սօցիալական բովանդակ կաղմով, որի
ընդհանուր գծերով ցոյց ուինք արդէն։ Երանի չէր, թէ
լինէր... Իսկ մենք կարծում ենք, որ դա ուտոպիական,
մի հայեացք է.—Թուրքի կեանքը վերջ ի վերջոյ նա
փոփոխէ ու բարւոքէ proprio motu, և ոչ հայերը, ոչ իսկ,
Կովկասեան սօցիալ-դէմօկրատները, որքան էլ նրանք ջեր
պան կանգնեն Թուրք պրօլետարիատին, որքան էլ նր
տանց փարեն Թուրքական վերածնութեան գործին։

Փոխադարձ օգնութեան սկզբունքը խիստ յարգելի է
րակոյս չը կայ։ Կուլտուրական հարևաններին, մանաւանդ
տիկ շփւող հայ ինտելիգենցիայի պարտականութիւնն է
րաւորութեան թէկուզ և շատ անձուկ—սահմաններում զ
մոքերի փրկարար խմորումին՝ մեր մահմեդական դր
մէջ։ Թուրք պրօլետարիատին՝ որ այսպէս թէ այնպէս,
գոյն ինդուստրիալիզմի յորձանքն ընկնելով, կամաց-կամաց
ւում է միւս, աւելի քաղաքակիրթ ազգերի պատկանող
տարիատների հետ՝ պէտք է, անշուշտ, ձգտել քարշել նաև
գիտակցական աշխատանք։ Աղէտների սկզբնաւորութիւն
վեր՝ մեր հրատարակած այլ և այլ Թռուցիկները պարզ
են համերաշխութեան այն զգացման մասին, որով մենք
ւած ենք Թուրք աշխատաւոր ժողովրդի նկատմամբ։

Բայց մենք դարձեալ սխալ, ուտոպիական ենք համար
լաւատես յարաբերութիւնները այն կուսակցութիւններ,
դիտում են Թուրք պրօլետարիատին, իբրև մի տեսակ փրկութ
խարիսխ, որը ոչ միայն պիտի ազատէ մեզ ջարդերի ու
րումների մղձաւանջից, այլ և առհասարակ «տակից» պիտի
դաշրջէ, վերածնեցնէ հարազատ ժողովուրդը։

Ամեն մի պրօլետարիատ, իբրև իր ազգի մի հատուա
բաժանում է այդ ազգի ժառանգականութիւնը, ատաւիզմը։
ցիալիստական գաղափարը, որքան էլ ինքնին հրապուրիչ
մեծագործ լինի, չի կարող հեշտութեամբ թօթափել հին, հա
քական արատների զարհուրելի բեռը, որ մի թշւառ պատմ
թիւն փաթաթել է մահմեդական պրօլետարիատի վզին։

Վերջապէս, ժողովուրդները առհասարակ «տակից» չեն վ
րածնւում,—պատմութիւնը գոնէ չի տալիս այդպիսի օրինակնե
Անշուշտ, մասսաներն են ժամանակի անիւը առաջ մղող հզօր գ

[illegible]. Նրանց շարժումները գիտակցական ու նպատակայար[illegible]ելու համար՝ անհրաժեշտ է միշտ և ամեն տեղ մտա[illegible]ութեան որոշ աշխատանք, որ կատարւում է «պատմա[illegible]րադասնութեան» ձևերով։ Մի գործից աւելի է, ինչ սո[illegible]մի գաղափարը ծայր է առել արևմտեան Եւրօպայում և 75 [illegible] է, ինչ սկսել է պրօլետարական գործնական պայքարը [illegible]իզմի դէմ. և այնուամենայնիւ այսօր Եւրօպայում, նոյն [illegible]ամենազարգացած ու ամենաինդուստրիական երկրների մէջ, [illegible]ը պրօլետարիատի—չենք ասում դեռ գիւղացիութեան [illegible] մասը դուրս է մնում սօցիալիստական բանակից, չի [illegible]ւում իր պատմական դերը, իր անտագօնիզմը կապիտալի [illegible] իսկ յաճախ այդ կապիտալի ներկայացուցիչներին է հա[illegible]մ իր շահերը, իր ճակատագիրը։

[illegible]նչև որ Թուրք ժողովուրդը չը ծնէ գաղափարական կուռ [illegible] բարձրութեան վրայ կանգնած ինտելիգենցիայի մի [illegible]՝ Թուրք պրօլետարիատի դատը, ինչպէս և առհասարակ [illegible]կան առաջադիմութեան գործը մի քայլ անգամ չը պիտի [illegible]այ։ Սօցիալիստական շարժումը, աւելի քան որ և է այլ [illegible] կարօտ է ինտելիգենցիայի աջակցութեան։ Անցել է ժամա[illegible], երբ՝ բարբարոսական մի հասկացողութեամբ՝ կարծում էին «վարձու աշխատաւորների դատը կարող են օրինաւոր կեր[illegible] պաշտպանել միմիայն վարձու աշխատաւորները»։ Պրօլետար[illegible]. և սօցիալիստական վարդապետութիւնը դուրս են եկել ար[illegible]վաղեմի համքարական սահմանափակումներից, սօցիալիզմը [illegible] խնդիր չէ ժողովուրդների համար, այլ հիմնական [illegible], բովանդակ, լիակատար վերածնութեան մի խնդիր, մարդկային էւօլիւցիան առաջին անգամն է հրապարակ հանում. Հետևապէս, իր առաջադիմութեան ու յաղթանակի համար [illegible]ւում է ամեն տեսակ կուլտուրական, մշակւած ոյժերի աշ[illegible]ութիւնը, նա պահանջում է մտքի հասուն սպասաւորներ, [illegible]ամակողմանի կրթութեամբ՝ որոնք կարողանան վարել աշ[illegible] ընդհանրութեան մեծ պատասխանատու դերը։

[illegible]ական չէ անգիր անել «դասակարգային» կռւի ֆորմու[illegible]նգիր անել տալ բանւորական խմբերին՝ երևակայելով թէ [illegible] ինքեան պատասխան է տրւում սօցիալական-քաղաքա[illegible]նքի հազարաւոր տանջող հարցերին։ Այդպէս են մտա-

ծում, ըստ երևոյթին, հայ, Թուրք և այլ պրօլետարիատ... նունից խօսող Կովկասեան սօցիալ-դէմօկրատները, այդ... րակացութեան են բերում վերջին ժամանակներս նրանց· կատարուած «Թէօրիական» մարզանքները, տնտեսական մ... լիզմի յախուռն, անհեթեթ կիրառումները և այլն։

Շաբլօնը և սխեմատիկ ըմբռնումները երբէք օգտակա... ռայութիւն չեն մատուցել... Կեանքի դէմ պէտք է պայքարե... պէս, ինչպէս պահանջում են նրա իրական ֆակտորները և... պէս, ինչպէս կարդում ենք Էնգելսի ու Կաուցկու բրօշիւր... Թէօրիան մեծ ույժ է, անտարակոյս։ Նրա լոյսը անհրաժեշտ է ճանապարհ բանալու կեանքի այլազան ու առանձնայատու... ւոյթների լաբիւրինթոսում։ Սակայն, չը պէտք է մոռանալ ո... օրին էապէս վերացական բան է, որ նա մաքրուած զտուած է... ւոյթների հազարաւոր, մանր ու մունր բարեմասնութիւնն... որ իրականութեան մէջ այդ երևոյթները շատ աւելի հա... բարդ ու կնճռոտ են... Դասակարգային կռիւը տարբեր կե... րանք է առնում տարբեր երկրներում ու մթնոլորտներում... կու հակամարտ դասակարգերի՝ բուրժուազիայի ու պրօլետ... տի՝ անտագօնիզմն ու պայքարը չեն լցնում ամբողջ հասար... կան կեանքը... Պէտք է ուշի ուշով ուսումնասիրել ջոկ, առան... յատուկ կեանքի բնորոշ պահանջներ և ըստ այնմ ղեկավարել կ... Այդ է, որ չեն կարող անել բանւորական մասսաները, որ կ... է և պէտք է անէ ինտելիգենցիան և այն էլ՝ իւրային, համ... ինտելիգենցիան։

Թուրք սօցիալիստ կուսակցութիւնը, որ դեռ դժբախ... բար, ապագայի իրողութիւն է, պէտք է ինքնագլուխ իր ձ... քըն առնէ իր համացեղ պրօլետարիատի լուսաւորութեան կազմակերպութեան գործը, ինչպէս որ հայ, վրացի, ռուս աշխ... տաւոր դասակարգերին պիտի կազմակերպեն ու դաստիարա... հայ, վրացի, ռուս սօցիալիստները։ Ուրիշ ելք չը կայ։ Դա է մի... բանաւոր ճանապարհը, մանաւանդ Կովկասեան Բաբիլոնում։

Մեր միտքը սխալ չը հասկանան։ Ազգային առանձնացու... չենք քարոզում, այլ կազմակերպական ինքնօրինութիւն։ Թող... մենաջերմ, ամենամտերմական կապ պահպանուի Թուրք, ռու... հայ ու վրացի պրօլետարիատի ու սօցիալիստների միջև, թ... փոխադարձ եղբայրական համերաշխութիւն տիրէ նրանց շարք...

…Մենք ևս մեր կարողութեան չափ կը ձգտենք այդ նպա-
…։ Բայց չի կարելի սահմանափակել պրօլետարիատով—ու-
…կութեան մի չնչին բեկորն է—այլ ըստ կարելւոյն
…է աշխատել լայնացնել պրօպագանդը, տարածելով այն՝
…ի Թուրք ժողովրդի վրայ։

—

…ղ… Այս հաճելի խորհրդածութիւնների ընթացքում մենք
…կեան չենք անգիտանում արիւնոտ ներկան, որ հրդեհ-
…ակների ծուխը նոր միայն կտրեց և որ ամեն օր բազ-
…իններ են բացւում մեր դժբախտ երկրի ամբողջ տա-
…թեան վրայ՝ անմիտ եղեռնի անուղղակի զոհերին ամփո-
…համար…

Անպատմելի են այն բոլոր արհաւիրքները, որոնք անմիջա-
… անխուսափելի հետևանք եղան Թուրք-հայկական ընդհա-
…երի… Աղէտը հարւածեց երկու կողմերին էլ և երկուսն էլ
… և Թուրք ժողովուրդը—կանգնած են այսօր արիւնաքամ,
…, մերկ ու քաղցած։ Հայ փլատակ գիւղերի կողքին՝
…ած են ամեն տեղ Թուրքական աւեր ու կործան գիւղերը։
… ողբալի տնտեսութիւնը հայ և Թուրք գիւղացիք ծախսե-
… երկու վերջին տարւայ ընթացքում, զէնքի, ռազմամը-
… ապա և զինւորական «էկզեկուցիաների» ու տուգանքնե-
…եսական, առևտրական կեանքը մարեց ամենուրեք, շատ
…մ երկու պատերազմող կողմերը փոխադարձաբար բոյ-
…տարակեցին, Թուրքեր ու հայեր կզզիացան, վերջիններս
… նոյնիսկ մտածել հաղորդակցութեան ջոկ, սեփական ճա-
…երի մասին… Սովը Թագաւորեց և այսօր ճարակում է
…թեամբ՝ իր անբաժան ուղեկից տարափոխիկ հիւանդու-
…ի հետ, որոնք հազարաւոր զոհեր են խլում հայ և Թուրք
…կութիւնից, անտէր ու անօգնական Զանգեզուրում ու
…ում… Դրութիւնը սոսկալի է, Թշւառութիւնը՝ անծայր,
…ան։

…ական չէ այդ։ Բարքերը քանի գնում վայրենանում են.
…ած չքաւորութեան ու անիշխանութեան մէջ բարգաւա-
…ամեն տեսակ ոճիրներ. անգամ հայ խաղաղ ժողովրդի
…ողհետէ բազմանում են բախտախնդիրների, խուլիգա-
…ների շարքերը, որոնք իրանց շահատակութիւններով

պատուհաս են դառնում աշխատաւոր ընդհանրութեան
Աւազակների, վաշխառուների, ժողովրդական բոլոր ց...
դեքողական ախորժակները սանձարձակ թռիչք են առն...
խուլ յուսահատական բառաչիւն է լսւում կոտորածների
բաբեմ եղած հայ-թուրքական գաւառներից...

Ահա թէ ինչ ծնեց Կովկասեան Վանդէան!...

Եւ դեռ վտանգը անցած չի երևում, դեռ ջարդի եր...
դամօկլեան սրի պէս կախուած է բազմատանջ երկրի վրա...
տեսակ զինուած խաղաղութիւն է. փոխադարձ հաւատը կո...
մարել է և տեղի տուել անդուլ, տենդային սպառազինութեան...
կու կողմերից... Վաղուան օրը սարսուռ է ազդում իր խոր...
ւորութեամբ... Ռուսական մեծ յեղափոխութիւնը տակաւ...
բոլորեց իր շրջանը, միահեծան բիւրօկրատիզմը դեռ կառա...
տէր է դրութեան, անարգ չէյթանը դեռ հող ունի իր դաւեր...
մար, և դեռ բազմաթիւ են Կրուշեւանները Անդրկովկասեան...
քի տակ, իսկ գիշատիչ աղալարները, իրանց դիպլօմատոր
լիգաններին հետ, դեռ անտարակոյս նոր հայաջինջ ծրագրեր...
որոշում...

Մենք իդիլլիայի բանդագուշանքներով չենք տարուած և...
տենք, ցաւ ի սիրտ, որ երկու դարաւոր հարևանների դրացի...
կապը ծանր հարուածներ է ստացել, որ բացուել է մի սև դ...
գլուխ, սկիզբ է դրուել անվերջ, մտանակի եղբայրադաւ ոճիր...
որոնք թեր ևս կը շարունակւեն փոքրիկ չափերով նոյն խ...
դար ու օրինաւոր կարգեր հաստատւելուց յետոյ. մի դրու...
որի շատ թէ քիչ արմատական բուժման հոգսը կը պահանջէ...
պայման պօստուլատի պէս, ըստ կարելւոյն անջատել ե...
տարրերը, քչացնել նրանց շփման կէտերը, գէթ ոչ մի տեղ
թողնել հայկական թոյլ փոքրամասնութիւն և աշխատել
վայրերում կազմել միապաղաղ հայ ազգաբնակութիւն։

Հայ ժողովուրդը չէ բռնանում ոչ ոքի իրաւունքների վ...
նա լցւած է խոր ու անկեղծ բարեացակամութեամբ դէպի ը...
դրացի ժողովուրդները, բայց նա իրաւամբ ըմբոստանում...
պատմութեան սահմանած տարկանոնութիւնների դէմ, ...
շնորհիւ այսօր նա անկարող է հանդիսանում իր տարր...
կուլտուրական պէտքերը հոգալու իր երկրի մէջ, ստիպւա...
մտածել իր ֆիզիքական գոյութեան մասին, և ինքնապաշտ...

[illegible] կռիւների թեք ուղղութեամբ սահելով, հրոսակների [illegible] գործ ունենալով, ինքն էլ հետզհետէ գլորւում է [illegible]թեան գիրկը... Գէթ այժմ նա ուզում է մեղմել այդ տար-[illegible]թիւնների պատճառած չարիքները, ապրել փոքր ինչ [illegible]քը հանգիստ, ըստ կարելւոյն ամփոփւած իր ցեղագրական [illegible]հմանների մէջ։

—

[illegible]այն այդ բոլորը ապագայի գործ է. իսկ ինչ անել առ-[illegible]

«[illegible]ուել բռնապետական ռէժիմի դէմ, նւաճել ռամկավարա-[illegible] ազատութիւն, որը, վերջ կը տայ խուլիգանութեան ու ազ-[illegible] կռիւներին»,—թելադրում է մեզ սոցիալ-դէմօկրատական [illegible] ֆրազէօլոգիան։ Չրի, անմտած մի թելադրութիւն, որ [illegible] իսկ ամաչում ենք հերքել,—որ համարեա նոյնքան արժէք [illegible] մեզ զբաղեցնող խնդրի տեսակէտից, որքան միամիտների [illegible]լաւատեսների ծանօթ յորդորները՝ թափօրներ կազմել, թուրք-[illegible]կական կօնգրէսներ գումարել՝ հաշտութիւն իրագործելու [illegible]մար։

Հայը իր բոլոր ոյժերով, միացած վրացիների, միացած [illegible]ների, լեհերի, հրէաների հետ՝ կարող է ամբողջ տարիներ [illegible]ել բռնապետութեան դէմ և էլի չը ստանալ այն ցանկալի կար-[illegible], որոնք ի վերջոյ պէտք է խաղաղեցնեն մեր ալեծուփ եր-[illegible]։ Իսկ այդ տարիների ընթացքում ո՞վ պէտք է օգնէ մեր [illegible] ժողովրդին, որից խլում են ինքնապաշտպանութեան մի-[illegible]ները և ձեռք ու ոտը կապած, մատնում խուժանին։ Տարինե-[illegible] չէ՝ ամիսների ընթացքում, արիւնարբու վոհմակները գետնի [illegible] կը հաւասարեցնէին հայաբնակ վայրերը և Ռուսահայաստանը [illegible] վերածուէր Տաճկահայաստանից էլ աւելի ցնցող, էլ աւելի վիթ-[illegible]րի մի գերեզմանոցի...

Ի՞նչ անել ուրեմն...

Մենք համերաշխութեան ու միջազգայնութեան պարօլով [illegible]րապարակ եկել և համոզւած ենք, որ թուրք մասսաները, թէև [illegible]ղանց վատթար գործիք, բայց, վերջապէս գործիք են մի-[illegible] նզովեալ ռէժիմի ձեռքում, որը ուզում էր ազգերը բա-[illegible] յարատևել իր տիրապետութիւնը, բայց որը հետզհետէ [illegible]կւում է իր լռնացած ոճիրների ծանրութեան տակ...

Մենք ենք գարշելի վանդէականութեան առաջին զո
դարձել մենք ենք, որ անկեղծօրէն հաշտութեան յորդոր
կարդում, մենք ենք, որ երեկ խաղաղութիւնը այս կամ ա
բերում կնքելուց յետոյ՝ հոգում էինք նրա շիտակ ու
րագործումը, պատժելով նոյն իսկ մեր սեփական շարքեր
ւորներին, երբ նրանք այս կամ այն ձեւով կարգը խանգար
հանդիսանում։

Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ մեն-մենակ տարաւ իր
վրայ հայ ժողովրդի վտանգւած գոյութեան պաշտպանութ
որ իր եռանդուն շրջիկների ձեռքով կազմակերպել ու զինել
ժողովրդին և իր փորձւած զինւորական առաջնորդների ձեռ
վարել է այնքան բազմաթիւ ու դժւարին ճակատամարտներ
ապլինւած ու հովանաւորւած խուժանի դէմ,—Հ. Յ. Դաշնակ
թիւնը երբէք չի դիտել այդ կռիւը իբրև նպատակ և ամեն
գամ, յարմար առթիւ, երբ պայմանները հնարաւորութիւն տալ
նրան՝ նա մօտեցել է թուրք ժողովրդին, խօսել է նրա հետ
մերաշխութեան ու եղբայրութեան լեզւով, լուսաւորել է
իր իսկական նպատակների ու կոչման վերաբերմամբ։

Թող վկայ լինի այս մի հատիկ ուշագրաւ դէպքը, որ
է ունեցել Ղազախի գաւառում, արիւնահեղ կռիւներից յետ
միակ դէպքը, որ արձանագրւած է մամուլի մէջ *)։

ՍՊԻՏԱԿ ԴՐՕՇԱԿԻ ՇՈՒՐՋԸ

—

(Հայ գիւղացիների այցը թուրք գիւղացիներին)

«Մեզ պէտք չեն այլևս խաղաղարար կօմէդիաներ, բ
կրատիայի միջնորդութիւնն աւելորդ է երկու ժողովուրդների
հաշտութիւն կայացնելու համար. անհրաժեշտ է վերջապէս,
հայ և թուրք աշխատաւոր մասսաները՝ գիւղացիութիւնը և բա
ւորութիւնը, եղբայրութեան, համերաշխութեան ձեռք մեկնեն
րար անմիջապէս»։

Այս են ասել և ասում երկու ժողովուրդների իսկական
րեկամները։

Ահա այսպիսի համերաշխութեան մի գեղեցիկ օրինակ տւ
Լօռու հայ գիւղացիութիւնը անցեալ շաբաթ։

*) Տես «Ալիք» 1906 թ. № 75.

[illegible] բաղկացած գիւղացիների մի խումբ, պատգամա-[illegible]ւորական գիւղերից, ղեկավարութեամբ ընկերներ Թ.-ի և [illegible] իր ցանկալի միասին՝ դուրս գալով Դսեղ գիւղից, [illegible] Ղազախի և Լոռու սահմանների վրայ տարածուող [illegible] եկած ղազախեցի Թուրք գիւղացիներին: Այդ պատ-[illegible]ները յանձնարարուել էին իրանց ուղարկող հայ շինական-[illegible]ից, որ նրանք խօսեն սրտաբաց, առանց տատանում-[illegible]ների փափկանկատութեան:

[illegible] գիւղից առաւօտեան վաղ 60 հոգով, ամենքս էլ ձի-[illegible]աւոր ենք ընթանում դէպի Զատինդաղ սարը. առջևից դրօշակակիրը, նա կրում է օդի մէջ ծածանուող սպիտակ նշան հաշտութեան, եղբայրութեան: Հեռուից Թուրքերը [illegible] են մեզ, դիմաւորում են մի քանի Թուրք ձիաւորներ, [illegible] են մաղթում և հրաւիրում մեզ իրանց վրանները: [illegible] հարիւր Թուրք քոչւորներ կէս ժամւայ ընթացքում [illegible]ւում են մի ընդարձակ տարածութեան վրայ: Ամենքի երե-[illegible]ւթ է, ուրախութիւն՝ մեր այցի համար:

Հայ գիւղացիները բացատրում են Թուրք գիւղացիներին ի-միասին, նրանց հասկացնում են երկու դարևոր հարևան [illegible]ւրդների եղբայրական յարաբերութեան անհրաժեշտութիւ-[illegible]պարզում են, թէ որչափ մահաբեր, կործանիչ է այժմեան [illegible], որ ահա մէկ և կէս տարուց ի վեր քանդում, աւերում է [illegible]: Նրանք մերկացնում էին առանց տատանւելու ներկայ [illegible]ւան դրդիչներին, ցոյց էին տալիս, թէ պրովոկատոր կա-[illegible]ւթիւնը իր արիւնարբու, խաւար գործակալներով ո՛րպիսի [illegible]ին ծրագիրներ է ուզում առաջ տանել:

Եւ Թուրք գիւղացին լսում, հասկանում և համակրում է... [illegible], հրդեհի մատնուած երկիրը ամենքի առաջ է: Հազարաւոր [illegible], տնտեսական կուլտուրական կեանքի քայքայումը ամեն-[illegible]ապէն համոզել են, թէ որչափ անմիտ, կորստաբեր է ներ-[illegible]ւը: Թուրքերը խոստովանում են անկեղծաբար իրանց [illegible]ւած սխալները, խոստանում են այսուհետև ամուր փարել [illegible]շխութեան գաղափարին, տեղիք չը տալ ընդհարումների՝ [illegible] սարերում, և թէ Ղազախում՝ վերադարձից յետոյ:

Սպիտակ դրօշակը առաջ է ընթանում, և մենք ամենքս էլ [illegible]ևից: Մենք այցելում ենք բազմաթիւ օբաներ, ամեն տեղ խօ-[illegible] բացատրւում ենք Թուրքերի հետ: Մեր գլխաւոր այցելավայ-[illegible] էին Խան-Բուլաղ, Տօլբաթլի, Սարիբուլախ սարերը, ուր [illegible] եկել գլխաւորապէս ղազախեցի, սալահլւեցի և ղայմախ-[illegible] Թուրքերը: Դրանք մեծ մասով հասարակ աշխատաւոր գիւ-[illegible]ներ են. նրանց մէջ կան նաև բէգեր և աղալարներ. վերջին-[illegible] իրանց հեռու են պահում. սակայն դրանց մէջ կան նաև շի-[illegible]ղնիւ մարդիկ, որ բոլոր հոգով դէմ են եղել հայ-Թուր-

քական ընդհարումներին։ Դրանցից պէտք է յիշատակել
ազայի անունը, որին ճանաչում են Ղազախի հայերը.
ըմբռնել պրովոկատոր կառավարութեան դերը։ Շուշու և
դէպքերից յետոյ, ասում էին ղազախեցի Թուրքերը,
րութեան ագենտներն առանց քաշուելու անամօթաբար
և գրգռում մեզ, որ մենք էլ սկսենք Ղազախում կոտոր
ժողովուրդը ազէտ է, խաւար, շատ ենթակայ պրովոկ
դա մեր դժբախտութիւնն է»—ահա թէ ինչ էին խօսու
Թուրք գիւղացիութեան ներկայացուցիչները...

Թ... և Մ... ընկերները, որոնք առաջնորդում էին այդ
ղեցիկ ու օրինակելի միսսիային՝ ոչ այլ ոք են, բայց եթէ «
նակցութեան» խմբապետներ։

Եւ նոյնպիսի միսսիաներ, համերաշխութեան նոյն ծառայու
ներով կը կազմակերպուէին անշուշտ նաև ուրիշ վայրերում,
չը լինէր աղալարական ոճրագործ դասակարգի բռնաւոր կօնտ
Թուրք մասսաների վրայ։

Ուրիշ կերպ չէր կարող վարուել Դաշնակցութիւնը, ու
ընթացք չի կարող նա բռնել, եթէ ուզենայ հաւատարիմ մնալ
ծրագրին ու ընդհանուր ժողովներից գծուած տակտիկին։

Նա կը շարունակէ այսուհետև էլ երկու ժողովուրդների
մերաշխութեան պրօպագանդը. բայց եթէ Թուրք ժողովրդի մ
տարրերն էլ յամառեն իրանց հայադաւ ու հակայեղափոխակ
ընթացքի մէջ, եթէ Թուրք ամբոխը շարունակէ նախկին յանց
ւոր պատրաստակամութեամբ ենթարկուել Կրուշևանների ու
գերի ներշնչումներին, եթէ բախտի մի անիծեալ տնօրինութեա
վերսկսւի Թուրքական նախայարձակների արիւնոտ սերիան,—
դէպքում, այո, կռիւը իր բոլոր արհաւիրքներով պիտի շարունա
ւի, իբրև մի ֆատալ, ճակատագրական անհրաժեշտութիւն
մենք վերստին պիտի զարմացնենք քաղաքակիրթ աշխարհը ե
բայրասպանութեան անօրինակ տեսարաններով։

Դարձեալ մենք չենք, որ պիտի կրենք պատասխանատու
թիւնը... Անէծք սկսողին և անէծք շարունակողին։ Մենք պաշ
պանուողի դերում ենք եղել միշտ և միշտ էլ կը մնանք այդ դեր
մէջ։ Մենք ականջ չենք կախի այն մի կարգ անզուսպ դատ
խազների բարբաջանքներին, որոնք տեղի-անտեղի քարեր են շ
պրտում հայ ինքնապաշտպան կազմակերպութեան վրայ և որոն
գոհացում կը տային՝ միայն իսպառ համակերպելով, Քրիստո

…տոյի հրահանգին հետեւելով (непротивленіе злу зломъ) …ալէս հայ ժողովուրդը բախտի ալիքներին մատ-

…չ» հայ ժողովուրդը այլ եւս չի ուզում էշ-նահատակի ան-…ղերը։ Դարեր շարունակ խաչ ու աւետարանը կրծքներիս … համբերաշխութեան քարոզը հնչեցրինք—եւ կոտորուեցինք, …ւմ աղերսեցինք—եւ կոտորուեցինք… Շատ արդէն վայելե-…տատուղի հռչակը, ամբողջ տիեզերքը սասանեցրինք մեր …բաւութեամբ—հերիք է։ Երբէք յարձակողական ախորժակ-…ներ ունեցել, երբէք թալանի ու աւարի արշաւանքներ չենք …ացել։ Մեր հիմնական մտահոգութիւնն է եղել ամեն տեղ՝ …պանել մեր խեղճ ու հալածական ժողովրդին, վարժեցնել …ինքնապաշտպանութեան դպրոցի մէջ, ապահովել նրա խա-…ուլտուրական գոյութիւնը բռնաւորների հարուածների դէմ. … գիտեն այդ—թէ թշնամի եւ թէ բարեկամ։

…նէ՞ծք սկսողին եւ անէծք շարունակողին։ Մենք չենք, որ …ցինք սադայէլական Դաւը եւ տասնեակ տարիներով յետ մը-…ք մեր երկրի առաջադիմութեան անիւը։ Ի՞նչ էինք երա-… ինչ եղաւ…

…այց հայ մարտական կազմակերպութիւնը այժմ եւս ամեն …եան պատրաստ է սիրով վերադառնալ նախկին վիճակին։ …աշխութեան համոզուած պաշտպան՝ «Դաշնակցութիւնը» ան-…էս վար կը դնէ զէնքը եւ եղբայրաբար կը հաշտուի հակառա-… հետ, հէնց որ վերջինը նոյնպէս ցոյց կը տայ շիտակ ու …ծ խաղաղասիրական տրամադրութիւն։

…այը գարշում է ազգամիջեան կռուից եւ չը նայած բոլոր ար-…ւ սարսափներին, նա դարձեալ հաւատում է—այդտեղ է …նրա փոթորկոտ գոյութեան, նրա անսովոր դիմացկանու-… մեծ գաղտնիքը—նա հաւատում է, որ մի օր, վերջապէս, …ի եղբայրութեան գաղափարը կը յաղթանակէ իր բազմատանջ …իքում, կանցնի դարերի պղտոր հոսանքը, շուրջը կը լռեն …ւոր կրքերը, կը լռէ ատամների գազանային կրճտոցը, եւ նա …ծին, արօրին փարած, իր սեփական հանճարին ապաւի-…նդորր սրտով կը շարունակէ իր ստեղծագործող աշխա-…ը։

Դրացին էլ կը փոխուի... Հին, քարացած պաշտամու...
կանհետանան ժամանակի համայնաջինջ ալիքների մէջ...
գայի հոյակապ Արևը կը ճառագայթէ այն բոլոր հաստատու...
ների ու ղօզմանների փլատակների վրայ, որոնք այսօր ը...
թշնամի են քաղաքակրթութեան, և ժողովուրդները՝ Ռամ...
րութեան հովանիի տակ եղբայրացած՝ կը տօնեն միասին եր...
պանծալի դաշնակցութիւնը—Աշխատանքի, Ազատութեան և ...
ղաղութեան։

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես 5 վերջում տպւած է՝ գարերի հայկական բեռի տակ։ Պէ լինի գարերի հսկայական բեռի տակ։

Երես 7. 8-րդ տող. տպւած է՝ ծիգ էին Թափում յետ... Պէտք է լ ծիգ էին Թափում յետ մղելու

Նոյն երեսում, 19-րդ տող. տպւած է՝ ժողովրդական ծգնաժա ապրո՛ղ։ Պէտք է լինի. ժողովրդական ծգնաժամն ապրող։

Երես 10. 16-րդ տող. տպւած է՝ Թուրք ամբոխի վայրագնութե Պէտք է լինի. Թուրք ամբոխի գայրագնութեան։

Երես 19. 8-րդ տող (ցածից) պէտք է կարդալ այսպէս. մանաւ հայերի մէջ, ուր ծանծաղամիտ կօսմօպօլիտիզմը... և այլն։

Երես 22. 10-րդ տող. տպւած է՝ որի մէջ այդ տարրը... Պէտք լինի. որի մէջ հայ տարրը...

Երես 28. 16-րդ տող. տպւած է՝ ո՛չ մի ուրիշ պետութիւն չի ճան չում։ Պէտք է լինի. ոչ մի ուրիշ պաշտամունք չի ճանաչում։

Երես 31. 12-րդ տող. տպւած է՝ անծայր դիմադրութիւն։ Պէտք լինի՝ անծայր տխմարութիւն։

Երես 32. 2-րդ տող ցածից. տպւած է՝ և իբր մեր ընկեր Պէտք է լինի և երբ մեր ընկերը...


Երես 43. վերջին տող. տպւած է՝ մարտը նոյն մարտն է։ Պէտք լինի՝ մարդը նոյն մարդն է։


ԶԷՅԹՈՒՆՑԻՔ

ԵՒ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ

ՀԱՅՔ





Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1867

ԶԷՅԹՈՒՆՑԻՔ

ԵՒ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ

ՀԱՅՔ



Զէյթունցի . . . . . Դիւթական և անուշ ձայն մըն էր այս, հայոց ընդհանրութեան ականջին, յորմէ թլուատ հայն անգամ, իբր ելեքտրական զօրութենէ մ՚սթափած, կը հարկադրուէր մաքառիլ իր բնական ախտին դէմ և արտասանել վերջապէս այն անունը, զոր կոյր զկուրայն և յանզգոյշս սիրելու բնական պարտաւորութիւն մը կզգար: Այս ուժգին՝ բայց փաղանցիկ սէրն՝ ըստ ինքեան ուրիշ բան չէր՝ բայց եթէ անարդիւն ակնկալութեանց արգասիք:

Նոյն իսկ ձայնն է դարձեալ, որ այս օրերս կը հնչէ հայուն ականջին. բայց չէ թէ առաջնոյն անուշութեամբն, այլ իբրև ձայն անախորժ, որ ոչ միայն հակառակ ազդեցութիւն կը պատճառէ հայուն, այլև Հայաստանեայց աղէտալի դէպքերուն վրայ յաւելուածոյ մը նշմարանք ևս կուահել կուտայ անոր: Եւ արդարև, զգայուն հայը չը կրնար ուրիշ նըշանակութիւն մի տալ այսպիսի անակնկալ դէպքին.

Զեմք կրնար ըսել Թէ կրօնիւ տարբեր հայերն այս ազդեցուԹենէ զերծ մնացին, ոչ. Ամէն հայ (1), Թէ և տարբեր զգացմամբ, կրօնական շանԹաձիգ դրօշման ձայնէ մը յանկարծ սԹափելով՝ աչքերնին բացին Թէ չէ, տեսան այն դիւԹական անունը կրող զէյԹունցի իշխանքը, որ Վատիկանի երերուն գահին առջև ի ծունր խոնարհած՝ բարոյական ստըրկուԹեան առաջին պաշտօնը կը մատուցանէին:

Ներքին համոզման ծնունդը չէր այս. բայց զէյԹունցւոց խելքով՝ իրենց անձնական ազատուԹեան առաջին քայլն էր. և զուցէ ԶէյԹունի ժողովրդեան վրայ ի պաշտօնէ բռնանալու սկզբնաւորուԹեան հանդէսը կը համարուէր:

Սոյն միջոցին հայոց լուսաւորչական մասին վերաբերեալ խնդրոց ամենէն մեծն ու կարևորագոյնը, այսինքն Մայր ԱԹոռոյ Հայրապետական ընտրուԹիւնը, կատարելապէս լըմընցած էր, և Կ.Պօլսոյ ժողովուրդն իր նորընտիր Հայրապետին գալստեանը միայն կըսպասէր: Ուստի և կրնամք ըսել որ ընդհանրուԹեան աչքին երևցած խնդիրներուն ամենէն զուարԹաղէմն ալ այն էր. որուն վերաբերուԹիւն ունեցող խառնանիւԹ և անզատելի միացորդն ալ Մշի Արգոյ հեղինակին ու նորա Թիֆլիսցի Հ. Հ. ճշմարիտ մարդ անուն ԹղԹակցին ձգուած կը համարուէր, որ կրցածնուն չափ խնդիրն այլայլեն, և Հայոց գրականուԹեան նախատինք բերելու չափ՝ մտքի ազատուԹիւնը մրոտեն, պատուոյ դպչին, մարդ զրպարտեն ու մինչև դատաստանին օրը խօսին ու խօսին:

Սակայն անդին ուրիշ և բազմաԹիւ խնդիրներ դիզուած էին Պատրիարքարանի գլխին, և կարծես Թէ անտեսանելի՝

(1) ՄեծամասնուԹը Հավաքիչ չկարդացող կամ նորա խօսած ճշմարտուԹեանցն ուշ դնել չուզողներուն համար է մեր խօսքը:

քայց փորսւոր ձեռք մը՝ տարիներէն ի վեր զանոնք բռնած՝ տեղիս անդին և ըստ հաճոյից տատանելով՝ միշտ շփոթ՝ բայց և այնպէս նոյնադիր և անլուծանելի կացութեան մէջ պահել կուզէր զանոնք, և հետևաբար խնդիրներն այս վիճակին մէջ պահելու հնարքներն աւելի զօրութիւն ունէին անոնց վճռնե-րըն արգիլելու՝ քան թէ անզօր վարչութեան մը պաղատանքն անոնց որոշումներն ընդունել տալու:

Մեր ըսածներն հաստատելու համար բազմաթուաց մէջէն՝ ամենէն կարևորագոյները զատելով՝ կը նշանակենք այստեղ, ո՛չ թէ նոր բան մը ըսելու, այլև ընթերցողաց յիշողութիւնն արթնցնելու մտօք:

Եւ ահաւասիկ անոնց համառօտութիւնը.

Ա. Զարսանճախի խնդիրն, որ չորս տարիէն ի վեր չար ու չար մնացած. երևի թէ քարի ռանձախ երբէք եղած կամ ըլլալու միտք ալ չունի:

Բ. Աղթամարայ կաթողիկոսութեան խնդիրն. որ Նախորդ Կաթողիկոսին սպանուելէն հազար անգամ առաւել ինքզինքն սպաննել տուաւ միամտաբար. և որ դեռ բարոյապէս պիտի սպանուի՝ փառասէր (և եպիսկոպոսութենէ յառաջ կաթողի-կոսութեան խիստ փափաքող) Վարդապետի մը թելադրու-թեամբ, մինչև որ նա ինքն Խաչատուրին աթոռը բազմի:

Գ. Կիլիկիոյ կաթողիկոսութեան խնդիրն. որ նոյն իսկ Աղ-թամարայ կաթողիկոսութեան խնդրոյն հետևութիւնն է. և որ Աղթամարայ աթոռին ցանկացող նոյն Վարդապետին թելա-դրութեանը շնորհիւ՝ ջուրոյ պատիւն անգամ Նիկողայոսին տալու կը զլանայ, այն մասը, որ իր Եկեղեցւոյն դաւա-նութիւնը մէնէ բիւր անգամ աւելի լաւ ճանաչել կը կարծէ և պաշտպանել կուզէ:

Դ. Լրագիրներուն Խմբագրաց կողմանէ առ Վարչութիւն

ուղղուած խնդրագրոյն խնդիրը . որ ազդարարութեան մանաւանդ՝ քան թէ աղերսի նշանակութիւն կը պարունակէ . և որ աւելի սարսափ ու շփոթութիւն կը պատճառէ Պատրիարքարանին՝ քան անդորրութիւն:

Ե. Լուսաւորչեան անուն ընկերութեան խնդիրն. որ հայոց Եկեղեցին բարեկարգելու համար (1) նախնական դրութեան պիտի դիմէ եղեր, և հետևաբար իրեն ազգային Եկեղեցիէն դուրս չելնելու պայմանաւ (2) անկլիականաց կրօնակից պիտի համարուի եղեր : Այս խնդիրն ալ ըստ ինքեան շլակն կ'երևի մեզ, որ առաւել աղքատութենէ կամ պաշտպանութեան կարօտութենէ՝ քան բարեսէր սկզբունքէ ծագած կը համարիմք զայն. և եթէ կրօնամոլ սկզբունքալունի, հիմակուընէ կըսեմք, որ առաւելնախատինք՝ քան բարօրութիւն պիտի մատակարարէ՝ թէ Մայր կրօնին և թէ Ազգին :

Զ. Երևի թէ այսչափ մեղացս վրայ՝ վեցերորդ մի ևս էր պակաս , որ այս ալ քանի մ'օրէն ի վեր յերևան ելաւ . այն է , վերի մէկ անկիւնը սև ու վարը ճերմակ , երկայնաձև (չեմ գիտեր ինչ ինչ կղերական խնդիր պարունակող) ահագին

---

(1) Բարեկարգութիւն սիրողը պէտք է նախ ժողովուրդը բարեկարգէ, եւ ժողովուրդով եկեղեցականները, եւ այս երկուքով՝ Եկեղեցին բարեկարգեա կը գտնէ եւ ոչ թէ նոր բարեկարգութեան կարօտ : Բարեկարգութիւնը Եկեղեցիէն սկսիլն ու տանը դուռը տանիսին վրայէն բանալը՝ մի եւ նոյն նշանակութիւնն ունին :

(2) Այդպէս խոստացած են երեկուան Պապականք եւ այս աւուր Երիցականք . եւ հիմայ նոյնը կը կրկնեն վաղուան Եպիսկոպոսականք : Այդ բանին (այսինքն հայոց Եկեղեցիէն չզատուելու խոստմունքին) ոչ միայն չենք հաւատար , այլ եւ կը պնդենք՝ թէ խոստացողներուն պէս հաւատացողներն ալ չարաչար խաբուած են յայդմ մասին: Ուստի այս օրուընէ իմաց կուտանք այդ Ընկերութեան, եւ կըսենք, թէ այդ տեսակ չեմ զատուիր ըսելն ու ... [illegible] ըսելը՝ մի եւ նոյն նշանակութիւնը կը պարունակեն ....

Թուղթ մը, որ ամէն Թաղի մէջ ներկայանալու և քաղաքացի (սիթօայէն) եմ ըսողէն ստորագրուելու սահմանուած էր:

Եւ այլ սոցա նման ուրիշ խնդիրներ.

Այս վիճակին մէջ վերոյիշեալ զէյթունցի իշխանաց կրօնափոխութեան լուրն ալ յանկարծ տարածուեցաւ, որ եօթերորդ Թունաշանաւ՝ խնդրոց առաջին կարգն անցնելով՝ կարծես թէ հայերը շանթահարեց:

Ժողովուրդն այս հանգամանքէն դժգոհ և սաստիկ խռոված՝ թէ և չուզեց անտարբեր կենալ այս վերջնոյն, բայց և այնպէս, բուն իսկ արժանաւորութենէն աւելի ծանրութիւն մը չտալու համար խնդրոյն, իր ուժին հետ կշռել չուզեց, բայց և այնպէս, առաւել ևս վտանգաւոր համարեց զայն՝ քան որ էրն իսկապէս: Ուստի և սկսաւ այնպիսի մեկնութիւններ տալ ու վճիռներ կտրել, որ կրնամք ըսել թէ անկարելի կը Թուի մեզ համառօտիւ նկարագրել աստ:

Զէյթունցւոց այս կրօնափոխական խնդիրը, թէ և ըստ ինքեան կրօնական չէր, բայց մաս մը հայեր այս ալ կրօնականի կարգն անցնելով՝ վերոյիշեալ վեց խնդրոց հետ խառնեցին և սկսան այնչափ շփոթ և այնչափ խառն ձայներ հանել, որ Պատրիարքէն բռնէ մինչև ժողովականաց վերջին անդամը շուարեցան, և հազիւ հազ ինքզինքնին անձեռնհաս համարելով՝ ամէն խնդիր (ապագային չըսելու համար) վերնագոյն Իշխանութեան մը որոշման ձգեցին. և ժողովրդեան այս մասին աններդաշնակաւոր (cacophonie) ձայնէն և անկէց առաջ եկած զլխի խժխժուքէն պահ մը ազատեցան:

Անկողմնակալ անձ մը, կամ լաւ ևս ըսելով՝ անտարբեր աչք մը՝ ուր որ կատարելութիւն կամ պակասութիւն կը տեսնայ՝ դաստիարակութեան արգասիքն ալ միատեղ կը նշմարէ: Զենք ուզեր ԾԼԻ խաբեր համար ճշմարտութիւն մ'աքօղել, և

կըսենք բացարձակապէս՝ թէ հայերս մտքուամբ եւեթ Ֆրանսացի ենք, և ներդաշնակութիւն չունենալուս համար՝ կրնամք ըսել՝ թէ անոր մէջ ալ խակ ու պակասաւոր կը գտնուինք :

Մեր պակասութիւնները յիշելու թէև միտք մը չունինք, բայց անոնց ամենէն վնասակարն ալ չենք ուզեր սքօղել, զոր մեր ամէն տառապանաց դարաւոր աղբիւրը համարած ենք:

Ազգ մը, որ իշխանութիւն (autorité) կուզէ՝ միանգամայն իշխանութեան դէմ կը յարձակի, կը բողոքէ (1) և չարաչար կը նախատէ զայն. այն Ազգը, կըսենք, ստրկութենէ ուրիշ ապագայ չունի (2) : Որովհետև այսպիսի ընթացքով՝ ամէն անհատ՝ ամէն մէկ անհատին դէմ կը մաքառի և ամէն մէկ անհատ՝ ամէն մէկ անհատէն կը ճնշուի և կը տրտնջայ. մէկ խօսքով, ամէն անհատ՝ ամբողջ ազգին կամ ամենուն, և ամբողջ ազգը կամ ամենը ամէն անհատին դէմ փոխադարձաբար կը զինուին, և ասոր կըսեն խառնափնդորութիւն (chaos) կամ թոհ և բոհ վիճակ :

Այս դրութեամբ երբոր Ընդհանրական և Վեհափառ անուն կրող Հայրապետը կը տժգոհի Սինօդներէն, Կաթողիկոսներէն, Պատրիարքներէն և ընդհանուր ժողովրդէն: Երբոր Պատրիարքը կը տժգոհի Իշխաններէն, Ժողովներէն, Եպիսկոպոսներէն, Առաջնորդներէն Թաղականներէն և ժողովրդէն: Նոյնպէս

---

(1) Ծիլն Արարատեան, մեր դիտողութեանց դէմ գրած յօդուածին մէջ ընդհանուր ժողովոյն իշխանութիւնը կը պաշտպանէր. իսկ յետոյ նոյն իսկ իշխանութեան օրինաւոր քուէին (Կաթողիկոսական ընտրութեան) դէմ չարաչար եւ անիծիւք բողոքեց: Տես Ծլի 6° Թուոյն յաւելուածը (1866 Օգոստ. 10):

(2) Մեծամուսայր Հանդէսին մէջ այս նիւթիս վրայ բնական եւ իմաստալից յօդուած մի կայ, որ խիստ աղեկ կը բացատրէ՝ թէ ինչպէս՞ պէտք է իշխանութիւնները յարգել. եւ թէ այժմեան ատենի պահանջմանց համեմատ վարուելու համար ինչ՞ ընթացք պէտք է բռնել: Տես Մեծամուսայր Հանդէսի Թիւ 678.

և ժողովուրդը երբոր կը տժգոհի Հայրապետէն, Միաբաններէն, Պատրիարքներէն, Իշխաններէն, Թաղականներէն և այլն ; և այլն . վերջապէս իրեն ամէն մէկ անհատէն ; և տեղական կառավարութիւնն ալ ամբողջ Ազգէն . բնական է որ ամէն բան խանգարման մէջ իյնայ և Ազգն անիշխանութեան տակ մնալով՝ իր գլխուն ճարը տեսնելու դիտաւորութեամբ՝ իյնայ աշխարհիս հոսանքին մէջ, որ ուզած տեղը տանի զինքը։

Ազգի մը նիւթական և բարոյական անիշխանութեան ատեն՝ մէկ երկուքն ինքզինքնին կ'օծեն, այսօր Զէյթունցին կաթողիկ կըլլայ, հետևեալ օր՝ Հաճընցին, միւս օր՝ Ալպոթանցին; ուրիշ օր մը՝ Պիթլիսցին, Էրզինկեանցին, Պաղչէճիկցին և այլք։

Ուրիշ տեղացի մը երիցական կըլլայ և ուրիշ մը եպիսկոպոսական, բարեկարգական և այլայլական ։ Այս դրութեամբ՝ կրնայ ըլլալ ; որ քիչ ատենէն այս Ազգին մէջ գտնուին նաև անաստուածեանք, կիսաստուածեանք ; միաստուածեանք, քառաստուածեանք, բիւրաստուածեանք, անարատինեանք, անկրօն հաւատացեալք, և վերջապէս աշխարհիս և երևակայութեանց մէջ գտնուած ամէն տեսակ աղանդաւորք ու խառնակրօնականք, և կրնայ ըլլալ կըսենք, որ ատոնց ամէնն ալ իրենց կրօնքն ի պաշտօնէ դաւանին . . . . . Ասոնց բոլորն անշուշտ անիշխանութեան բարձի տակէն ելած՝ բնական հետևութիւններ են . և զարմանալու բաներ չեն ։

Ստուգիւ, եթէ տարօրինակ Ազգ մը կայ աշխարհիս վրայ, որ իր մասնաւոր յատկութեամբն ուրիշ Ազգաց հազիւ հազ կը նմանի, անիկայ մեք, Հայերս, պէտք է ըլլամք ։

Եւ ահաւասիկ ինչու համար .

Մեր Հայոցս համար իշխանութիւն չըկրնար ըլլալ, որովհետև իշխանը մենք ենք, և իմ կարծիքս այն է, որ եթէ Թագ մը առաջարկուի ազգին՝ ամէն հայ իր գլուխն անոր տակը

պիտի դնէ, և հետևաբար Հայաստանի Թագաւորներն առանց փոխարքայի պիտի մնան . . . . . Եւ որովհետև մեր Ազգային ամենէն Գերագոյն իշխանութիւնը Կաթողիկոսութիւնն է, զարմանալու չէ, երբոր ամէն հայ ինքզինքը կաթողիկոս համարի և նոյն պաշտօնին վերաբերեալ ամէն գործ ու գաղտնիք իմանալ ուզէ : Այս ըսել է ամէն ազգային իշխանութեանց վըրայ իշխան կանգնիլ և ամէն խնդրոց տիրել: Այս խնդիրը կթողումք առայժմ, և քանի մը խօսքէն յետոյ դարձեալ կը շարունակեմք:

Մտքերնիս ազնուապետութիւն (aristocratie) քարոզել չէ և չեմք ուզեր առանց բացատրութեան ձգել այս խնդիրը:

Աշխարհիս վրայի՝ թէ միապետական ըլլայ, թէ սահմանադրական, թէ հանրապետական և թէ կարմրական՝ ամենէն լուսաւորեալ, բարեկիրթ և ազնիւ ազգն այն է, որ իրեն իրաւունքը գիտէ ճանաչել, օրէնքը գիտէ պահել և անոնց վրայ հսկել. գիտէ, այսինքն և մէկ խօսքով, իշխանութիւնը (autorité) յարգել և անոր հնազանդիլ : Այս սկզբունքով ազգ մը ոչ կը բռնանայ և ոչ կըստրկանայ :

Օրէնքն ըստ ինքեան բան մը չեն, բայց երբոր դու կը շինես այն օրէնքը՝ դու ինքդ պէտք է հնազանդիս անոնց, ապա թէ ոչ՝ քու շինած օրէնքովդ դու զքեզ կը դատապարտես, որ քո թրով զքեզ սպանելէն չի տարբերիր :

Սպարտացին, որ հին աշխարհին ամենէն ազատ, ինքնիշխան և ամենէն զօրաւոր ժողովուրդն էր, ոչ միայն օրինաց հնազանդիլն իրեն սկզբունք ընդունած էր, այլ կարծես թէ իր զօրութեան սնունդն օրէնքէն կառնուր, և հլութիւնն ու օրինապահութիւնն այնչափ արմատացած էր այս ժողովրդեան մէջ, որ իր Թագաւորներն անգամ պարծանք կը համարէին ասել թէ՝ ի Սպարտա հզօր են Օրէնք քան զԹագաւորս : Եւ այս-

պէս՝ չէ թէ ժողովուրդը օրէնքին, այլ օրէնքը ժողովրդեան կը տիրէին: Սպարտացիք հնազանդիլ բայց հրամայելին մայրը կը համարէին. անոր համար, որ առաջինն առ երկրորդն կառաջնորդէ, հետևաբար հնազանդողն ու հրամայողն օրինաց շնորհքը և իրենց ազատութիւնը հաւասարապէս կը վայելէին: Այժմեայ ժողովրդոց մէջ՝ շատերը (չեմք կարծեր թէ հայերն ալ ասոնց կարգէն ըլլան) նոր սպարտացի կը համարուին, ուստի ալ հարկ չմնար ուրիշ օրինակներ բերելու:

Երբոր ժողովուրդ մը իր օրինաց կը հնազանդի՝ միանգամայն ինքզինքը կը պատուէ, իր իշխանութիւնն ու ազատութիւնը կը պաշտպանէ: Աշխարհիս վրայի ամենէն զօրաւոր իշխանն ալ գիտէ, որ ի շնորհս օրինաց կ՚իշխէ, և այն օրէնքն ու իշխանութեան զօրութիւնը ժողովրդեան արդար կամաց և անոր պաշտպանողական ուժին արգասիքն են: Շնորհիւն Աստուծոյ իշխողն անգամ այս ստորոգութեան տակ է, վասն զի անոր զօրութեան աղբիւրը ժողովուրդն է, որովհետև այն զօրութիւնն ալ ժողովրդէն ելած է (émané), քանի որ բազմաց ձայնն Աստուծոյ ձայնը կը համարուի: Այն ժողովուրդը՝ որ վիվա, զիրօ, հուռռա, կամ կեցցէ կը գոչէ իր Իշխանութեան, ակնածական համոզմամբ և անպատիր ձայնիւ, նշանակել կուզէ՝ թէ ինք իրեն օրինացը զօրութիւն մատակարարող աղբիւրն է. զօրութիւն մը՝ որ իշխանութիւն ձևացած, զինքը կը պաշտպանէ: Եւ այն, որ հակառակ ձայն հանել կուզէ, կը պահանջուի, որ իրմէ բղխելին աւելի անուշ և աւելի կենսատու լինի: Իսկ եթէ բղխածը լեղուցնելու կամ աղբիւրը բոլորովին ցամքեցնելու միտք կը մտմտայ. այնպիսւոյն համար ոչ միայն մարդկային սեղանի վրայ սնունդ, այլ երկրագնտիս վրայ գերեզմանն անգամ չկայ: Այս նիւթին վրայ այսչափ բաւ համարելով՝ կը դառնամք մեր խնդրոյն:

Վերն ըսինք թէ հայերն ինքզինքնին իշխան կամ կաթողի-կոս համարելով՝ ամէն խնդրոց տիրել կուզեն: Ասիկայ գէշ յատկութիւն մը չէր, վերոգրեալ բացատրութեանս նկատ-մամբ, եթէ հայերն ալ (Հին սպարտացւոց և Նոր սպարտացի համարուող ազգաց պէս) այն սկզբունքն ու այն առաքինու-թիւնն ունենային: Բայց ուր են հայք և ուր այլք:

Եւ ուր է այն իշխանութիւնը, պիտի հարցնէ մէկը մեզի:

Կը պատասխանենք.

Աշխարհիս սկիզբէն երկու իշխանութիւն կային և պիտի կենան մինչև ի կատարած աշխարհի: Այս իշխանութեանց մին կրօնական է և միւսը քաղաքական. այսինքն, մին բարո-յական և միւսը բնական:

Հայերը բնական իշխանութիւն չունին, և ունեցածնին մի-այն բարոյականն է, և եթէ բարոյականը բնականէն ազնիւ կը համարուի, հայոց ունեցածն ալ այդ է (1), որուն համար իր ազնուութեանը վայելուչ սէր, յարգանք, պատիւ, պատ-կառանք և օրինաւոր հնազանդութիւն կը պահանջուի: Ուստի մեք ալ մեր կողմանէ այս կը հարցնենք,

Եւ ուր է այդ ժողովուրդը:

Եթէ կան այնպիսի ներանձն հայեր, որ ինքզինքնին լը-ռութեան նուիրելով Ազգին վիճակին վրայ միանգամայն կը մտածեն ու կը խոկան, այնպիսեաց խօսք չունիմք. բայց շատերէն (իշխան և ժողովուրդ, փոխադարձաբար) անար-գանք, թշնամանք և նախատինք կը կրէ այս Բարոյական իշխա-

---

(1) Մեր նկատումը միայն եկեղեցական իշխանութեան համար չէ, այլ Կա. Թողիկոսականին ու Պատրիարքականին հետ՝ վարչականին համար ալ, որ մինչեւ Թաղականին կը հասնի. եւ որ ատոնց ամենքը՝ առաքինական եւ անձնանուիրական իշխանութիւններ կը համարիմք:

նութիւնն և անով Ազգին ամբողջութիւնն անիշխանութեան մէջ կը գտնուի: Մենք միայն սա կըսեմք, թէ երկու իշխանութեանց ազնուագոյնին յարգը չճանաչող ազգը՝ միւսին մէջ արդ ըլլալու տեղի չունի. և իր կրած ճակատագիրն ուրիշ բան չէ՛ բայց եթէ արժանաւոր հատուցումն իր օրինազանց ընթացիցը, և ասկէ կը հետևցնեմք թէ հայերն իրենց ճամբէն իրբէք շեղած չեն, որովհետև չեն ուզած ոչ գիտցածնին մոռնալ և ոչ չը գիտցածնին ուսանիլ:

Բայց ինչ ընթացք է այս. և ուր կը տանի զմեզ......

Տեսնենք Ծիլն Թիֆլիսցի թղթակիցը, թէ ինչ ճամբայ ցոյց կուտայ և ինչ տեսակ իշխանութիւն վարել կուզէ մեր վրայ: Մտիկ ըրէ, «Երբ սա գայ (Գէորգ նորընտիր Ս. Կաթողիկոսը) Էջմիածին եթէ Այվազովսկուն չի ձեռնադրել եպիսկոպոս և Սարգսին (Ջալալեան) առաջ չի քաշել . . . . . . էն ժամանակը սորա վրայ ժողովուրդի ունեցած վստահութիւնը կը վերանայ, ևայլն (1)»

Այս գրողն ինքն իրեն ճշմարիտ մարդ անունը կուտայ......

Բայց ինչ ըսել է այս. Միթէ Կաթողիկոսի լաւութիւնը կամ գէշութիւնը այդ պայմանէն կախումն ունի. կամ թէ այդ երկու անձինք կաթողիկոսական փորձաքար են, և կամ, աղէկ Կաթողիկոս մը այդ անձանց մին եպիսկոպոս ձեռնադրելով և միւսն առաջ քաշելով պիտի վաստակայ: Այդ ինչ ամենախեղճ տրամաբանութիւն է, և ինչ կակազոտ Դէմոսթենէսութիւն....

Այսպէս կը տրամաբանէ նաև Ծիլն. իր Զ. Է. Ը. և Ժ. Թիւերուն՝ մանաւանդ այս վերջնոյն մէջ: Բայց ինչ կրնաս ըսել, Ծիլն ու իր թղթակիցն այնպիսի հայեր են, որ աղօթա-

---

(1) Տես Ծիլն Արարայրի. էջ 525.

գիրքը կը բանան և անոր մէջ հայհոյութիւն կը կարդան, բայց և այնպէս ինքզինքնին իրապէս կաթողիկոս կը կարծեն. fեֆերնուն fեխեան չես եա :

Ինչ՞ կըսես, ընթերցող, այս պայմանաւ և այսպիսիներով՝ կրնաս Կաթողիկոս ըլլալ, կրնաս Պատրիարք, Երեսփոխան, Ժողովոց անդամ, Առաջնորդ և Թաղականն ըլլալ: Եւ այսպիսի անիշխանութեան, ու թոհ և բոհ վիճակի մէջ, կրնաս ժողովուրդ և ճշմարիտ Հայ ժողովուրդ ըլլալ . . . . Ըսենք թէ դու քեզի կարևորութիւն չես տար, և անոր համար՝ եղեր կամ չես եղեր, հոգդ չէ. բայց տեղական Կառավարութիւնդ ալ զքեզ բանի տեղ չդներ և զքեզ չպատուէր . . . ատոր ինչ կըսես, և կրնաս գոհ ըլլալ . . . Եւ դուն, ըսէ ինձի, լուող Հայ, Դիւն ալ ատոր վրայ գիտցածդ կրնաս գրել, կրնաս միտքիդ բացատրել ազատաբար, կրնաս այդ վիճակին դարմանը ցոյց տալ, կրնաս ըսել հայուն թէ լաւ է սահմանադրական ըլլալ՝ քան սահմանադրութիւն ունենալ: Ոչ՛, չեմ կրնար յիրաւի. Զեմ կրնար Հայ կոյրին՝ կարճատես, կամ հաւկուր անգամ ըսել, հայերէն լեզուաւ: Միտքի և համոզման ազատութիւնն օրօրի տեղ կառնու հայն, և արթուն կենալու համար՝ կը քնանայ . . . . Հայուն հետ խօսիլ. ինչ դժուար բան:

Այո, զէյթունցին այսօր կերթայ, ետևէն ուրիշները կերթան. վասն զի քո մէջդ կամ քոյ գետնիդ վրայ կոխելու տեղ չունին և քո սեղանդ զիրենք չի սնուցաներ: Կերթան, բայց անոնց գացած տեղը մօտ է. վասն զի այն ալ մեր տանը թէև օդարգել՝ բայց պայծառ մէկ սրահն է(1). իսկ դու որ վաղը պիտի պար-

(1) Հիմայ այս զէյթունցիք կաթոլիկ լինելով՝ դարձեալ Հայ մնացին՞ թէ Հայութենէ դուրս համարուելով Սինէացի դարձան: Այս խնդրոյն լուծումը [illegible]-գոյ հեղինակին կը յանձնենք, որ զմեզ լուսաւորէ յայսմ մասին:

տաւորիս, ուր, և որ կողմ պիտի երթաս… Չեմ գիտեր…

Քանի որ խնդիրն այս նիւթերուն վրայ է, մենք ևս անիշխանութեան ազդեցութեանը տակ պիտի իյնանք, և հետևաբար՝ պիտի պարտաւորիմք ամենէն տրտնջալ և զամենքը դըժգոհ ընել: Եւ որովհետև առարկանիս զէյթունցւոց խնդիրնէ, փոքր ինչ մաղենք զայն ու տեսնենք թէ ինչ ինչ յերևան կ՚ելնէ:

Ենթադրենք թէ զէյթունցւոց վրայ տեղեկութիւն չունիմք և այնպէս համարենք թէ չեմք գիտեր, ինչու զարկին, ինչու զարնուեցան, և յետոյ իշխանաց երկուքն ինչու Պօլիս եկան, վերադարձան իրենց երկիրն ու ապա չորսը միատեղ Պօլիս հասան, բանտին մէջ հիւանդացան, անկէ ելան Պատրիարքարան դարձան ու հոն մնացին ու մնացին: Ինչ՞ էր սոցա խնդիրը, և ինչու համար յուսահատեցան այս մարդիկն ու կրօնափոխութեան ապաւինեցան: Ժողովրդեան քիչ խօսող մասն այս կը հարցնէ, և ոչ ոք չկրնար տեղեկութիւն տալ անոր: Բայց երևի թէ Պատրիարքարանն ալ Ազիզ փաշայի առ Բ. Դուռն հաղորդածէն աւելի տեղեկութիւն չունի այդ մարդոց գործերուն վրայ, և այս է զարմանալին:

Մեր բուն նպատակը, որ իշխանութիւնը պաշտպանելով՝ անիշխանութիւնը դատապարտել է, չենք կրնար այս Ազգային (ինչպէս վերն ալ բացատրած ենք) լոկ բարոյական Իշխանութիւնը զոհել ոչ կառավարուող և ոչ կառավարող մասին: Այսինքն, ինչպէս Ժողովրդեան առ Վարչութիւն՝ նոյնպէս Վարչութեան առ Ժողովուրդն ունեցած պարտազանցութիւնները՝ ոչ միայն ապօրինաւոր կը համարիմք, այլ և կը դատապարտեմք զանոնք փոխադարձաբար, իբրև զսկզբնապատճառս անիշխանութեան:

Այս սկզբանց վրայ յենլով՝ չեմք կրնար Վարչութեան անհոգութիւնը, կամ պակասութիւնը և կամ անգիտութիւնը չը

դատապարտել յայտնի մասին ։ Եւ ասոնց վրայօք բացատրութիւնները կուտամք, թէ ինչու համար .

Արհեստներու և գիտութիւններու մէջ՝ մարդոց ունեցած տեղեկութիւնն երեք ստորոգութեան կը բաժնուի ։ Առաջինն է (որ և իցէ արհեստի և գիտութեան համար կըսեմք) գիտնալ . Երկրորդը՝ պակասաւոր գիտնալ . Երրորդը՝ չգիտնալ ։ Արհեստ մը կամ գիտութիւն մը լաւ գիտցող և ի գործ չդնողին՝ Անհոգ անունը կուտամք ու կանչնիմք ։ Բայց այն, որ չկրնար գոհացնել իրեն հետ ուղղակի յարաբերութիւն ունեցող անձինքն իր գործով, այն տեսակ արհեստաւորին կամ գիտնականին Պակասաւոր անունը կուտամք ։ Իսկ այս ինչ արհեստին կամ գիտութեան տեղեկութիւն չունեցող անձ մը, երբոր երևան կելնէ ու չի գիտցած բանին մէջ կը մտնէ - այնպիսի մարդը, կըսենք, այն անձին կը նմանի, որ կերթայ առաջին լսած գործարանին մէջ մտնելով՝ իր չտեսած և չանոնց վրայօք բան մը չը լսած նիւթերուն կամ թէ մեքենաներուն վրայ ձեռք կը դնէ, և խելքին փչած կերպովը զանոնք վարելու համար՝ ամէն բան կը կոտրէ՝ կը թափէ և վերջապէս գործարանը տակն ու վրայ կընէ . այնպիսւոյն այլ Անգէտ անունը կուտամք ։

Անշուշտ ամէն բան, կատարելութիւնն այլ իր աստիճանն ու [illegible] ունի . ասոր և Վարչութեան [illegible] այս [illegible] կը [illegible] ։ Անգէտ (incompétent) մէկը [illegible] [illegible] Վարչութեան մէջ [illegible] [illegible] ու [illegible] [illegible] [illegible] [illegible] . [illegible] թէ [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Վարչութիւնն այլ [illegible] [illegible] ։

[illegible] [illegible] [illegible] մէջ [illegible] [illegible] է . [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] թէ [illegible]

Թեան անդամները որ ստորոգութեան կարգը կը գտնուին կառավարական արհեստին մէջ :

Եթէ ըսենք՝ թէ զէյթունցւոց հին յանցանաց համար չորս իշխաններն այս տեղ բերուեցան, ատով Կառավարութիւնը զրպարտած կը համարուիմք . որ մեք, մեր բաժնին համար, ամենևին չեմք կրնար ընդունիլ : Եւ որովհետև ատոր քննութիւնը Կառավարութիւնն ըրաւ այն ատենին, և տեսաւ որ զէյթունցիները գրգռող եղելութիւնքն առաւել պատճառներ տուած էին երկկողմնակի կոտորածին՝ քան զէյթունցիք եղելութեանց, ամենայն արդարութեամբ խնդիրը լուծեց . և միմիայն կոտորածի պատճառներն երկկողմնակի յանցանք համարելով՝ պատիժներն ու շնորհքներն անոնց չը զլացաւ :

Կառավարութիւնն ասով ալ չգոհացաւ, այլ ժողովուրդն առաւել ևս խնայելու և անոնց խնդիրքն աւելի մօտէն քննելու դիտաւորութեամբ, երեք պատուաւոր անձինք (ինչպէս որ ամենքը գիտեն) ուղարկեց Կիլիկիոյ կողմերն, իբրև քննիչ(1), որ այսպիսի խնդիրները լաւ քննելու կարողութիւն ունեցող անձինք էին : Սոքա վերադարձան շատոնց ի վեր, և յայտնի է որ այդ հին խնդիրն ալ լիովին կատարուած կը սեպուի: Ուստի ասկէ ևս կրնամք մակաբերել՝ թէ զէյթունցիք հին խնդրոյն համար բանտարգուած չեն. և մեք ալ ասկէ աւելին ոչ կրնամք գիտնալ և ոչ կրնամք խօսիլ: Իսկ եթէ մեր կարծածին հակառակն ըլնէ խնդիրն, այն ատեն, ատի Դրանը գիտնալիք բանն է, ըսելով կանցնիմք . քանզի ատոր ոչ մեք կրնամք խառնուիլ և ոչ յայդմ մասի անձեռնհաս Վարչութիւնը :

---

(1) Սոցա մին Տաճիկ, իսկ երկուքն Հայազգի էին՝ եւ այս երկոցունց մին՝ Սարգիս Էֆէնտի Աղապէկեան՝ Էջմիածնական Հայոց, եւ միւսն՝ Տօքթէօռ Տավուտ Էֆէնտին՝ Հռոմէական Հայոց կողմանէ ղրկուած էին։

Բայց համարելով միշտ՝ թէ հին խնդիրը շատոնց լուծուած է, կ՚ենթադրենք որ զէյթունցւոց նոր խնդրոյն մէջ՝ Ազգային Վարչութիւնն ալ իրեն վերաբերեալներն ունի, և կրնայ հարկ եղած առեննին միջնորդ կանգնիլ Դրան ու զէյթունցւոց մէջ։ Ինչ՞ ըրաւ Վարչութիւնը, երբոր զէյթունցիք իրենց երկրէն, իբրև բռնաւոր և ժողովուրդը կեղեքող անձինք (1), ի Կ. Պոլիս բերուեցան, և իրենց օրինաւոր պատիժը կրելու համար՝ մահապարտ անձանց գրեթէ քթերուն տակը բանտարգուեցան. և ի վերջոյ՝ երբոր բանտէն դուրս ելան՝ ու ժամանակէն ի վեր կըսպասէին. Ինչ ճամբայ, կամ ինչ միջոց բռնեց Վարչութիւնն այս փափուկ խնդիրը մաղելու համար։

Ջենք ըսեր թէ Կառավարութեան օրինաւոր պատիժն արգիլել ուզէ Վարչութիւնը, քաւ լիցի. բայց երբոր բանտարգեալներն՝ իրենց յանցանքը չգիտնալ ձևացնելով՝ կը բողոքեն ու դատաստան կը խնդրեն, այն ատեն խնդիրը Վարչութեան վերաբերութիւն կունենայ. և կը պարտաւորի (Կառավարութեան սկզբանցն համեմատ) քննել զայն, գոնէ իմանալու համար, թէ Ազգային կամ Կրօնական խնդիր մը կա՞յ անոր մէջ։ Եւ որովհետև, նոյն իսկ ժամանակին, մէկն ալ ելած, ինք իր գլխուն կամ տեղւոյն ժողովրդեան Թախանձանօք, Կիլիկիոյ կաթողիկոս օծուած էր, և այս խնդիրն ալ լոկ կրօնական ըլլալուն ու կուզէմ չէմ ուզեր բառղներ գտնուելնուն համար՝

(1) Լսած ենք, թէ Զէյթունի բնակիչք՝ այս ամբաստանութիւնը հաստատեր են, իրենց առ Բ. Դուռն ուղղած մահզարագրովը բազմաթիւ ստորագրութեամբ։ Նոյնպիսի մահզարագիր մը ուղղուած է կ՚ըսեն՝ առ Պատրիարքարան, նոյն իսկ ստորագրութիւններով. բայց Բ. Դրան եկածին հակառակը։ Հայոց մահզարները միշտ աստնկ են, եւ երեւի թէ մշտնջենաւոր մօտա է Հայոց մէջ։ Զէյթունցի իշխանաց (առ Մէծնուայր Հավասիս) գրած նամակներն ալ այս մօտայէն էին, այսինքն, սատան—հրեշտակ, Վարդան—Վասակ, կամ սեւ—ճերմակ եմք, ըսելով՝ քանիցս անգամ գրեցին։

Վարչութեան քննութեանը կը կարօտէր, յայտնի է որ այս երկու խնդրոց համար՝ թէլէկրաֆէն աւելի կարճ ճամբան՝ Կի-լիկիոյ կողմը քահանայ կամ աշխարհական քննիչներ հանելն էր: Բայց ըսենք թէ դրամի կամ մարդու պակասութիւնքն արգելք եղան այդ միջոցին. իսկ այստեղ Աղապէկեան Սար-գիս Էֆէնտին կար, որ՝ թէ՛ Կառավարութեան և թէ Ազգին կողմանէ՝ մասնաւորապէս քննիչ գացած էր այն կողմերը. և կ'երևակայեմք որ Պատրիարքարանէն խիստ աւելի և մանրա-մասն տեղեկութիւն ունէր և կրնար ունենալ, թէ՛ այդ երկրի բնակչաց կացութեանը, թէ՛ անոնց անցեալ և ներկայ խնդրոց աղբիւրներուն և թէ Գաւառի փաշային ու իշխանաց մէջ ծագած վէճի պատճառներուն վրայ:

Սարգիս Էֆէնտին, որ իրեն Երեսփոխանութեամբը ծա-նօթ էր Վարչութեան, կարծեմք թէ խնդրոց վրայօք իրեն ու-նեցած գիտութեամբն ալ խիստ կարևոր անձ մըն էր, մանա-ւանդ անոր համար՝ որ Վարչութեան երեք ամիս մտիկ ըրած և չը հասկցածը՝ մէկ աւուր մէջ հասկըցնելու բնական կարո-ղութիւն ունէր: Կանչեց այդ անձը, և հարցուց. դարման կամ լոյս փնտռեց Սարգիս Էֆէնտիէն, և կամ անոր մէկը ղրկեց բան մը հարցընելու, գոնէ ժողովրդեան լեզուէն կամ բամբա-սանքէն ազատելու համար... Չեմք գիտեր. բայց և այնպէս, չեմք ալ կարծեր. վասն զի եթէ Վարչութիւնն Սարգիս Էֆէն-տիյին քիթ փշրել ուզեր, անշուշտ խնդիրներն ուրիշ ձև կառ-նուին, հետևաբար՝ Կառավարութիւնն ալ լաւագոյն բացատ-րութիւններ մտիկ ընելով՝ խնդրոյն կը թափանցէր և ըստ այնմ կը վճռէր զայն, և այս կրօնափոխական գայթակղութիւնը կ'ար-գիլուէր:

Եթէ ստուգիւ կառավարելն ալ արհեստ մըն է, հաւատալու է, որ Վարչութեան անդամներն, երբոր այս խնդրոյն մէջ

այսպէս կը վարուին, ուրիշ գործեր քննելու ալ հարկ չըմնար։ Ուստի, կամ անհոգութեամբ կամ պակասաւորութեամբ և կամ անգիտութեամբ ինքզինքնին կը դատապարտեն. և ասով՝ անիշխանականութեան սկզբնապատճառք կը համարուին, իրենց պաշտօնը նոյն իսկ ընդունած օրերնուն ի վեր. և այս ստորոգութեան կ'ենթարկուի նաև զիրենք ընտրող մասը։ Այս երեք ստորոգութենէ խօյս տալն՝ անհնար կերևի մեզ, և կարծիքնիս այն է, թէ այսպիսի անիշխան դրութեան մէջ, ընտրողք և ընտրեալք, ոչ միայն Ազգ, այլ և տասն ոչխար անգամ հովուելու կարողութիւն չեն կրնար ունենալ։

Իսկ թէ մինչև որ աստիճան չարաշչուկ և քօթալից հետևութիւններ կը պարունակէ այս դժնդակ և անիշխանական կացութիւնն իր մէջ, հայոց Լուսաւորչական մասի ապագային համար, ընթերցողը կրնայ գուշակել։

Մեր իմացածին նայելով՝ զէյթունցւոց խնդիրներու մէկ քանին գանձին, և մէկ քանին քաղաքականին կըվերաբերին։

Եւ ահաւասիկ անոնց ցանկը.

Ա. Գեսկէի ասքերիյէ անուն (զինուորականութեան փոխարինութիւն) տուրքի խնդիրն. որմէ գանձը տարեկան կը պահանջէ եղեր, 100,000 դուրուշ.

Բ. Աղնամ անուն (իրենց այծերուն) տրոց խնդիրն. նոյնպէս տարեկանին համար կը պահանջուի եղեր, 50,000 ղրշ.

Գ. Տէրունական տուրքի խնդիրն. որ շատոնց ի վեր չեն վճարած եղեր. տարեկանը 25,000 ղրշ.

Դ. Զէյթունցի ժողովրդեան տեղափոխութեան խնդիրն. որ Կառավարութիւնը գաղթելնին կուզէ եղեր.

Ե. Զորս իշխանի գերդաստանաց վերադարձի խնդիրն. որք այժմ ի Մարաշ կը գտնուին եղեր.

Զ. Զէյթունի մէջ հայ միւտիւրի (քաղաքապետի) խնդիրն, որ զէյթունցիք կառավարութենէ կը խնդրեն եղեր.

Է. Վերջապէս այս, (երբեմն Վարդան և երբեմն Վասակ անուն առնող) իշխանաց դէպ ի Զէյթուն վերադառնալու խնդիրն.

Ինչպէս կը տեսնուի, ասոնց և ոչ մէկը կրօնական երևոյթ ունի. հետևաբար Պատրիարքի մը կրօնական պաշտօնին հետ ամենևին յարաբերութիւն չունին: Սակայն, իբր ազգայնոց խնդիրք, միջնորդութեան մը կը կարօտին, Վասնորոյ, (քանի որ մեր բարոյական Իշխանութիւնն իր բնական երկու (1) ճիւղերը չէ կրցած իրօք ունենալ, այս ազգային միջնորդութեան պաշտօնն ալ կը մնայ դարձեալ՝ Պատրիարքի կամ Պատրիարքաց: Եւ որովհետև այս ներկայ դրութիւնը համազգային Պատրիարքարանաց ալ իրաւունք կը մատակարարէ. միջնորդութիւնն ալ անշուշտ ուժւորին ձեռքը կանցնի, որ իր կրօնական կորկոտն աղալու համար՝ ուզածին չափ կը միջնորդէ: Զէյթունցին ալ սակարկութիւնը լրմնցնելէն յետոյ՝ իր կրօնական չորս առագաստը կը բանայ քաղաքական հովին դէմ, ու հողմաղորիքի պէս՝ կը դառնայ հա կը դառնայ, իր ցորենը աղալու համար:

Ուժւորը միշտ իրաւունք ունի. բայց յանուն կրօնի լուծուելու խնդիր մը, երբոր անորոշ վիճակի մէջ կը գտնուի, դիմացինին ալ իրաւունք կուտայ այս խորհրդածութիւններն ընելու. Թէ՛ ինչպէս կըլլայ, որ (Բ. Դրան առջև) էջմիածնա-

---

(1) Իշխանութեան այս երկու ճիւղերը բացատրած ենք մեր Խնդիր Միութեան Հայոց տետրակին մէջ. (Տպեալ ի Փարիզ 1861.)

կանութեան մէջ չընդունուած խնդիր մը՝ Հռոմէականութեան մէջ ընդունուի: Այդպիսի դէպք մը Էջմիածնայ Կաթողիկոսութեան պատիւ չըբերեր ... Բայց մեք չենք կրնար հաւատալ այդպիսւոյն, որովհետեւ այն զօրութիւնը որ Հռոմի մէջ Հրէութիւնը կը պաշտպանէ՝ յանուն մարդկութեան, չը կրնար Թուրքիոյ մէջ Լուսաւորչականութիւնը արհամարհել՝ յանուն Կաթոլիկութեան. հետեւաբար անհնար է, որ Հռոմէական մը կարենայ Բ. Դրան իրաւացի եւ արդար պահանջմունքը չճանաչել. որովհետեւ՝ եթէ նա Էջմիածնականութեան մէջ տրուելիք պարտքը՝ յանուն կրօնի մերժել ուզէ եւ յաջողի, անիրաւութիւն ըրած կըլլայ թէ Գանձին եւ թէ Բ. Դրան դէմ: Եւ եթէ Բ. Դուռը՝ յանուն Հռոմէականութեան միայն շնորհէ այդ օրինաւոր պահանջմունքը՝ ոչ միայն Լուսաւորչականութիւնը չը պատուած՝ այլ ահագին տարբերութիւն մը ճանաչած կըլլայ արեւելեան եւ արեւմտեան կրօնից մէջ. որ մեր բաժնին համար ամենեւին այդպիսի ճանաչման նշոյլ մ՚անգամ չենք կրնար նշմարել կամ նշմարել տալ Բ. Դրան վրայ: Իսկ եթէ ընդհակառակն, զէյթունցիք յանձն կ՚առնուն Բ. Դրան պահանջմունքը կատարելու Հռոմէականութեան մէջ, ինչ որ Լուսաւորչականութեան մէջ կը մերժէին. այդ ըսել կըլլայ, որ անիրաւութիւն ընելու համար միայն՝ կենալ կուզեն եղեր անոր մէջ: Ուրեմն բարի երթան եւ հազար բարով. Հայերն այդպիսեաց իրենց մէջէն ելնելը բարիք կը համարին:

Բայց ով կրնայ հաստատել, եւ ով կը հաւատայ, որ Բ. Դուռն այսպիսի դէպքերու վրայ չըտժգոհիր եւ անոր զզուանք անգամ չեն պատճառեր ասոնք՝ եւ ասոնց նման եղելութիւնք: Եւ ով կրնայ հաստատել նաեւ՝ թէ այս դրութիւնը Հայոց կառավարող եւ կառավարուող մասերուն պարտազանցութեանէն

ու նոցա անգիտութենէն առաջ եկած անիշխանականութեան պտուղը չէ։

Տես, անդին մնացած անհամար խնդիրները, որ հազար զէյթունցի կ՚արժեն, ինչպէս երեսի վրայ մնացած են, և որչափ իրաւունք ունին թէ Բ. Դուռն ու թէ Պատրիարքն ըսելու, թէ որ կուսակցութեան հաճոյիցը յարմար վճիռ տալու է. քանի որ դուք, մէկ բանին համար սև՝ միանգամայն ճերմակ է կըսէք։ Եւ յիրաւի. ահաւասիկ Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց խնդիրներն, որ անիշխանութեան տակը կը տատանին. և հակառակ կուսակցութիւններն օր քան օրէ կը զօրանան. ով կրնայ ըսել՝ թէ պատնց մէկ կողմը կրօնափոխութեան չի պիտի դիմէ։

Անդին մաս մը անձինք՝ ազգային կացութեան լաւագոյն վիճակ մը բնտռելու համար՝ շուարած մնացեր՝ ինչ ընելնին չեն գիտեր, և ասոր անոր դռներն ընկած՝ եկեղեցական բարեկարգութիւն անուանով բան մը կը մուրան. կարծելով թէ այն է իրենց փրկութեան ճամբան. և այս անուանով բնտռածնին ուրիշ բան չէ, բայց եթէ կարեկցութիւն։ Եւ արդարև, հայոց Լուսաւորչական մասին պէս՝ ինք իր գլխուն ձգուած՝ ազգ մը չկայ Տաճկաստանի մէջ. ուր կրօնակից պաշտպանութիւնն ազգայնութենէ աւելի կենդանութիւն ունի։ Ուրիշները՝ գաւառներուն մէջ բանտերու կը մատնուին, անգութ աղքատութեան պատճառաւ, և իրենց կրօնքը տրոց փոքրիկ գումարին հետ փոխելով (1) կռնակնին Էջմիածնայ և երեսնին Հռովմայ

---

(1) Պահճէճիկէն ընդունած մէկ նամակնիս, այս վիճակին վրայ տխուր նկարագրութիւն մը ընելով՝ կը զանգատի այն փարևռանէրէն, որ սակարկութեամբ (այսինքն, ընծանիք ունեցողը միայն եւ ո՛չ ուրիշը), կաթոլիկ

Վերն ըսինք թէ հայերն ինքզինքնին իշխան կամ կաթողիկոս համարելով՝ ամէն խնդրոց տիրել կուզեն։ Ասիկայ գէշ յատկութիւն մը չէր, վերոգրեալ բացատրութեանս նկատմամբ, եթէ հայերն ալ (հին սպարտացւոց և նոր սպարտացի համարուող ազգաց պէս) այն սկզբունքն ու այն առաքինութիւնն ունենային։ Բայց ուր են հայք և ուր այլք։

Եւ ուր է այն իշխանութիւնը, պիտի հարցնէ մէկը մեզի։

Կը պատասխանենք.

Աշխարհիս սկիզբէն երկու իշխանութիւն կային և պիտի կենան մինչև ի կատարած աշխարհի։ Այս իշխանութեանց մին կրօնական է և միւսը քաղաքական, այսինքն, մին բարոյական և միւսը բնական։

Հայերը բնական իշխանութիւն չունին, և ունեցածնին միայն բարոյականն է, և եթէ բարոյականը բնականէն ազնիւ կը համարուի, հայոց ունեցածն ալ այդ է (1), որուն համար իր ազնուութեանը վայելուչ սէր, յարգանք, պատիւ, պատկառանք և օրինաւոր հնազանդութիւն կը պահանջուի։ Ուստի մենք ալ մեր կողմանէ այս կը հարցնենք,

Եւ ուր է այդ ժողովուրդը։

Եթէ կան այնպիսի ներանձն հայեր, որ ինքզինքնին լրութեան նուիրելով Ազգին վիճակին վրայ միանգամայն կը մտածեն ու կը խոկան, այնպիսեաց խօսք չունիմք. բայց շատերէն (իշխան և ժողովուրդ, փոխադարձաբար) անհարզանք, թշնամանք և նախատինք կը կրէ այս բարոյական իշխա-

(1) Մեր նկատումը միայն եկեղեցական իշխանութեան համար չէ, այլ Կա. Թողիկոսականին ու Պատրիարքականին հետ՝ վարչականին համար ալ, որ մինչեւ Թաղականին կը հասնի. եւ որ ասոնց ամենքը՝ առաքինական եւ անձնանուիրական իշխանութիւններ կը համարիմք։

նութիւնն և անով Ազգին ամբողջութիւնն անիշխանութեան մէջ կը գտնուի: Մենք միայն սա կըսեմք, թէ երկու իշխանութեանց ազնուագոյնին յարգը չճանաչող ազգը՝ միւսին մէջ ալ բան ընելու տեղի չունի. և իր կրած ճակատագիրն ուրիշ բան չէ՝ բայց եթէ արժանաւոր հատուցումն իր օրինազանց ընթացիցը, և ասկէ կը հետևցնեմք թէ հայերն իրենց ճամբէն իրբէք ելած չեն, որովհետև չեն ուզած ոչ գիտցածնին մոռանալ և ոչ չը գիտցածնին ուսանիլ:

Բայց ինչ ընթացք է այս. և ուր կը տանի զմեզ......

Տեսնենք Մշակ Թիֆլիսցի Թղթակիցը, թէ ինչ ճամբայ ցոյց կուտայ և ինչ տեսակ իշխանութիւն վարել կուզէ մեր վրայ: Մտիկ ըրէ, «Երբ սա գայ (Գէորգ նորընտիր Ս. Կաթողիկոսը) էջմիածին եթէ Այվազովսկուն չի ձեռնադրել եպիսկոպոս և Սարգսին (Ջալալեան) առաջ չի քաշել ...... էն ժամանակը սորա վրայ ժողովուրդի ունեցած կարծիքը կը վերջանայ, և այլն (1) »

Այս գրողն ինքն իրեն ճշմարիտ մարդ անունը կուտայ......
Բայց ինչ ըսել է այս. Միթէ Կաթողիկոսի լաւութիւնը կամ գէշութիւնը այդ պայմանէն կախումն ունի. կամ թէ այդ երկու անձինք կաթողիկոսական փորձաքարը են, և կամ, աղէկ Կաթողիկոս մը այդ անձանց մին եպիսկոպոս ձեռնադրելով և միւսն առաջ քաշելով պիտի վաստանայ: Այդ ինչ ամենախեղճ տրամաբանութիւն է, և ինչ կակազոտ Դեմոսթենէսութիւն.... Այսպէս կը տրամաբանէ նաև Մշակ. իր Զ. Է. Ը. և Ժ. թիւերուն՝ մանաւանդ այս վերջնոյն մէջ: Բայց ինչ կրնաս ըսել, Մշակ ու իր թղթակիցն այնպիսի հայեր են, որ աղօթա-

---

(1) Տես Մշակ Աւարայրի. էջ 525.

գիրքը կը բանան և անոր մէջ հայհոյութիւն կը կարդան, բայց և այնպէս ինքզինքնին իրապէս կաթողիկոս կը կարծեն. fեփերնուն fեխեան չեն եա :

Ինչ՞ կըսես, ընթերցող, այս պայմանաւ և այսպիսիներով՝ կրնաս Կաթողիկոս ըլլալ, կրնաս Պատրիարք, Երեսփոխան, Ժողովոց անդամ, Առաջնորդ և Թաղական ըլլալ: Եւ այսպիսի անիշխանութեան, ու թոհ և բոհ վիճակի մէջ, կրնաս Ժողովուրդ և ճշմարիտ Հայ ժողովուրդ ըլլալ . . . . Ըսենք թէ դու քեզի կարևորութիւն չես տար, և անոր համար՝ եղեր կամ չես եղեր, հոգ չէ. բայց տեղական Կառավարութիւնդ ալ զքեզ բանի տեղ չդներ և զքեզ չպատուէր . . . ասոր ինչ կըսես, և կրնաս զոհ ըլլալ . . . Եւ դու, ըսէ ինձի, լուող Հայ, Դուն ալ ասոր վրայ գիտցածդ կրնաս գրել, կրնաս մտքինդ բացատրել ազատաբար, կրնաս այդ վիճակին դարմանը ցոյց տալ, կրնաս ըսել հայուն թէ լաւ է սահմանադրական ըլլալ՝ քան սահմանադրութիւն ունենալ: Ոչ՛, չեմ կրնար յիրաւի. Չեմ կրնար Հայ կոյրին՝ կարճատես, կամ հաւկուր անգամ ըսել, հայերէն լեզուաւ: Մտքի և համոզման ազատութիւնն օրօրի տեղ կառնու հայն, և արթուն կենալու համար՝ կը քնանայ . . . . Հայուն հետ խօսիլ. ինչ դժուար բան:

Այո, զէյթունցին այսօր կերթայ, ետևէն ուրիշները կերթան. վասն զի քո մէջդ կամ քոյ զետնիդ վրայ կոխելու տեղ չունին և քո սեղանդ զիրենք չի սնուցաներ: Կերթան, բայց անոնց զացած տեղը մօտ է. վասն զի այն ալ մեր տանը թէև օդարգել՝ բայց պայծառ մէկ սրահն է(1). իսկ դու որ վաղը պիտի պար-

(1) Հիմայ այս զէյթունցիք կաթոլիկ լինելով՝ դարձեալ Հայ մնացին՞ թէ Հայութենէ դուրս համարուելով Սինէացի դարձան: Այս խնդրոյն լուծումը Դ.ի Արգոյ հեղինակին կը յանձնենք, որ զմեզլուսաւորէ յայսմ մասին:

տաւորիս, ուր, և որ կողմ պիտի երթաս... Չեմ գիտեր...

Քանի որ խնդիրն այս նիւթերուն վրայ է, մենք ևս անիշխանութեան ազդեցութեանը տակ պիտի իյնանք, և հետևաբար՝ պիտի պարտաւորիմք ամենէն տոտնչալ և զամենքը դըժգոհ ընել: Եւ որովհետև առարկանիս զէյթունցւոց խնդիրնէ, փոքր ինչ մաղենք զայն ու տեսնենք թէ ինչ ինչ յերևան կ'ելնէ:

Ենթադրենք թէ զէյթունցւոց վրայ տեղեկութիւն չունիմք և այնպէս համարենք թէ չեմք գիտեր, ինչու զարկին, ինչու զարնուեցան, և յետոյ իշխանաց երկուքն ինչու Պոլիս եկան, վերադարձան իրենց երկիրն ու ապա չորսը միատեղ Պոլիս հասան, բանտին մէջ հիւանդացան, անկէ ելան Պատրիարքարան դարձան ու հոն մնացին ու մնացին: Ինչ՞ էր սոցա խնդիրը, և ինչու համար յուսահատեցան այս մարդիկն ու կրօնափոխութեան ապաւինեցան: Ժողովրդեան քիչ խօսող մասն մյս կը հարցնէ, և ոչ ոք չկրնար տեղեկութիւն տալ անոր: Բայց երևի թէ Պատրիարքարանն ալ Ազիզ փաշայի առ Բ. Դուռն հաղորդածէն աւելի տեղեկութիւն չունի այդ մարդոց գործերուն վրայ, և մյս է զարմանալին:

Մեր բուն նպատակը, որ իշխանութիւնը պաշտպանելով՝ անիշխանութիւնը դատապարտել է, չենք կրնար այս Ազգային (ինչպէս վերն ալ բացատրած ենք) լոկ բարոյական Իշխանութիւնը զոհել ոչ կառավարուող և ոչ կառավարող մասին: Այսինքն, ինչպէս ժողովրդեան առ Վարչութիւն՝ նոյնպէս Վարչութեան առ ժողովուրդն ունեցած պարտազանցութիւնները՝ ոչ միայն ապօրինաւոր կը համարիմք, այլ և կը դատապարտեմք զանոնք փոխադարձաբար, իբրև զսկզբնապատճառս անիշխանութեան:

Այս սկզբանց վրայ յենլով՝ չեմք կրնար Վարչութեան անհոգութիւնը, կամ պակասութիւնը և կամ անգիտութիւնը չը

դատապարտուել յայտն մասին։ Եւ ասոնց վերայօք բացատրութիւններ կուտամք, թէ ինչու համար.

Արհեստներու և գիտութիւններու մէջ՝ մարդոց ունեցած տեղեկութիւնն երեք ստորոգութեան կը բաժնուի։ Առաջինն է (որ և իցէ արհեստի և գիտութեան համար կըսեմք) գիտնալ. Երկրորդը՝ պակասաւոր գիտնալ. Երրորդը՝ չգիտնալ։ Արհեստ մը կամ գիտութիւն մը լաւ գիտցող և ի գործ չդնողին՝ Անհոգ անունը կուտամք ու կանչեմք։ Բայց այն, որ չկրնար գոհացնել իրեն հետ ուղղակի յարաբերութիւն ունեցող անձինքն իր գործով, այն տեսակ արհեստաւորին կամ գիտնականին Պակասաւոր անունը կուտամք։ Իսկ այս ինչ արհեստին կամ գիտութեան տեղեկութիւն չունեցող անձ մը, երբոր երևան կելնէ ու չի գիտցած բանին մէջ կը մտնէ. այնպիսի մարդը, կըսենք, այն անձին կը նմանի, որ կերթայ առաջին եկած գործարանին մէջ մտնելով՝ իր չտեսած և չանոնց վրայօք բան մը չը լսած նիւթերուն կամ թէ մեքենաներուն վրայ ձեռք կը դնէ, և խելքին փչած կերպիւ զանոնք վարելու համար՝ ամէն բան կը կոտրէ՝ կը թափէ և վերջապէս գործարանը տակն ու վրայ կընէ, այնպիսւոյն ալ Անգէտ անունը կուտամք։

Ինչպէս ամէն բան, կառավարութիւնն ալ իր արհեստն ու գիտութիւնն ունի, ուստի և Վարչութեան անդամներէն այս արհեստը կը պահանջուի։ Անգէտ (incompétent) մէկը ընդունակաբար գտնուելու չէ Վարչութեան մը մէջ, եթէ ընտրողն ու ընտրուողն իրենց արհեստները լաւ գիտնան, ապա թէ ոչ, ինչպէս երաժշտութեան դասարանք խումբերուն համար՝ նոյնպէս կըլլայ Վարչութիւնն ալ Հայոցս համար։

Եւ օրովհետև պարագաներնուս մէկը Զէյթունցոց խնդիրն է, առաջ մէջ ընենք մեր քննութիւնը և տեսնենք թէ վարչու-

Թեան անդամները որ ստորոգութեան կարգը կը գտնուին կառավարական արհեստին մէջ ։

Եթէ ըսենք՝ Թէ զէյթունցւոց հին յանցանաց համար չորս իշխաններն այս տեղ բերուեցան, ատով կառավարութիւնը զրպարտած կը համարուիմք. որ մեք, մեր բաժնին համար, ամենևին չեմք կրնար ընդունիլ ։ Եւ որովհետև ատոր քննութիւնը կառավարութիւնն բրաւ այն ատենին, և տեսաւ որ զէյթունցիները զրգռող եղելութիւնքն առաւել պատճառներ տուած էին երկկողմնակի կոտորածին՝ քան զէյթունցիք եղելութեանց, ամենայն արդարութեամբ խնդիրը լուծեց. և միմիայն կոտորածի պատճառներն երկկողմնակի յանցանք համարելով՝ պատիժներն ու շնորհքներն անոնց չը զլացաւ ։

Կառավարութիւնն ատով ալ չգոհացաւ, այլ ժողովուրդն առաւել ևս խնայելու և անոնց խնդիրքն աւելի մօտէն քննելու դիտաւորութեամբ, երեք պատուաւոր անձինք (ինչպէս որ ամենքը գիտեն) ուղարկեց Կիլիկիոյ կողմերն, իբրև քննիչ(1), որ այսպիսի խնդիրները լաւ քննելու կարողութիւն ունեցող անձինք էին ։ Սոքա վերադարձան շատոնց ի վեր, և յայտնի է որ այդ հին խնդիրն ալ լիովին կատարուած կը սեպուի ։ Ուստի ասկէ ևս կրնամք մակաբերել՝ Թէ զէյթունցիք հին խնդրոյն համար բանտարգուած չեն. և մեք ալ ասկէ աւելին ոչ կրնամք գիտնալ և ոչ կրնամք խօսիլ ։ Իսկ եթէ մեր կարծածին հակառակն ելնէ խնդիրն, այն ատեն, ատի Դրանը գիտնալիք բանն է, ըսելով կանցնիմք. քանզի ատոր ոչ մեք կրնամք խառնուիլ և ոչ յայտմ մասի անձեռնհաս Վարչութիւնը ։

---

(1) Ոնցա մին Տաճիկ, իսկ երկուքն Հայազգի էին՝ եւ այս երկոցունց մին՝ Սարգիս էֆէնտի Աղապէկեան՝ էջմիածնական Հայոց, եւ միւսն՝ Տօքթէօռ Տավուտ էֆէնտին՝ Հռոմէական Հայոց կողմանէ ղրկուած էին ։

Բայց համարելով միշտ՝ թէ հին խնդիրը շատոնց լըմնցած է, կ'ենթադրենք որ զէյթունցւոց նոր խնդրոյն մէջ՝ Ազգային վարչութիւնն ալ իրեն վերաբերեալներն ունի, և կրնայ հարկ եղած առենին միջնորդ կանգնիլ Դրան ու զէյթունցւոց մէջ։ Ինչ՞ ըրաւ Վարչութիւնը, երբոր զէյթունցիք իրենց երկրէն, իբրև բռնաւոր և ժողովուրդը կեղեքող անձինք (1), ի Կ. Պոլիս բերուեցան, և իրենց օրինաւոր պատիժը կրելու համար՝ մահապարտ անձանց գրեթէ քթերուն տակը բանտարգուեցան. և ի վերջոյ՝ երբոր բանտէն դուրս ելան՝ ու ժամանակէն ի վեր կըսպասէին. Ինչ ճամբայ, կամ ինչ միջոց բռնեց Վարչութիւնն այս փափուկ խնդիրը մաղելու համար։

Չենք ըսեր թէ Կառավարութեան օրինաւոր պատիժն արգիլել ուզէ Վարչութիւնը, քաւ լիցի. բայց երբոր բանտարգեալներն՝ իրենց յանցանքը չգիտնալ ձևացնելով՝ կը բողոքեն ու դատաստան կը խնդրեն, այն առեն խնդիրը Վարչութեան վերաբերութիւն կունենայ. և կը պարտաւորի (Կառավարութեան սկզբանցն համեմատ) քննել զայն, գոնէ իմանալու համար, թէ Ազգային կամ Կրօնական խնդիր մը կա՞յ ատոր մէջ։ Եւ որովհետև, նոյն իսկ ժամանակին, մէկն ալ ելած, ինք իր գլխուն կամ տեղւոյն ժողովրդեան թախանձանօք, Կիլիկիոյ կաթողիկոս օծուած էր, և այս խնդիրն ալ լոկ կրօնական ըլլալուն ու կուզեմ չեմ ուզեր բառներ գտնուելնուն համար՝

(1) Լսած ենք, թէ Զէյթունի բնակիչք՝ այս ամբաստանութիւնը հաստատեր են, իրենց առ Բ. Դուռն ուղղած մահսուսագրովը բազմաթիւ ստորագրութեամբ։ Նոյնպիսի մահսուսագիր մը ուղղուած է կ'ըսեն՝ առ Պատրիարքարան, նոյն իսկ ստորագրութիւններով. բայց Բ. Դրան եկածին հակառակը։ Հայոց մահսուսները միշտ ասանկ են, եւ երեւի թէ մշտնջենաւոր մօտա է Հայոց մէջ։ Զէյթունցի իշխանաց (առ Մէճմուայը Հավատիս) գրած նամակներն ալ այս մօտայէն էին, այսինքն, սատան—հրեշտակ, Վարդան—Վասակ, կամ սեւ—ճերմակ եմք, ըսելով՝ քանիցս անգամ գրեցին։

Վարչութեան քննութեանը կը կարօտէր, յայտնի է որ այս երկու խնդրոց համար՝ թէլեկրաֆէն աւելի կարճ ճամբան՝ Կիլիկիոյ կողմը քահանայ կամ աշխարհական քննիչներ հանելն էր: Բայց ըսենք թէ դրամի կամ մարդու պակասութիւնքն արգելք եղան այդ միջոցին. իսկ այստեղ Աղապէկեան Սարգիս Էֆէնտին կար, որ՝ թէ Կառավարութեան և թէ Ազգին կողմանէ՝ մասնաւորապէս քննիչ գացած էր այն կողմերը. և կ'երևակայեմք որ Պատրիարքարանէն խիստ աւելի և մանրամասն տեղեկութիւն ունէր և կրնար ունենալ, թէ այդ երկրի բնակչաց կացութեանը, թէ անոնց անցեալ և ներկայ խնդրոց աղբիւրներուն և թէ Գաւառի փաշային ու իշխանաց մէջ ծագած վէճի պատճառներուն վրայ:

Սարգիս Էֆէնտին, որ իրեն Երեսփոխանութեամբը ծանօթ էր Վարչութեան, կարծեմք թէ խնդրոց վրայօք իրեն ունեցած գիտութեամբն ալ խիստ կարևոր անձ մըն էր, մանաւանդ անոր համար՝ որ Վարչութեան երեք ամիս մտիկ ըրած և չը հասկցածը՝ մէկ աւուր մէջ հասկըցնելու բնական կարողութիւն ունէր: Կանչեց այդ անձը, և հարցո՞ւց. դարման կամ լոյս փնտռեց Սարգիս Էֆէնտիէն, և կամ անոր մէկը ղրկեց բան մը հարցընելու, գոնէ ժողովրդեան լեզուէն կամ բամբասանքէն ազատելու համար... Չեմք գիտեր. բայց և այնպէս, չեմք ալ կարծեր. վասն զի եթէ Վարչութիւնն Սարգիս Էֆէնտիյին քիթ փչըել ուզեր, անշուշտ խնդիրներն ուրիշ ձև կառնուին, հետևաբար՝ Կառավարութիւնն ալ լաւագոյն բացատրութիւններ մտիկ ընելով՝ խնդրոյն կը թափանցէր և ըստ այնմ կը վճռէր զայն, և այս կրօնափոխական գայթակղութիւնը կ'արգիլուէր:

Եթէ ստուգիւ կառավարելն ալ արհեստ մըն է, հաւատալու է, որ Վարչութեան անդամներն, երբոր այս խնդրոյն մէջ

այսպէս կը վարուին, ուրիշ գործեր քննելու ա՛լ հարկ չըմնար ։ Ուստի, կամ անհոգութեամբ կամ պակասաւորութեամբ և կամ անգիտութեամբ ինքզինքնին կը դատապարտեն. և սով՝ անիշխանականութեան սկզբնապատճառք կը համարուին, իրենց պաշտօնը նոյն իսկ ընդունած օրերնուն ի վեր . և այս ստորոգութեան կ'ենթարկուի նաև զիրենք ընտրող մասը ։ Այս երեք ստորոգութենէ խոյս տալն՝ անհնար կերևի մեզ, և կարծիքնիս այն է , թէ այսպիսի անիշխան դրութեան մէջ, ընտրողք և ընտրեալք , ոչ միայն Ազգ , այլ և տասն ոչխար անգամ հովուելու կարողութիւն չեն կրնար ունենալ ։

Իսկ թէ մինչև որ աստիճան չարաշշուկ և բօթալից հետևութիւններ կը պարունակէ այս դժնդակ և անիշխանական կացութիւնն իր մէջ, հայոց Լուսաւորչական մասի ապագային համար, ընթերցողը կրնայ գուշակել ։

Մեր իմացածին նայելով՝ զէյթունցւոց խնդիրներու մէկ քանին գանձին, և մէկ քանին քաղաքականին կը վերաբերին ։

Եւ ահաւասիկ անոնց ցանկը .

Ա. Պէտէլի ասքէրիյէ անուն (զինուորականութեան փոխարինութիւն) տուրքի խնդիրն . որմէ գանձը տարեկան կը պահանջէ եղեր , 100,000 ղուրուշ.

Բ. Աղնամ անուն (իրենց այծերուն) տրոց խնդիրն. նոյնպէս տարեկանին համար կը պահանջուի եղեր, 50,000 ղրշ.

Գ. Տէրունական տուրքի խնդիրն. որ շատոնց ի վեր չեն վճարած եղեր . տարեկանը 25,000 ղրշ.

Դ. Զէյթունցի ժողովրդեան տեղափոխութեան խնդիրն. որ կառավարութիւնը գաղթելնին կուզէ եղեր .

Ե. Ջորս իշխանի զերդաստանաց վերադարձի խնդիրն . որք այժմ ի Մարաշ կը գտնուին եղեր .

Զ. Զէյթունի մէջ հայ միւտիւրի (քաղաքապետի) խնդիրն, որ զէյթունցիք Կառավարութենէ կը խնդրեն եղեր.

Է. Վերջապէս այս, (երբեմն Վարդան և երբեմն Վասակ անուն առնող) իշխանաց դէպ ի Զէյթուն վերադառնալու խնդիրն.

Ինչպէս կը տեսնուի, ասոնց և ոչ մէկը կրօնական երևոյթ ունի. հետևաբար Պատրիարքի մը կրօնական պաշտօնին հետ ամենևին յարաբերութիւն չունին: Սակայն, իբր ազգայնոց խնդիրք, միջնորդութեան մը կը կարօտին, Վասնորոյ, (քանի որ մեր բարոյական Իշխանութիւնն իր բնական երկու (1) ճիւղերը չէ կրցած քիօք ունենալ, այս ազգային միջնորդութեան պաշտօնն ալ կը միայ դարձեալ՝ Պատրիարքի կամ Պատրիարքաց: Եւ որովհետև այս ներկայ դրութիւնը համազգային Պատրիարքարանաց ալ իրաւունք կը մատակարարէ. միջնորդութիւնն ալ անշուշտ ուժւորին ձեռքը կանցնի, որ իր կրօնական կորկոտն աղալու համար՝ ուզածին չափ կը միջնորդէ: Զէյթունցին ալ սակարկութիւնը լըմնցնելէն յետոյ՝ իր կրօնական չորս առագաստը կը բանայ քաղաքական հովին դէմ, ու հողմաղօրիքի պէս՝ կը դառնայ հա կը դառնայ, իր ցորենը աղալու համար:

Ուժւորը միշտ իրաւունք ունի. բայց յանուն կրօնի լուծուելու խնդիր մը, երբոր անորոշ վիճակի մէջ կը գտնուի, դիմացինին ալ իրաւունք կուտայ այս խորհրդածութիւններն ընելու. Թէ՝ ինչպէս կըլլայ, որ (Բ. Դրան առջև) էջմիածնա-

(1) Իշխանութեան այս երկու ճիւղերը բացատրած ենք մեր Խնդիր Միութեան Հայոց տետրակին մէջ. (Տպեալ ի Փարիզ 1861.)

կանութեան մէջ չընդունուած խնդիր մը՝ Հռոմէականութեան մէջ ընդունուի: Այդպիսի դէպք մը Էջմիածնայ Կաթողիկոսութեան պատիւ չըբերեր ... Բայց մեք չենք կրնար հաւատալ այդպիսւոյն, որովհետև մյն զօրութիւնը որ Հռոմի մէջ Հրէութիւնը կը պաշտպանէ՝ յանուն մարդկութեան, չը կրնար Թուրքիոյ մէջ Լուսաւորչականութիւնը արհամարհել՝ յանուն Կաթոլիկութեան. հետևաբար անհնար է, որ Հռոմէական մը կարենայ Բ. Դրան իրաւացի և արդար պահանջմունքը չճանաչել. որովհետև՝ եթէ նա Էջմիածնականութեան մէջ տրուելիք պարտքը՝ յանուն կրօնի մերժել ուզէ և յաջողի, անիրաւութիւն ըրած կըլլայ թէ Գանձին և թէ Բ. Դրան դէմ: Եւ եթէ Բ. Դուռը՝ յանուն Հռոմէականութեան միայն շնորհէ այդ օրինաւոր պահանջմունքը՝ ոչ միայն Լուսաւորչականութիւնը չը պատուած՝ այլ ահագին տարբերութիւն մը ճանաչած կըլլայ արեւելեան և արևմտեան կրօնից մէջ. որ մեր բաժնին համար ամենևին այդպիսի ճանաչման նշոյլ մ'անգամ չենք կրնար նշմարել կամ նշմարել տալ Բ. Դրան վրայ: Իսկ եթէ ընդհակառակն, զէյթունցիք յանձն կ'առնուն Բ. Դրան պահանջմունքը կատարելու Հռոմէականութեան մէջ, ինչ որ Լուսաւորչականութեան մէջ կը մերժէին. այդ ըսել կըլլայ, որ անիրաւութիւն ընելու համար միայն՝ կենալ կուզեն եղեր անոր մէջ: Ուրեմն բարի երթան և հազար բարով. Հայերն այդպիսեաց իրենց մէջէն ելնելը բարիք կը համարին:

Բայց ո՞վ կրնայ հաստատել, և ո՞վ կը հաւատալ, որ Բ. Դուռն այսպիսի դէպքերու վրայ չը՛տժգոհիր և անոր զգուանք անգամ չեն պատճառեր ասոնք՝ և ասոնց նման եղելութիւնք: Եւ ո՞վ կրնայ հաստատել նաև՝ թէ այս դրութիւնը Հայոց կառավարող և կառավարուող մասերուն պարտազանցութենէն

ու նոցա անգիտութենէն առաջ եկած անիշխանականութեան պտուղը չէ:

Տես, անդին մնացած անհամար խնդիրները, որ հազար զէյթունցի կ'արժեն, ինչպէս երեսի վրայ մնացած են, և որչափ իրաւունք ունին թէ Բ. Դուռն ու թէ Պատրիարքն ըսելու, թէ որ կուսակցութեան հանոյիցը յարմար վճիռ տալու է. քանի որ դուք, մէկ բանին համար սև՝ միանգամայն ճերմակ է կըսէք: Եւ յիրաւի. անհամասիկ Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց խնդիրներն, որ անիշխանութեան տակը կը տատանին. և հակառակ կուսակցութիւններն օր ըստ օրէ կը զօրանան. ով կրնայ ըսել՝ թէ ասոնց մէկ կողմը կրօնափոխութեան չիպիտի դիմէ:

Անդին մաս մը անձինք՝ ազգային կացութեան լաւագոյն վիճակ մը բնտռելու համար՝ շուարած մնացեր՝ ինչ ընելնին չեն գիտեր, և ասոր անոր դռներն ընկած՝ եկեղեցական բարեկարգութիւն անունով բան մը կը մուրան. կարծելով թէ այն է իրենց փրկութեան ճամբան. և այս անունով բնտռածնին ուրիշ բան չէ, բայց եթէ կարեկցութիւն: Եւ արդարև, հայոց Լուսաւորչական մասին պէս՝ խնք իր գլխուն ձգուած՝ ազգ մը չկայ Տաճկաստանի մէջ. ուր կրօնակից պաշտպանութիւնն ազգայնութենէ աւելի կենդանութիւն ունի: Ուրիշները՝ գաւառներուն մէջ բանտերու կը մատնուին, անգութ աղքատութեան պատճառաւ, և իրենց կրօնքը տրոց փոքրիկ գումարին հետ փոխելով (1) կռնակնին Էջմիածնայ և երեսնին Հռովմայ

(1) Գահճէճիկէն ընդունած մէկ նամակնիս, այս վիճակին վրայ ցխուր նկարագրութիւն մը ընելով՝ կը գանգատի այն փաքերանէրքն, որ սակարկութեանը (այսինքն, ընտանիք ունեցողը միայն եւ ո՛չ ուրիշը), կաթոլիկ

կաթողիկեաց կը դարձնեն: Եւ ասոնց նման շատեր:

Ինչ՞ դժնդակ և մահաբեր անիշխանութիւն. և ինչ չարաշշուկ ժամանակ Լուսաւորչական հայոցս համար . . . . .

Յայտնի կ'երևի , որ այսպիսի անպաշտպան վիճակի մէջ՝ Թուրքիոյ հայը Լուսաւորչական չըպիտի մնայ , և ասդիս անդին տատանելով՝ վերջապէս հայաբար ևս պիտի յարի օտարաց. և Էջմիածնայ Վեհագոյն Իշխանութեան հաւատարիմ և մեծագոյն մասը պիտի կազմեն՝ միմիայն Ռուսաստանի հայերը. ինչ խեղճ զումար, և ինչ Լիլլիփութականութիւն, մինչև անգամ ամենափոքր և աննշան ազգաց առջև:

Եթէ այս անհամբոյր վիճակէն մեզի բարօրութեան տարր մի չգոյանայ և զմեզ կատարելութեան չառաջնորդէ, մեր զանգատներն ալ այն արժէքը չեն կրնար ունենալ՝ ինչ որ ուրիշ իրենց վիճակէն տժգոհ ազգաց համար վերանորոգութեան նշոյլ մը կը համարուի ընդհանրապէս. և այն ատեն՝ մեր ազգի բոլոր շարժմունքը՝ շուքին հետն ի վեր վազելէն ուրիշ բանի մը նմանութիւն չունենար, և անզգայ մեռելութենէ մ'անգամ չըտարբերիր:

Բայց չեմք ուզեր և չեմք կրնար յոյսերնիս կտրել: Քանի որ այդ անիշխանականութեան դառնութիւնները համբեցինք, և քանի որ այդ անիշխանականութիւնն ալ մեր կամօքը գոյութիւն առաւ. իբրև մարդ, կարող եմք ընկած տեղերնուս յոտն կանգնիլ:

Ճշմարիտ հայն, որ անցելոյն դառնութիւնը կըզգայ, ներկային ամօթը կը կրէ և ապագայէն կ'ահուի, չը կրնար

ընելով կը վճարեն բանտարկելոց պարտքը, եւ այնպէս դուրս կը հանեն: Մեք մեր Նամակագիր Քահանային զանգատը լաւ կզգանք, բայց եւ այնպէս չենք կրնար պախարակել փաթերայից մարդասիրական ընթացքը եւ կը պատուենք ամեն անոնք, որ իրենց բուն պաշտօնն անթերի կը կատարեն:

այս կացութեան վրայ անտարբեր կենալով՝ ահ մը չըսել:

Վշտացեալ հայուն իրաւունքն է այս. և այս յուսահատ ձայնը՝ մանաւանդ այս օրերս՝ շատէրէն և ստեպ կը լսուի:

Մարդս՝ վարանմամբ ընկած ատենն՝ սթափով մ՚ինքզինք կըժողվէ, և ոտիցը վրայ կանգնածին պէս՝ նախ ընկած տեղւոյն և ապա ձեռացը վրայ կընայի. և ձեռացը փոշին կամ ցեխը՝ մինչև որ չը մաքրէ, հագուստը մաքրելու ձեռնարկութիւն չըներ: Այսպէս ընել կուզեն նաև երեկուան ահ ըսօղ և այս օրուան սթափօղ հայերն: Այս սթափին մյնայիսի բնական տարր մըն է, որ չարակեցութենէն ուրիշ բանով չը սնանիր, բայց և այնպէս, հուսահատին (եթէ նա ուզէ) առաջը կ՚իյնայ և բարեկեցութեան կը տանի:

Դնենք այս յուսահատ ձայներուն մէկ քանին, և մտիկ ընենք՝ թէ ինչ կըսեն և ինչպէս կը տրամաբանեն.

Ա. Զէյթունցին գնաց, և երթայ բարով. քանզի անոր խնդիրը պզտիկ խնդիր էր, հետևաբար լեցուն ստուկի կարօտ. ըսել է որ մեր բազմատեսակ կարօտութեանցը չըբաւող ստուկին վրայէն ծանրութիւն մը պակասեցաւ. ուրեմն այս թեթեւութիւնն ալ լեցուած կարօտութիւն մը կը համարինք, և

Իրենց և մեզ ազատութիւն, Թող ուրախ լուր տարուի Զէյթուն.

ըսելով՝ կանցնիմք ամենէն ստիպողական գործերնուս:

Բ. Մեր կարևոր խնդիրները շատ են, սակայն ամենը մէկէն չեմք կրնար հոգալ՝ մանաւանդ անոր համար, որ մեր բարոյական իշխանութիւնը մասամբ իւիք անձեռնհաս է ինք իր գըլխուն զանոնք որոշելու: Բայց առայժմ, սա ինքնակոչ կաթողիկոսաց անվաւեր վարմունքը ժողովրդեան գայթակղութիւն պատճառելէն յետոյ, օտարաց առջև անոր երեսը կը կարմրցընեն:

Ինչ՞ ճար և ի՞նչ դարման կրնայ ըլլալ ասոնց, և ինչպէս կը կէլու է այս խնդիրները, որ նոյն Գաւառներու ժողովրդոց իրաւունքն ալ չկորսուի: Այս երկու խնդրոց լուծման համար Դրան կարօտութիւն չկայ, և ձեռնհաս Իշխանութիւնը միայն կարող է վճռել զանոնք. որոց դատաստանը՝ (ըստ եկեղեցական օրինի) երկրին բնակչաց քուէին կամ ձայնին կիյնայ, քննութիւնը՝ Վարչութեան, իսկ վճիռը՝ Գերագոյն Իշխանութեան, որ Էջմիածնայ Կաթողիկոսութիւնն է:

Գ. Մեր ամենէն զգուշալի խնդիրները կրօնական են. և Պօլսոյ Կրօնական մարմնոյն անիշխանութեան մէջ գտնուելուն պատճառաւ, անոնք ալ երերուն վիճակի մէջ կը գտնուին. ուստի և այս կացութիւնը բարուօքելու համար՝ Գերագոյն Իշխանութեան զօրութեանը կը կարօտիմք. զօրութիւն մը, որ ժողովրդէն բղխելուն համար՝ առաւել եւս ուժ կառնու, և զժողովուրդն առաւելագոյն զօրութեամբ կը պաշտպանէ: Ուրեմն այս խնդիրն ալ, ուրիշներուն պէս, Էջմիածնայ Կաթողիկոսական Գերագոյն Իշխանութեան կը պատկանի: Այս է օրինաւոր միջոցն, և ասկէ ուրիշ ճար ու դարման չկայ: Վասնզի, ամէն գաւառի, ամէն քաղաքի և ամէն գիւղի մէջ՝ ազգակործան յափշտակութենէն ուրիշ բան չըր տեսնուիր: Եթէ Լուսաւորչականն իր կրօնական զգացմամբն ու մոքին ազատ համոզմամբը հաւնած տեղն երթալ ուզէր, անոր ազատութիւնը կը յարգէինք. բայց այնպէս չէ. այլ անիշխանութեան պատճառաւ ամէն տեղ կրակ կը վառուի և Լուսաւորչականն անոր դէմ ձիւնի պէս կը հալի. եայլն եայլն, ասոնց նման ձայներ:

Ինչ՞ կըսէ ասոր՝ զգայուն Լուսաւորչականը: Ինչ՞ կը պատասխանէ այս ձայնին, որ ընկող ու վերստին կանգնող մարդոնման ամէն խնդիր մէկդի կը ձգէ ու նախ և առաջ՝ ամե-

նէն կարեւորին ձեռք զարնել կուզէ որպէս զի նոյն մաքուր ձեռօք միւսներն ալ կարող ըլլայ մաքրելու. ինչ կըսէ այս սԹափման բնական ձայնին:

Ինչ՞ կըսէք և դուք, զրպարտիչ, սեւամուրճ և վայրի Ծիլեր ու Ծլի անանուն Թղթակիցներ: Դուք, անօրէն օրէնսդիրներ, նենգաւոր (1) և շինծու Սողոններ, ինչ կըսէք այս անխիղճխանական վիճակին. որուն առաջնորդեցիք: Հայհոյիչքդ դուք. և նախատինքդ Հայ գրականութեան, ինչ կըսէք....
Բայց պնդասակիկ ժողովրդեան ձայնը, որ մեզի խօսք չի Թո-

---

(1). Ծլի Արգոյ հեղինակն, Գ. Ա. Թահիրեանցի առ Ա. Բ. Մ. գրած Նամակի մէջ՝ մեր Դիտողութեան վրայօք գրուած քանի մի (տես Ծիլն էջ 361 եւ 362) տողերը նենգութեամբ մեկնելով՝ նոյն անձի կողմանէ տեղի մը համար խօստացուած դրամը. իբրեւ կաշառ կը ներկայացնէ մեր տետրակին համար. եւ այսպիսի նենգաւոր հիման վրայ իր զրպարտութիւնները ճարտարելով՝ վեց ամիս շարունակ կը Թլուատէ իւր սակաւաԹիւ ընԹերցողաց ականջին. քանի որ այն խնդիրը Ջալալեան Սարգիս Եպիսկոպոսին Բողոքատետրին կը վերաբերէր, որոյ տպագրութեան հաշիւն ալ (Թէ եւ չէինք ուզեր ըսել, որովհետեւ այնպիսի ջնջին գումարի վճարման համար կասկած կամ հոգս ընելն անգամ ամօԹ կը համարիմք) դեռ ընդունած չեմք Գ. Ա. Թահիրեանցէն: Ակամայ կը գրեմք այս տողերը, զորս ամօԹ կը համարիմք հայ գրականութեան, այլ այս ամօԹն ալ Ծլի երեսին կուտամք, որ զունաւորի եւ մենք ալ տեսնենք Թէ ինչ՞ գոյն ունի:

Նոյն նենգութեամբ, 1856 յուլիս 24ին գրուած եւ ամենեւին չհրատարակուած, Նամակ մի եւս կը հանէ Ծիլն, եւ «Ահա այս տեղ նոյն Գ. Արամեանի յիշատակ Եսայեան Ներսէս Կաթողիկոսին առ Փոխարքայն Մուրավիէֆ յառաջ կը բերենք» ըսելով՝ կը դնէ իր 442 էջի մէջ. քանի որ մեր յիշածն 1851 մայիս 11ին առ Փոխարքայն Վորոնցով գրուած, եւ Երկամեայ անցից Գաւառութեան 109 էջի մէջ տպուած Նամակն էր: Այսպիսի պարզ խնդիրներու մէջ նենգութիւն ընող անձինք՝ շատ պինտ երես ունենալու են, որ կը յանդգնին ժողովրդեան առաջնորդութիւն ընելու. լաւ Ծլախանութիւն: Գիտեմք Թէ ամօԹ ըսուած բանը՝ ոչ՛ կուտուի եւ ոչ ծովու վրայ կը քալէ, բայց աւելի չեմք կրնար հետեւցնել Թէ Ծիլերուն վրայ կը ծաղկի, յայսմ մասին:

ղուր և զձեզ կը դատապարտէ. Լսեցէք. և եթէ կամիք, դարձեալ մեղանչեցէք (2):

Եւ յիրաւի, այս ժողովրդային ձայնն մինչափ բազմահունչ է, որ գրեթէ ընդհանուր կրնամք համարիլ այսօր. ուստի և խիստ արժանի ուշադրութեան: Յայտնի է, որ այս ընթացքով՝ Լուսաւորչականութիւնը պիտի հալի և եթէ այս վիճակն յարատևէ՝ գրեթէ վաղը պիտի անհետանայ: Ուստի, եթէ Էջմիածնայ Գերագոյն Իշխանութիւնն, Աղթամարայ և Կիլիկիոյ կաթողիկոսութեանց՝ նոյնպէս և ուրիշ կրօնական խնդիրներուն վրայ ձեռք չդնէ՝ և ժողովրդեան ու իր իրաւանցը վրայ յենլով՝ պաշտօնը չը կատարէ, կրնամք ըսել, թէ որչափ Էջմիածնայ վիճակներ, նոյնչափ և այլակրօն Հայեր պիտի գտնուին անոնց մէջ. և այսպէս Էջմիածնական միութեան կապը քակուելով՝ Գերագոյն Իշխանութեան սահմանն ալ Ռուսաց սահմանէն անդին չըպիտի անցնի:

Այս կըսեմք, ոչ թէ ցնցում մը տալու միտք, այլ՝ երկու և երկու չորս ընելնուն պէս՝ յայտնի կը տեսնեմք, որ ներկայ վիճակովս, Լուսաւորչականները զահավիժելու դրութեան մէջ կը ցուցնէ: Լսուածին եթէ հաւատամք, 30,000 ի չափ

---

(2) Մեք չեմք ուզեր այսպիսի լեզու գործածել, բայց ահա կը դնեմք այն Թիֆլիսցի Թղթակցին քանի մի տողերը եւ ընթերցողին կը թողումք դատել:

« Մօտիկներս մեկ տետրակ կարդացինք Գ. Ճանիկ Արամեանի գրուած, որ Հայերին հուր, սուր, բռնութիւն է սպառնում և խորհուրդ է տալիս նոցա. որ տէրութեան հպատակին. էն տէրութեան քաղաքականութեան տակ ճնշել տան իրանց եկեղեցւոյ ազատութիւնը. մէկ խօսքով Ռուսը ումն ուզենայ Կաթողիկոս ընտրէ Հայերին համար ու Հայերից ոչ ոք ձայն չհանէ: Գ. Ճ. Արամեանին ոչ ոք բան ասելու իրաւունք չէր ունենալ՝ եթէ իր տետրակի տակ այսպէս գրէր.

Կաշառքով խիղճս ծախուած մարդկութեան ասպարեզից դուր գնացած

Հարազատ Ռուս ՃԱՆԻԿ ԱՐԱՄԵԱՆ.

Ուրեմն մէկ սառն արհամարհանք սորան և սև կնիք սորա ճակատին, կնիքի մէջ փորուած. ՍԱ ԴԱՒԱՃԱՆ Է ԻՐ ԱԶԳԻՆ. (Տես Ծիլն. էջ 523)»

կրօնափոխական տորագրութիւնք՝ միայն Վանայ գաւառէն դուրս ելեր՝ չեմ գիտեր ո՛ւր են գացեր : Այսպիսի լուրերն եթէ չափազանցութիւն կամ բոլորովին շինծու համարիմք, չեմք կրնար նշանակութիւն ևս չունին ըսելով անցնիլ: Ասոնք և այսպիսիք հարկաւ իրենց նշանակութիւնն ունենալու են, որ ըստ մեզ ժողովրդեան տժգոհ վիճակէն առաջ կուգայ, և այս տժգոհութիւնն ալ կրօնական անիշխանութեան և անպաշտպան կացութեան պտուղն է. որուն մէջ ժողովուրդն՝ արդէօք սանկի և արդէօք նանկի սկսած ատենին, անդիէն մէկը շինծու խօսք մի կը քշէ, և այն խօսքը 30. 40 և 100 հազարներու տեղ կանցնի. խնդիրը՝ թէ և իրականին փափաքողներէն առաջ եկած մըրմռ մընէ, բայց պատճառներ ունենալուն համար՝ այս աւուր շինծու խօսքը վաղուան օրը ճշմարտութիւն կրնայ ըլլալ:

Այսպիսի սին ու պատիր՝ բայց հայուն սոսկում պատճառող բազմատեսակ զրոյցներու ատեն, և անիշխանական հեստ ու խարխուլ վիճակին մէջ՝ հայն ինքն իրեն կը հարցնէ թէ ինչ պէտք է ընել, և ինքն դարձեալ իր բնական յուսոյն դիմելու համար՝ կը դարձնէ աչքն իր հօգևոր և գրեթէ Քրիստոնէութեան հետ ծնած Գերագոյն Իշխանութեան. այն Իշխանութեան, որ առաւել Ազգային տառապանքին՝ քան թէ անոր երջանկութեանը մասնակից եղած է. Իշխանութիւն մը, որ Տէրութեանց մէջ խաղաղական միջնորդութեան պաշտօնն ունի, որ շատ անգամ այս պաշտօնին մէջ՝ պարզերես ելած է, ի փառս իր կրօնին և ազգին : Այս բարոյական և Գերագոյն Իշխանութեան կը դիմէ հայն, և իրաւունք ունի՝ մանաւանդ այս ատենիս համար՝ որ անիշխանականութեան արգասիքն իր ձեռօք կը շօշափէ, ու խիստ լաւ կզգայ թէ այս կորստական դրութենէ ազատելու համար ուրիշ միջոցով իրեն փրկութիւն չկայ:

Բայց միթէ հայն իր հօգևոր Գերագոյն Իշխանութիւնը ճա-

նաչելէն դադրած էր, կամ անոր հմտատակած չէր ըստ հոգե-ւորին մինչև ցարդ. Այո, բայց անոր ձեռաւորութենէ մեծամեծ վնասներ կրելէն յետոյ՝ նոյն ձեռաւորութեան պատճառանօքն ալ այս վիճակին մէջ, այսինքն, կրօնական անիշխանութեան մէջ մնաց այժմ:


Եւ յիրաւի, կրօնական անիշխանութեան պտուղ պէտք է համարել՝ շատերուն մէջ՝ մանաւորապէս Աղթամարայ և Կի-լիկիոյ Կաթողիկոսական խնդիրները:

Կրօնական անիշխանութեան պտուղ պէտք է համարել, Գ. Պետրոսի Շանշեանց Քրիստոնէական ուսման հմտալից Տետ-րին համար՝ տրուած, կամ այս

.... Կրօնական ժողովով քննեալ եւ հրամանաւ Սրբազան Պատրիարքի........ Վաւերացուցեալ՝ վկայեմք ուղղափառական գոլոյ սմա:

1865 Նոյեմբերի 6.

Նուաստ
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Ատենապետ Կրօնական Ժողովոյ



վաւերացումը, և կամ նոյն Քրիստոնէական Ուսման դէմ՝ Երեւակ անուն Հանդիսի մէջ հրատարակուած՝ անգութ և բը-րիստոնէական Վարդապետութիւնները ժողովրդեան առջև իբր անհիմն, սին ու պատիր և չիննծու բաներ ներկայացնող քննադատութիւնները (1):

Ասոնց նման օրինակներ շատ կան, որ Էջմիածնայ ձեռաւո-

(1) Ասոնք մեր հասկնալիք բաները չեն, բայց երբոր մէկ կողմանէ Կրօ-նական ժողովին վաւերացումն ու միւս կողմանէ ծաղրածական քննադա-տութիւն կը տեսնեմք անոր դէմ՝ գայթակղելու իրաւունք ունիմք:

րութեանը համար՝ կրօնական խնդրոց ամենէն փափուկները վարանելու և անլուծանելի վիճակներու մէջ մնալով՝ տեղական կառավարութեանն ալ ձանձրութիւն և հետևաբար տժգոհութիւն պատճառած են:

Էջմիածնայ Գերագոյն Իշխանութիւնն ունի հնուց ի վեր իր բարոյական ազդեցութիւնն Հայոց վրայ, և որ պիտի ունենայ մինչ ի յաւիտեան: Այս հին Իշխանութեան արտօնութիւնն՝ աւելի զօրութիւն ստացած է՝ Թուրքիոյ Վեհափառ Սուլթաններուն և Պարսկաստանի Շահերուն շնորհած մասնաւոր փէրմաններով, որ այժմ Էջմիածնայ մէջ կը գտնուին. որոց շնորհքը չը վայելելն ուրիշ բան չը կրնար նշանակել՝ բայց եթէ երկդիմի ապերախտութիւն, մին իր պաշտօնի և շնորհներուն դէմ մեղանչելով, և երկրորդն Ռուսաստան գտնուելուն համար ինքզինքն այն Վեհապետներուն շնորհացը անկարօտ ցոյց տալով: Ինչպէս կը տեսնուի, ասոնց երկուքն ալ ապերախտական մեղանչանք կը համարուին այն Վեհապետաց, որոց Տէրութեան տակ բազմաթիւ հպատակող ժողովուրդներ ունի այս Իշխանութիւնը:

Ուրեմն, ինչպէս Պարսկաստանի, Հնդկաստանի և այլ երկիրներու, նոյնպէս և Թուրքիոյ Հայոց վրայ ունեցած հոգևոր Իշխանութեան պարտաւորութիւնը լիովին կատարելու համար՝ հեռաւորութեան արգելքները կարելի եղածին չափ բառնալու է այդ Իշխանութիւնն՝ արժանաւոր Նուիրակի մը միջոցաւ. Նուիրակ մը, որ իր կրօնականէն և բուն Հայրապետական հին սկզբունքին ծառայելէն ուրիշ պաշտօն մը չը՛կրնար ունենալ, հետևաբար տեղական գործերու չը՛կրնար խառնուիլ երբեք. և այսպէս, թէ տեղական Կառավարութեան, թէ Պատրիարքի և Պատրիարքարանի աշխարհական կամ ազգային Իշխանութեան և թէ Ժողովրդեան հետ, Էջմիածնայ Ս. Սինո-

դին և անոր բարոյական Իշխանութեան վայելուչ յարաբերութիւններ ունենալով, խաղաղութեան պաշտօնեայ մը կրնայ համարուիլ ի մէջ Հայատէր Տէրութեանց :

Այս խնդրոյն մէջ ներքին խորհուրդ (arrière-pensée) մը, թշնամի մարդը միայն կրնայ ուզել նշմարել. իսկ մեք բաւական կը համարինք ըսել՝ թէ մեր նպատակն ուրիշ բան չէ՝ բայց միայն կրօնքի անիշխանական վիճակն իրօք դատապարտել, որու մէջ կը գտնուին այսօր գրեթէ ընդհանուր Լուսաւորչական Հայք : Այս ձայնն ու փափաքը միայն Թրքաստանու համար չէ. այլ Պարսկաստանի, Հնդկաստանի, Ռուսիոյ, Եգիպտոսի, Մոլտօվալաքիոյ և այլ հայաբնակ երկիրներու համար ևս. քանզի այս համարուած է Հայոց բարոյական կապը, և այս կապով միայն կրնայ Լուսաւորչականք միութիւն պահել, և ամէն մէկ մաս ժողովուրդ ասով իրեն տեղական Կառավարութեան սիրելի լինել :

Իսկ թէ այս յուսահատ սթափման ձայները լսելի կամ ընդունելի պիտի լինի՞ն թէ չէ. Զեմք գիտեր. Կամ թէ Էջմիածնայ Գերագոյն Իշխանութիւնն ունի՞ այնպիսի անձինք, որք այս փափուկ պաշտօնին պահանջած յատկութիւններն ունենան. Այդ մասին ալ տեղեկութիւն չունիմք, և մեր գիտցածը միայն սա է, որ,

Հայաստանի պատմագրական, կրօնագրական և աշխարհագրական գիծերը չը ճանաչող կամ չգիտցող Վարդապետը՝ չը՛ կրնար զԼուսաւորչականն արքայութիւն տանելու առաջնորդել :

Կ. Պօլիս 14 Յունվ. 1867.


Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Թիւ 3

ՕՆԻԿԻ

ՄՕՍՈՒՆԻ ԵՒ ՋՕՌԻ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ

(ՅՈՒԼԻՍ 25, 1904)






(*Արտատպուած «Հայրենիք» Շաբաթաթերթէն*)

Տպարան «ՀԱՅՐԵՆԻՔ»ի

27 Beach St. Boston, Mass. U. S. A.

1905



ՄԻՆԱՍ ԴՕԼՊԱՇԵԱՆ

(Գայլ—Վահան)



ՄՕՍՈՒՆԻ ԵՒ ՋՕՌԻ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ

(*Յուլիս* 25, 1904)

1904-ի գարունն էր.... Մշու դաշտը լցւում էր զօրք րով: Կառավարական շրջաններում լսւում էր ինչ որ գաղ նի հրահանգների մասին Սասունի նկատմամբ. բոլոր նշա ները կասկածի տեղ չէին թողնում, որ ազատ Սասունի ա մատչելի լեռների կատարներին կուտակւում էին սև ամպեր: Թիւրք կառավարութիւնը պատրաստւում էր հարւածով խորտակել ու ոչնչացնել բոլոր այն ուժերը, որո վերջին տասը տարւան մէջ բողբոջել էին 1894-ին ջարդւ փշուր եղած Սասունի աճիւններից: Սասունցին նորից դ դէմի պիտի հանդիպէր իր վաղեմի թշնամուն: Մահւ մենամարտի ժամն էր որ հնչում էր.... Քանի՛ քանի ա գամ հնչել էր դա սասունցու բազմադարեան կեանքու Կռւից խոյս տալու հնար չկար, քանի որ կառավարութիւ ինքն էր որ նախայարձակ էր լինում: Պէտք էր ընդուն մարտի հրաւէրը, կամայ ակամայ: Որքան էլ որ ստեղծ ւել էին, ըստ երևոյթին, հայկական դատին նպաստաւ հանգամանքներ՝ ա) մակեդոնական «բարենորոգումներ խնդիրը և բ) հայ դատի թշնամի հանդիսացող Ռո սաստանը զբաղւած էր ճապօնական պատերազմով — բա սասունցին հասած չէր համարում կռւի ժամը....

Սասունը նախայարձակ չպիտի լինէր, այդպէս էին թ լադրում հանգամանքները, գոնէ 1904 *տարւայ համ*

հց այդ ուղղութեամբ՝ Սասունը պիտի պաշտպանէր իր յութիւնը ամէն զոհողութեան գնով։

Այդ դէպքում՝ որոշուած էր սահմաններից զինուած խմբեր ազմամթերքով օգնութեան հասցնել Սասուն, իսկ Օսմ. այաստանի զանազան կէտերում կազմակերպել ասպատակա- ն խմբեր, կռւին ընդհանուր կերպարանք տալու, թշնամու -շադրութիւնը, հետեւապէս ուժերը մի քանի տեղերի վր. այ բաժանելու, որպէսզի թեթեւացուէր կռւող Սասունի րութիւնը։

Դեռ եւս ապրիլ ամսին Սասունի ազատ լեռների վրայ ածանւեց կռւի դրօշակը։ Սուլթանը իր կեղծ բանակցու- -իւններով խաբել չկարողացաւ հայ ֆէդայուն, կռիւը յայ- արարւեց աւելի վաղ, քան սպասելի էր — տաճիկ զօրա- ետները յարձակւեցին Սասունի վրայ այն վայրկենին իսկ, ոք կառավարութեան կողմից յարուցուած մի շարք միջ- որդութիւններից յետոյ, տեղի էր ունենում բանակցութիւն ոա և սասունցիների միջև։

Կռիւը բռնկեց. և թիւրքերի առաջին յարձակումը ետ ղւեց մեծ կոտորածներով։ Հրդեհը տարածւեց աւելի և ւելի հեռու, մարտական խմբերի գործնէութիւնը զանա- ան կէտերում անհրաժեշտ դարձաւ ինքնին։

Որոշուած ընդհանուր ծրագրի համաձայն, մի արշաւա- մբի կազմակերպութեան ձեռնարկեց Մ. . . .ի Կեդրոնական օմիտէն, գործնէութեան շրջան ընտրելով Բագրեւանդ գա- առը։

***

Ռուս տաճկական սահմանի վրայ ձգւած են իրար շա- ունակութիւն կազմող երեք պատմական գաւառներ — Կոգ- ովիտ, Ծաղկոտն և Բագրեւանդ։ Այդ շրջանումն է Սբ. ովհաննու վանքը, որի մօտ յարմարաւոր դիրքեր ունե- ող մի փոքրիկ շղթայով բաժանւած գտնւում են երկու այկական գիւղեր՝ Իւչքիլիսէ և Ղումլուպուճաղ։ Այդ ոկու գիւղերումն էլ կան զօրանոցներ՝ առաջինը 50, իսկ րկրորդը 30 զինւորներով։ Այս երկու զօրանոցները լինե- ւ էին յարձակման առաջին կէտերը։ Կար մի այլ զօրանոց ս, 50 զինւորներով, որ լինելու էր յարձակման երկրորդ կէտը։ Այդ էլ Մօսուն հայկական գիւղի զօրանոցն էր, ըն-

Արշաւախումբը երեք թևերի բաժանուած, միաժամանակ պիտի յարձակուէր այդ երեք զօրանոցների վրայ, ռըմբեր տեղալով և խորտակելով պահադնդերը, իսկ նրանց օգնութեան հասնող զօրքերի և քրդական աշիրէթների դէմ կռուելու համար՝ արշաւախմբերը զինուած էին մօսինի և բէրտանի հրացաններով։

Արշաւանքը կազմակերպող Կեդր. կոմիտէն մի քանի ամիս շարունակ մի կողմից ուսումնասիրում էր այդ շրջանի տեղագրութիւնը — զօրանոցներ, դիրքեր, ճանապարհներ և անցքեր — իսկ միւս կողմից պատրաստում էր փոխադրող խմբերն ու արշաւախումբը։

Հետևեալ կերպով ձեռնարկուած էր գործի —

Նախ աշխատանքները բաժանուած էին երկու մասի, — բուն զինուորական մասը յանձնուած էր կոմիտէի կողմից ընտրուած մի յանձնախմբի, որի երկու մարզիչները — մի պահեստի սպայ և մի աւարտած զինուոր — պարապում էին վարժութեան, հրացանաձգութեան և զինուորների ընտրութեան գործով։ Իսկ ռազմամթերքի, հագուստի և այլ պիտոյքների տնտեսութիւնը յանձնուած էր մի այլ յանձնախմբի։ Կար մի մարմին ևս, որ զբաղուած էր այդ մեծ ձեռնարկի գործադրութեան ծրագրով. նա ունէր իր ձեռքի տակ յատուկ խուզարկու մի խումբ։ Պէտք է չմոռնալ սակայն որ այստեղ ներկայացրած քարտէզը և ծրագրի վերջնական ձևակերպումը կազմուեցաւ բոլոր յանձնախմբերի խառն ժողովում, ուր ներկայ էին նաև ուղեցոյցները իրենց օգնականներով։

Իսկ ընդհանուր գործի վրայ հսկում էր Մ.. Կեդրոնական կոմիտէն իր ամբողջ կազմով. և երբ հարկը պահանջում էր՝ անդամներից ուղարկւում էին անմիջական կարգադրութիւններ անելու համար տեղն ու տեղը։

Արշաւախմբին զէնքի կանչելը և կռւի դուրս հանելը որոշուած էր 1904 յունիսի 25-ին (հ. տ.)։ Սակայն այդ որոշումը, ինչպէս նաև ծրագիրը ենթարկուեց փոփոխութեան շնորհիւ մի ցաւալի իրողութեան, որը կարևոր ենք համարում արձանագրել այստեղ։

Յունիսի 22 թէ 23-ին մեր մթերքների կեդրոնատեղու յայտնուեց 17 հոգուց բաղկացած, իրեն հնչակեան անուա

ների ասելով՝ Ջ..ի սահմանների վրայ երկու ամսից աւելի շրջելուց և երկիր անցնելու հնարաւորութիւն չունենալուց՝ յուսահատ անցել էր Մ.. Տեղին դաշնակցական գործակալը և հանգուցեալ Գայլ-Վահանը (Մինաս Դօլպաշեան) նկատելով որ զինուած և ձիաւոր խմբի ներկայութիւնը կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելով՝ կարող է մեր ամբողջ ձեռնարկը մատնել, իսկ նրանց երկիր անցնելու մտադրութիւնը մեր կանխորոշ ծրագիրը փճացնել, — առաջարկում է այդ խմբին ամէն տեսակ յարմարութիւններ՝ զէնքերը պահելու և զինուորներին իրենց ձիերով պատսպարելու, միայն թէ նրանք զինաթափ լինէին և մի երկու օր սպասելով մեր արշաւախմբի հետ միասին անցնէին երկիր։ Այդ նոյն առաջարկութիւնը եղաւ Մ...ի Կ. կօմիտէի կողմից ևս տեղին հնչ. մասնաճիւղին, դիտել տալով որ իրենց մի քանի մարդը ներս անցընելու պատրւակով մեր պատրաստ գործը չփճացնէին, — սակայն այդ պարոնները, որոնք արհեստ են դարձրել մի գլուխ «միութիւն» աղաղակել, մերժեցին մեզ հետ կուռի դաշտում միանալ։ Հակառակ այդ բոլորին՝ մեր կօմիտէն չզլացաւ նրանց ուղեցոյց տալ, որ մինչև սահմանը ապահով հասցնէ խումբը։ Իսկ սահմանագլխի շրջանում նորից դաշնակցականներն էին որ ապաստան տւին նրանց, իբրև յեղափոխականների, քանի որ հին-հնչակեանները չունէին այն կողմերում ոևէ կազմակերպութիւն։ Հին-հնչակեան մասնաճիւղը ցուցամոլութեան ջերմով բռնուած իր խումբը առաջ ձգեց, թէև վերջիվերջոյ ստիպուած եղաւ հետևելու մեր խորհուրդին՝ բաց թողնելով ձիերը, որ մեծ անյարմարութիւն էր՝ խմբի գնալիք ճանապարհների համար։

Չնայած դաշնակցականների այդ թանկագին աջակցութեանը, եսամոլ և նեղ կուսակցական ցաւով բռնուած մի հին հնչակեան ներկայացուցիչ յանդգնեցաւ նախատել մեր համեստ և խոնեմ Վահանին, և եթէ այդ յանդգնութիւնը անպատիժ թողւեցաւ, թէ իրեն՝ Վահանի և թէ կօմիտէի կողմից, այդ միայն նրա համար էր որ այդ շրջանը և ամբողջ ձեռնարկը կարող էր վտանգւել, և յեղափոխականի արիւնը յեղափոխականի ձեռքով թափւած՝ եղբայրասպանութեան ոճիրի բնոյթը կարող էր ստանալ հասարակութեան աչքում։

Մեզ համար վերին աստիճան անհաճոյ այս միջադէպը առաջ բերեցինք երկու նպատակով — ն ա խ՝ ցուցէ...

հասարակութիւնը իմանայ թէ ի՛նչպէս որոշ կարգի մարդիկ հասարակութեան աչքին փոշի փչելու համար «միութիւն» բառը շահագործում են անխղճօրէն, և ե ր կ ր ո ր դ՝ ցոյց տալու թէ կուսակցական եսամոլութիւնը ո՛րպիսի չարիքներ կարող է պատճառել յեղափ. գործին։

Վերջնական կազմով 14 հոգի հին-հնչակեաններ յունիս 24-ին դուրս եկան այդ շրջանից դէպի Իւչքիլիսէ։ Ենթադրւում է որ մեր ծրագիրը նրանց յայտնի էր։ Յունիսի 31-ին այդ խումբը Ղումլուպուճաղ գիւղի մէջ նշմարւում է զապտիէներից և ընդհարման բռնւելով՝ քաշւում է դիրքերը և երկար կռւում։ Նրանք կռւել էին քաջաբար անհամեմատ մեծ ուժերի դէմ և յաջողեցրել էին 20-ի չափ քիւրդեր և զապտիէներ գլորել, և իրենք էլ 8 հոգի զոհ տալով նահանջել էին։

Այս դէպքից անմիջապէս յետոյ, այդ շրջանի հայկական մի գծի վրայ կողք կողքի ընկած հինգ գիւղեր — Ղումլուպուճաղ՝ 40 տուն, Իւչքիլիսէ՝ 30, Սայդօ 5, Ղարաբազար՝ 15 և Ջուզան՝ 40, ենթարկւեցին թալանի, կողոպուտի և աւերման։ Գիւղերը դատարկւեցին, բաւականաչափ երիտասարդ մարդիկ սպանւեցին, օրիորդներ և կիներ բռնաբարւեցին — մի խօսքով տաճկական բռնակալութիւնը մի անգամ էլ երևան բերեց իր գազանային հակումները, մեր ծրագրւած արշաւանքին ընծայելով վրէժխնդրութեան մի նոր ու թարմ դրդիչ։

Ամբողջ այդ շրջանը — շնորհիւ հին հնչակեան այդ խմբին — իր վրայ դարձրեց կառավարութեան ուշադրութիւնը. Բայազիտից, Դիատինից և Ղարաքիլիսայից զօրքեր բերւեցին այդ տեղ, զօրանոցներում և պահականոցներում եղած պահագնդերի թիւը կրկնապատկւեց և եռապատկւեց։ Դրութիւնը այդ շրջանում ծանր կերպարանք ստացաւ։ Այսպիսի աննպաստ պայմանների մէջ էր որ վիճակւած էր սկսել արշաւանքը....

Գործի բարոյական պատասխանութիւնը թո՛ղ ծանրանայ այն մարդկանց գլխին, որոնք կռւի դաշտում անգամ մոռացան մեր ընդհանուր դատի շահերը։

Այսպէս որոշեց մեր զինւորական խորհուրդը իր վերջին նստում, ծրագրի մէջ մտցնելով նաև մի արմատական փո-

և ապա Իւչքիլիսէի և Ղումլուպունճաղի արշաւանքը այլեւս անհնարին դարձած համարելով՝ ծրագրից դուրս ձգուեց։

Եւ այս անգամ արշաւանքը հետեւեալ կերպով ծրագրըւեցաւ։

Մօսունի զօրանոցը իր ուժեղացած պահագնդերով մնաց արշաւանքի առաջին կէտը, իսկ յարձակման երկրորդ կէտը ընտրուեց Ջօռի պահականոցը, ուր նմանապէս կրկնապատկըւած էր զօրքի թիւը։ Ծրագրի մէջ առնուեցաւ նաև գիլանցի քրդերի մի մեծ օբա, որ իր 60-ի չափ վրանները դրել էր Ջօռի պահականոցի մօտակայ ձորակում, երկու լանջերի վրայ։

*
* *

Յունիս 6 (19), երեկոյեան ժամը 9-ին գիւղական մի ընդարձակ պարսպապատ կալատեղի վրայ մեղմիկ տեղացող անձրեւի տակ, արշաւախումբը սպասում էր շարժուելու հրամանին.

Հայ կամաւորների այդ խումբը, — որ մօտալուտ հրաժեշտի տխուր տպաւորութեան հետ ներշնչում էր նաև ոգևորութիւն եւ քաղցր իղձերի իրականացման վառ յոյսեր — բաղկացած էր ուղիղ 102 հոգուց, որոնցից 85 զինուած էին հրացանով, մնացեալ 17ը ատրճանակներով և դաշոյններով։ Այդ 17ից 2ը տանում էին դրօշակները, երկուսը իբրև օգնական բժիշկ կրում էին դեղատուփերը, իսկ 13-ը խմբին միացել էին որպէս բեռնակիրներ, վերցընելով փամփուշտի աւելորդ պաշար։

Աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ մի քանի վիճակագրական տեղեկութիւններ խմբի կազմութեան մասին, քաղելով զինուորական մարմնի կազմած ցուցակից։ Դրանցով մի որոշ գաղափար կազմել կարելի է տալ ձեռնարկի լրջութեան վրայ։ 102 զինուորներից 71ը ռուսահպատակ հայեր էին և 31ը տաճկահպատակ։ 102 զինուորներից 20ը նախկին կռիւների մէջ եղած և առհասարակ գործի մէջ այս կամ այն կերպով մասնակցութիւն ունեցած էին, իսկ 82-ը նոր մարդիկ։ Տարիքի համեմատութեան գալով, վիճակագրութիւնը հետեւեալ պատկերն է տալիս.

78 զինուոր 20ից մինչև 30 տարեկան
18 » 30 տարեկանից վեր
4 » 40 ,, վեր

50 տարեկանները թող զարմանք չպատճառեն։ Որքան էլ այդ հասակը անսովոր լինի կռւի դաշտ գնացողի համար, պէտք չէ մոռանալ որ ազատութեան անունով մղւող կռիւը ընդունակ է ասպարէզ քաշել դարերով ճնշւած ժողովրդի իսկական զաւակին, ինչ տարիք էլ որ նա ունենայ։ Տարիքների այդ բազմազան ու խայտաբղէտ համեմատութիւնը յատուկ է ընդհանրապէս կամաւոր խմբերին։

Սակայն ամէնամեծ տոկոսը՝ 37%ը, այն է 38 հոգի 20—25 տարեկան էին, որոնցից 12ը ճիշդ 20 տարեկան, իսկ 13ը 21 տարեկան։ Այս տարիքը բոլորից շատ համապատասխանում է Գործի հրապոյրին։

102 հոգուց 18ը ամուսնացած էին, իսկ 84ը ամուրի։ Ռուսահպատակ զինւորներից մի որոշ թիւ՝ 17ը եղել են ռուս զինւորական ծառայութեան, մէկը պահեստի սպայ. այս հանգամանքը շատ էր թեթևացնում վարժութիւնների գործը, մանաւանդ դրանք՝ որպէս բոլորովին պատրաստ կռւողներ, տասնապետի յարմար թեկնածուներ էին համարւում։ Թէև պէտք չէ մոռանալ այն հանգամանքը, որ ֆէդայական կռիւների մէջ դարբնւած և յեղափոխական արկածներից դուրս պրծած հայդուկին չի կարող փոխարինել և ոչ մի զինւոր, որքան էլ նա մնացած լինի զինւորական սովորական ծառայութեան մէջ -- այս արդէն իրողութիւն է։

Կարդալ գրել իմացողների թիւը խմբի մէջ հաշւըւած է 43, որ կազմում է 42%։ Վիճակագրութեան այսպիսի հետևանքը ցուցէ շատերին տարօրինակ թւի, և յիրաւի, «միթէ՞ կամաւոր հայրենասէրների կէս մասից շատը չէր իմանում կարդալ գրել», հարց կը տան շատերը։ Պատասխանը շատ որոշ է. յեղափոխութիւնը մեր ժողովրդի մէջ միանգամայն ընդհանուր հանգամանք ստանալով, նա ասպարէզ է քաշել բոլոր դասակարգերին հաւասարապէս, որից ակներև է որ կեանքի ներկայ պայմանների յեղաշրջումը մեր ժողովրդի համար դառել է անդիմադրելի պահանջ։ Այս եզրակացութեան բերում է մեզ նոյնպէս պարապմունքների վիճակագրական տախտակը, որ ահա.

102 զինւորներից 44ը պատկանում են երկրագործ դասակարգին, 16ը պարապում էին զանազան արհեստներով, 10ը խոհարար, ծառայ և նման աշխատաւորներ են. իսկ 32ը

կանում են մեծ մասով գաղթականները, տնից տեղից հալածական, բախտից հալածուած այդ թշուառները, որոնք իրենցից ներկայացնում են մի մարմնացած բողոք անիրաւ աշխարհի դէմ.

***

Մի գաղափար տալու համար թէ որքան փող է նստել Մուսուն-Զօռի արշաւախումբը, առաջ կը բերեմ մի քանի թւանշաններ, որոնք կլոր հաշւով եղած են, որովհետև ծախսի գլխաւոր առարկան, օրինակ հրացանը, այլևայլ ժամանակ, այլևայլ գներով են ձեռք բերւում, և Մ...ի Կեդր. Կօմիտէն ինքը չէ գնած դրանք, այլ ստացել է զէնք գնող դաշնակցական մարմիններից։

102 զինւորներից բաղկացած արշաւախումբը ունեցել է 85 հրացան —

60 բերդան հրացան, հատը 30 ռուբլի	1,800.00
25 մօսին » » 40 »	1,000,00
15,000 փամփուշտ բ. » 5 կօպէկ	750,00
8750 » մ. » 10 »	875,00
Ուրիշ ռազմամթերք	658,56
Զէնքի փոխադրութիւն	1043,85
Փամփշտանոցներ	177,50
Զինւորների տեղափոխութիւն	703,62
» ապրուստը	260,84
Արշաւախմբի հագուստ	1005,08
» ուտեստ	302,82
» մօտ պատրաստ դրամ	456,00
Համագումար ռուբլի	9,033,27

Արշաւախումբը հետը ունեցել է նաև 80 հատ ռումբ, երեք տարբեր մեծութեամբ։

Հրացանների և փամփուշտների ծախսերից դուրս, միւս ծախքերը եղել են նաև Երկաթ — Թոխմախ խմբի 16 հոգու համար, որոնք Արճէշի մօտ կռւի բռնւեցան, 1904 մայիս 20-ին։

***

Արշաւախումբը բաժանուած էր երկուսի.

1.) «Մասիս» խումբ, հինգ տասնեակ զինւորներով և մի

[illegible]

էր խմբապետ Մ․-ին և նրա երկու օգնականներին — Կիլի-կեցի Սիմոնին և Լի Հունգ Ջանգին։

2․) «Արտաւազդ» խումբ, 3 ու կէս տասնեակ զինուոր-ներով և 7 բեռնակիրներով, որին ղեկավարելու կոչուած էր խմբապետ Գայլ Վահանը և նրա օգնական Բարկէնը։

Իւրաքանչիւր խումբ ունէր մի դրօշակիր, իր յատուկ դրօշակով, մի բժիշկ իր շարժական դեղատնով և երկու երեք ուղեցոյց։

Իւրաքանչիւր խումբ ունէր իր զինուորական խորհուրդը, բաղկացած փորձառու և կրթուած զինուորներից։ Զինուորա-կան այդ երկու խորհուրդները միասին կազմում էին Ընդ-հանուր Զինուորական Խորհուրդը՝ երկու խմբերի միացեալ գործունէութեան ընթացքում։

Խումբը զինուած էր այս կերպ․ իւրաքանչիւր զինուոր ունէր վերցրած մի հրացան, մօսինի կամ բերդանի, 250—350 փամփուշտ՝ եթէ վերցրածը բերդան է, 350—450 հատ փամփուշտ՝ եթէ մօսին է։ Մի հատ ռումբ, տարբեր մե-ծութեամբ, մի ատրճանակ տարբեր սիստէմի, մի դաշոյն։ Ատրճանակ և դաշոյն տրուած էր զինուորների մի մասին մի-այն, ինչպէս վերը ասացինք։ 3—4 փամփուշտանոցներ, 1 պայուսակ, 1 իւղի աման, 1 հատ սուլիչ, նաև հրացանի ան-հրաժեշտ մի քանի մասեր («պրօտիրկա», «ատվիօրկա» ևն․)։

Խումբը առանձնապէս աչքի էր ընկնում իր գորշ հա-մազգեստով, գոյնով նման շրջապատի առարկաների գոյնին, աննկատելի դարձնելու համար զինուորներին թշնամու տես-քից։ Համազգեստը տալիս էր խմբին մի կազմակերպուած գնդի տեսք, մանաւանդ շնորհիւ լեռնականների յատուկ կօզակեան գլխարկներին։ Համազգեստը այսպէս էր կազ-մուած․ իւրաքանչիւր գինուորին տրուած էր 1 սիրուն գլխարկ, 1 պիտճակ, 1 վարդիք, 1 բաճկոն՝ մոխրագոյն կտորից, 1 բլուզ, 1 գօտի, 1 ծուղա երկաթապինդ կօշիկներ, 2 զոյգ գուլպայ, 1 շապիկ, 1 անդրավարտիք, 3 թաշկինակ, հրա-ցանը մաքրելու շորեր, 1 ջրի աման և ամէն տասնեակին 2-ական անթափանց վերարկու։

Իւրաքանչիւր խումբ ունէր իր քարտուղարը՝ դէպքե-րը արձանագրելու համար, նաև իր դիտակը և իր փողը։

Խմբի պաշարը պատրաստուած էր շատ թեթև, միևնոյն ժամանակ սննդարար կերպով։ Իւրաքանչիւր զինուորի 7—



«ԱՐՏԱՒԱԶԴ» խումբը



«ՄԱՍԻՍ» Խումբը

'ր կ՚անի մօտ 6—8 ֆունտ, գաթայ 1 ֆունտի չափ, հալւա
—6 ֆունտի չափ, 2—3 ֆունտ խաշած միս, նաև ջրի տա-
ճան լի ջրով և ջամբաթ բերաններր առհասարակ թաց պա-
;ելու համար։ Ահա այսպէս պատրաստութեամբ ֆէդայ-
ական երկու խմբերը սպասում էին շարժւելու հրամանին։
Զինւորական խորհուրդը զինւորներից փոքր ինչ հեռու
'ր բացօդեայ նստում ընդունեց Մ.. Կեդրօնական կօմի-
ոէի վերջին հրահանգները և ցրւեց։ Անմիջապէս նշան
որւեց և խումբը պատրաստ էր շարժւելու։
Արշաւախմբի մեկնումը Գ. գիւղից սրտաշարժ էր և
ազդու։
Ամէնասառնարիւն մարդը չէր կարող առանց զգածւե-
ու նայիլ դարերով ճնշւած ազգի բախտը վճռող ֆէդայա-
յան այդ խմբի վրայ, և առանց արցունքի ականատես լինել
'րան դէպի անհաւասար կռիւ բարիերթ մաղթող ժողո-
վրդի՝ մեծի ու փոքրի, կանանց ու ծերունիների փայփայ-
անքներին։ Ձեր առաջ կանգնած էր հայ կամաւորների
ւումբը՝ կազմ ու պատրաստ — Նրա վրայ տարւած բո-
որ հոգսը, ամիսների ընթացքում անխոնջ ջանքերը պսակ-
.ել էին յաջողութեամբ. ոչ կառավարական սարսափը, ոչ
րտեսների և դաւաճանների արարքը խափանել չկարողա-
յան գործը։ Եւ այդ բոլորը շնորհիւ այն պարագային, որ
ազատագրական շարժումը այլևս անհատների գործը չէր,
'ր նա ընդունել էր ժողովրդական բնաւորութիւն, որ այդ
գաղափարը մարմնացում էր ստացել բոլոր դասակարգերի
մէջ։ Յեղափոխականը ո՛չ միայն ընդունելութիւն, այլև
հիւրասիրութիւն և պատիւ էր գտնում իւրաքանչիւր հայի
մօտ. յեղափոխական զէնքը իր տան մէջ ընդունելու և պա-
հելու և պատրաստ էր յետին գիւղացին անգամ։ Մենք յա-
ճախ պատահել ենք գիւղացիների, որոնք վշտոտ սրտով տր-
տունջ էին յայտնում որ իրենց տունը չի՛ արժանացել յե-
ղափոխականի այցելութեան։ Ահա՛ մեր ժողովրդի գիտա-
կից վերաբերումն էր — այն ժողովրդի որ մի քանի տարի
առաջ մի մեռած դիակ էր ներկայացնում — որ ծնեցնում
էր մեր մէջ վաղուց փայփայած յոյսերի իրականացման ե-
րաշխաւորութիւնը....
Ձէ՛, այդ ժողովուրդը կորչելու ժողովուրդ չէր. Նա

վրայ արշաւախմբի մեկնումը՝ գիւղական հասարակութեան բուռն ոգեւորութեան և քամւող արտասուքների ուղեկցութեան վայրկեանին։ Տեսարանը յուզիչ էր.... յուզիչ էր մանաւանդ, երբ խօսեցին խմբապետները. ականջիս մէջ խըժըժում է դեռ նրանց վերջին խօսքերը —

« Տղերք, երդւեցէք, երդւեցէք որ գնում էք մեր բըռնաբարուած քոյրերի պատիւը պաշտպանելու։ Երդւեցէք որ գնում էք մեր թշւառ մայրերի վիշտը սփոփելու, երդւեցէք, որ գնում էք արտասուքով և արիւնով ողողուած հայրենիքի փրկութեան շէնքին մի քար էլ աւելացնելու։ Երդւեցէք, որ գնում էք Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակը բարձր պահելու.....»

Գիշերային լռութեան մէջ, գիւղական ծուռումուռ փողոցներում արձագանգ գտան նրանք. հարիւրաւոր բերաններից հնչեց «Երդւում ենք», և համբոյրների տարափի տակ խումբը առաջ շարժւեցաւ։

* * *

Որպիսի՜ վեհ և միևնոյն ժամանակ սրտաշա՜րժ տեսարան։ Առաջից գնում էր ձիու վրայ իր պարթև հասակով բազմած, յաղթական քայլերով, գիւղական համակրելի քահանան։ Նրա յետևից քայլում էր դարաւոր կաղնին յիշեցնող հուժկու, յաղթանդամ Խենթը։ Գալիս էին ապա խմբապետ Մ.ը, դրօշակրի հետ միասին, որ ոսկեթել դրօշակ ունէր բռնած, ու օգնականները և ապա «Մասիս» խմբի երկար շղթան, զոյգ զոյգ կարգով։

«Մասիս»ից յետոյ, մի քանի քայլ հեռաւորութեան վրայ, գալիս էր խմբապետ Գայլ Վահանը, միայնակ, ապա նրա օգնականը՝ Կապիտան Բաքկէնը, դրօշակրի հետ միասին, որ նոյնպէս ոսկեթել մի դրօշակ ունէր ձեռին։ Եւ ապա նրանց յետևից գալիս էր «Արտաւազդ» խմբի երկար շղթան, դարձեալ զոյգերի կարգով։

Իսկ այդ բոլորին յետևում էր գիւղական ժողովրդի խուռն բազմութիւնը՝ բաղկացած երիտասարդներից, մանուկներից ու ծերերից, որոնք օրւայ դաշտային ծանր աշխատանքի յոգնածութիւնը մոռացած՝ ժամերով սպասում էին ողջերթ մաղթելու համար հայ քաջերին։

Երբ արշաւախումբը հասաւ գիւղի սահմանին, տեղի ունեցաւ մի սրտաշարժ տեսարան։ Այդ տեղ էր հաւաքուել գիւղի կանանց և աղջիկների մի մեծ բազմութիւն, վերջին անգամ յաջողութիւն մաղթելու իրենց կտրիճներին։ Հազիւ Փէդայական շղթայի ծայրը հասել էր նրանց մօտ, կանացի օրհներգների և բարեմաղթութիւնների հետ միաժամանակ՝ բարձրացան լացի, հեկեկանքների սրտաճմլիկ աղաղակներ — լաց էին լինում ծերունիները, լաց էին լինում երիտասարդները, լաց էին լինում և մանուկները....

Մարտական ոգևորութեան, վաղո՛ւց փայփայւող յոյսերի, ողջերթի դառնութեան — մի խօսքով բոլոր այդ զգացումների թարգմանն էր հանդիսանում փղձկող սիրտը ժողովրդի, — դարերո՛վ ճնշուած, տանջուած, հալածուած ժողովրդի սրտի հեկեկանքն էր խօսում.... Լացը շարունակւում էր դեռ երկա՛ր....

Այդ րոպէին մէկը կար միայն, որ չէր արտասւում, չէր հեկեկում, այլ ուրախ սրտով, հաստատուն քայլերով, լի գիտակցութեամբ առաջ էր գնում այնտեղ, ուր Մայր Հայրենիքի թշուառութիւնն էր նրան կանչում, ուր մի ամբողջ ժողովրդի տառապանքը ծառս էր ելնում անսիրտ աշխարհի անտարբերութեան դէմ։

Այդ հայ Փէդային էր։

Նա գնաց և իրեն հետ տարաւ մեծամեծ յոյսեր։

***

Յուլիս 11-ի (հ. տ.) լուսաբացին՝ ալեւոր Մասիսի ստորոտը հանգչող Ջնգլներ բարձունքների Ռէսի-Գոմեր բլուրի վրայ ծածանւեցին երկու դաշնակցական դրօշներ։ Այդ վերջին կայանն էր, ուր պէտք էր տեղի ունենար զինուորական խորհրդի վերջին նիստը, և որտեղից պիտի կատարւէր առաջին յարձակումը թշնամու վրայ։ Այդ բլուրից դէպի հարաւ, մի սիրուն տափարակի վրայ, երևում էր Մօւունը՝ հայկական մի մեծ գիւղ, որի մի ծայրում հեռադիտակի միջից նկատւում էր զօրանոցը։ Դէպի արևելք բլուրի ստորոտում, մի ձորակի մէջ ընկած էր Ջօռի պահականոցը։

Ո՛չ արեգակի կիզիչ ճառագայթները և ո՛չ էլ երկար ճա-

լացնում հայ զինուորի ոգեւորութեան թափը։ Նոյն բլրի լանջում, մի խոտաւէտ մարգագետնի վրայ կանգ էր առած դրօշակի տակ՝ փամփշտապատ տասնեակների շարքը, իսկ մի փոքր հեռու՝ երկրորդ դրօշակի տակ՝ կատարւում էր զինուորական խորհուրդ, երկու խմբապետների, երեք օգնականների և բազմաթիւ տասնապետների մասնակցութեամբ։ Դիտակները երբեմն դարձնում էին այս ու այն կողմ, չափում էին հեռաւորութիւնները, ճշդում էին յարմարաւոր դիրքերը ու խորհրդակցում, մինչև որ պատեց մութը, ու տիրեց մրափը, փոթորկալից առաւօտը կանխող։ Գիշերւայ ժամը 2-ին նշան տրւեց, ոտի կանգնեց արշաւախումբը ու խաղաց առաջ։

Բլրի ստորոտում, զինուորական խորհրդի որոշման համաձայն, արշաւախումբը բաժանւեց երկու մասի — մեծ խումբը Գայլ—Վահանի հրամանատարութեան տակ բռնեց Մօսուն տանող ճանապարհը, իսկ փոքր խումբը գրաւեց Ջօրի ճանապարհը։ Գիշերային լռութիւնը մի վայրկեան թեթև աղմկւեց հրաժեշտի շշուկով, և հետզհետէ հեռաւորութեան մէջ անլսելի սկսան դառնալ զէնքերի խուլ շաչիւնը։

*
* *

Մօսունի մի ծայրում, Քօրուն տանող ճանապարհի վրայ ընկած էր անշուք զօրանոցը, իր ցածլիկ պարսպապատ բակով, որտեղ բացօդեայ գիշերում էին՝ Իւչքիլիսէի դէպքերի պատճառով նոր աւելացրած զօրքերը, որովհետև զօրանոցի սենեակները անբաւական էին նորեկները պատսպարելու։ Զօրանոցում գտնւող զօրքի թիւը ճիշդ հաշւով 160 էր, որոնցից 50-ը նորակոչներ։ Զօրանոցից մի փոքր հեռու գիւղական ջրաղացի մօտ ցցւած էին երկու սպիտակ վրաններ։

Երկու ժամւայ ճանապարհ կտրելով, 1904 յուլիս 12-ին (25), առաւօտեան ժամը 4-ին «Արտաւազդ» խումբը երեք կողմերից պաշարեց զօրանոցը և յիշւած երկու վրանները. Երկու ֆէդայի կտրեցին Բայազէտի հեռագրական թելերը, իսկ չորս ռմբաձիգներ խմբից բաժնւելով՝ աննկատելի կերպով իրենց ձգեցին զօրանոցի կտուրը։ Այդ ժամանակ միայն զօրանոցի շունը հաչեց, և հրացանի փողին կռթնած պահապան զինուորը, սթափւելով, ձայն տւեց «Օ քի՞մ» (Ո՞վ է)։ Պահապանի ձայնը խեղդւեց կոկորդի մէջ, ո

ցոյց խենթի գնդակը ցած էր գլորել պահապանին։ Գրեթէ նոյն վայրկենին զօրքը ոտքի կանգնեց և զօրանոցի մէջ եղողները դուրս թափեցին, շատերը չալկանց։ Այդ վայրկենին երկու ռումբ միաժամանակ ընկան ու պայթեցին խռնուած զօրքի մէջ. աջ ու ձախ թափւում էին գալարուող դիակներ.... Կենդանի մնացող թիւրք զինուորները սարսափահար զօրանոց մտան և զինուելով, ներսի հրամանների ճնշումի տակ, փորձեցին դուրս գալ, բայց երրորդ, չորրորդ ռումբերը աւերում գործեցին շէնքի մէջ, ջարդ ու փշուր անելով դուռը, գետին թափելով սարսափահար զինուորների։ Կռւի կենտրոնատեղին էր դա։ Իսկ այդ տեղից մի փոքր հեռու, պարիսպների վրայից տեղում էր գընդակների տարափը՝ աջ ու ձախ սփռելով թիւրք դիակներ։

Զօրանոցի բակի մէջ իրարանցում էր տիրում. այդ միջոցին յանկարծ լսւեց խմբապետի ձայնը՝ «Թշնամին, տըղե՛րք», և նա ինքն էլ, տեղացող գնդակների տակ մօտեցաւ հանդիպակաց պարսպին։ Վրաններից դուրս թըռած 16 զինուորներ, որոնք պարսպի յետևից կրակ էին տեղում դէպի բակը, մի ակնթարթում յետևից պաշարւեցին և տեղն ու տեղը կոտորւեցան։

Հէնց նոյն վայրկենին, մի փոքր հեռու, մթերանոցի մօտ խմբուած զինուորների մէջ պայթեց Համօի ձգած ռումբը — թիւրքերից մէկը միայն մնաց կենդանի։ Երկու ժամ գրեթէ չարունակ անընդհատ տևող մօսինի հրացանների և ռումբերի կրակից յետոյ, տիրեց մի գերեզմանային լռութիւն. զօրանոցում այլևս կենդանի մարդ չէր մնացել. Թիւրքերից շատ քիչեր միայն յաջողել էին զօրանոցի յետևի մի փոքրիկ դռնակից դուրս պրծնել և գիւղի մէջ պատսպարան գտնել։ Այդ էլ շուտ յայտնի եղաւ, երբ հրացանների և ռումբերի ձայները դադարելուց հազիւ սիրտ առած, հայաբնակ գիւղի տներից դուրս գալ սկսեցին տղամարդիկ։ Նրանք յայտնեցին որ իրենց տների մէջ կան նաև գիշերող զինուորներ, որոնք ըստ սովորութեան անարգել են հայի ընտանեկան սրբութիւնը....

Այս բանը հաստատւում է նաև Փօլսի պատրիարքարանում ստացւած յուլիս 7՝ համար 880, հետևեալ պաշտօնական գրութիւնով. — «Ամսոյս 3-ին Մօսունի գիւղը յեղափո-

կը տարածէին քրդերը։ Մօսունի զօրապետ հարկ կը համարի Համիտիէ զօրքերու Սանճաքտար Իւսուֆ աղան և անոր մարդիկ 300 ի չափ քրդեր օգնութեան կանչելով, իւրաքանչիւր հայու տուն 2—3 ը օթևանեցնել, որոնք գիշերուան մէջ, միայն բայազէտցի Նաւօեան Մկրտիչի տունէն ու խանութէն գողցած տարած են 40—50 ոսկիի ապրանք։»

Այդ տեղեկութիւնը աւելի ևս կատաղեցրեց Փէդայուն, սկսեց գիւղի մէջ, փողոցներում և տուներում խուզարկութիւն, բաւականին զինուորներ հէնց այդ միջոցին սպանւեցան։ Գիւղը բոլորովին մաքրւեց տաճիկ պիղծ զինուորներից։ Այդ յիշատակելի կռւում, Մօսունի մէջ, հայ Փէդայու գնդակներին զոհ գնացին 120—130 Թիւրք զինուորներ․ իսկ հայ դինուորներից ընկաւ մէկը և վիրաւորւեցին երկուսը։

***

Ընդհանուր ոգևորութեան հետ բացւեց ծանր դէպքերի առաւօտը։ Տեղական հայ գիւղացու աչքերի առջև պատկերացաւ տաճիկ զօրքերի և քրդական բարբարոսութիւնների հեռանկարը — հազիւ մի շաբաթ էր անցել հարևան հինգ գիւղերի աւերմունքից և կոտորածից, քօչելուց զատ ուրիշ ելք չկար։ Մի ժամում դատարկւեց Մօսուն գիւղը․ 400-ի չափ ամէն դասակարգի գիւղացի, համբուրելով հայ զինւորների հրացանի փողը՝ բռնեցին Ռուսաստանի՝ այդ «քրիստոնեայ» պետութեան ճանապարհը։ Դրանց միացաւ նաև հարևան Քօրուն հայ գիւղի բնակիչները, որոնք լսելով Մօսունի պահնորդ գունդի կոտորածը, սարսափահար գլուխ էին փախցնում։ Մի երկու տասնեակներ շրջապատեցին գաղթողներին և շարժւեցին դէպի լեռնային դիրքերը։ Իսկ միւս տասնեակները քաշւեցին գիւղի գերեզմանատունը, որ լիքն է խաչքարերով, կանգնեցնելու համար զօրքերի և քրդերի մօտալուտ յարձակումները — Նրանք շրջականերից՝ գիշերային կռւի ձայնից հաւարի գալով, ուզում էին գաղթողներին ձեռք ձգել։ Քրդերի խուժումը շարունակւում էր անընդհատ․ երկու տասնեակներ հերթով դիրք բռնելով թշնամու գնդակների տարափի տակ, ժամանակ էին վաստկում՝ գաղթող ժողովրդին լեռ հասցնելու։ Այդ կռւի մէջ ընկաւ բնիկ երևանցի 30 տարեկան Արտաշ Տէր Մատթէոս-

***

Ջնգլներ կոչուած բարձունքների ստորոտում, հիւսիս արեւելքից դէպի հարաւ ընկած է մի ձորակ, որ ձգուելով և ոլորուելով գնում է Ռէսի-Գոմեր սարի բլուրի մօտ վերջանում է մի կիրճով։ Դրա բաւականին նեղ անցքից մի ճանապարհ տանում է ձեզ դէպի Մօսուն, ապա Բայազէտ։ Այդ ձորակի մէջ ընկած է օսմանեան Ջօռի պահականոցը, որտեղ գտնւում էին 35—40ի չափ զօրքեր։ Բացի դա, ձորակի երեք ճիւղերի միացած տեղում, սարալանջերին փռուած է քրդական մի աշիրէթի՝ Զիլանցիների օբան, 60ի չափ վրաններով։ Այդ պահականոցի վրայ յարձակումը յանձնուած էր «Մասիս» արշաւախմբին։ Խմբապետի ուշադրութիւնից չէր վրիպել կիրճի հսկողութեան կարևորութիւնը, մանաւանդ այն պարագայի համար, երբ զօրքերին միանային նաև այդ վրաններում ապրող քրդերը, որոնց կռուողների թիւը 100ից պակաս չէր լինի։ Յուլիս 12ի (25) դեռ ևս աղջամուղջին, արշաւախմբի տասնեակները կարգով դիրքեր գրաւեցին կիրճի մուտքից սկսած մինչև վրանների թիկունքի ժեռուտները և սպասում էին խմբապետի նշանին, որ իր հերթում, սպասում էր Մօսունի վրայ մօտալուտ յարձակման ընթացքին։ «Մասիս» խմբից մի տասնեակ հսկում էր բարձունքների վրայ, թշնամուն թոյլ չտալու որ գրաւէր այդ դիրքերը։ Մօսունի յարձակումը երկար սպասել չտըւեց։ Առաջին իսկ ռումբերը արձագանգ գտան ամէն ուրեք։ Ջօռի պահականոցի պահապանը սարսափեց այդ անսովոր պայթիւնի ձայնից և ռոպէապէս հրացանը պարզեց օդի մէջ ու արձակեց։ Անգիտակցօրէն արձակեցին նոյնպէս տասնեակներից մի երկուսը։ Այդ ձայների վրայ զօրքերը դուրս թռան, զէնքը ձեռքները, այդտեղ վազեցին նոյնպէս քրդերը, որոնք միանալով զօրքերին, վազ տուեցին դէպի կիրճի մուտքը։ Յարմար րոպէն պատրաստ էր. փողը նշան տուեց, և միաժամանակ ամէն կողմերից տեղաց գնդակների կարկուտը։ Դիակները ճօճացին իրար վրայ, սարսափը տիրեց ձորակին, ուր զօրքերն ու քրդերը գլուխը կորցրած՝ այս ու այն քարը, այս ու այն թուփը վազվզելով՝ գլորւում էին հարիւրաւոր գնդակների տարափի տակ։ Հրացանների կրակը տևեց մինչև առաւօտ։ Լոյսը բացւեց, լուսորտացող թիւրք զինուորների տեղ, նրանց դիակներն էին


Այդ կոտորածից ազատւեցին քչերը միայն, որոնք Ռէսի-Գոմեր սարի վրայ դիրք բռնած՝ հատ ու կտոր պայթիւններով իրենց ներկայութիւնն էին ցոյց տալիս։ Այդ տեղ կային քիւրդ կանայք և երեխաներ, որոնք վրաններից դուրս գալով՝ քաշւել էին հակառակ կողմի բլուրները — հրամայւած էր խնայել նրանց։ Այս կռւում սպանւեց նաև իր քաջութեամբ անուն հանած Թիւրք Էլբաշին, իր որդու հետ միասին։ Երկու ժամ տևող կռւից յետոյ, ձորակը լըռւեց և նրա մուտքն ու դիրքերը գրաւող մեր տասնեակները քաշւեցին։ Դրանից յետոյ սկսւեց ծանր օրւայ յամառ ու երկարատև կռիւը։

***



Գաղթող ժողովրդին ուղեկցող մի երկու տասնեակ, ինչպէս և Ջօռի վրայ յարձակւող տասնեակները սկսեցին բարձրանալ և փոքր առ փոքր դիրքեր գրաւել, միանգամայն անընդհատ կրակ տեղալով թշնամու վրայ, և գրեթէ ամէն անգամ թափթփելով նրանցից մի քանիսին։ Այդ օրւայ կռիւները նշանաւոր եղան թշնամու ունեցած կորուստի մեծութեամբ և մեր մի երկու ընկերների ցոյց տւած անասելի քաջութեամբ և հերոսական մահով։

Քրդական մի չէյխ, գլուխ անցած կատաղի ահագին մի խուժանի, փրփուրը բերանին, սալաւաթ կանչելով և խրախուսանքներ կարդալով, վրայ է տալիս Վահանի, Բաբկէնի, Համօի և Գարեգինի դիրքերի վրայ, բայց յետ է մղւում կորուստ տալով։ Վահանի և Բաբկէնի հարւածները թշնամու շարքերից գլորում էին երկ-երկու դիակներ։ Բաբկէնի՝ կռւելու ժամանակ պահպանած սառնարիւնութեան, ճիշդ նպատակին խփելու ընդունակութեան և մինչև վերջին շունչը յամառօրէն կռւելու տոկունութեան իբրև ապացոյց՝ ականատեսը պատմում է հետևեալը․

Բաբկէնի գտնւած դիրքին իշխելու համար 12 հեծեալ քըրդեր փորձեցին մի պտոյտ գործել և գրաւել մի ուրիշ բարձըր դիրք, բայց քաջ Բաբկէնը մէկիկ մէկիկ, ինչպէս ասում են, ցած բերեց ձիերից այդ գազան քրդերին, նրանցից ոչ մէկը կենդանի չմնաց։ Թշնամու ուշադրութիւնը դարձաւ այդ կէտի վրայ․ դիրքի անյարմարութիւնը և պաշտպա-



ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ ԽԱՉԱՏՐԵԱՆՑ
(Կապիտան Բաբկէն)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ ԽԱՉԱՏՐԵԱՆՑ

(Կապիտան Բաբկէն)



Բնիկ երևանցի էր Նիկողայոս Տէր Խաչատրեանց, որ ծնւել է 1877 թւին, մտել է Երևանի թեմական դպրոցը 1885 ին և աւարտել է 1896-ին առաջադէմ աշակերտներից մէկը։ 1898-ին զինւորակոչին զինւոր գնաց և երկու տարւայ ծառայութիւնից յետոյ վերադարձաւ պահեստի սպայի աստիճանով։ Զինւորական ծառայութիւնից տուն գալով, մի ժամանակ մտաւ գործելու մի երկաթավաճառի մօտ, բայց հոգեկան բաւականութիւն չգտնելով այդ զբաղմունքի մէջ, այս տարւայ գարնան անսպասելի կերպով նետւեց յեղափոխական ասպարէզ։ Նախ զբաղւեց զինւորական մարզանքներով և ապա միացաւ արշաւախմբին և կռւի դաշտում ընկաւ հերոսական մահով։

Բնաւորութեամբ պարզ էր և համեստ, աշխատող առանց խօսքի, առանց աղմուկի։ Նա իր սառը բնաւորութեամբ նման էր ճափոնացու․ որպիսի՛ սառնութեամբ նա կռւել էր մինչև վերջը, մինչև մահւան րոպէն, միևնոյն ժամանակ կառավարելով իրեն հետ կռւողներին։

Այդպիսի կռւողներ մենք քիչ ենք ունենում։



անընդհատ ու լարուած ուշադրութեամբ կռւելուց և թշնամու անդադար գրոհ տալը այդ դիրքի վրայ՝ ստեղծեցին օրհասական դրութիւն մեր մի բուռն կտրիճների համար։ Բաբկէն, Վահան, Համօ և Գարեգին կռւում էին մի անասելի քաջութեամբ, գետին տապալելով արշաւող խուժանի շարքերից շատերը, մինչև որ իրենք ևս իրենց դիրքերում, ծանր կռւի մէջ, ընկան քաջի մահով։ Զորս հերոսների նահատակման տեղում, շատերի ասելով, թշնամին թողեց աւելի քան հ ա ր ի ւ ր հոգի....

Մի ոչ պակաս յամառ կռիւ տեղի ունէր այդ րոպէին մի այլ դիրքում։ Քրդերի մի բազմութիւն հիւսիսից և զօրքերի մի հարիւրեակ արևմուտքից մեծ կորուստներով յետ էին մղւում մի դիրքից, որտեղ ամրացած դիմադրում էին հինգ ֆէդայիներ Սուրէն, Հաջի, Սիմօն, Պետրոս և Մինաս։ Կռիւը ծանր էր և անհաւասար։ Դիրքի վրայ յարձակւում էին գործում մի քանի կողմերից, նոր ու թարմ ուժերով. Թշնամին թէև կորուստ շատ տւաւ այդ տեղէլ, բայց յարձակումը չէր դադարեցնում։ Հինգ հոգու խումբը ստիպուած էր դիրքը թողնել. քաջ Սուրէն, ալեխառն Հաջին, Սարգիսը և կիլիկեցի Սիմօնը առիւծի պէս դուրս թռան դիրքերից, նետուեցին թշնամու կրակի մէջ, յանդուգն յարձակումով թշնամուց մի քանիսին գլորեցին, բայց իրենք էլ ընկան հերոսի պէս։ Այդ օր թշնամու կորուստը 200ից անց էր։

***

Արևը թեքւում էր։ Երկու տասնեակներ պահում էին դիրքերը, իսկ միւսները հետզհետէ գրաւում էին բարձր դիրքերը, որտեղից գնդակների տարափի տակ յետ քշեցին թշնամուն։ Եւ հռչակաւոր Զնգլի բարձունքների վրայ շուտով նորից ծածանուեց Դաշնակցութեան յաղթական դրօշը։

Յուլիսեան արևը իր բոլոր ջերմութեամբ դեռ ևս շարունակում էր այրել Զնգլի անջրդի, լերկ և ժեռոտ բարձունքները. ամէն բան խաղաղ էր, օդի մէջ նկատելի չէր ոչ մի շարժում։

Ահա այդ բարձունքների մի թեք հարթութեան վրայ որ շունչ էր առնում ծծկեր և լացող երեխաներով ծան-



ՀԱՃԻ ՍԱՐԳԻՍ ՊԱԼԵԱՆ





ԿԻԼԻԿԵՑԻ ՍԻՄՈՆ

Հաճի Սարգիս Պալեան կիլիկեցի 50 տարեկան։

Տարիքով յիսունից անց այս ծերունին իր դէմքի վրայ կրում էր մի վիշտ, մի սոսկալի վիշտ, նման դարերով սարկութեան շղթան կրող ժողովրդի վշտին՝ Ազգային Տխրութեան մարմնացումն էր յիշեցնում ծերունի Հաճին, որ ընկաւ տառապանքի վայրում, հերոսի վայել մահով։

րաբեռնուած, տուն ու տեղ ձգած Մօսունի և Քօրունի գաղթող ժողովուրդը։ Դառը ճակատագրից հալածուած թշուառների այդ տեսարանը յուզիչ էր։ Ո՞ւր էին դիմում նրանք․ «քրիստոնեայ» (?) ցարի պաշտպանութեա՞ն ապաւինելու…

Առաւօտ էր արդէն, առաւօտ մեծ օրւայ, մեծ կռւի։

Մօսունի փախստական ժողովուրդը առաջ առաջ բարձրանում էր դէպի Զնգլի դիրքերը․ մի երկու տասնեակ գնդակների տակ ուղեկցում էին 500ից աւելի կանանց ու երեխաների։

Գիշերային յարձակումները և սոսկալի կոտորածը ոտի էր կանգնեցրել շրջակայ աշիրէթներն, ո՛րը ձիով, ո՛րը ոտով, ո՛րը զէնքով և ո՛րը անզէն։ Գրոհ էր տալիս թիւրք զօրքը, հետևակ և հեծեալ հարիւրեակներ կազմած։ Նորից տեսնւեցին քրդեր և բաշիբօզուքները, դաշտի վրայ երևաց երկու թնդանօթ ևս, որոնք որոշ տարածութիւնից առաջ այլևս շարժւել չկարողացան․ ռմբակոծութիւնն էլ կատարւում էր աննպատակ կերպով։ Մօսունի առաջ տարածւող դաշտը ծածկւեց քիւրդ խուժանով։

Շուտով յայտնւեցին Փէդայիները։ Ամբողջ օրւայ ծանր կռւից յետոյ յոգնած ու դադրած զինւորները համախմբւում էին խորհրդակցութեան․ Նրանց հոգսը գաղթական ժողովուրդն էր․ տեղազուրկ, բաց երկնքին ապաւինած այդ հալածւած, տանջւած ժողովուրդը։ Յոգնածութիւնը, քաղցն ու ծարաւն ուժասպառ էր արել գաղթող բազմութիւնը, իսկ քերծւած՝ արիւնլւայ եղած ոտներով քաշ եկող մանուկների լացն ու կոծը աշխարհ էր բռնում….

Նրանք սահմանի միւս կողմում ունէին հարազատներ, որոնց մօտ կարելի էր պատսպարան գտնել նրանց համար։ Ահա այդ ծանր խնդրի լուծմամբ զբաղւած էր Փէդայական խումբը, երբ յանկարծակի տեղացող գնդակներից մի քանի ընկերներ զարկւեցին։ «Միթէ՞ թշնամին գաղտագողի պաշարեց և թակարդի մէջ ձգեց արշաւախումբը»։ Այս հարցը վայրկենապէս անցաւ բոլորի գլխով և աջ ու ձախ սկսան պայթել հրացանները։

« Տղե՛րք, սահմանից են գալիս գնդակները, համբերեցէ՛ք»։ Այս ձայնի վրայ հայեացքները այն կողմը դարձան։ Ցիոաւի, ռուսաց սահմանի վրայ կանգնած էր ռուսահպաքիւրդ Համիտ բէգը, իր երկու հարիւրից աւելի հրա-

ցանաւորներով, իսկ նրանից աւելի էլ բարձր դիրքեր բռնած երևում էին երեք հարիւրից աւելի կօզակներ և սահմանապահ զինուորներ։ «Ամէնաբարեպաշտ և քրիստոնեայ» ցարի զինուորներն էին հայերի վրայ կրակ տեղացողները···

Ռուս նենգամիտ կառավարութիւնը նախօրօք յայտնել էր Թիւրքերին՝ պատրաստւող հայ արշաւանքի մասին· պատրաստութիւններ տեսնւել էին երկու կողմից էլ կրակի մէջ առնելու ֆէդայուն։ Այս ստոր դաւադրութեան մէջ առանձին եռանդ էր ցոյց տւել Սուրմալուի գաւառապետը, ռուս ոստիկանի բոլոր լրբութիւնները իր մէջ մարմնացող Բօգուսլաւսկին, և արշաւանքի օրը նա սահմանագլուխ պիտի գնար անձամբ իր դաւը իկատար ածելու, բայց արշաւանքի նախորդ գիշերը յուլիս 11-ին (24) հայ տէռօրիստի գնդակից ընկաւ Թշւառականը Իգդիրի շուկայում····

Ճնշւածների համար արիւն Թափող ֆէդայու կրծքում կատաղի զայրոյթ առաջացրեց այդ ստոր դաւաճանութիւնը Այն տեղ — սահմանի միւս կողմում — քրդի հետ միացած մահմէդական տաճիկն էր հային կոտորում, իսկ հիմի էլ այս տեղ, նոյն քրդի հետ միացած քրիստոնեայ ռո՞ւսը····

Ռուսի «ազատարար» զէնքը պղծւա՛ծ, կեղտոտւա՛ծ էր այլևս։ Նա քրդի, տաճկի զէնքի անարգութեանը հասած կրակ էր Թափում ազատութեան ձգտող ճնշւած ու «քրիստոնեայ» մի ժողովրդի զաւակների վրայ։

Այն ժամանակ երբ ռուս կառավարութեան Պօլսի դեսպանը հրապարակաւ միւս դեսպանների հետ ռէֆօրմների մասին էր խօսում, հէնց նոյն ժամին ռուս զինւորը, քրդի հետ միացած, կրակ էր տեղում նոյն հալածւած հայի վրայ

Ո՛վ զազրելի ու լրբենի քաղաքական խաբէութիւն···

Այդ կրակի տակ էր նաև գաղԹող բազմութիւնը, կիների ու երեխաների բանակը, որ վայնասուն էր բարձրացնում։ Կռւելը անմտութիւն էր։ Որոշւեց բարձրացնել անձնատուր լինելու միջազգային նշանը։ Իզո՜ւր։ Քրդի հետ միասին, նրա դաշնակից ռուս զինւորը արհամարհեց սպիտակ դրօշը և շարունակեց կրակ Թափել····

— «Տղե՛րք, զատւեցէք գաղԹականներից և զէնքներդ ուղղէք միմիայն քրդին, իսկ ռուսին մի դպէք։ Առայժմ մենք բաւականանանք Եւրօպայի առաջ դնելով նրա նենգա

խօսքերի հետ խմբապետը առաջ անցաւ ինքը, Նորից տեղաց հայդուկի կրակը, երկու կողմից ընկան դիակներ, մինչև մութը կոխեց սար ու ձոր....




ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԿԱՐԵԱՆ

Ռուս զինւորին խնայւում էր, թէև նա շարունակում էր Համիդ բէգի թիկունքը պահել։ Տաճիկ զօրքերի և զօրանոցների վրայ կատարեալ յաղթութիւն տարած հայ քաջերը ռուսների կրակի տակ կորցրին 17 ընկեր։ Սրանց մէջ է Ներքին Ագուլիսից Յովհաննէս Մակարեան, որ աւարտել է Ներսէսեան դպրոցը և որ միացաւ արշաւախմբին բժշկի պաշտօնով։

Լուսինը Զնգլի բարձունքների և ձորակների մէջ երևան հանեց չարժւող ստւերներ, — դրանք ռուս կօզակներ էին, որոնք կողոպտում էին հայ փէդայիների դիակները.... (*)

(*) Այդ անսիրտ ու անամօթ գործողութիւնը ղեկավարում էր Իգդիրի պլաստունների (մագլցող) գնդի մի սպայ շտապս—կապետան Գնուտօվ։ Սա յունւար 31 (փետր. 13) երեկոյեան ժամը 7-ին Իգդիրի փողոցներից մէկում Հ. Յ. Դաշնակցութեան վճռով կրեց իր արժանաւոր պատիժը, տէռօրի ենթարկւելով, ինչպէս նոյն վիճակին էր ենթարկւել մի քանի ամիս առաջ, «Որսկան» խմբի վրայ յարձակման գործի մէջ ամբաստանւած գնդապետ Բըկօվ, Օլթիում։





ՄԻՆԱՍ ՏՕԼՊԱՇԵԱՆ

(Գայլ—Վահան)



1842-ին ծնած է Մինասը, Բալուի Հաւաւ գիւղը․ համեստ ընտանիքի մը զաւակն էր ան, Տօլպաշեան բազմանդամ գերդաստանէն։

Մինասին դպրոցական կեանքը եղած է պարզուկ նախակրթարանի մը ընթացքը — իր գիւղին մէջ պարզ կարդալ-գրել մը հազիւ միջոց ունեցաւ սորվելու։

Հայուն, մասնաւորապէս իր գիւղին վաղեմի սովորութեան համեմատ, երբ 15—16 տարեկան եղաւ, պանդխտութեան ցուպը ձեռք առաւ՝ իր սիրելիներուն ու հայրենի օճախին մնաք բարով ըսաւ՝ իրեն տարեկից ընկերներու հետ, և ինքզինքը Պոլսի ափերը նետեց։

1889 թուականին արդէն Պոլիս էր պատանի Մինասը․ հոն հետեւեցաւ պապենական արհեստին, և եղբօրը՝ «ուստա» Գասպարի ձեռքին ու խնամքին տակ հիւսնութեան հետեւեցաւ։

Տօլպաշեան իբր ընդունակ պատանի իր արհեստին մէջ լաւագոյն վարպետներէն եղաւ, ու մինչդեռ մէկ կողմէն կը ջանար լաւ «տիւլկէր» մը ըլլալու, մրցելով իր հասակակից ընկերներուն հետ, միւս կողմէն սկսաւ ծանօթանալ օրուան

Ընթերցանութեան սիրահար մըն էր ան, և ատոր կը պարտի իր զարգացումը․ պօլսական թերթերէն զատ, ան կը կարդար արտասահմանեան հայ թերթերը․ «Արմէնիա»ն, «Հնչակ»ը, «Դրօշակ»ը նոր-մարդ չինած էին Մինասը․ ան հոն տեսած ու սիրած էր ցեղին տառապանքը ու խոյանքը։ Իր զգացումները յաղթահարած էին փտած գաղափարները հին վարպետներուն, որոնք հարիւրներով տարագրուած, անգիտակից իրենց «հալին» ու վիճակին, դարաւոր կեանք մը մաշեցուցած էին Ջուքուր Չէշմէի «Թաշխան»ը։ Միշտ միամիտ հաւտացողները «ճակատագրին», որով սերունդներ ապրած էին և հազիւ բախտը վայելած էին «ծերութեան օրեր հայրենի գերեզմանոցին մէջ վերջին հանգիստը առնելու»։ Քանի՛ քանի «փալակ վուրղունի»ներ ա՜խն ու հառաչանքը կրծքերնուն մէջ ծովացած, հալած՝ մաշած են Թաշխանի քարայրին մէջ, և Պալըգլըի գերեզմանոցը այդ հառաչալից կուրծքերը՝ իր սև հողերուն տակ առած, անտէր, անյիշատակ ժամանակի մոռացութեան մէջ անէացուցած է, թոյլ չտալով անոնց որ թրքական անարգ ռէժիմը ըմբռնէին, հայ մարդուն թշուառութեան իրական պատճառները հասկնային....

Ռուսաթիւրք պատերազմէն ասդին, երբ հայ գիւղացին վերածնութեան նոր թուական մը մտաւ, նոր սերունդը փոխեց իր մտածողութեան եղանակը․ ան այլևս լոկ ընտանեկան, նեղ, սահմանափակ վիճակին մէջ չապրելով, ցեղին վըրայ խորհեցաւ, անոր տառապանքին պատճառները սերտեց։ Այդ հոսանքին հետ քալեց Մինասն ալ․ անկե՛ղծ հաւտացող մը եղաւ Հայ Յեղափոխութեան ու միշտ անձնուէր սիրտ մը պահեց իր կուրծքին տակ, պատրաստ զոհուելու հայրենիքի փրկութեան սեղանին վրայ։

Երբ Պօլիս էր զինուորագրուեցաւ «Հնչակեան» դրօշին և իբրև տ է ռ օ ր ի ս տ իրեն յանձնուած գործերը մեծ յաջողութեամբ կատարեց, «մատնիչները խեղդամահ ըրաւ» և առանց վրդովելու անոնց հետքերը կորսնցուց։ Եւ մինչ ինքը ազատ համարձակ իրեն յանձնուած ամէն գործ կամաւոր յանձնառութիւնով մը կրցածին չափ կատարեց, միւս կողմէն իբրև վարպետ, գործէն ալ ետ չմնաց, ուրկէ բարի քրիստոնէի մը պէս իր հալալ վաստակէն առատ բաժին կը հանէր ազգին փրկութեան գործին։

1892-ին Մինասը պանդխտութեան երկրորդ շրջանը ըրաւ, ուր մնաց մինչև 1895—'96 արիւնի թւականը։

Ընդհանուր ջարդերուն ժամանակ ան ալ միւսներուն պէս ինկաւ Սև ծովի ափերը. Ռումանիոյ քաղաքներէն մէկուն մէջ շարունակեց իր արհեստը, ուրկէ հազիւ կրնար իր և հայրենիքի մէջ ողջ մնացող մօրը օրապահիկը ճարել։

Գործերը դէշ էին և անոր հետ հնչակեան առաջին պառակտումն ալ եկաւ անոր զգայնոտ սիրտը տակն ու վրայ ընելու։

Մինաս Ռումանիայէն անցաւ Պուլկարիա. մօտաւորապէս երկու տարի Ռուսճուք մնաց, սակայն հոն ալ իր պահանջներուն բաւարարութիւն չգտաւ. հեռաւոր Ամերիկայի լուրերը տարօրինակ չափազանցութիւնով ամէն մարդ իրեն կը քաշէր. օրին մէկը ան ալ ինքզինքը Ամերիկայի մէջ գըտաւ։ Այդ ժամանակ արդէն կորսնցուցած էր իր կինն ու մայրը։

Մինաս, որ ստեղծուած էր գործի մարդ ըլլալու, այժմ աւելի ազատ կ'զգար ինքզինքը. չէր կրնար անտարբերութեան, մոռացութեան հեռու ճամբաները քալել, ուր Նոր աշխարհի մէջ «չէզոք»ներու լեգւանի լէգէօն մը վայրապար իր կեանքը աննպատակ կը քաշքշէ «կեանքից պէցար» խորհրդաւոր կամէութիւնով մը, ազատագրումի գործէն միշտ հեռու փախչելով։

Տօլպաշեան ժամանակաւոր սպասումէ մը ետքը — երբ տեղական մարդիկն ու պայմանները ճանչցաւ — օր մը որոշ կերպով դաշնակցական ըլլալու ծրագրով մօտեցաւ Փրովիտէնսի կոմիտէին և խօսքի ընթացքին մէջ անվերապահօրէն յայտարարեց.

— « Հնչակեան դրօշակը իր սրբութեան բարձունքէն
« վար ինկած է. անկեղծները տեսակ մը դասալքութեան
« մատնուած են. ասպարէզը թողուած է խորթ եկւորներուն
« ու հին ճիզւիթներուն, որոնք դրօշակը երկուքի պատ-
« ռած կը շահագործեն. չեմ կրնար միալ դրօշակի մը տակ,
« որ միայն շահագործումի առարկայ դարձած է։»

Դաշնակցական ըլլալէ ետք՝ ձեռնարկեց իր փայփայած ծրագրին — երկիր մտնելու գործին — ետեւէ [illegible]

կան Խումբին». «փրէզլէնթ՝ արմսը», «ռայթ չօլտըր՝ արմսը» գործնական յեղափոխութեան համար լոկ ժամավաճառում է. Ամերիկայի ցուցամոլ կեանքին հաճոյալից ժամանցներուն միայն կը յարմարի ան, ուստի զարմանալի չէ որ շուտով հրաժարեցաւ անկէ։

Երկու խօսք Մինասին ամբողջ էութիւնը իր մէջ կը պարունակեն.

« Անսխալ զարնողը թող գայ,
Նամուս ունեցողը թող գայ....

Անսխալ զարնող մըն էր Մինասը։

Նամուսը, օ՜հ, իր հոգեկան աշխարհի ամբողջ խռովքն էր ատ. չէր կրնար տանիլ այդ դարաւոր անարգանքը, որ օրը օրին հայ նամուսին վրայ գործ կը դրուէր. վազեց միացաւ անոնց՝ որոնք հայ ցեղի պատուի փրկագործումին համար զինուորագրուած էին։

Բռնաբարումը, թալանը, սպանութիւնները, որ սովորական դարձած էին 1894 էն աստին, իր հայրենիքի ցաւերով գալարուող Մինասը ծայրայեղ ջղուտ չինած էին, տեսակ մը գառագղուած վագր. ու երբ իր փայփայած իտէալին մօտեցաւ, և կրցաւ զօր-զար երկիր մտնելու որոշումը կորզել, եօթն անգամ չնայեցաւ, չլսեց իր շուրջին վայնասունները, և 1902 նոյեմբերին ճամբայ ելաւ՝ իր ընկերոջ Գաբօին հետ....

Ժամանակ մը սահմանագլխին մօտերը իբրև հիւսն.... «կոթեր շինելու գործով պարապեցաւ». խաղաղ գործը չսիրեց, ու յետոյ փոխադրութեան գործը իրեն յանձնուեցաւ։

Մինաս հիմա մասամբ իր նպատակին հասած էր՝, վրէժի գործիքը իր ձեռքին մէջն էր շարունակ. շատ գոհ էր. իր նամակները, որ իր հոգին կ'արտայայտէին՝ խանդ ու հաւատք կը ներշնչէին զինք ճանչցող ընկերներուն։

Միակ ցաւը որ ունէր՝ Գաբօէն զատուիլն էր. իր մէկ նամակին մէջ կը գրէր.

— « Գաբօն խրկւեցաւ ուրիշ տեղ, ուրիշ գործի համար.
« սրտանց կը ցաւիմ անկէ բաժնուելուս. բայց հոս մխիթարա-
« կան կէտն ան է որ ամէնքս ալ ընկեր եղբայրներ ենք,
միացած մէկ գաղափարի շուրջը. ո՜չ Գաբօն ևս կորսնցը.

« Ները ամէնքն ալ իրարու վրայ հողի կուտան, երանի՜ թէ
« այս լաւ հողին Ամերիկա ալ ընդհանրանայ։ »

Մօտաւորապէս երկու տարի մնաց Մինաս բուն յեղա-
փոխական գործին մէջ, որուն մանրամասնութիւնները կա-
րելի չէ այսօր հրապարակել, առանց գործ ու մարդիկ վը-
տանգելու։ Ուստի հոս կը շատանանք նոյն շրջանի Կեդր.
Կօմիտէի գրած նամակէն քաղուածք մը ընել, որ Մինասի
գործնէութիւնը կը բնորոշէ․

« ....Մեր շրջանի գործն է ապրանք փոխադրել Թրքա-
« Հայաստան․ մօտ օրերս Վահանը պատրաստւում է նորից
« պատճառ կատարելու ՉՈՐՐՈՐԴ ՆՐԹԸ՝ մի դժւարին
« բայց անհրաժեշտ գործ, որը յաջողութեամբ իկատար է
« ածում նա, մանաւանդ այժմ, որ լեռները սկսել են ձիւ-
« նել և ցրտել....
« 18 սեպտ, 1903 ՄՐԳԱՍՏԱՆԻ Կ․ ԿՕՄԻՏԷ »

Եւ արդարև կարճ ժամանակի մէջ այդ շրջանի փոխա-
դրութեան գործը, Մինասի շնորհիւ, առաջ գնաց մեծ յա-
ջողութեամբ։ Իբրև խմբապետ, Մինասը չորս խմբերու
առաջնորդեց դէպի Ա.... առաջին անգամ 8 հոգով, երկ-
րորդ անգամ 25 հոգով, երրորդ անգամ 27 հոգով և չոր-
րորդ անգամ նորէն 27 հոգով։ Բայց այդ գործերը այլև
չկրցան գոհացում տալ Մինասին․ և Մուսուն Ջուրի արշա-
ւանքի առեն, ինքն ալ իր թեկնածութիւնը առաջարկեց
Արշաւանքի պատրաստութեան գործին ծանրութիւնը մե-
մասով անոր ուսերուն վրայ ինկաւ, և Մինաս կատարեց այդ
ամէնը մեծ հմտութեամբ ու ճարպիկութեամբ։

***

Անոր հերոսական մահը մասնաւորապէս սգացին անոր
ապրած շրջանի գիւղացիք, որոնց համակրանքը և սէրը շա-
հած էր Մինաս իր մաքուր վարքուբարքով, բարեհամբոյր
բնաւորութեամբ և Գործին վրայ տածած անձնւիրութեամբ։
Նամակէ մը հետևեալ հատուածը կը քաղենք հոս, ո-
իր հերոսական մահէն 2—3 շաբաթ ետք մեր ձեռքը հասա-
իր լուսանկարին հետ․

— « Հազիւ գուրգուրանքի ակնարկ մը քաջին կենդա-
« նագրին վրայ, որ իր պարզուկ ձևին մէջ հիացմունք ո-

ռանոցը քարուքանդ ընողին խիզախութիւններն ու հերոսա-
կան մահը։


« Վահանի ծանօթներն ու ընկերները անհունապէս վըշ-
տացան. ան վրէժի նոր օղակ մըն ալ աւելցուց բոլոր
անոր ծանօթ հայերու սրտին մէջ, սկսուած գործը աւելի
թափով առաջ տանելու....»

Ցարգա՛նք քեզի, անուշիկ Մինաս, որ կռուի դաշտին վը-
այ ծաղիկ կեանքդ զոհ բերիր, պաշտած հայրենիքիդ ա-
ատութեան սիրուն համար։ Դուն ինկա՛ր, լիովին կատա-
եցիր բաժինդ. այսօր, մեր արցունքի օրերուն մէջ, չենք
'ոռնար յիշատակդ, իսկ վաղը, երբ հայրենիքի ազատու-
Fեան արշալոյսը ծագի քու և արի ընկերներուդ թա-
ած մաքուր արիւնին գնովը, այն ժամանակ ապրող սե-
ունդը ազգովին պիտի գայ բոլոր նահատակներուդ ցան
և ցրիւ ինկած ոսկորներուն առջև պաշտամունքի Մեծ Տօ-
ը կատարելու....

Հանգի՛ստ ձեզի, մաքառումի ճամբուն վրայ ինկող տն-
'ահ հայ հոգիներ. ողջ մնացող ձեր եղբայրներուն ալ
երշնչեցէք զոհաբերութիւն՝ դէպի արիւնոտ դաշտեր, ուր
նկան Մեծ Սերոբները, Հրայրները և դուք...

Ցարգա՛նք ձեր անմոռաց յիշատակին։

ՎՇՏԱՀԱՐ





ՄԱՀԱՑԱՆԿԸ

Ահա անուանական ցուցակը Բաղրեւանդի կռուին մէջ ինկածներուն, տասնեակներու կարգով դասաւորուած։ (? հարցական նշան դրուած է անոնց առջեւ, որոնց մահը ստուգուած չէ դեռ։

«ԱՐՏԱԽԱԶԴ» ԽՈՒՄԲ

Ա. Տասնեակ 1. Յովհաննէս Մակարեան, բժիշկ
2. Պետրոս Պետրոսեան (?)
3. Արտուշ Տէր Մաթէոսեան
4. Կարապետ Քեալեան
5. Յակոբ Մխիթարեան
6. Գարեգին Յարութիւնեան, գանձակեցի
7. Մկրտիչ Բեռնակիր (չնկարուած) (?)


Բ. » 8. Համազասպ Նազարեան, կարնեցի
9. Յարութիւն Վիրաբեան
10. Մկրտիչ Գրիգորեան
11. Ղազար Քամալեան

Ի. » 13. Գրիգոր Կարապետեան
14. Միքայէլ Պօղոսեան
15. Պետրոս Մուրատեան
16. Մինաս Տօլպաչեան — վաճառ, խմբապետ
17. Նիկողայոս Տէր Խաչատրեանց — օգնական խմբապետ

« ՄԱՍԻՍ » ԽՈՒՄԲ

Ա. » 18. Սուրէն Մինասեան, կիլիկեցի
19. Հաջի Սարգիս Պալեան
20. Գրիգոր Տէրտէրեան
21. Գարեգին Լուսաբարեան
22. Մատթէոս Սարգսեան
23. Խաչատուր Տուզեան
Գ. » 24. Մկրտիչ Սաֆարեան (?)
25. Երուանդ Բանդալեան
26. Հայկ Աւատեան
Դ. » 27. Խաչատուր Ցովակիմեան
28. Արամ Սարգսեան
Ե. » 29. Պետրոս Բաբայեան
30. Ասատուր Վաղկեան
31. Գէորգ Աբրահամեան (?)
32. Սիմէօն Կիլիկեցի, օգնական խմբապետ





ՍԱՍՈՒՆԻ ՀԱՄԱՐ ԵՒ ՍԱՍՈՒՆԻ ՇՈՒՐՋԸ



(Ժամանակագրական Ցանկ մը Կուիններու)

Հայ ազատագրութեան ճիգերու տարեգրքին ամենէն փառաւոր, ամենէն մխիթարական և ամենէն յուսատու էջերէն մէկը պիտի մնայ 1904 տարին։ Դաւիթ բէկի օրերէն ասդին՝ 1722 էն իվեր, հայ երկիրը չէր տեսած հայ ռազմական կորովի այնպիսի անօրինակ փթթում մը, որուն հանդիսավայրը եղաւ Օսմ. Հայաստանի արևելեան մասը, ամբողջ Ռուսական Հայաստանը և Ատրպատականը, մասով մը։ Իսկ ազգային գիտակցութեան զարթնումին և մանաւանդ ժողովրդային համերաշխ գործակցութեան տեսակէտէն՝ հայ պատմութեան ոչ մէկ շրջանը կրնայ հաւասրիլ 1904-ին, եթէ մինչև իսկ երթանք հասնինք Ե. րդ դարու կրօնական ազգային ծանօթ շարժումին, որ իր պատմական համբաւը աւելի Եղիշէի նկարագրական ոճին կը պարտի, քան պատմական հարազատ իրողութիւններու։

Եւ արդարև 1904-ին է որ Յեղափոխական Շարժումը համատարած կը դրկէ բովանդակ արևելեան Հայաստանը, այնպիսի խիտ ճիւղաւորումներով, այնպիսի բուռն ուժով, որ կարելի չէր և ոչ ոք կրցաւ նախատեսել տակաւին տարի մը առաջ։

Մեր նորագոյն պատմութեան մէջ անզուգական այդ վայրկեանը ունի, ինչպէս ամէն երեւոյթ, իր պատճառները — և անոնք երկուք են — ա ռ ա ջ ի ն՝ Սասունը բնաջինջ ընելու սուլթանական ծրագիրը, ե ր կ ր ո ր դ՝ Ռուսիոյ մէջ Հայ եկեղեցական կալուածներու յափշտակումը ռուս կառավարութեան կողմէ, որ կուգար վերջին տարակոյսները փարատելու՝ ցարերու հետապնդած հ ա յ ա ջ ի ն ջ ք ա ղ ա ք ա կ ա ն ո ւ թ ե ա ն մասին։

Այդ երկու ազգային վտանգներու գիտակցութիւնն էր, որ ցարին և սուլթանին հպատակ Հայերը բերաւ միացուց ռազմական այն բուռն և անմոռանալի ճիգերուն մէջ, որոնք տեղի ունեցան 1904 ին, Մայր Մասիսի երկու երեսներուն վրայ։

Հոս զանց կ'ընենք մենք առաջ բերել բուն Սասունի կռիւներուն ժամանակագրութիւնը, որ առանձին պրօշիւրի մը նիւթ պիտի ըլլայ, և կ'ուզենք յիշատակել միայն այն կռիւները, որոնք Մօսուն-Ջօրի արշաւանքէն առաջ կամ ետք տեղի ունեցան, Սասունի գործին համընթաց։ Որովհետև կռիւները ոչ միայն կանգ չառին Սասունի սեմին վրայ, ոչ միայն Մուշէն մինչև Վան շարունակուեցան հրոսակային ընդհարումններու կուռ շարք մը, այլ տեղի ունեցան կարգ մը ուրիշ փառաւոր կռիւներ, — որոնց ամէնէն յաջողն է Մօսուն-Ջօրի արշաւանքը, — սահմանուած կամ օգնութեան երթալու Սասունին կամ հեռացնելու թիւրքերուն ուշը Տարօնէն այլուր։

Եւ արդարև առաջին անգամ ըլլալով մեր յեղափոխական պատմութեան մէջ հնարաւոր կը դառնար, կ'իրագործուէր հ ա մ ը ն թ ա ց գործնէութիւն մը Մայր Հայրենիքի տարբեր կէտերուն վրայ, առաջին անգամն ըլլալով՝ հեռաւոր վայրերէ՝ տարբեր սահմաններէ՝ այդպիսի կորովի և համակարգ ջանքեր կը կատարուէին վտանգի մէջ գտնուող հայ բնակչութեան մը օգնութեան փութալու։

***

Դէպքերը ինքնին այնքան պերճախօս են, որ մենք պիտի շատանանք միայն թուելով անոնք։

1903 մայիս 25 — «Մրրիկ» հեծելախումբ, խմբապետ Թ
» գոմ, 22 հոգի։ Ապահով հասան Սասուն։
» սեպտեմբեր 30. — «Կայծակ» հեծելախումբ, խմբապ
Խան։ 53 հոգի։ Ընդհարում Բասենի մէջ։

1904 մայիս 29. — Թոխմախի և Երկաթի միացեալ խմբե
35 հոգի։ Ընդհարում Արճէշի մօտ։
» յունիս 20. — «Դժոխք» հեծելախումբ, խմբապ
Վաղարշակ։ 30 հոգի։ Ընդհարում Ջիվինի մօտ։
» յունիս 26. — Դումանի խումբ։ Հեծելախումբ
հոգի։ Պարսկաթիւրք սահմանագլխի մօտ։
» յուլիս 14. — «Որսկան» հետևակ խումբ. խմբապ
Թորգոմ։ 61 հոգի։ Ընդհարում Զարդանիսի մօտ
» յուլիս 25. — «Արտաւազդ», խմբապետ Գայլ Վահ
35 հոգի և 8 բեռնակիր զինուոր։ Արշաւանք Մօսո
վրայ։
» յուլիս 25. — «Մասիս» խումբ, խմբապետ Մ., 50 հ
և 10 բեռնակիր զինուոր։ Արշաւանք Ջորի վրայ։

Մեր այս թւումին մէջ յիշատակուած «Մրրիկ», «Կայծ
և «Շանթ» խումբերը, թէև 1903-ին անցան սահմանը,
կայն ջարդի վտանգի տակ գտնուող Սասունին օգնութ
հասնելու սահմանուած ըլլալնուն, 1904 ի խումբերուն
ամբողջութիւն մը կը կազմեն Սասունի համար կատար
յեղափոխական ճիգերուն մէջ։

Յեղափոխական կռուող և արշաւող այս խումբերէն զ
1904-ի մէջ ունեցանք կուի հանդպած բուն զինակիր ել
խումբ ևս։

1904. մայիս 3. — Ջոջիկի խումբը։ 6 հոգի։ Ընդհար
Լիմ գիւղի մօտ։
» հոկտ. 29. — Փոխիկի խմբապետութեամբ, 15 հոգ
հեծելախումբ։ Ընդհարում պարսկաթիւրք սահմ
մօտ։

Յեղափոխական գործնէութիւնը որքան ալ գաղտնի այ, նորէն կարելի է անոր մասին մերձաւոր գաղափար կազմել, ուսումնասիրելով այն դէպքերը, որոնք ԱՆ-ԻՍԱՓԵԼԻՕՐԷՆ և ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆՕՐԷՆ երևան կու գան, ·է իրապէս այդպիսի շարժում մը գոյ է ժողովրդի մը .օրեայ կեանքին մէջ։

Ընդհարումներու հետևանքով երևան եկած այս բռ-ը խումբերը կը ներկայացնեն 481 փէտայի, որոնց 133-ը ծեալ։ Եթէ նկատի առնենք այդ ամէնուն զէնքերը, ռազ-մթերքը, գործիքները, հագուստը և վերջապէս ձիերը — դ ամէնը պատկառելի ուժ մը կը ներկայացնէ ինքնին։

Եթէ աւելցնի ասոնց վրայ Երկրի մէջ կռւող խումբերն անոնց հրացաններն ալ, որոնցմէ Բաղէշի կուսակալին չւով 1500 միայն Սասունի մէջ գտնուած են, և «Հայրե-ք»ի ռուսաթիւրք սահմանագլխի թղթակցին ըսելով՝ 400 րօնի դաշտին մէջ ձեռք անցուած են (մաւզէր, պէրտան էշխանէ) — այն ատեն կրնանք, ճշմարտութեան քիչ մը թ մօտիկ հասկցողութիւն մը ունենալ Սասունի համար տարուած մեծ ճիգերու մասին։


Փութանք ըսել թէ այդ խումբերը իրենց ընդհարում-րու մէջ կորուստ տուած են մօտ 200 հոգի, իսկ թշնամի-ինկած է չափաւոր հաշւով մօտ 700 հոգի — մասնաւո-պէս Բասէնի, Ջիվինի և Մօսուն-Ջօռի կռիւներու ատեն։

Հակառակ 1904-ի բոլոր անյաջողութիւններուն, յուսա-տութեան շեշտ մը անգամ չարտաբերւեցաւ յեղափոխա-ն շարքերուն մէջ։ Կոտորուած կամ անյաջողութեան ստնուած խումբի մը լուրն հասնելու հետևեալ օրը՝ նորը տրաստ էր արդէն։ Կռւողի պակասութիւն չկար. եթէ նք ու ռազմամթերք ճարւէր անընդհատ, կարելի էր դիւ-ւ նորանոր հարիւրեակներ կազմել օգնութեան փութա-ղ։ Երկու նկատումներ միայն հարկադրեցին յեղափոխա-ն կազմակերպութիւնը դադրեցնելու խումբերու առա-ւմը, Մօսունի արշաւանքէն ետք (յուլիս, 1904)։

Առաջին՝ Սասունի դիմադրութիւնը վերջացած էր, և ր խմբեր կայան չպիտի կրնային ունենալ, եթէ մինչև ...ամենէն Մշու դաշտը։

Երկրորդ՝ ռուսները ծայրայեղ աստիճան խստութիւններ սկսան գործադրել սահմանագլխին վրայ, որոնք յանգեցան «Որսկան» խումբի ծանր կորուստներուն, Օլթիի մօտ, յուլիս 14, և Մօսուն Ջօռի արշաւանքէն վերադարձող խմբերուն տուած զոհերուն՝ յուլիս 25-ին։

Այս բոլոր ճիգերուն վրայ արագ ակնարկ մը նետելէ ետք, պարկեշտ մարդ մը չի կրնար մերժել որ մարդկօրէն հնարաւոր եղածը փորձուեցաւ Սասունին օգնելու, և այդ գործը ամբողջովին ինկաւ Դաշնակցութեան ուսերուն վրայ, որ յաջողեցաւ Մէկ տարուան մէջ այնքան ռազմական ուժ առաջ բերել ու կազմակերպել, որուն կէսին կէսը կարող չեղան ներկայացնել իրմէն առաջ գոյութիւն ունեցող հայ յեղափոխական մարմինները, իրենց գոյութեան ԱՄԲՈՂՋ ՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԻՆ։






Պարզ քարտէզ մը դրուած է հանդիպակաց էջին վրայ, ընթերցողին գաղափար մը տալու համար արշաւանքի նըպատակ ընտրուած վայրի մասին։

